HUMAN RIGHTS WATCH

«Ե՞րբ ես կկարողանամ տուն գնալ»

Չարաշահումներ և խտրականություն հաստատություններում գտնվող երեխաների նկատմամբ և որակյալ ներառական կրթության մատչելիության պակասը Հայաստանում

HUMAN RIGHTS WATCH

«Ե՞րբ ես կկարողանամ տուն գնալ»

Չարաշահումներ և խտրականություն հաստատություններում գտնվող երեխաների նկատմամբ և որակյալ ներառական կրթության մատչելիության պակասը Հայաստանում

© 2017 Human Rights Watch
Բոլոր իրավունքները պահպանված են
Տպագրված է Ամերիկայի միացյալ նահանգներում
ԳՄՍՀ՝ 978-1-6231-34471
Շապիկի ձևավորումը՝ Ռաֆայել Հիմինեսի

Human Rights Watch-ը պաշտպանում է մարդկանց իրավունքները ողջ աշխարհում: Մենք մանրակրկիտ կերպով հետաքննում ենք չարաշահումները, լայնորեն բացահայտում փաստերը և հարկադրում իշխանություն ունեցողներին հարգել մարդու իրավունքներն ու ապահովել արդարությունը:

Human Rights Watch-ը անկախ, միջազգային կազմակերպություն է, որը գործում է որպես բոլորի համար մարդկային արժանապատվության ապահովման և մարդու իրավունքների պաշտպանության հարցի առաջխաղացման հնչուն շարժման մի մաս:

Human Rights Watch-ը միջազգային կազմակերպություն է, որն աշխատակիցներ ունի ավելի քան 40 երկրներում և գրասենյակներ Ամստերդամում, Բեյրութում, Բեռլինում, Բրյուսելում, Չիկագոյում, Ժնևում, Գոմայում, Յոհաննեսբուրգում, Լոնդոնում, Լոս Անջելեսում, Մոսկվայում, Նայրոբիում, Նյու Յորքում, Փարիզում, Սան Ֆրանցիսկոյում, Սիդնեյում, Տոկիոյում, Տորոնտոյում, Թունիսում, Վաշինգտոնում (ԿՇ) և Ցյուրիխում:

Հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել մեր կայքը՝
http://www.hrw.org

ՓԵՏՐՎԱՐ **2017Թ.**

ISBN: 978-1-6231-34471

«Ե՞րբ ես կկարողանամ տուն գնալ»

Չարաշահումներ և խտրականություն հաստատություններում գտնվող երեխաների նկատմամբ և որակյալ ներառական կրթության մատչելիության պակասը Հայաստանում

Ամփոփագիր 1

Չարաշահումներ հաստատություններում գտնվող երեխաների և երիտասարդների նկատմամբ 3

Որակյալ ներառական կրթության մատչելիության պակաս 7

Կառավարության արձագանքը 9

Հիմնական առաջարկություններ հետագա քայլերի համար 12

Մեթոդաբանություն 14

I. Հայաստանի խնամքի հաստատությունների նկարագիրը 17

II. Երեխաների և երիտասարդ չափահասների ինստիտուցիոնալացումը և խտրականությունը բեռնաթափման գործընթացում 20

Խտրականությունը բեռնաթափման գործընթացում 22

Երեխաների և երիտասարդ չափահասների տեղափոխումը հաստատությունների միջև.. 25

Ռեսուրսների կենտրոնացումը հաստատություններում 28

Այլընտրանքների բացակայություն 29

Ինստիտուցիոնալացման հուզական բեռը 35

III. Խնդիրներ երեխաների և երիտասարդ չափահասների համար խնամքի հաստատություններում 38

Անհատական ուշադրության և հոգատարության պակաս 38

Անձնական կյանքի գաղտնիության պակաս 39

Մատչելիության պակաս 40

Անկախ կյանք վարելու անպատրաստություն և հաշմանդամություն ունեցող չափահասների ինֆանտիլացում 41

Գործունակության մերժումը 45

IV. Վերափոխված կյանքեր 51

V. Ազգային և միջազգային իրավական պարտավորություններ 55

Ազգային իրավական պարտավորություններ 55
Միջազգային իրավական պարտավորություններ..... 57

VI. Հաշմանդամություն ունեցող երեխաների համար որակյալ կրթություն երաշխավորելու ձախողումը..... 60
Ողջամիտ հարմարեցումների բացակայություն..... 62
Ավագ դպրոցի և բարձրագույն կրթության հնարավորությունների բացակայություն..... 73
Խարան և խտրականություն..... 76
Կրթության իսպառ բացակայություն 80
Կրթության այլ ձևեր հաշմանդամություն ունեցող երեխաների համար..... 82

VII. Ազգային և միջազգային իրավական պարտավորությունները և կրթության մատչելիությունը 95
Միջազգային ստանդարտներ..... 96

VIII. Կառավարության և դոնորների արձագանքը 103
Բեռնաթափում 103
Ֆինանսական համահավասարեցում 106
Համայնքահեն ծառայություններ 107
Այլընտրանքային խնամք, ներառյալ տեղավորումը ազգականի մոտ, խնամատարությունը և որդեգրումը 109
Ներառական կրթություն 111

Առաջարկություններ..... 114
ՀՀ կառավարությանը, մասնավորապես՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը 114
Կրթության և գիտության, Տարածքային կառավարման և զարգացման նախարարություններին և Երևանի քաղաքապետարանին.....117
Միջազգային դոնորներին, այդ թվում նաև սփյուռքի կազմակերպությունների.....120

Երախտիքի խոսք..... 121

Հավելվածներ I-IV..... 122

Ամփոփագիր

Գոհարն իր այժմ 13 տարեկան որդուն՝ Արթուրին, ուղարկել էր հաշմանդամություն ունեցող երեխաների համար հատուկ գիշերօթիկ դպրոց Երևանում, որն իրենց տնից գտնվում է 120 կիլոմետր հեռավորության վրա, երբ Արթուրը 7 տարեկան էր։ Զսպելով արցունքները՝ Գոհարը բացատրում էր Արթուրի հուզական դժվարությունները, երբ նա բաժանվում էր իր ընտանիքից.

> Նա հարմար չէր զգում դպրոցում և հրաժարվում էր սննդից: Դրանով նա իր բողոքն էր արտահայտում: Ամեն անգամ, երբ նա տուն էր գալիս, սնվում էր նորմալ: Սկզբում մենք նրան տուն էինք բերում երկու շաբաթը մեկ անգամ՝ երկու կամ երեք օրով: Բայց ուսուցիչն ասաց, որ մենք չպետք է այդքան հաճախ այցելենք նրան, քանի որ ամեն անգամ, երբ նա դպրոց էր վերադառնում, ավելի էր հուզվում: Մեզ ասացին, որ վերցնենք նրան միայն երկարատև դպրոցական արձակուրդների ընթացքում: Ես տխրում եմ այդ չորս տարիները հիշելիս: Մենք գիտեինք, որ իմ որդին դժվարություններ էր ունենում և չէր ուզում մնալ դպրոցում, բայց նաև հասկանում էինք, որ այլ տարբերակ չկար:

Արթուրը չորս տարի անցկացրեց Երևանի հատուկ դպրոցում, մինչև նրա ընտանիքը տեղափոխեց նրան տեղական հատուկ դպրոց։ Արթուրը հուզական պայքարի մեջ էր այդ անցումը կատարելիս: Գոհարը Human Rights Watch-ին պատմեց ընտանիքից հեռու գտնվելու ընթացքում նրա կրած հուզական ապրումների մասին.

> Նույնիսկ տուն վերադառնալուց հետո նա վախենում էր, երբ ինչ-որ տեղ էինք գնում կամ իրեն դպրոց էինք տանում։ Նա մտածում էր, որ լքում էինք իրեն։ Բավականին ժամանակ պետք եղավ նրան, որպեսզի հասկանա, որ դա մշտական չէ, և որ մենք վերադառնալու ենք շատ շուտով։»

Հայաստանում մանկատներում և այլ հատուկ հաստատություններում գտնվող երեխաների մեծամասնությունն այնտեղ են հայտնվում, որովհետև ինչպես և Արթուրը՝ հաշմանդամություն ունեն, կամ աղքատությամբ և այլ խոցելի հանգամանքների պատճառով, որոնք նրանց ընտանիքների համար դժվարացնում են իրենց երեխաների մասին հոգ տանելը։ Իրականում, Հայաստանում խնամքի տակ առնված երեխաների 90 տոկոսն ունեն առնվազն մեկ ծնող։ Չնայած նրան, որ իշխանությունները պարտավոր են սեփական ընտանեկան միջավայրից զրկված

երեխաներին այլընտրանքային խնամքով ապահովել, երկարաժամկետ ինստիտուցիոնալ խնամքը ընտանիքակենտրոն խնամքին պատշաճ փոխարինող այլընտրանք չէ որևէ երեխայի համար, անկախ նրանից, թե նա ունի հաշմանդամություն, թե ոչ: Նույնիսկ լավագույն ռեսուրսներով հագեցած հաստատությունները չեն կարող փոխարինել ընտանիքին և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) ու այլ հետազոտությունները ցույց են տվել, որ կյանքը հաստատություններում կարող է լուրջ հետևանքներ ունենալ երեխայի ֆիզիկական, ճանաչողական և հուզական զարգացման համար:

Հայաստանի կառավարությունը որոշ կարևոր բարեփոխումներ է ձեռնարկում, որոնք ուղղված են երեխաների իրավունքների պաշտպանությանը: Դրանց թվում են պետական հատուկ հաստատություններում երեխաների թվի նվազեցման և այդ երեխաներին իրենց ընտանիքներ վերադարձնելու, համայնքահեն ծառայությունների և այլ միջոցներով ընտանիքներին աջակցելուն ուղղված միջոցառումները, մի գործընթաց, որը հայտնի է որպես բեռնաթափում: Բեռնաթափման հիմնային բաղադրիչներից է կրթական համակարգի բարեփոխումը, որը կընդլայնի բոլոր երեխաների, այդ թվում հաշմանդամություն ունեցող՝ իրենց համայնքներում սովորելու հնարավորությունները:

Չնայած նրան, որ տարիներ շարունակ Սակայն, Human Rights Watch-ը մտահոգված է, որ այդ բարեփոխումները չեն իրագործի Հայաստանում բոլոր երեխաների համար համայնքում ապրելու և որակյալ կրթություն վայելելու հիմնարար իրավունքներն ապահովելու իրենց ողջ ներուժը: Human Rights Watch-ը մասնավորապես մտահոգված է, որ հաշմանդամություն ունեցող երեխաները դուրս կմնան գործընթացից և կհանդիպեն հետագա խտրականության: Human Rights Watch-ի 2016թ. իրականացրած հետազոտությունը ցույց է տալիս, որ Հայաստանի կառավարությունը պետք է շատ ավելի մեծ ջանքեր գործադրի հատուկ հաստատությունների փոխարեն համայնքային այլընտրանքների զարգացումն առաջնահերթություն դարձնելու համար, այլապես հատուկ հաստատություններից շարունակական կախվածության մեջ մնալու ռիսկին կհանդիպի՝ երեխաների, հատկապես հաշմանդամություն ունեցող երեխանի՝ ընտանիքներում մեծանալու իրավունքն ապահովելու փոխարեն:

իրականացված բարեփոխումները նպաստել են հաշմանդամություն ունեցող ավելի մեծ թվով երեխաների ներգրավմանը համայնքային դպրոցներում, հաշմանդամություն ունեցող շատ երեխաներ այդ դպրոցներում չեն ստանում որակյալ կրթություն՝ իրենց ուսումն ապահովող ողջամիտ հարմարեցումների բացակայության պատճառով: Կրթությունը հաշմանդամություն ունեցող անձանց՝ համայնքում լիարժեք ներառման և մասնակցության, ինչպես նաև նրանց մեկուսացմանը և բացառմանը հակազդելու նախապայման է:

Կառավարության՝ բեռնաթափման և ներառական կրթության քաղաքականությունը, այնպես, ինչպես այն իրականացվում է ներկայումս, խտրական է և չի երաշխավորում հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքները այլ երեխաների հետ հավասար հիմունքներով: Որպես ամենացայտուն օրինակ, կառավարությունը նախատեսում է համայնքահեն ծառայություններ տրամադրելու համար ոչ-գիշերօթիկ կենտրոնների վերափոխել երեք մանկատներ, որոնք հայտնի են եղել որպես ընդհանուր տիպի մանկատներ և հիմնականում ընդունել են հաշմանդամություն չունեցող երեխաների: Սակայն, իշխանությունները որևէ ծրագիր չունեն վերափոխելու կամ փակելու այն երեք այլ մանկատները, որտեղ ապրում են հաշմանդամություն ունեցող երեխաները: Այսպիսով, 2020 թվականին, երբ նախատեսվում է ընդհանուր տիպի երեք մանկատները փոխակերպել ծառայություններ մատուցող համայնքահեն հաստատությունների, մանկատներում կմնան միայն հաշմանդամություն ունեցող երեխաները: Մեծ մասը դատապարտված է ողջ կյանքը անտեղի վատնել հաստատությունում:

Հայաստանի կառավարությունը և բեռնաթափման գործընթացում նրա գործընկերները պետք է անհապաղ քայլեր ձեռնարկեն, որպեսզի ներկայումս հատուկ հաստատություններում ապրող և այդպիսի հաստատություններ տեղափոխվելու վտանգի տակ գտնվող բոլոր երեխաների համար հավասարապես առաջնահերթություն համարվի ընտանիքի վրա հիմնված խնամքը: Կառավարությունը պետք է նաև ապահովի որակյալ կրթության տրամադրումը հավասարապես բոլոր երեխաների համար, առանց խտրականության:

Այս զեկույցը պատրաստվել է Human Rights Watch-ի այցելած հինգ պետական մանկատների, տասը պետական դպրոցների, այդ թվում վեց հատուկ դպրոցների և չորս հանրակրթական դպրոցների և 173 անձանց հետ անցկացված հարցազրույցների հիման վրա Հայաստանի ութ քաղաքներում: Մենք զրուցել ենք 47 երեխաների ու պատանիների և մանկատներում ապրող, հատուկ կամ հանրակրթական դպրոցներ հաճախող երեխաների 63 ընտանիքների հետ: Մենք նաև հարցազրույցներ ենք անցկացրել մանկատների, հատուկ և հանրակրթական դպրոցների տնօրենների, ինչպես նաև հաստատություններում սոցիալական աշխատողների, բժիշկների, ուսուցիչների, հոգեբանների, խնամակալների և այլ աշխատակիցների հետ:

Չարաշահումներ հաստատություններում գտնվող երեխաների և երիտասարդների նկատմամբ

Հայաստանում գոյություն ունեն երեք տեսակի պետական հաստատություններ՝ մանկատներ, հատուկ դպրոցներ և գիշերօթիկ հաստատություններ, որտեղ

երեխաները սնվում և քնում են շաբաթվա ընթացքում: Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի, Հայաստանի երեխայի խնամքի պետական հաստատություններում կա մոտ 3500 երեխա, իսկ մանկատներում գտնվող 670 երեխաների 70 տոկոսը հաշմանդամություն ունի: Human Rights Watch-ի կողմից Հայաստանում այցելած հաստատությունների մեծ մասում նյութական պայմանները բավարար են եղել ապաստանելու, հագուստի, սննդի, ջեռուցման և այլ հիմնական խնամքի առումով: Որոշ հաստատություններ ունեցել են բարձրորակ, ժամանակակից բուժական սարքավորումներ և ծառայություններ: Սա հիմնականում միջազգային դոնորների, այդ թվում նաև անհատների, հիմնադրամների, միջազգային կազմակերպությունների, արտասահմանյան կառավարությունների և այլ կառույցների զգալի աջակցության արդյունքն է:

Այդուհանդերձ, դիտարկումների միջոցով իրականացված բազմաթիվ ուսումնասիրություններ արձանագրել են սահմանափակ ֆիզիկական, մտավոր, հուզական և սոցիալական զարգացում ընտանեկան միջավայրից կտրված և խնամքի հաստատություններ տեղափոխված երեխաների շրջանում: Ինստիտուցիոնալ խնամքը սահմանվում է որոշակի հատկանիշներով, որոնք վնասակար են երեխաների համար, այդ թվում ընտանիքներից և համայնքից բաժանումը, ներփակումը նույն տարիքային և հաշմանդամության խմբերում, հակաանհատականացումը, գերբնակեցումը, խնամակալի հետ հարաբերությունների անկայունությունը, խնամակալի՝ օպերատիվ արձագանքելու պատրաստակամության բացակայությունը, կրկնվող՝ քնի և ուտելու առօրեական հաստատված ժամանակացույցը և առօրյա հիգիենայի կարգը, որը համապատասխանեցված չէ երեխաների կարիքներին և անհատական նախասիրություններին: Ուսումնասիրությունները նաև պարզել են, որ ինստիտուցիոնալ խնամքից ընտանիքներ տեղափոխված երեխաները, այդ թվում որդեգրող և խնամատար ընտանիքները, ավելի լավ արդյունքներ են ցուցաբերում:

Ի հավելումն բուն ինստիտուցիոնալացման արդյունքում երեխաներին հասցված վնասի, 2016թ. Human Rights Watch-ի հետազոտությունը արձանագրել է չարաշահումներ անգամ ռեսուրսների առումով ամենահագեցած հաստատություններում ապրող հաշմանդամություն ունեցող և չունեցող երեխաների նկատմամբ, այդ թվում անհատական ուշադրության և խնամքի բացակայություն, գաղտնիության բացակայություն և հաշմանդամություն ունեցող երեխաների համար մատչելիության պակաս: Ինչպես հաստատություններում բնակվող երեխաները, այնպես էլ նրանց ծնողները հաճախ խիստ հուզական ցավ են ապրում իրենց բաժանման հետևանքով:

Բացի այդ, երեխաների՝ մասնավորապես հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված ծառայությունների կենտրոնացումը հաստատություններում և ոչ թե համայնքում կարող է նպաստել իրենց երեխաներին հաստատություններ ուղարկելու բազմաթիվ ընտանիքների որոշմանը և համայնքի երեխաներին զրկել այն ծառայություններից, որոնք նրանց կարող էին անհրաժեշտ լինել: Խնամքի հաստատությունները ներկայումս ծառայում են որպես սոցիալական ծառայությունների մատուցման հիմնական մեխանիզմ՝ Հայաստանի շատ շրջաններում: Human Rights Watch-ի հետազոտությունը պարզել է, որ հիմնական նյութական աջակցություն (սնունդ, հագուստ և այլն) և վերապատրաստված աշխատակիցներ, ովքեր երեխաներին կարող են տրամադրել վերականգնողական, կրթական և այլ ծառայություններ որպես կանոն կարելի է գտնել միայն հաստատությունների պատերից ներս, որտեղ դրանք հասանելի են միայն հաստատությունում ապրող երեխաների համար:

Այս կառուցվածքը նաև նշանակում է, որ շատ երեխաներ, ովքեր մնում են իրենց ընտանիքներում և կարող են կարիք ունենալ կամ օգուտ քաղել որոշ ծառայություններից և ռեսուրսներից, հաճախ ի վիճակի չեն օգտվել դրանցից: Ըստ Հայաստանում երեխաների իրավունքներով զբաղվող մի փորձագետի, Հայաստանում ապրող 830,000 երեխաների մոտ կեսը կարող է օգտվել տարբերակված ծառայությունների որոշակի տեսակներից, որոնք լայնորեն հասանելի չեն համայնքներում, սակայն կենտրոնացված են հաստատություններում:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի ուսումնասիրությունը, որը հակադրել է հաստատությունների ծախսերը Հայաստանում համայնքահեն ծառայությունների հետ,պարզել է, որ «խնամքի հաստատությունների ծառայությունները շատ թանկ են»: ՅՈՒՆԻՍԵՖ-ը եզրակացրել է, որ երեխաների համար Հայաստանում հաստատություններին տրամադրվող ֆինանսական աջակցությունը, որը ներկայումս մեկ երեխայի համար կազմում է տարեկան 3000- 5000 ԱՄՆ դոլար, կարող է վերաբաշխվել համայնքահեն ծառայությունների և ընտանիքների ուղղակի աջակցության ուղղությամբ, և որ այս տեսակի աջակցությունը երկարաժամկետ առումով նվազ ծախսատար կլինի:

Խնամքի հաստատություններում երեխաները բաժանվում են խմբերի և, որպես կանոն, ուտում, քնում և այլ գործողություններ են կատարում այդ խմբերում: Երեխաները և երիտասարդ չափահասները, որպես կանոն, գտնվում են 10-ից 12, բայց ոչ ավել քան 17, երեխաներից բաղկացած խմբերում՝ երկու խնամակալների հսկողության ներքո: Իրենց հոգածության ներքո գտնվող նման մեծ թվով երեխաների պարագայում անգամ առավել նվիրված և հոգատար անձնակազմի համար անհատականացված

ուշադրություն և խնամք ապահովելը կարող է մարտահրավեր լինել, հատկապես շատ փոքր երեխաների կամ իրենց հաշմանդամությանը համապատասխանող որոշակի աջակցության կարիք ունեցող երեխաների դեպքում: Ինստիտուցիոնալ համակարգի հարմարության նկատառումներով երեխաներին մեծ խմբերով կազմակերպելը հանգեցնում է նաև անձնական կյանքի գաղտնիության բացակայությանը, երբ ավելի մեծահասակ երեխաները և երիտասարդ չափահասները նույն ննջասենյակում են քնում 13 այլ երեխաների հետ:

Խնամքի հաստատությունները քիչ քայլեր են ձեռնարկում երեխաներին ինքնուրույն, չափահաս կյանքի համար նախապատրաստելու ուղղությամբ: Անկախ կյանքի նախապատրաստումը բացակայում է ինչպես հաշմանդամությունունեցող, այնպես էլ չունեցող երեխաների համար, բայց դա առավելապես զգալի է հաշմանդամություն ունեցող երեխաների դեպքում: Հաշմանդամություն ունեցող երեխաները, ում տարիքը հաստատություններում բնակվելու համար լրանում է, կարող են անորոշ ժամանակով մնալ հաստատություններում համայնքում այլընտրանքների բացակայության, ինչպես նաև18 տարեկան դարձած հաշմանդամություն ունեցող որոշ երիտասարդների գործունակության իրացումը պատկան մարմինների կողմից չապահովելու պատճառով: Որպես հետևանք, հաշմանդամություն ունեցող երիտասարդները հաստատություններում զրկված են այն հնարավորություններից, որոնք մարդկանց մեծ մասի համար ինքնըստինքյան հասանելի են, ինչպես օրինակ բնակության վայրի ընտրության հնարավորությունը, աշխատանք ունենալ, իրենց ընտրությամբ ընկերների շրջանակի ձևավորումը, զուգընկեր կամ ամուսին գտնելը, երեխաներ մեծացնելը և իրենց ընտրությամբ մշակութային և այլ գործունեություն վայելելը:

Միջազգային իրավունքի ներքո, պետությունները պետք է երաշխավորեն, որպեսզի երեխաները չբաժանվեն իրենց ծնողներից, եթե, իհարկե, բաժանումը չի բխում երեխայի «լավագույն շահերից»: Երեխաների այլընտրանքային խնամքի ՄԱԿ-ի ուղեցույցները սահմանում են, որ ֆինանսական և նյութական աղքատությունը երբեք չեն կարող հիմք հանդիսանալ երեխային ծնողական խնամքից զրկելու կամ երեխային այլընտրանքային խնամքի տակ առնելու համար, սակայն պետք է դիտարկվեն որպես ընտանիքին համապատասխան օժանդակություն ցուցաբերելու անհրաժեշտության ազդակ: Պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ բոլոր իրավական, հայեցակարգային և ֆինանսական միջոցները՝ ապահովելու հաար համարժեք այլընտրանքային խնամքի հնարավորություններ, որոնք առաջնահերթությունը տալիս են «ընտանիքի և համայնքի վրա հիմնված լուծումներին»:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան (ԵԻԿ) և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան (ՀԻԿ) պարտավորեցնում են Հայաստանին ապահովել, որպեսզի հաշմանդամություն ունեցող երեխաներն օգտվեն իրենց իրավունքներից առանց խտրականության: Այս համաձայնագրերը Հայաստանից պահանջում են հաշմանդամություն ունեցող երեխաներին համարել, մյուսների հետ հավասար հիմունքներով, իրավունքներ ունեցող հասարակության անդամներ և վերացնել խոչընդոտները, որոնք խանգարում են հասարակության մեջ երեխաների լիարժեք ներառմանը: Ոչ մի դեպքում երեխան չպետք է բաժանվի ծնողներից հաշմանդամություն ունենալու պատճառով և պետությունները պետք է «ներդնեն բոլոր ջանքերը ավելի լայն ընտանիքի միջավայրում այլընտրանքային խնամք ապահովելու համար, իսկ չստացվելու դեպքում, ապա՝ տվյալ համայնքի ընտանեկան միջավայրում»:

Որակյալ ներառական կրթության մատչելիության պակաս

Որպեսզի Հայաստանի կառավարության բեռնաթափման ծրագիրը հաջողության հասնի, կառավարությունը պետք է երաշխավորի համայնքահեն ծառայություններ ընտանիքների և երեխաների համար, այդ թվում՝ կրթության ոլորտում:

Որակյալ կրթության մատուցումը համայնքային դպրոցներում բոլոր երեխաների համար, անկախ հաշմանդամությունից, վերափոխման կարևոր բաղադրիչն է այն համակարգի, որի պարագայում հաշմանդամություն ունեցող երեխաները կամ կրթություն էին ստանում իրենց համար նախատեսված, այսպես կոչված «հատուկ դպրոցներում» և տնային մեկուսացման պայմաններում՝ դպրոցների մատչելիության խոչընդոտների պատճառով, կամ ընդհանրապես կրթություն չէին ստանում: Առանց համայնքում մատչելի, որակյալ կրթության՝ հաշմանդամություն ունեցող երեխաները խնամքի հաստատություններում շարունակական մեկուսացման մեջ մնալու վտանգի տակ են:

Կրթությունը, որի պարագայում հանրակրթական դպրոցներում հաշմանդամություն ունեցող և չունեցող երեխաները սովորում են միասին և հաշմանդամություն ունեցող երեխաները ստանում են հանրակրթական միջավայրում իրենց հաջողության հասնելու համար անհրաժեշտ հարմարեցումները, հայտնի է որպես ներառական կրթություն: Որակյալ ներառական կրթությունը կառավարությունների համար համարվում է կրթության ոլորտում համընդհանրություն և հակախտրականություն երաշխավորելու ամենահամապատասխան միջոցը: Ներառական կրթությունը չի վերաբերում միայն հաշմանդամություն ունեցող երեխաների կրթությանը. այն պետք է օգտակար լինի բոլոր երեխաներին և «կենտրոնական լինի բոլոր սովորողների համար

որակյալ կրթության հասնելու և ավելի ներառական հասարակություններ զարգացնելու գործում»:

Հայաստանի կառավարությունը պարտավորվել է մինչև 2022թ. բոլոր տարրական և միջնակարգ դպրոցները (պարտադիր կրթություն՝ 1-ից 9-րդ դասարաններ) ներառական դարձնել հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Ըստ Կրթության և գիտության նախարարության, 2016-2017թթ. ուսումնական տարվա ընթացքում «հատուկ կրթական կարիքներ» ունեցող 6700 երեխաներ սովորում են ներառական կրթություն ապահովող հանրակրթական դպրոցներում: Սակայն, Human Rights Watch-ը պարզել է, որ հաշմանդամություն ունեցող երեխաները, այդ թվում ներառական համարվող հանրակրթական դպրոցներում, հաճախ չեն ստանում որակյալ կրթություն մյուսների հետ հավասար հիմունքներով: Ողջամիտ հարմարեցումների բացակայությունը, այդ թվում շենքերի տարրական ֆիզիկական մատչելիությունը, վերապատրաստված՝ բավարար թվով աշխատակազմը, երեխաների կրթության նկատմամբ անհատականացված մոտեցման պակասը և սոցիալական զարգացման աստիճանը, խոչընդոտում են հաշմանդամություն ունեցող շատ երեխաների որակյալ կրթություն ստանալու կարողությունը: «Ներառական» հանրակրթական դպրոցներում և հատուկ դպրոցներում սովորող հաշմանդամություն ունեցող որոշ երեխաներ դպրոց են հաճախում ընդամենը մի քանի ժամով, կամ շաբաթվա ոչ բոլոր օրերին: Չնայած, այսպես կոչված ներառական դպրոցներ հաճախելուն, հաշմանդամություն ունեցող երեխաները հաճախ ներկա չեն դասերին մյուս երեխաների հետ միասին, կամ ներկա են դասարաններում, բայց լիովին ներգրավված չեն կրթական ծրագրում: Նրանց կրթությունը հաճախ բաղկացած է գլխավորապես կամ բացառապես մեկ ժամ կամ ավելի կարճ տևողությամբ՝ շաբաթական մեկ կամ մի քանի անգամ անցկացվող անհատական դասերից:

Ներառական համայնքային և հատուկ դպրոցներում հաճախ բավարար կադրերի պակաս կա, մասնավորապես օգնականների, ովքեր կարող են անմիջական աջակցություն ապահովել մեկ կամ մի քանի երեխաների համար: Արդյունքում, որոշ դեպքերում ծնողներից մեկը, առավել հաճախ երեխայի մայրը, ստիպված է երեխայի հետ մնալ դասարանում և աջակցել նրան: Սա կարող է խոչընդոտել երեխաների ներգրավմանը և խաթարել ընտանեկան կյանքը, այդ թվում՝ ծնողի վճարովի աշխատանքի անցնելու հնարավորությունը կամ մյուս երեխաների խնամքը:

Որոշ ծնողներ շարունակում են հատուկ դպրոցներ ընտրել իրենց հաշմանդամություն ունեցող երեխաների համար՝ փոքր չափերի դասարանների և ավելի անհատականացված մոտեցումների որոնման արդյունքում: Հայաստանի օրենսդրությունը պաշտպանում է իրենց ընտրությամբ երեխաներին հատուկ դպրոց

ուղարկելու ծնողների իրավունքը: Սակայն, այդ դպրոցները կարող են հեռու գտնվել իրենց տներից և հաճախ պահանջում են, որպեսզի երեխաները մշտապես կամ դպրոցական շաբաթվա ողջ ընթացքում ապրեն դպրոցում, նաև հնարավոր է չապահովեն որակյալ կրթություն և արգելակեն համայնքում երեխաների լիարժեք ներգրավվածությունը: Ծնողները հաճախ նշել են երեխայի հաշմանդամության հետ կապված որոշակի վարքագիծ կամ առանձնահատկություններ, ինչպիսիք են օրինակ՝ խոսելու, գրելու, ինքնուրույն տեղաշարժվելու, երկար ժամանակ հանգիստ նստելու, կամ առանց աջակցության նստելու անկարողությունը, որոնց համար շատ դպրոցներ հարմարեցումներ չունեն, որպես իրենց երեխայի հետ դպրոցում մնալու կամ հատուկ դպրոց ընտրելու հիմնական պատճառ:

Human Rights Watch-ը նաև պարզել է, որ հաշմանդամություն ունեցող երեխաները կարող են տնային ուսուցման ուղղորդվել՝ դպրոցներում, տներում և համայնքում մատչելիության խնդիրների, ինչպես նաև դպրոցների կողմից այլ ողջամիտ հարմարեցումներ չտրամադրելու պատճառով: Տնային ուսուցման պարագայում տեղական դպրոցների ուսուցիչներն այցելում են երեխաներին տանը և շաբաթական մի քանի ժամ հիմնական գրագիտության և թվաբանության պարապմունքներ անցկացնում՝մաթեմատիկա, հայոց լեզուն ռուսաց լեզու առարկաներից, որը չի կարող համարվել որակյալ կրթություն: Այս երեխաները սովորաբար դասընկերների կամ այլ հասակակիցների հետ շատ քիչ շփում ունեն կամ ընդհանրապես չունեն:

Միջազգային չափանիշները պահանջում են, որպեսզի աշակերտներին աջակցելու համար, անկախ նրանց հաշմանդամությունից, դպրոցներն ապահովեն ողջամիտ հարմարեցումներ: ՀԻԿ-ը (Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն) հայտարարել է, որ հաշմանդամություն ունեցող անձանց կրթությունը պետք է հնարավորություն տա «Յուրաքանչյուր ուսանողի ապրել, սովորել և գործել ինքնուրույն, համապատասխան աջակցությամբ՝ հաշվի առնելով անհատական կարողությունները»: ՀԻԿ-ը նաև նշում է, որ հաշմանդամություն ունեցող երեխաներին տրամադրվող ցանկացած աջակցության միջոց պետք է «համահունչ լինի ներառման նպատակին: Դրանք պետք է նախագծված լինեն այնպես, որ ամրապնդեն հաշմանդամություն ունեցող երեխաների՝ դասարանում մասնակցելու հնարավորությունները... այլ ոչ թե մեկուսացնեն նրանց»:

Կառավարության արձագանքը

Հայաստանի կառավարությունը մի շարք դրական քայլեր է ձեռնարկել երեխաների համար ընտանիքակենտրոն խնամքը առաջնահերթություն դարձնելու ուղղությամբ: ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսական

օժանդակությամբ, ՅՈՒՆԻՍԵՖ-ն աջակցում է կառավարությանը մի ծրագրի շրջանակներում, որի նպատակն է ավելի քան 4 տարվա ընթացքում ողջ երկրի տարածքում 50 տոկոսով նվազեցնել երեխաների թիվը հաստատություններում և 22 հաստատություններ, այդ թվում մանկատներ, հատուկ դպրոցներ և գիշերօթիկ դպրոցներ, վերափոխել համայնքահեն ծառայությունների կենտրոնների: Երեխայի իրավունքների պաշտպանության կառավարության ռազմավարական ծրագրի նոր նախագիծն ավելի հեռու է գնում՝ նշելով,որ «հաստատություններում գտնվող երեխաների ավելի քան 70 տոկոսը կտեղափոխվեն ընտանիքներ» մինչև ծրագրի ավարտը 2021 թվականին :

ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ իրականացվող ծրագիրը ներառում է իրավական բարեփոխումներ, որոնք ուղղված են հետևյալ համակարգերի վերանայմանը՝ խնամատարություն և որդեգրում, սոցիալական աշխատողներ և դեպք վարողներ, երեխաներին հաստատություններ ուղարկելու կանխարգելում, հաստատությունների վերափոխում սոցիալական աջակցություն տրամադրող կենտրոնների, վերականգնողական ծառայություններ, ցերեկային խնամք, խնամատար ընտանիքների թվի ավելացում, աջակցություն կենսաբանական ընտանիքներին՝ օգնելով նրանց հոգ տանել իրենց երեխաների մասին և ներառական կրթություն:

Հաստատությունների այլընտրանքը, ինչպիսիք խնամատարության և որդեգրման ծառայություններն են, ներկայումս մշակման փուլում գտնվելով հանդերձ, նույնպես մնում է նվազագույն մակարդակի վրա, սակայն պետք է զարգանա բեռնաթափման գործընթացին համաչափ: Ներկայումս, ընտանեկան օրենսգրքի այն հիմնական փոփոխությունները, որոնք հնարավորություն կստեղծեն խնամատար ընտանիքներում ավելի մեծ թվով երեխաներ տեղակայելու և որդեգրումը խթանելու համար, սառեցված են կառավարությունում: Մեկ առանցքային փոփոխությունը թույլ կտա երեխաներին, ում ծնողները չեն հրաժարվել իրենց ծնողական իրավունքներից, տեղակայել խնամատար ընտանիքների խնամքի ներքո: Ներկայումս, ամբողջ Հայաստանում ընդհանուր առմամբ կան 23 խնամատար ընտանիքներ, իսկ բյուջետային աջակցությունը նախատեսված է ընդամենը 25 ընտանիքների համար: Առանց ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ կատարելու և այլընտրանքների համար սահմանված բյուջետային պարտավորությունների, կառավարության բեռնաթափման ծրագիրը կդադարի գործել:

Բացի այդ, համայնքների մեծ մասում, անապահով երեխաների և ընտանիքների համար նախատեսված սոցիալական ծառայությունները, այդ թվում՝ բացահայտված կարիքների հիման վրա ընտանիքի աջակցության տարբերակված տեսակները, դեռևս

սահմանափակ են: Չնայած նրան, որ այս տեսակի ծառայությունները մշակման փուլում են ՅՈՒՆԻՍԵՖ-ի օժանդակությամբ իրականացվող ծրագրի հետ համատեղ, շատ կարևոր է, որ դրանք մշակվեն բեռնաթափման գործընթացին համաչափ արագությամբ, և հաշմանդամություն ունեցող և չունեցող երեխաները հավասար վերաբերմունք ստանան:

Ինչպես վերը նշվեց, չնայած նրան, որ կառավարությունը պարտավորվել է փակել մի շարք հաստատություններ, այն մինչ օրս պնդում է դրանցից մի քանիսը բաց պահելու օգտին, ինչն այդ հաստատություններից շարունակական կախվածության վտանգ է առաջացնում: Այս խնդիրը կխորանա հաստատությունների համար այլընտրանքի բացակայությամբ, ինչպիսիք են խնամատար ընտանիքներն ու որդեգրումը և համայնքահեն ծառայությունների ու ներառական կրթության բացակայությունը: Human Rights Watch-ը իր 2016թ. հետազոտության շրջանակներում պարզել է, որ հաշմանդամություն ունեցող և չունեցող որոշ երեխաներ դուրս են գրվել մի մանկատնից կամ հաստատությունից, միայն մեկ այլ մանկատուն կամ բնակելի հատուկ դպրոց տեղափոխվելու համար, շատ դեպքերում հենց այսպիսի պատճառներով:

Երեխաները, ովքեր դուրս են գալիս հաստատություններից, կարող են վերադարձվել ընտանիքներ, որոնք հնարավոր է դեռևս կանգնած են այն նույն մարտահրավերներից շատերի առջև, որոնց պատճառով տեղի է ունեցել երեխայի նախնական տեղափոխումը հաստատություն: Նրանց շատ դեպքերում կարող է էական և կայուն աջակցության անհրաժեշտ լինել, ներառյալ սոցիալական աշխատողների կամ նման մասնագետների հետ կանոնավոր շփումը և նրանց աջակցությունը:

Հիմնական առաջարկություններ հետագա քայլերի համար

Հայաստանի կառավարությունը հստակ դիրքորոշում ունի բեռնաթափման և երեխաների համար ընտանիքի վրա հիմնված խնամքին առաջնահերթություն տալու ուղղությամբ որոշակի պարտավորություններ ստանձնելու առումով: Այն նաև համարձակ խոստում է տվել բոլոր դպրոցները ներառական դարձնելու մասին՝ ազդարարելով, որ ճանաչում է հաշմանդամություն ունեցող երեխաների՝ համայնքում ներառված լինելու իրավունքը: Կառավարությունը պետք է լիովին և հետևողականորեն կատարի այս պարտավորությունները այնպիսի եղանակով, որը լիարժեքորեն կհարգի ընտանիքների և երեխաների իրավունքները և կբավարարի նրանց կարիքները:

Հայաստանի կառավարությունը պետք է.

- Կանխի խնամքի հաստատություններում երեխաների նոր տեղակայումը:
- Հաստատի խնամքի հաստատությունների կիրառումը (բոլոր երեխաների համար՝ սահմանափակ բացառություններով) դադարեցնելու՝ հստակ ժամկետով սահմանված ծրագիր: Երեխաները չպետք է տեղակայվեն խնամքի հաստատություններում, բացառությամբ արտակարգ դեպքերի կամ քույրերից ու եղբայրներից տարանջատումը կանխելու համար, սահմանափակ տևողությամբ՝ունենալով ընտանիքի վերամիավորման կամ այլ համապատասխան երկարաժամկետ այլընտրանքային խնամքի անցելու ծրագիր, որպես երեխայի համար վերջնական լուծում:
- Բեռնաթափման գործընթացում դադարեցնել խտրականությունը, այդ թվում երաշխավորելով, որ բեռնաթափման ազգային քաղաքականությունը ներառում է հաշմանդամություն ունեցող երեխաներին, և երեխաների նկատմամբ խտրական մոտեցում չի ցուցաբերում հաշմանդամության, հաշմանդամության տեսակի կամ աջակցության կարիքների հիման վրա:
- Ապահովի, որ հաստատություններին հատկացվող ֆինանսական և այլ ռեսուրսներն իրականում ապակենտրոնացված լինեն և վերաուղղորդվեն համայնքահեն ծառայություններ հիմնելու նպատակին և չմնան բացառապես վերափոխված հաստատություններում:
- Ապահովի, որ խնամատարության և որդեգրման համակարգերը լիովին ֆունկցիոնալ վիճակում լինեն մինչև երեխաների՝ խնամքի հաստատություններից դուրս գրվելը: Ապահովի, որ խնամատարությունը և որդեգրումը խթանող և իրականացնող համակարգերը հստակ միջոցներ

ձեռնարկեն, որպեսզի խնամատար և որդեգրող ընտանիքներում հաշմանդամություն ունեցող երեխաները տեղակայվեն հաշմանդամություն չունեցող երեխաների հետ հավասար հիմունքներով։

- Ստեղծի և պահպանի մի շարք նպատակային, մատչելի, տարաբնույթ համայնքահեն ծառայություններ դժվարին իրավիճակներում գտնվող ընտանիքների, ինչպես նաև անհատների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների համար, որոնք կկանխեն հաստատություններին դիմելու անհրաժեշտությունը և կաջակցեն, որպեսզի ընտանիքներն իրենց երեխաներին տանը մեծացնեն։
- Հատուկ ուշադրություն դարձնի այն ընտանիքների կարիքներին, որոնց երեխաները վերջերս են տուն վերադարձել հաստատություններից։
- Բոլոր մակարդակներում իրականացնի ներառական կրթությունն այնպես, որ այն հասնի հաշմանդամություն ունեցող, այդ թվում աջակցության լուրջ կարիքներ ունեցող երեխաների՝ առավելագույն ներառմանը հանրակրթական դպրոցներում։
- Նվազագույնի հասցնի դպրոցներում հաշմանդամություն ունեցող երեխաներին առանձին դասընթացների համար դասարաններից դուրս բերելու դեպքերը։ Թեև երեխաներից ոմանք կարող են որոշակի անհատական կամ փոքր խմբերով դասերի կարիք ունենալ, այդ դասընթացները պետք է առավելապես նպաստեն երեխաների ակադեմիական և սոցիալական զարգացմանը և չպետք է փոխարինեն դասարանում երեխաների լիարժեք մասնակցությանը։
- Դասարաններում ապահովի բավարար թվով և վերապատրաստված անձնակազմի առկայություն՝ բավարար ֆինանսական աջակցություն տրամադրելով ուսուցչի օգնականներին և աշակերտների օգնականների համար՝ ներառում ապահովող հարաբերակցությամբ։
- Միջազգային դոնորները պետք է աջակցեն կառավարությանն իրականացնել այս առաջարկությունները։

Մեթոդաբանություն

Human Rights Watch-ը դաշտային հետազոտության ընթացքում 2016 թվականի ապրիլ, մայիս և դեկտեմբեր ամիսներին հարցազրույցներ է անցկացրել 173 անձանց հետ Հայաստանի ութ քաղաքներում՝ Երևան, Կապան, Գորիս, Վանաձոր, Գյումրի, Արմավիր, Հացիկ և Ճամբարակ։

Հետազոտողները զրուցել են 47 երեխաների և երիտասարդ անձանց հետ, այդ թվում՝ 8-ից 17 տարեկան 32 երեխաների և 18-ից 29 տարեկան 14 երիտասարդների հետ։ Մենք նաև զրուցել ենք մանկատներում ապրող, հատուկ դպրոցներ հաճախող կամ այնտեղ բնակվող, ինչպես նաև հանրակրթական դպրոցներ հաճախող 63 երեխաների ընտանիքների հետ։ Հարցազրույցների մեծ մասը Human Rights Watch-ը վարել է գաղտնիության պայմաններում, ներառյալ հաստատություններում անցկացված բոլոր հարցազրույցները։ Որոշ դեպքերում երեխաները և ծնողները հարցվել միմյանց ներկայությամբ։

Human Rights Watch-ն այցելել է հինգ մանկատուն և տասը դպրոց, այդ թվում՝ վեց հատուկ և չորս հանրակրթական դպրոցներ։ Այս հաստատություններ կատարված այցերի ընթացքում մենք զրուցել ենք երեխաների, ինչպես նաև թվով 31 աշխատակիցների հետ, որոնց թվում՝ տնօրենների, ուսուցիչների, սոցիալական աշխատողների, բժիշկների, խնամակալների, հոգեբանների, մեկ իրավաբանի և անձնակազմի այլ անդամների հետ։ Բոլոր դեպքերում հետազոտողները երեխաների հետ հարցազրույցները վարել են գաղտնիության պայմաններում։

Բոլոր դեպքերում, Human Rights Watch-ը տեղեկացրել է հարցվողներին հարցազրույցի նպատակի մասին, ներկայացրել, որ նրանք դրա դիմաց չեն ստանալու որևէ անձնական ծառայություն կամ օգուտ և որ մասնակցությունը հարցազրույցներին բացառապես կամավոր հիմունքներով է։ Մասնակիցները բանավոր կերպով տվել են իրենց իրազեկ համաձայնությունը հարցմանը մասնակցելու համար։

Եթե այլապես նշված չէ, մենք բոլոր երեխաների, երիտասարդ անձանց և նրանց ընտանիքների համար օգտագործել ենք կեղծանուններ՝ նրանց մասնավոր կյանքը պաշտպանելու համար։ Որոշ դեպքերում մենք նաև թաքցրել ենք այլ մանրամասներ, ինչպես օրինակ հաստատության անվանումը, որտեղ երեխան ապրում կամ ապրել է։ Մենք նաև չենք հրապարակել հաստատությունների որոշ աշխատակիցների անուններ ը և այլ մանրամասներ՝ նրանց հնարավոր ճնշումներից պաշտպանելու համար։

Human Rights Watch-ը հանդիպել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ կրթության և գիտության, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունների, Երևանի քաղաքապետարանի, երեխաների պաշտպանության մի մարզային կառույցի և Ազգային գնահատման կենտրոնի ներկայացուցիչների հետ: Այս հետազոտության շրջանակներում մենք նաև ուսումնասիրել ենք պետական քաղաքականության մի շարք հայեցակարգեր, օրենքներ և ոլորտին առնչվող զեկույցներ, որոնք հրապարակվել են ՄԱԿ գործակալությունների և հռչակագրի կողմ հանդիսացող մարմինների, Եվրոպական միության և հասարակական կազմակերպությունների կողմից: 2016թ. նոյեմբերին Human Rights Watch-ը նամակներ է ուղարկել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ կրթության և գիտության, ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություններին և Երևանի քաղաքապետարանին՝ խնդրելով կոնկրետ հարցերի պատասխաններ: Այս նամակագրությունն առկա է այս զեկույցի հավելվածում:

Human Rights Watch-ը նաև հարցազրույցներ է վարել Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (UNICEF), Ամերիկայի միացյալ նահանգների միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ), Համաշխարհային բանկի, ինչպես նաև երեխաների իրավունքներով զբաղվող մի շարք խոշոր միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ Հայկական Կարիտաս, Հայաստանի մանուկներ հիմնադրամի (COAF), Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ), Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի, Փրկեք երեխաներին, UOU մանկական գյուղեր և Վորլդ Վիժն կազմակերպությունների աշխատակիցների հետ: Human Rights Watch-ը հանդիպել է նաև Հայաստան տարբեր քաղաքներից 17 տեղական հասարակական կազմակերպությունների և հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Երեխաների հետ հարցազրույցներն անցկացվել են հայերենով, հայերեն և անգլերեն լեզուներին վարժ տիրապետող թարգմանչի աջակցությամբ, բացառությամբ անգլերենի խորը իմացությամբ մի երեխայի հետ անգլերենով անցկացված մեկ հարցազրույցի: Ծնողների, հաստատությունների աշխատակիցների, պետական պաշտոնյաների և հայկական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հարցազրույցները հիմնականում անցկացվել են ռուսերենով՝ այդ լեզվին վարժ տիրապետող հետազոտողների կողմից: Որոշ դեպքերում, այդ անձանց հետ հարցազրույցներն անցկացվել են հայերենով՝ թարգմանչի աջակցությամբ:

Համաձայն միջազգային գործիքների, «երեխա» տերմինը, այնպես, ինչպես այն կիրառվում է այս զեկույցում, վերաբերում է 18 տարեկանից ցածր անձի, իսկ «երիտասարդ անձիք» ձևակերպումը վերաբերում է 18-ից 30 տարեկան անձանց:

I. Հայաստանի խնամքի հաստատությունների նկարագիրը

Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի, 2016թ. ապրիլի դրությամբ, Հայաստանի խնամքի հաստատություններում եղել է մոտ 3700 երեխա; նրանց 90 տոկոսն ունի առնվազն մեկ ծնող:[1] Հայաստանում կան երեք տեսակի պետական խնամքի հաստատություններ՝ մանկատներ, հատուկ դպրոցներ և գիշերօթիկ հաստատություններ: Մանկատները բաժանվում են երկու տեսակի, ընդհանրացված՝ հաշմանդամություն չունեցող երեխաների համար, և մասնագիտացված՝ հաշմանդամություն ունեցող երեխաների համար:[2] Մանկատները և գիշերօթիկ հաստատությունները գտնվում են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության, իսկ հատուկ դպրոցները՝ Կրթության նախարարության, ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության կամ Երևանի քաղաքապետարանի հսկողության տակ:

2016թ. մայիսի դրությամբ մանկատներում բնակվող 670 երեխաների 70%-ը հաշմանդամություն ունի:[3] Մանկատներում երեխաները և երիտասարդ չափահասները բնակվում են մշտական հիմունքներով: Դեպի տուն այցերը կամ ընտանիքի անդամների կողմից այցելությունները հազվադեպ են մանկատների երեխաների համար: Գիշերօթիկ հաստատություններում երեխաները սովորաբար անցկացնում են դպրոցական շաբաթը,սնվում և քնում այնտեղ և օրվա ընթացքում հաճախում համայնքային դպրոց: Շատ երեխաներ տուն են վերադառնում հանգստյան օրերին, չնայած որոշ երեխաներ կարող են շարունակ մնալ գիշերօթիկ հաստատություններում և տուն վերադառնալ միայն դպրոցական արձակուրդների ընթացքում:

Հատուկ դպրոցներն ամենամեծ բազմազանությունն ունեն պայմանների առումով՝ որոշ երեխաներ այնտեղ են բնակվում մշտական հիմունքներով, բացառությամբ դպրոցական արձակուրդների, որոշ երեխաներ բնակվում են միայն դպրոցական շաբաթվա ընթացքում, իսկ որոշ երեխաներ հաճախում են միայն դպրոցական դասերի ժամանակ: Հատուկ դպրոցները ժառանգություն են Խորհրդային միությունից, երբ

---

[1] Human Rights Watch, հարցազրույց Տանյա Ռադոչայի, Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչ, Արտակ Շաքարյանի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի Երեխաների պաշտպանության ծրագրի համակարգող, և Ջորջ Աբաջյանի հետ, ՅՈՒՆԻՍԵՖ-ի Երեխաների պաշտպանության ծրագրերի պատասխանատու, Երևան, 12-ը ապրիլի, 2016թ.

[2] Մասնագիտացված մանկատները խնամք են տանում, այսպես կոչված, «խիստ սահմանափակ կարողություններով» երեխաների մասին, ըստ կառավարության թիվ 957-Ն որոշման՝ «ՀՀ կառավարության մի շարք որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին», որն ընդունվել է 8-ը սեպտեմբերի. 2016թ.

[3] Human Rights Watch, հարցազրույց Գեղանուշ Գյունաշյանի հետ, Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, 24-ը մայիսի, 2016թ.

հաշմանդամություն ունեցող երեխաները գրեթե բացառապես սովորում էին ըստ իրենց հաշմանդամության տեսակի մասնագիտացված հաստատություններում: 2016թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ Հայաստանում կային 20 հատուկ դպրոցներ, և դրանց մի մասում ընդգրկված են ինչպես հաշմանդամություն ունեցող, այնպես էլ չունեցող երեխաներ: Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի, հատուկ դպրոցներում ընդգրկված երեխաների միայն 18 տոկոսն է գրանցված որպես հաշմանդամություն ունեցող:[4]

Խնամքի հաստատությունները, դրանցում կենտրոնացված ծառայությունների և անձնակազմի միջոցով, կառավարության համար ծառայում են որպես սոցիալական ծառայությունների մատուցման հիմնական մեխանիզմ կյանքի դժվարին պայմաններում գտնվող ընտանիքների, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների համար, որի պարագայում ծառայությունները և մասնագետները կենտրոնացված են հաստատություններում՝ համայնքներում դրանց առկայության և մատչելիության փոխարեն: Արդյունքում, Հայաստանի խնամքի հաստատություններում ապրող հաշմանդամություն չունեցող երեխաներից շատերը կամ մեծամասնությունն այնտեղ են հայտնվել դժվարին ընտանեկան հանգամանքների, այդ թվում՝ աղքատության, գործազրկության, անհամապատասխան կացարանի, ծնողների առողջական խնդիրների, ընտանիքում առկա հաշմանդամության, միայնակ ծնողի, և այլ խնդիրների պատճառով: Դժվար ընտանեկան հանգամանքները հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներին հաճախ պարտադրել են իրենց երեխաներին ուղարկել մանկատուն կամ հատուկ դպրոց, որպես կանոն ընտանիքներին աջակցող համայնքահեն ծառայությունների բացակայության պատճառով:

Ըստ 2016թ. ՅՈՒՆԻՍԵՖ-ի ուսումնասիրության, որն ուսումնասիրում է երեխաների զրկանքները Հայաստանում ամենատարբեր հարթություններում՝ այդ թվում բնակարանային, կոմունալ, հագուստի, կրթության և ժամանցի, երեխաների 64 տոկոսը զրկանքներ է կրում երկու կամ ավելի հարթություններում, իսկ գյուղական վայրերում այս ցուցանիշը հասնում է 82 տոկոսի: Միայն ֆինանսական աղքատության առումով, երեխաների 36 տոկոսը աղքատ է, իսկ 3 տոկոսը՝ծայրահեղ աղքատ: Աղքատությունն առավել ուժգնորեն է ազդում երեխաների վրա. թեև երեխաները ներկայացնում են Հայաստանի ընդհանուր բնակչության միայն 22 տոկոսը, նրանք

[4] Նամակ Human Rights Watch-ին Նաիրի Հարությունյանից՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, 14-ը դեկտեմբերի 2016թ., և նամակ Human Rights Watch-ին Դ. Լոքյանից՝ ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, 26-ը դեկտեմբերի, 2016թ, ՅՈՒՆԻՍԵՖ, «Երեխաները Հայաստանում», 2016, http://www.unicef.amaen/articles/children-in-armenia (այցը՝ 15-ը դեկտեմբերի, 2016թ.);

կազմում են աղքատ բնակչության 26 տոկոսը և ծայրահեղ աղքատների 30 տոկոսը:[5] ՅՈՒՆԻՍԵՖ-ի նախկին հաշվետվությունները պարզել են, որ Հայաստանի հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց եղբայրների ու քույրերի 54 տոկոսն ապրում է աղքատության մեջ:[6]

[5] Ըստ ուսումնասիրության, Հայաստանում երեխաների 88 տոկոսը զրկված են առնվազն մեկ հարթությունում: Գյուղական վայրերում, գրեթե ամեն երեխա, զրկված է առնվազն մեկ հարթությունում (97 տոկոս), քաղաքային բնակավայրերում՝ 82%: ՅՈՒՆԻՍԵՖ, «Մանկական աղքատությունը Հայաստանում՝ զրկանքների բազմաշերտ ազգային վերլուծություն», 2016թ., http://www.un.am/up/library/annual_report_2016_eng.pdf (այցը՝ 7-ը նոյեմբերի, 2016թ.).

[6] ՅՈՒՆԻՍԵՖ, «Երեխաները Հայաստանում»

II. Երեխաների և երիտասարդ չափահասների ինստիտուցիոնալացումը և խտրականությունը բեռնաթափման գործընթացում

Հայաստանի կառավարությունը ներկայումս նախաձեռնել է մի ծրագիր, որով նախատեսում է վերափոխել երեխաների համար նախատեսված մի շարք պետական խնամքի հաստատություններ՝ նպատակ ունենալով նվազեցնել հաստատություններում ապրող երեխաների թիվը և վերակազմավորել այդ կառույցները համայնքահեն ծառայություններ տրամադրելու նպատակով: Կառավարությունը ներկայումս նախատեսում է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում չորս տարվա ընթացքում վերափոխել 22 խնամքի հաստատություններ, ինչպես մանրամասնորեն նկարագրված է ստորև: Սակայն, Human Rights Watch-ի 2016թ. հետազոտությունը բացահայտել է մի շարք մտահոգություններ կապված կառավարության մոտեցումների հետ, մասնավորապես այն, որ երեք մանկատների մասով, որտեղ բնակվում են հաշմանդամություն ունեցող երեխաներ, կառավարությունը չունի վերափոխելու կամ փակելու կոնկրետ ծրագրեր և շարունակում է ներդրումներ կատարել այդ հաստատություններում: Այս մոտեցումն ավելի է խորացնում ինստիտուցիոնալ խնամքի ներքո հաշմանդամություն ունեցող երեխաների անհամաչափ բարձր ներկայացվածության խնդիրը և կրում է խտրական բնույթ:

Չնայած նրան, որ Human Rights Watch-ի այցելած հաստատությունների մեծ մասում նյութական պայմանները համարժեք են եղել ապաստարանի տրամադրման, հագուստի, սննդի, ջեռուցման և այլ հիմնական խնամքի առումով, Human Rights Watch-ի հետազոտությունը բացահայտել է մի շարք լուրջ խնդիրներ կապված Հայաստանի հաստատությունների հետ, այդ թվում՝ անհատական ուշադրության և խնամքի պակասը, անձնական կյանքի գաղտնիության պակասը և մատչելիության պակասը: Հաստատություններում ապրելը, մասնավորապես նրանց համար, ովքեր այնտեղ մնում են շարունակաբար, առաջացնում է հուզական դժվարություններ ինչպես երեխաների, այնպես էլ նրանց ծնողների համար: Կան նաև լուրջ թերություններ երեխաներին ինքնուրույն, չափահաս կյանքի համար նախապատրաստելու ուղղությամբ: Հաշմանդամություն ունեցող անձինք պարբերաբար զրկվում են որոշումներ կայացնելու իրենց գործունակության իրացման հնարավորությունից, և այսպիսով հաստատություններում մեծացող երեխաները հաճախ մնում են այնտեղ չափահաս դառնալուց հետո: Որոշ դեպքերում անհատների

շարունակական ներփակումը հաստատություններում կարող է հանգեցնել կամայական ազատազրկման:

Բացի այդ, դիտարկումների միջոցով իրականացված բազմաթիվ ուսումնասիրություններ ընտանեկան միջավայրից կտրված և խնամքի հաստատություններ տեղափոխված երեխաների շրջանում արձանագրել են բացասական ազդեցություններ ֆիզիկական, մտավոր, հուզական և սոցիալական զարգացման վրա:[7] Անկախ հաստատության պիտակից, չափից և գտնվելու վայրից, ինստիտուցիոնալ խնամքը սահմանվում է որոշակի հատկանիշներով, որոնք վնասակար են երեխաների համար: Դրանցից են՝ բաժանումն ընտանիքներից և լայն համայնքից, նույն տարիքային և հաշմանդամության խմբերում ներփակելը, ապաանհատականացումը, գերբնակեցումը, խնամակալի հետ հարաբերությունների անկայունությունը, խնամակալի օպերատիվ արձագանքելու պատրաստակամության բացակայությունը, կրկնվող՝ քնի և ուտելու առօրեական հաստատված ժամանակացույցը և առօրյա հիգիենայի կարգը, որը համապատասխանեցված չէ երեխաների կարիքներին և անհատական նախասիրություններին և երբեմն, ոչ բավարար նյութական ռեսուրսները:[8]

Վկայությունները ցույց են տվել, որ մանկահասակ երեխաների ինստիտուցիոնալացումը վնասում է նրանց ուղեղի վաղ զարգացմանը, կարող է հանգեցնել զարգացման հապաղման և մշտական հաշմանդամության, և կարող է երկարատև ազդեցություն ունենալ նրանց սոցիալական և հուզական վարքագծի վրա:[9] Ավելի մեծահասակ երեխաների առումով, Երեխայի իրավունքների կոմիտեն նշել է. «Բավականաչափ փաստեր կան, որոնք վկայում են մեծ հաստատություններում երկար ժամկետով մնացած դեռահասների համար վատ հետևանքների մասին... Այս դեռահասները դրսևորում են ավելի ցածր կրթական առաջադիմություն, կախվածություն սոցիալական աջակցությունից, ինչպես նաև անօթևան մնալու, ազատազրկման, անցանկալի հղիության, վաղ ծնողական պարտավորություններ

---

[7] A. Berens and C. Nelson, "The science of early adversity: is there a role for large institutions in the care of vulnerable children?" *The Lancet* (2015); և ՅՈՒՆԻՍԵՖ-ի, «Բռնություններ երեխաների նկատմամբ խնամքի և արդարադատության հիմնարկներում», չթվագրված, http://www.unicef.org/violencestudy/5.%20World%20Report%20on%20Violence%20against%20Children.pdf (այցը՝ 15-ը սեպտեմբերի, 2016թ.).

[8] Marinus H. van Ijzendoorn et. al, "Children in Institutional Care: Delayed Development and Resilience," *Monographs of the Society for Research in Child Development*, vol. 76, issue 4 (2001); and Megan M. Julian and Robert B. McCall, "The Development of Children within Alternative Residential Care Environments," International Journal of Child and Family Welfare 2011/3-4, pp. 119-147.

[9] Georgette Mulheir, "Deinstitutionalization: A Human Rights Priority for Children with Disabilities,"September 2012, http://www.equalrightstrust.org/ertdocumentbank/err9_mulheir.pdf (accessed ապրիլի 30, 2016); Kevin Browne, "The risk of harm to young children in institutional care," Child Rights Information Network, 2009, www.crin.org/en/docs/The_Risk_of_Harm.pdf (accessed ապրիլի 30, 2016).

ստանձնելու, թմրանյութերի չարաշահման, ինքնավնասման և ինքնասպանության ավելի մեծ հավանականություն»:[10] Այլ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ այն երեխաները, ովքեր հաստատություններից տեղափոխվել են ընտանեկան միջավայր, բարելավում են ցուցաբերել իրենց մտավոր գործունեության և կապվածության դրսևորումներում, հուզական օտարման նշանների և հոգեկան առողջության խնդիրների տարածվածության կրճատման առումով:[11]

Ինչպես մանրամասնորեն ներկայացված է ստորև, միջազգային ստանդարտները պահանջում են, որ երեխաների տեղակայումը խնամքի հաստատություններում, որպես լուծում, պետք է դիտարկել միմիայն ծայրահեղ դեպքերում, միայն կարճ ժամկետով և միայն այն ժամանակ, երբ է դա բխում է երեխայի լավագույն շահերից, և այն էլ միայն բացառիկ դեպքերում: ՀԻԿ-ը կոչ է անում կառավարություններին հաշմանդամություն ունեցող անձանց համար իրականացնել լավ պլանավորված, համակարգված և հստակ ժամանակային սահմանմամբ բեռնաթափման գործընթաց և սահմանում է որոշակի պահանջներ այդ գործընթացի համար:

Երեխաներն ունեն ընտանիքում մեծանալու և առանց անհրաժեշտության իրենց ծնողներից չառանձնացվելու իրավունք: Ոչ աղքատությունը, ոչ հաշմանդամությունը չեն կարող արդարացում կամ հիմք լինել երեխաներին հաստատություններում տեղակայելու համար: Չնայած նրան, որ կառավարությունն ընդունել է, որ պետք է հաստատություններում նվազեցնել երեխաների թիվը, այն պետք է նաև ապահովի, որ դա արվում է հաշմանդամություն ունեցող և չունեցող երեխաների համար հավասար սկզբունքով:

Խտրականությունը բեռնաթափման գործընթացում

Չնայած նրան, որ Հայաստանի կառավարությունը պարտավորվել է երեխաներին դուրս բերել առնվազն 22 մանկատներից, հատուկ դպրոցներից և գիշերօթիկ դպրոցներից և վերափոխել դրանք համայնքահեն ծառայություններ մատուցող ոչ-բնակելի կենտրոնների, որևէ ծրագրեր չկան երկրի՝ բացառապես հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված երեք մանկատները վերափոխելու ուղղությամբ: Բացի այդ, կառավարությունը բավարար չի կարևորել

[10] UN Committee on the Rights of the Child, General Comment No. 20, On Implementing the Rights of the Child during Adolescence, U.N. Doc. CRC/C/GC/20 (2016), para. 52.

[11] R. Johnson, K. Browne, and C. Hamilton-Giachritsis, "Young children in Institutional Care at Risk of Harm," https://www.crin.org/en/docs/The_Risk_of_Harm.pdf (accessed September 15, 2016); Nelson C, et al., "Cognitive Recovery in Socially Deprived Young Children: the Bucharest Early Intervention Project," http://www.bucharestearlyinterventionproject.org/Nelson_et_al__combined__2007_.pdf (accessed մայիսի 17, 2016); Bos, K. et al., "Psychiatric Outcomes in Young Children with a History of Institutionalization," 2011, http://www.bucharestearlyinterventionproject.org/Bos_et_al___2010_.pdf (accessed մայիսի 17, 2016).

հաշմանդամություն ունեցող երեխաների վերադարձը իրենց ծննդյան ընտանիքներ և չի նախատեսել խնամքի այլընտրանքային լուծումներ նրանց համար: Կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման հայեցակարգի 2016թ. միջոցառումների ծրագիրը հաշմանդամություն ունեցող երեխաներին չի անդրադառնում ընդհանրապես:[12]

Չնայած նրան, որ մանկատների թիվը և մանկատներում երեխաների ընդհանուր թիվը նվազում է, հաշմանդամություն ունեցող երեխաների կենտրոնացումը մանկատներում աճում է: Մինչև 2020թ., երբ ընդհանուր տիպի երեք մանկատներն ըստ նախատեսվածի կվերափոխվեն և այդ հաստատությունների բոլոր երեխաները կանցնեն այլընտրանքային խնամքի, կմնան միայն այն մանկատները, որոնք մասնագիտացված են հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Հաշմանդամություն ունեցող երեխաների համար այլ երեխաների հետ հավասար հիմունքներով բեռնաթափման գործընթացի կազմակերպման ձախողումը խտրականություն է: Կառավարությունը պետք է անհապաղ վերանայի իր քաղաքականությունը, ապահովելու համար հաշմանդամություն ունեցող երեխաների լիարժեք ներառվածությունը բեռնաթափման գործընթացում:

Երևանի Մարի Իզմիրլյանի անվան մանկատունը երկրում հաշմանդամություն ունեցող երեխաների համար մասնագիտացված երեք մանկատներից մեկն է: Տնօրենը՝ Հասմիկ Մկրտչյանը, նկարագրել է բեռնաթափման գործընթացում մանկատան ունեցած փորձը սկսած 2013թ.-ից. «2013թ.-ին կառավարությունը մի նոր ծրագիր էր սկսել մանկատներում երեխաների թիվը նվազեցնելու համար: Այդ ժամանակ առողջ երեխաները [հաշմանդամություն չունեցող երեխաները] ուղղորդվում էին այլ հաստատություններ կամ խնամատար ընտանիքներ: Այդ ժամանակ մեր մանկատան երեխաների մոտ 15 տոկոսը հաշմանդամություն չունեցող երեխաներ էին: Տարեցտարի առողջ երեխաների թիվը մանկատներում նվազում է: Նրանց հիմնականում չեն ընդունում: Միևնույն ժամանակ, հատուկ կարիքներով երեխաների թիվը մանկատներում ավելանում է»:[13] Մանկատանն այժմ միայն հաշմանդամություն ունեցող երեխաներ են գտնվում: Նա շարունակեց բացատրել, որ 2013թ. կառավարության քաղաքականության փոփոխության արդյունքում հաստատությանը հատկացվող ռեսուրսներն աճել են: - Ես ամեն տարի լրացուցիչ աշխատակազմ եմ

[12] Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ծրագիր(հաստատված է Կառավարության թիվ 36 որոշմամբ, 15-ը սեպտեմբերի, 2016թ.). Human Rights Watch-ի շտեմարանում:

[13] Human Rights Watch, հարցազրույց Հասմիկ Մկրտչյանի հետ, Մարի Իզմիրլյանի անվան մանկատան տնօրեն, Երևան, մայիսի 25 և 26, 2016թ.

խնդրել և նախարարությունը [Աշխատանքի և սոցիալական հարցերի] ընդառաջել է այս խնդրանքին: Այսօրվա դրությամբ, մենք ունենք գրեթե բոլոր անհրաժեշտ մասնագետները, որոնցից յուրաքանչյուրն ունի երեխաների հետ աշխատելու անհատական սենյակ»:[14]

Այն երեք մասնագիտացված մանկատները, որոնք նախատեսված չեն վերափոխման, բախվում են գերբնակեցման խնդրի հետ և, որոշ դեպքերում, վարում հերթագրման ցուցակներ երեխաներին ընդունելու համար: Ըստ Մկրտչյանի. «Հաստատությունն ունի 110 երեխա: Սա առավելագույնն է: Մենք նախատեսված ենք 100 երեխայի համար: Յուրաքանչյուր խմբում ունենք երկու կամ երեք երեխայով ավելի, քան պետք է ունենանք»: Միայն այդ երեխաներից 35-ն են, որ իրավականորեն առանց ծնողական խնամքի են:[15]

Երևանի մոտ գտնվող՝ հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների համար նախատեսված մյուս մասնագիտացված հաստատության՝ Խարբերդի մանկատան տնօրենը Human Rights Watch-ին պատմեց. «Հատկապես բարդ երեխաների [և երիտասարդների] կենտրոնացումն աճում է»: Human Rights Watch-ի կողմից 2016թ. մայիսին մանկատուն կատարված այցի ժամանակ այնտեղ 221 բնակիչ կար, այդ թվում՝ 94 երեխա և 127 երիտասարդ չափահասներ: Բնակիչների կեսը անվասայլակով տեղաշարժվող անձիք են: Երեսունվեց երեխա ունեն տեսողական և բազմակի հաշմանդամություն, որոնցից միայն երկուսին են սովորեցրել ձեռնափայտն օգտագործել որպես շարժունակության գործիք:[16]

Մինչ կառավարությունն ասում է, որ կարևորում է երեխաների վերադարձն իրենց կենսաբանական ընտանիքներ, հաշմանդամություն ունեցող երեխաներին վերադարձնելու ջանքերը, մասնավորապես մանկատների կողմից, սահմանափակ են: Ըստ Խարբերդի մանկատան բժշկի. «Ես 15 տարվա ընթացքում միայն մեկ դեպք գիտեմ, երբ ծնողը վերցրել է իր երեխային [այս հաստատությունից] և վերադարձրել ընտանիք»:17 Մկրտչյանը՝ Մարի Իզմիրլյանի անվան մանկատան տնօրենը, բացատրեց. «Մենք դեռ երեխաներ ունենք, ովքեր այստեղ են ընտանիքի [ծանր] սոցիալական պայմանների պատճառով, սակայն մենք փորձում ենք բարձրացնել այս հարցը և իրենց համար աջակցություն ստանալ հասարակական ու բարեգործական

[14] Նույն աղբյուրից
[15] Նույն աղբյուրից
[16] Human Rights Watch, հարցազրույց Հարություն Բալասանյանի հետ, Խարբերդի մանկատան տնօրեն, Խարբերդ, 25-ը մայիսի, 2016թ.
[17] Human Rights Watch, հարցազրույց Հասմիկ Մկրտչյանի հետ, 4-ը դեկտեմբերի, 2016թ., և Human Rights Watch, հեռախոսային հարցազրույց Հասմիկ Մկրտչյանի հետ, 16-ը դեկտեմբերի, 2016թ.

կազմակերպությունների միջոցով: Այս երեխաներն ունեն հաշմանդամություն, բայց թեթև տեսակի, և հնարավոր է, որ նրանք հատուկ դպրոցներ հաճախեն և տուն գնան հանգստյան օրերին»:[18] Նա բացատրեց, որ հաստատության աշխատակիցները միաժամանակ կարող են աշխատել միայն մոտ 10 ընտանիքների հետ, որպեսզի խրախուսեն վերամիավորումը, մասամբ այն պատճառով, որ մանկատանն ապրող երեխաների որոշ ընտանիքներ ապրում են Երևանից հեռու գտնվող քաղաքներում:[19]

Երեխաների և երիտասարդ չափահասների տեղափոխումը հաստատությունների միջև

Նույնիսկ այն պարագայում, երբ կառավարությունը հաստատությունների փակման գործընթացի մեջ է և կարևորում է ընտանիքի վրա հիմնված խնամքը, Human Rights Watch-ը հայտնաբերել է բազմաթիվ ապացույցներ մի մանկատնից կամ հաստատությունից երեխաներին զուտ միայն այլ հաստատություն տեղափոխելու նպատակով դուրս գրելու դեպքերի մասին: Հաշմանդամություն ունեցող երեխաները, ում տարիքը հաստատություններում բնակվելու համար լրանում է, կարող են մնալ պետական հաստատություններում անորոշ ժամանակով:

Ըստ Մկրտչյանի՝ 2016թ.-ին մանկատնից հեռացած 11 երեխաներից հինգը տեղափոխվել են Գավառի մանկատուն (երեխաներից երկուսը վերամիավորվել են իրենց եղբայրների ու քույրերի հետ, ովքեր ապրում են Գավառում), իսկ չորսը վերադարձել են իրենց ընտանիքներ: Նրանք, ովքեր վերադարձել են իրենց ընտանիքներ, ընդունվել են հատուկ դպրոցներ, որտեղ նրանք ապրում են շաբաթվա ընթացքում և տուն են գնում հանգստյան օրերին և դպրոցական արձակուրդներին: Մարի Իզմիրլյանի անվան մանկատնից 2015թ. դուրս գրված ութ երեխաներից երկուսը տեղափոխվել են այլ մանկատներ:[20]

Մկրտչյանը նաև բացատրեց, որ երեխաներին մանկատներում տեղակայելու մեծ պահանջարկ կա: Այսպիսով, անգամ այն դեպքերում, երբ հաստատությունն ի վիճակի է վերադարձնել երեխաներին իրենց ընտանիքներ կամ գտնել այլընտրանքային խնամքի լուծումներ, կամ երբ մանկատունը ուղղորդում է երեխաներին այլ հաստատություններ, թափուր տեղերն արագ համալրվում են այլ երեխաներով: Չնայած նրան, որ 2016թ. հաստատությունը լքել է 11 երեխա, փոխարենը ընդունվել

[18] Ibid.

19 Ibid.

[20] Human Rights Watch, հարցազրույցներ Հասմիկ Մկրտչյանի հետ, 4-ը դեկտեմբերի, 2016, և Human Rights Watch, հեռախոսային հարցազրույց Հասմիկ Մկրտչյանի հետ, 16-ը դեկտեմբերի, 2016թ.

է15-ը:[21] Մկրտչյանը Human Rights Watch-ին պատմել է. «Մենք փորձում ենք կազմակերպել որդեգրումը և ետ ուղարկել երեխաներին ընտանիքներ, որպեսզի ազատ տեղեր ունենանք լրացուցիչ երեխաներ ընդունելու համար: Շատ մարդիկ են խնդրում թույլ տալ իրենց երեխաներին այստեղ բերել: Նրանք գրանցված են և սպասում են, որ տեղեր բացվեն: Հինգ ընտանիքներ կան, որ պարբերաբար զանգահարում են ինձ»:[22]

Կառավարությունը 2016թ. օգոստոսին Նուբարաշենի վարչական շրջանի, Երևանի թիվ 2 գիշերօթիկ դպրոցից բոլոր երեխաներին տեղափոխել է, և նախատեսում է վերափոխել դպրոցը համայնքային կենտրոնի: 66 երեխաներից 15-ը տեղափոխվել են այլ հաստատություններ, այդ թվում՝երեք երեխա ընդունվել են լսողության խնդիրներ ունեցող երեխաների համար հատուկ դպրոց, թեև նախկին Նուբարաշենի դպրոցի բնակիչներից ոչ մեկը հաշմանդամություն չի ունեցել: 2015թ., երբ կառավարությունը փակեց Երևանի թիվ 1 գիշերօթիկ հաստատությունը (որը հայտնի է որպես Կորեայի ձոր), ընդամենը 15 երեխա վերադարձան իրենց ընտանիքներ. 34 երեխաներ տեղակայվեցին այլ հաստատություններում: Այս տեղաբաշխումներն այլ հաստատություններում, այդ թվում նաև մեկ գիշերօթիկ հաստատությունում և Կրթության նախարարության ենթակայության մեկ պետական ռազմական դպրոցում, պայմանավորված էին որոշ առումով փակման շտապողական քայլերով և իրենց ընտանիքների հետ երեխաների վերամիավորման համար մասնագիտական աջակցություն կազմակերպելու անբավարար ժամանակով:[23]

Որպես կանոն, երեխաների 6 տարեկանը լրանալուն պես պատկան մարմինները նրանց բոլորին Գյումրիի մասնագիտացված մանկատնից և Երևանի «Մանկան տնից» (ավելի հայտնի է որպես Նորքի մանկատուն) տեղափոխում են այլ մանկատներ: Գյումրիի մասնագիտացված մանկատնից հաշմանդամություն ունեցող երեխաները տեղափոխվում են Մարի Իզմիրլյանի անվան կամ Խարբերդի մասնագիտացված մանկատներ: 2016թ. մայիսին Խարբերդի մանկատան տնօրենն ասաց, որ հաստատությունը սպասում է հաշմանդամություն ունեցող 55 երեխաների, որոնք պետք է ժամանեն Գյումրիի մանկատնից:[24]

---

[21] Human Rights Watch, հարցազրույց Հասմիկ Մկրտչյանի հետ, 4-ը դեկտեմբերի, 2016թ.

[22] Human Rights Watch, հարցազրույցներ Հասմիկ Մկրտչյանի հետ, մայիսի 25 և 26, 2016թ.

[23] Human Rights Watch, հարցազրույցներ Աիդա Մուրադյանի հետ, Երեխաների պաշտպանության և կրթական ծրագրերի ղեկավար, Վորլդ Վիժն Հայաստան, Երևան, 14-ը ապրիլի, 2016թ. և 6-ը դեկտեմբերի, 2016թ.

24 Human Rights Watch, հարցազրույցՇարություն Բալասանյանի հետ, մայիսի 25, 2016թ.

Կառավարությունն այս պահին գտնվում է Վանաձորի ընդհանրացված մանկատունը փակելու գործընթացում, որը նախատեսված է ավարտել 2018 թվականին:[25] Ըստ մի աշխատակցի, երեխաները շարունակում են ժամանել մանկատուն, չնայած նրան, որ ակնկալվում էր, որ մանկատունը պետք է նվազեցնի երեխաների թիվը: Նա բացատրեց. «Մեզ չի թույլատրվում ունենալ ավելի քան 70 երեխա, որի պատճառով 10 երեխա ուղարկվել է Գավառի մանկատուն: Նրանք առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ են: Նրանց ուղարկելու այլ տեղ չկար»:[26]

Հայաստանում բեռնաթափման գործընթացում ներգրավված փորձագետները զգուշացնում են, որ ռազմավարությունը, ըստ որի երեխաների տեղակայումը խնամքի հաստատություններում մնում է որպես տարբերակ, կարող է պահպանել կախվածությունը ինստիտուցիոնալացված խնամքից և չնպաստել ընտանիքի վրա հիմնված խնամքի զարգացմանը:[27]

2015թ. կեսերից սկսած պատկան մարմինները սկսեցին Խարբերդիև Մարի Իզմիրլյանի անվան մասնագիտացված մանկատներից չափահասներին տեղափոխել հաշմանդամություն ունեցող երիտասարդ չափահասների «Զորակ» հոգեկան առողջության խնամքի կենտրոն Երևանում:[28] Կառավարությունը 2015 թվականին 80 երիտասարդ չափահասների տեղափոխել է «Զորակ»:[29] Սամվել Խաչատրյանը՝ «Զորակի» տնօրենը, Human Rights Watch-ին ասել է, որ 2016թ. դեկտեմբերին հաստատությունն ուներ 120 բնակիչ: Բնակիչների շարքում ընդգրկված են եղել ոչ միայն հոգեկան հաշմանդամություն ունեցող, այլ նաև հոգե-սոցիալական, մտավոր, զգայական և այլ հաշմանդամություն ունեցող անձինք: Նախատեսված վերանորոգումները հաստատությանը թույլ կտան ընդունել մինչև 200 անձի:[30] Հատկանշական է, որ «Զորակը» նախկինում եղել է երեխաների համար նախատեսված գիշերօթիկ հաստատություն, որը կառավարությունը փոխակերպել է 18 տարեկանից բարձր անձանց համար նախատեսված՝ իր տեսակի մեջ առաջին պետական հաստատության՝ մանկատների գերբնակեցման պատճառով:

---

[25] Վերափոխման ամսաթիվը պարբերաբար փոփոխվել է, և 2016թ. դեկտեմբերի դրությամբ հետաձգվել է 2017թ.-ից մինչև 2018թ. Human Rights Watch, հարցազրույց Արտակ Շաքարյանի հետ, ՅՈՒՆԻՍԵՖ-ի Երեխաների պաշտպանության ծրագրի համակարգող, ՅՈՒՆԻՍԵՖ, Երևան, 5-ը դեկտեմբերի, 2016թ.

[26] Human Rights Watch, հարցազրույց աշխատակցի հետ (անունը չի բացահայտվում), Վանաձորի մանկատուն, Վանաձոր, 30-ը մայիսի, 2016.

[27] Human Rights Watch, հարցազրույց Անի Մուրադյանի հետ, 14-ը ապրիլի, 2016թ.

[28] Նույն աղբյուրից

[29] Human Rights Watch, հարցազրույցՀարություն Բալասանյանի հետ, 25-ը մայիսի, 2016թ.

[30] Human Rights Watch, հարցազրույց Սամվել Խաչատրյանի հետ, «Զորակ» հոգեկան խնամքի կենտրոնի տնօրեն, Երևան, 4-ը դեկտեմբերի, 2016թ.

Ռեսուրսների կենտրոնացումը հաստատություններում

Human Rights Watch-ի հետազոտությունը պարզել է, որ Հայաստանում գոյություն ունեն ծառայություններ և վերապատրաստված անձնակազմ երեխաներին վերականգնողական, կրթական և այլ ծառայություններ մատուցելու համար, բայց դրանք հաճախ մնում են խնամքի հաստատությունների պատերի ներսում և հասանելի են միայն այնտեղ ապրող երեխաների համար՝ համայնքում հասանելի լինելու փոխարեն: Ծառայությունների այս կառուցվածքը առանցքային գործոն է, որը որոշ ընտանիքների դրդում է հաստատություններ ուղարկել իրենց երեխաներին: Այն նաև նշանակում է, որ շատ երեխաների համար, ովքեր մնում են իրենց ընտանիքների հետ և կարող են անհրաժեշտություն ունենալ կամ օգտվել որոշակի ծառայություններից և ռեսուրսներից, դրանք հաճախ անհասանելի են: Քանի որ կառավարությունը բեռնաթափման ծրագիրը չի իրականացնում հաշմանդամություն ունեցող և չունեցող երեխաների համար հավասար հիմունքներով՝ ռեսուրսների շարունակական կենտրոնացումը հաստատությունների շրջանակներում անհամաչափ ազդեցություն կունենա հաշմանդամություն ունեցող երեխաների վրա:

Հաստատությունների համակարգը և ռեսուրսների կենտրոնացումը հաստատություններում բացասական ազդեցություն ունի բազմաթիվ երեխաների վրա, ինչպես հաստատությունների ներսում, այնպես էլ դրանցից դուրս: Ըստ երեխաների իրավունքների և հաստատություններում բնակվող երեխաների հարցերով մի փորձագետի. «Ամենափոքր խնդիրը երեխաների թվաքանակն է հաստատություններում: Հայաստանում կա 830000 երեխա: Նրանցից մոտ 400000-ն ամենայն հավանականությամբ որևէ տեսակի ծառայության կարիք ունի, սակայն դժվարանում է դրանք ստանալ, կամ բոլորովին չի ստանում: Գոյություն ունի երեխաների թեր-ներառում անհրաժեշտ ծառայությունների մեջ և երեխաների գեր-ներառում՝հաստատություններում: Որոշ ընտանիքների կարող է անհրաժեշտ լինել շաբաթական մեկ սոցիալական աշխատողի այցելություն և դպրոցական պարագաներ: Մյուսները կարող են գումարային կամ նյութական աջակցության, անկողնային պարագաների և այլ, տարբերակված ծառայությունների կարիք ունենալ»:[31]

Օրինակ, որոշ մասնագիտացված մանկատներ ունեն իրապես բարդ սարքավորումներ և հարմարություններ, ինչը մեծ մասամբ պայմանավորված է, որպես կանոն, Հայաստանից դուրս ապրող հայերի կամ իրենց շահերը ներկայացնող խմբերի կողմից տրամադրված տեխնիկական և դրամական նվիրատվություններով: Օրինակ, Խարբերդի մասնագիտացված մանկատան մի թևը նվիրված է վերականգնողական

[31] Human Rights Watch, հարցազրույց Միրա Անտոնյանի հետ, Հայ օգնության ֆոնդի տնօրեն, Երևան, 26-ը մայիսի, 2016թ.

ծառայություններին, որտեղ առկա են երեք վերականգնողական սենյակներ, սենսորային սենյակ, բարձր մասնագիտացված վերականգնողական սարքավորումներ, ինչպես նաև վերականգնողական բժիշկ։ - Ամեն տարի մենք ստանում ենք նոր վերականգնողական սարքավորումներ, - Human Rights Watch-ին պատմում էր տնօրենը։[32]

Երեխաների համար մասնագիտացված մանկատունը Գյումրիում ունի մի մեծ, ժամանակակից, փակ, տաքացվող լողավազան՝ հիդրոմերսման համակարգով։
- Բավականին ծախսատար է ջուրը տաք պահելը։ Մենք մտածում ենք արևային ջեռուցման համակարգ տեղադրելու մասին, - տնօրենը բացատրեց Human Rights Watch-ին 2016թ. մայիսին կատարած շրջայցի ժամանակ։[33] Նորքի Մանկատունն ունի երկու բացօթյա լողավազաններ: Մարի Իզմիրլյանի անվան մանկատունն ունի փոքր փակ և բացօթյա լողավազաններ, բուժական հիդրոմերսում, ինչպես նաև բարձր մասնագիտացված աղիսենյակ, որը հալոթերապիա կոչվող բուժման մեթոդի համար է և նախատեսված է թոքերի բուժման համար, բացվել է 2016թ. նոյեմբերին և աջակցություն է ստանում միջազգային երկու հիմնադրամներից։[34]

Այլընտրանքների բացակայություն

Ռեսուրսների կենտրոնացումը հաստատություններում և համայնքում ծառայությունների բացակայությունը շատ ընտանիքների՝ իրենց հաշմանդամություն ունեցող կամ չունեցող երեխաներին խնամքի հաստատություններում տեղակայելու առանցքային պատճառ է, անգամ այն դեպքում, երբ նրանք կնախընտրեին տանը մեծացնել իրենց երեխաներին:

Հաշմանդամություն ունեցող երեխաների ընտանիքներ

Օրինակ, ըստ Human Rights Watch-ի կողմից հարցված ընտանիքների և փորձագետների, տեղական համայնքներում լայնորեն չեն մատուցվում վերականգնողական ծառայություններ և կարող են գնով պայմանավորված անհասանելի լինել այն վայրերում, որտեղ դրանք մատուցվում են: Որոշ հասարակական կազմակերպություններ, ինչպես օրինակ «Հայ մայրերը» Երևանում և «Աստղացոլքը» Ճամբարակում, երեխաներին մատուցում են որոշ կոնկրետ վերականգնողական ծառայություններ այդ համայնքներում: Ի հակադրումն,

[32] Human Rights Watch, հարցազրույցՀարություն Բալասանյանի հետ, 25-ը մայիսի, 2016թ.
[33] Human Rights Watch, հարցազրույց Լիանա Կարապետյանի հետ, Երևանի «Մանկան տան» տնօրեն, 31-ը մայիսի, 2016թ.
[34] Human Rights Watch, հարցազրույցՀասմիկ Մկրտչյանի հետ, 4-ը դեկտեմբերի, 2016թ, և Human Rights Watch-ի այցը, Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն, Երևան, 4-ը դեկտեմբերի, 2016թ.

մասնագիտացված մանկատները, ինչպես արդեն ներկայացվել է, հաճախ ունեն լավ զարգացած ծառայությունների լայն շրջանակ, որոնք հասանելի չեն այն երեխաների համար, ովքեր ապրում են համայնքում և կարող են օգտվել այդ ծառայություններից: Սպորտային այնպիսի կառույցներ, ինչպիսիք լողավազաններն են, որոնք հատկապես կարող են առողջարար և օգտակար լինել որոշ տեսակի հաշմանդամություն ունեցող երեխաների համար, ֆիզիկապես մատչելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց և երեխաների համար, առկա չեն իրենց տարածքներում, կամ անհասանելի են որևէ այլ պատճառով: «Փրկեք երեխաներին» կազմակերպությունը 2016թ. հոկտեմբերին հայտնել էր, որ հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներն ասում են, որ երբեմն նրանք ստիպված են համայնքի մարզիչներին կրկնակի գին վճարել՝ իրենց հաշմանդամություն ունեցող երեխային լողալ սովորեցնելու համար:[35]

Ռոզան, ով իր՝ այժմ իննամյա տղային ուղարկել էր մանկատուն հինգ տարով, բացատրեց, որ իր որոշման հիմնական պատճառը վերականգնողական ծառայություններն էին: Ռոզան մեկնաբանում է.

> Իմ տղան քայլելու դժվարություններ ուներ: Ես սկզբում փորձեցի նրա բուժումը կազմակերպել Վանաձորում, բայց ինձ ասացին, որ դա [իր շարժական դժվարությունները] տեղական ծառայությունների միջոցով չի կարող բուժվել: Այսպիսով, ես նրան մանկատուն տարա: Դժվար էր, բայց ես հասկանում էի, որ դա կարևոր է, քանի որ նա կարող էր սկսել քայլել քանի դեռ այնտեղ էր: Այս որոշման արդյունքում, իմ երեխան հիմա կարողանում է խոսել և քայլել: Տեղական դպրոցը չէր կարողանա նրան քայլել սովորեցնել:

Ռոզան նշեց, որ համայնքային դպրոցում, ուր այժմ հաճախում է նրա որդին, չկան մասնագետներ, ովքեր կարող են տրամադրել մասնագիտական կամ ֆիզիկական թերապիա:[36]

Միրան, 13-ամյա դստեր և աուտիզմ ունեցող 16-ամյա Հայկի մայրը, պարզաբանել է, որ 2013թ. Հայկին մանկատուն ուղարկելու իր որոշումը պայմանավորված էր համայնքում աջակցության ծառայությունների բացակայությամբ.

---

[35] «Լիարժեք կյանք» ՀԿ նախաձեռնությամբ 2016թ. հոկտեմբերի 17-ին,«Հայ մայրեր» բարեգործական ՀԿ-ի, «Մենք կարող ենք» ՀԿ-ի և հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների մասնակցությամբիրականացված խմբային քննարկումից մի օրինակ, ինչպես մեջբերվում է՝Հաշմանդամություն ունեցող երեխաներին աջակցություն տրամադրելու վերաբերյալՓրկեք երեխաներին հայաստանյան գրասենյակի կողմից հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներով զբաղվող ՄԱԿ-ի հատուկ հանձնակատարին արված առաջարկության մեջ, 28-ը հոկտեմբերի, 2016թ. Human Rights Watch-ի շտեմարան:

[36] Human Rights Watch, հարցազրույց Ռոզայի հետ, Վանաձոր, 29-ը մայիսի, 2016թ.

> Իմ որդուն այնտեղ [մանկատուն] տանելը դժվար որոշում էր: Ամուսինս արտասահմանում էր՝ Ռուսաստանում, աշխատում էր: Նա տուն էր գալիս միայն տարին մեկ կամ երկու անգամ: Դա իրոք դժվար է ինձ համար: Ես մենակ եմ երկու երեխաների հետ: ... Եթե լիներ մի կենտրոն, որը կկարողանար հոգ տանել Հայկի մասին օրվա ընթացքում, թեկուզ երեք կամ չորս ժամ, ես ստիպված չէի լինի ուղարկել նրան այստեղ: Եթե նման մի կենտրոն գոյություն ունենար, ես անպայման Հայկին տուն կվերադարձնեի, որպեսզի նա մեզ հետ ապրեր:[37]

Միրան Հայկին մանկատանն այցելում է շաբաթական մի քանի անգամ և որոշ դեպքերում նրան տուն է տանում մեկ կամ երկու շաբաթով:

Լիլիթի իններորդ դասարանցի դուստրը՝ Անին, ով դաունի սինդրոմ ունի, 2011թ.-ից սկսած հաճախել է հատուկ գիշերօթիկ դպրոց Սյունիքի մարզում, հանրակրթական դպրոց հաճախելուց չորս տարի հետո: Դստեր ակադեմիական առաջընթացով մտահոգված՝ Լիլիթը տեղափոխել է Անիին հատուկ դպրոց: Նա գոհ է կրթության որակից, կրթական աջակցության ծառայություններից, և հատուկ դպրոցում Անիի համար կազմակերպվող արտադպրոցական աշխատանքներից: Նա նշել է. «Բոլոր հնարավորությունները ստեղծված են դպրոցում: Դպրոցից դուրս այդ ծառայությունները կամ գործունեության այլ տեսակներ մատչելի չեն իմ երեխայի համար»:[38] Նույն դպրոցը հաճախող՝ աուտիզմ ունեցող 9-ամյա տղայի մայրը բացատրեց, որ դպրոցի ընտրությունն իր կողմից պայմանավորված է եղել դպրոցում առկա բուժական ծառայություններով և հասանելի կրթական աջակցությամբ, ինչպես նաև այլ հնարավորություններով, այդ թվում՝ «համակարգիչները և Lego [շինարարական բլոկներով] խաղալու հնարավորությունը»:[39]

Մի կին մեկնաբանեց, որ իր ընտանեկան հանգամանքներն են նպաստել իր՝ ուղեղային կաթված ունեցող գրեթե 4-ամյա որդուն Գյումրիի՝ փոքր երեխաների մասնագիտացված մանկատուն ուղարկելու որոշման համար. «Ես երիտասարդ եմ և իմ [նախկին] ամուսինը ... չի օգնում ինձ կամ իմ երեխային: Միայն ծնողներս են ինձ շատ մոտ: Նրանք թոշակառու են և չեն աշխատում: Ես աշխատում եմ և հոգ տանում իմ երեխայի մասին, բայց չեմ կարողանում նրա հետ լինել ամբողջ օրը: Իմ մոր համար

---

[37] Human Rights Watch, հարցազրույց Միրայի հետ, (հանդիպման վայրը չի բացահայտվում), մայիսի 26, 2016թ.

[38] Human Rights Watch,խմբային հարցազրույց հաշմանդամություն ունեցող երեխաների մայրերի հետ (հանդիպման վայրը չի բացահայտվում), ապրիլ 2016թ. (հանդիպման ամսաթիվը չի բացահայտվում):

[39]Նույնաղբյուրից

ևս դժվար է հոգ տանել նրա մասին: Մենք շատ ենք մտածել, թե ինչ պետք է անել և, ի վերջո, որոշել ենք նրան այստեղ բերել»:[40]

Երեխաների պաշտպանությամբ զբաղվող մի մարզային կառույցի ղեկավար մանրամասնեց մի դեպք, կապված մանկական ուղեղային կաթված ունեցող մի տղայի հետ, ով մանկատուն էր տեղափոխվել 14 տարեկանում՝ նրան և նրա ընտանիքին աջակցող ծառայությունների բացակայության պատճառով: Նա մեկնաբանեց.

> Տղան անվասայլակով էր: Նա ընկերներ ուներ դպրոցում և շատ էր կապված իր մոր հետ: Նրա մեծանալու հետ մայրը մեծ դժվարությունների էր բախվում, որպեսզի օգնի նրան տեղաշարժվել: Նրանք ապրում էին մի շենքում որտեղ աստիճանավանդակ կար՝ դժվար էր նրան վեր ու վար տանել: Նրանց ֆինանսական և սոցիալական պայմանները շատ վատն էին և նրանք ի վիճակի չէին կազմակերպել որևէ վերականգնողական ծառայություն տղայի համար կամ որևէ օգնություն նրա մոր համար: Մանկատանը կան վերականգնողական ծառայություններ, որոնք չեն տրամադրվող դպրոցներում:[41]

Հաշմանդամություն չունեցող երեխաների ընտանիքներ

Հաշմանդամություն չունեցող շատ երեխաների ծնողներ պատմել են Human Rights Watch-ին, որ իրենք ստիպված են եղել իրենց երեխաներին հաստատություն ուղարկել աղքատության, գործազրկության, ընտանիքի այլ անդամների առողջական վիճակի կամ ընտանեկան այլ դժվարությունների պատճառով: Ծնողները նշել են, որ հաստատություններն ի վիճակի են ապահովել իրենց երեխաներին համապատասխան կացարանով և պարբերական սննդով և ապահովել, որ իրենց երեխաները հետևողականորեն դպրոց հաճախեն:

Մեդան, 40 տարեկան, ով Human Rights Watch-ի հետ հարցազրույցից ընդամենը երկու ամիս առաջ էր իր նորածին որդուն մանկատուն տարել, ասում էր, որ նա աշխատանք չունի, գտնվում է կացարանային անկայուն պայմաններում և զգացել է, որ չէր կարողանալու իր որդու համար ապահովել անգամ ամենատարրական խնամքը: - Առանց փողի չեմ կարող գնել դեղերը: Ես բավարար կաթ չունեմ որպեսզի ինքս

---

[40] Human Rights Watch,հարցազրույց Նելլիի հետ, Շիրակի մարզ (հանդիպման վայրը չի բացահայտվում), 27-ը մայիսի, 2016թ.

[41] Human Rights Watch,հարցազրույց Աննա Ոսկանյանի հետ, Կապանի երեխաների պաշտպանության կենտրոն, Կապան, 15-ը ապրիլի, 2016թ.

կերակրեմ նրան: Ես պետք է նաև հագուստ գնեմ նրա համար, և տակդիրներ: Ես աջակցություն չունեմ այստեղ, որպեսզի ինչ-որ բան ստանամ: Ես աշխատում եմ, ես երկու կամ երեք տեղ կաշխատեմ, որպեսզի բավարար գումար ունենամ նրան տուն բերելու համար, - ասել է Սեդան: Սեդան փորձում է օրական մեկ անգամ մանկատուն այցելել իր որդուն կրծքով կերակրելու համար: Նա նկարագրում էր իր զգացողությունները, երբ տեսնում է նրան. «Ես այնքան շատ խնդիրներ ունեմ, թվում է թե ամեն ինչ շատ դժվար է: Հետո ես տեսնում եմ իմ երեխային և ամեն ինչ մոռանում եմ: Արցունքներ են հայտնվում իմ աչքերում, և ես մոռանում եմ ամեն վատ բան»:[42]

Լուսինեի՝ առողջական լուրջ խնդիրներ ունեցող 48-ամյա այրու և նրա արդեն 15-ամյա դստեր համար Գորիսի հատուկ դպրոցը փրկություն էր: Լուսինեն ապրում է նկուղային սենյակում՝ առանց զուգարանի կամ խոհանոցի և միայն մեկ մահճակալով: Ցույց տալով մի թուղթ, որի վրա նշված էր նրա պարտքերի գումարները և պարտապանների ցուցակը՝ նա Human Rights Watch-ին ասաց.

> Ես շատ բարդ պայմաններում եմ ապրում: Ես տեղափոխվել եմ այստեղ ութ տարի առաջ՝ աշխատանք որոնելով: Ես ունեմ ասթմա, շաքարախտ, արյան բարձր ճնշում և երիկամների հիվանդություններ: Ես աշխատում եմ որպես փողոցի հավաքարար շաբաթական յոթ օր, բայց դա բավարար չէ նույնիսկ համեստ սննդի համար: Ես ունեմ 400,000 դրամ ($ 838) պարտք: Իմ աղջիկը շաբաթվա ընթացքում քնում է դպրոցում՝ նրան այնտեղ լավ են կերակրում: Նրանք շատ լավ են հետևում նրան: Բայց ես ուզում եմ, որ նա ինձ հետ ապրի: Ես ուզում եմ տեսնել նրան, խոսել նրա հետ: Ես ուզում եմ, որ ես լինեմ այն մեկը, ով ի վիճակի է կերակրել նրան և հոգ տանել նրա մասին:[43]

Ասյան, 56 տարեկան, իր երկու դուստրերին, ովքեր հիմա արդեն 16 և 18 տարեկան են, ուղարկել էր մանկատուն այն ժամանակ, երբ նրանք նոր էին սկսել դպրոցը՝ վեց տարեկան հասակում: Գրեթե 30 տարի է, ինչ Ասյան ապրում է մի փոքրիկ, մութ, չգրանցված խրճիթում, որտեղ ջուր է հոսում, երբ անձրև է գալիս: Նա մեկնաբանեց երեխաներին մանկատուն տանելու իր որոշումը.

> Ես միայնակ մայր եմ: Աղջիկների հայրը լքել է մեզ, երբ մեր կրտսեր դուստրը երեք տարեկան էր, և մենք որևէ տեղեկություն չունենք նրա մասին: Ես աշխատում էի, և չկար մեկը, որ հոգ կտաներ նրանց մասին:

---

[42] Human Rights Watch հարցազրույց Սեդայի հետ, Երևան, 31-ը մայիսի, 2016թ.

[43] Human Rights Watch,հարցազրույց Լուսինեի հետ, Գորիս, 16-ը ապրիլի, 2016թ.

> Ես հարևան կամ ընկեր չունեի, ում կարող էի խնդրել: Ես չէի ուզում նրանց մենակ թողնել տանը: Որպեսզի կարողանայի աշխատել և չանհանգստանալ իմ դուստրերի մասին, դա էր հիմնական պատճառը, որ ես նրանց մանկատուն ուղարկեցի: Դա նաև ցավալի է եղել ինձ համար: Շատ դժվար է ապրել առանց քո երեխաների:[44]

Գեղարքունիքի մարզում ապրող մի զույգ՝ Կարենը և Նինան, 2013թ.-ին ստիպված են եղել տեղափոխվել հազիվ բնակելի մեկ սենյականոց՝ մի ֆերմայի շինություն իրենց ընտանիքի անդամների հետ ունեցած կոնֆլիկտից հետո, ում հետ նրանք ապրում էին մոտակայքում գտնվող տանը: Նրանք ստիպված էին իրենց չորս երեխաներին, որոնք այժմ 7-ից 16 տարեկան են, ուղարկել մոտավորապես 60 կմ հեռավորության վրա գտնվող մի մասնավոր մանկատուն: Ամուսինները բացատրեցին, որ նրանք չունեն պատշաճ բնակարանային պայմաններ կամ կայուն աշխատանք.

> Մենք չենք ցանկանում, որ մեր երեխաներն այնտեղ [մանկատանը] լինեն, բայց հիմա այլ տարբերակ չկա: Շատ դժվար է: Եթե մենք ունենանք անհրաժեշտ պայմանները, մենք նրանց ետ կբերենք: Ամենից շատ մեզ բնակարան է հարկավոր, մի ապրելու տեղ: Մնացած բաները մենք ինչ-որ կերպ կլուծենք: Մենք աշխատում ենք ցանկացած մարդու հետ, ով մեզ վճարում է և խնդրում է օգնել իր ֆերմայում: Միասին մենք կարողանում ենք վաստակել օրական 500 դրամ ($ 1.50): Երբեմն մարդիկ նաև մեզ ուտելիք են տալիս...[45]

Ամուսիններն այժմ իրենց խղճուկ եկամտի մեծ մասը ծախսում են իրենց երեխաներին մանկատանն այցելելու համար. «Մեր հիմնական ծախսերը սննդի և երեխաներին այցելելու ճանապարհային ծախսերն են: Մենք փորձում ենք այցելել նրանց յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ»:[46]

Երևանի «Մանկան Տան», որը նաև հայտնի է որպես Նորքի մանկատուն, տնօրենի կարծիքով նորածիններից մինչև 6 տարեկան երեխաների ծնողներն իրենց երեխաներին մանկատուն են բերում մի շարք պատճառներով. «Ո՞վ է գալիս մեզ մոտ: Միայնակ ծնողները: Դա հաճախ այն մարդիկ են, ովքեր խարանի պատճառով փորձում են թաքցնել արտամուսնական կապից ծնված երեխային: Ընտանիքների մոտ

---

[44] Human Rights Watch,հարցազրույց Ասյայի հետ, Գյումրի, 27-ը մայիսի, 2016թ.

[45] Human Rights Watch,հարցազրույց Իրինայի և Արշավիրի հետ, Գեղարքունիքի մարզ (հանդիպման վայրը չի բացահայտվում), 30-ը մայիսի, 2016թ.

[46] Նույնաղբյուրից

80 տոկոսը, ովքեր այստեղ են բերում իրենց երեխաներին, չունեն կայուն բնակելի տարածք: Ոմանք ծնողներ են, ովքեր երկարաժամկետ կամ կարճաժամկետ բուժման մեջ են գտնվում: Որոշ դեպքերում երեխաները հայտնաբերվում են փողոցներում՝ ոստիկանության կողմից, կամ նրանց ծնողները բանտում [են]: Երեխաներին ընդունում ենք սկսած երկու-երեք օրականից մինչև 6 տարեկան հասակում:»[47]

Ինստիտուցիոնալացման հուզական բեռը

Հաստատություններում տեղակայված երեխաները և նրանց ծնողները շարունակաբար հայտնել են, որ իրարից բաժանված լինելը ծանր հուզական ազդեցություն է ունենում իրենց վրա: Հաստատությունների ավագ աշխատակազմը նույնպես հաստատել է, որ ընտանիքներից բաժանված լինելու պատճառով երեխաները հաճախ ցուցաբերում են հուզական և երբեմն էլ ֆիզիկական ճնշվածության ախտանիշներ: Երեխաները կարող են հրաժարվել սննդից, լաց լինել, վատ տրամադրություն ունենալ և անհանգիստ լինել:

Գոհարն իր այժմ 13 տարեկան որդուն՝ Արթուրին, ուղարկել էր 120 կիլոմետր հեռավորության վրա գտնվող հատուկ դպրոց Երևանում, երբ նա 7 տարեկան էր: Զսպելով արցունքները՝ Գոհարը պատմում էր Արթուրի հուզական դժվարությունների մասին.

> Նա դպրոցում հարմարավետ չէր զգում և հրաժարվում էր սննդից: Դրանով նա իր բողոքն էր արտահայտում: Ամեն անգամ տուն գալիս նա նորմալ էր սնվում: Սկզբում մենք նրան տուն էինք բերում երկու շաբաթը մեկ անգամ՝ երկու կամ երեք օրով: Բայց ուսուցիչն ասաց, որ մենք չպետք է այդքան հաճախ այցելենք նրան, քանի որ ամեն անգամ, երբ նա դպրոց էր վերադառնում, նա ավելի հուզական էր լինում: Մեզ ասացին, որ վերցնենք նրան միայն երկարատև դպրոցական արձակուրդների ընթացքում: Ես տխրում եմ, երբ հիշում եմ այդ չորս տարիները: Մենք գիտեինք, որ իմ որդին դժվարություններ էր ունենում և չէր ուզում մնալ դպրոցում, բայց նաև հասկանում էինք, որ այլ տարբերակ չկար:[48]

Արթուրը, ով զարգացման խանգարումներ ուներ, չորս տարի է անցկացրել Երևանի հատուկ դպրոցում, մինչև նրա ընտանիքը նրան տեղափոխել է տեղական հատուկ

---

[47] Human Rights Watch,հարցազրույց Լիանա Կարապետյանի հետ, 31-ը մայիսի, 2016թ.

[48] Human Rights Watch, հարցազրույցԳոհարի հետ, (հանդիպման վայրը և ամսաթիվը չի բացահայտվում), ապրիլ 2016թ.

դպրոց: Արթուրը հուզական պայքարի մեջ էր այդ անցումը կատարելիս: Գոհարը Human Rights Watch-ին պատմում էր ընտանիքից հեռու գտնվելու ընթացքում նրա կրած հուզական ապրումների մասին.

> Անգամ տուն վերադառնալուց հետո, նա վախենում էր, երբ մենք դուրս էինք գալիս կամ նրան դպրոց էինք տանում: Նա մտածում էր, որ լքում ենք նրան: Բավականին ժամանակ պետք եղավ նրան, որպեսզի հասկանա, որ դա մշտական չէ և, որ մենք վերադառնալու ենք շատ շուտով:[49]

Տասներկուամյա Արմինեն ապրում է Իջևանի մի գիշերօթիկ հաստատությունում, քանի որ նրա ծնողները աղքատության և գործազրկության պատճառով դժվարությամբ են կարողանում հոգ տանել իրենց չորս երեխաների մասին: Արմինեն ասել է, որ նա տուն է գնալու ամռանը և ընդհանուր առմամբ իրեն լավ է զգում գիշերօթիկ հաստատությունում և մոտակայքի դպրոցում, ուր նա հաճախում է, բայց իր ընտանիքից բաժանումը դժվար է. «Ամռան վերջում ես լալիս եմ: Ես կարոտում մայրիկիս... Եթե ես կարողանայի ինչ-որ բան փոխել, դա կլիներ ցանկացած պահի տուն գալը. ... Ես շատ եմ մտածում տուն գալու մասին: Ես իմ ընկերներին հարցնում եմ. «Ե՞րբ ես կկարողանամ տուն գնալ»:[50]

Human Rights Watch-ի այցելած որոշ մանկատների ավագ աշխատակիցներ բացեիբաց խոստովանել են, թե ինչ հուզական դժվարություններ են ապրում երեխաները՝ իրենց ընտանիքներից բաժանվելիս: Մի մանկատան գլխավոր բժիշկ նկարագրում էր աուտիզմ ունեցող մի տղայի ապրումները, ում ծնողները մանկատուն էին բերել 13 տարեկան հասակում, բայց մանկատուն այցելելու և ժամանակ առ ժամանակ նրան տուն տանելու միջոցով շարունակում էին ներգրավված մնալ նրա կյանքում: - Երբ տղան առաջին անգամ եկավ այստեղ, նա չէր ուտում: Երբ նոր աշխատակազմը գալիս էր նրա հետ աշխատելու, նա լաց էր լինում: Նա չէր հասկանում, որ իր մայրը կվերադառնա, - բացատրում էր բժիշկը:[51]

Մի մանկատան տնօրեն Human Rights Watch-ի հետ զրուցեց մանկատանը բնակվող երեխաների հուզական բարեկեցության մասին, ասելով. «Նրանք կարոտում են իրենց ընտանիքներին: Սա նշանակում է, որ նրանք շատ հաճախ վատ տրամադրություն են

---

[49] Նույն աղբյուրից

[50] Human Rights Watch, հարցազրույցԱրմինեի հետ, Գեղարքունիքի մարզ (հանդիպման վայրը չի բացահայտվում), 30-ը մայիսի, 2016թ.

[51] Human Rights Watch, ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԳԼԽԱՎՈՐ ԲԺՇԿԻ ՀԵՏ, ՄԱՆԿԱՏՈՒՆ, ՄԱՅԻՍ 2016Թ.

ունենում: Սա շատ մեծ խնդիր է»:[52] Նույն մանկատան մի բժիշկ ասաց. «Մենք ունենք երեխաներ, ովքեր կարոտում են իրենց ծնողներին և շատ վատ են զգում: Երբ տևական ժամանակ ծնողները չեն այցելում նրանց, երեխաները տխրում են, շատ են մտածում դրա մասին»:[53] Մեկ այլ մանկատան մի բժիշկ ասաց. «Ես շատ կուզենայի, որ երեխաներից ոմանք իրենց ընտանիքներում լինեին: Մենք գիտենք, որ նրանց համար դժվար է այստեղ լինելը»:[54]

[52] Human Rights Watch, հարցազրույցՀարություն Բալասանյանի հետ, 25-ը մայիսի, 2016թ.
[53] Human Rights Watch, հարցազրույցԼիանա Սարգսյանի հետ, 26-ը մայիսի, 2016թ.
[54] Human Rights Watch, հարցազրույցբժշկի հետ, Գյումրու «Երեխաների տուն», Գյումրի, 27-ը մայիսի, 2016թ.

III. Խնդիրներ երեխաների և երիտասարդ չափահասների համար խնամքի հաստատություններում

Անհատական ուշադրության և հոգատարության պակաս

Հայաստանի մանկատներն ունեն մեծ թվով աշխատակիցներ, սովորաբար այնքան, որքան երեխաներ և երիտասարդներ կան, կամ ավելի շատ: Սակայն, մանկատներում հաճախ ընդամենը անձնակազմի մի քանի անդամներ են, ովքեր տվյալ պահին անմիջականորեն հոգում են երեխաների կարիքները խոշոր խմբերում: Մեծ հաստատության պահպանումը և գործարկումը պահանջում է անձնակազմ, որի կազմում պետք է լինեն խոհարարներ, վարորդներ, հավաքարարներ, սպասարկող անձնակազմ, և այլոք, ովքեր ուղղակիորեն ներգրավված չեն երեխաների խնամքի գործում և այն ռեսուրսային անարդյունավետության մասն են, որը բնորոշ է խոշոր հաստատությունների պահպանմանը:

Հայաստանի մանկատներում և խնամքի այլ հաստատություններում երեխաները բաժանվում են խմբերի, սովորաբար ըստ տարիքի, թեև որոշ դեպքերում ըստ հաշմանդամության կամ երկու հատկանիշների համադրությամբ: Երեխաները, որպես կանոն, ուտում են, քնում և կատարում այլ գործողություններ իրենց խմբով: Որպես կանոն, այդ խմբերը բաղկացած են 10-ից 12 երեխայից և ունեն երկու խնամակալ: Մասնագետները, օրինակ հոգեբանը և սոցիալական աշխատողը, որոշ դեպքերում նույնպես մասնակցում են խմբերի առօրյային շաբաթվա ընթացքում:[55] Խնամքի տակ նման մեծ թվով երեխաներ ունենալու պարագայում, անգամ առավել նվիրված և հոգատար անձնակազմը, դժվարություններ է ունենում այն անհատականացված ուշադրությունն ու խնամքը ցուցաբերելու համար, որի կարիքն ունի յուրաքանչյուր երեխա, մասնավորապես՝ երիտասարդ երեխաները կամ այն երեխաները, ովքեր, իրենց հաշմանդամությանը համապատասխան առանձնակի հոգածության և աջակցության կարիք ունեն:

[55] Մանկատներում խնամակալների թիվը կարգավորվում է կառավարության թիվ 1292-N որոշմամբ.«ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված խնամք և սպասարկում իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքային միավորների չափորոշիչները հաստատելու և հայաստանի հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 730-ն և N 815-ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին», ընդունվել է 29-ը հոկտեմբերի, 2015թ.

Բազմաթիվ ուսումնասիրություններ փաստել են, որ երեխայի առողջ զարգացումը կախված է խնամակալի հետ երեխայի հուզական կապ ստեղծելու կարողությունից:[56] Խոշտանգումների գծով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը ազատությունից զրկված երեխաների մասին իր հաշվետվություններում նշում է, որ երեխաները «զարգացման համար կարիք ունեն հուզական ընկերակցության և ուշադրության»:[57] Հայաստանում շատ հաստատություններ չեն տրամադրում բավարար անհատականացված խնամք և դաստիարակություն՝ երեխաների մեծ խմբերի պատճառով:

Անձնական կյանքի գաղտնիության պակաս

Հաստատության հարմարության պատճառով երեխաների կազմակերպումը մեծ խմբերով հանգեցնում է նաև անձնական կյանքի գաղտնիության պակասի: Խարբերդի մանկատան ննջասենյակներ այցելած Human Rights Watch-ի հետազոտողները աղջիկների և երիտասարդ կանանց համար նախատեսված մի ննջարանում տեսել են ինը մահճակալ: Այլ ննջասենյակներում առկա են եղել մինչև 15 մահճակալներ, որոնցից շատերը տեղադրված էին կողք կողքի: Վանաձորի մանկատանը Human Rights Watch-ը խոսել է աղջիկների հետ, ովքեր վեց կամ տասը այլ աղջիկների հետ կիսում էին նույն ննջարանը: 10-ից մինչև 15 տարեկան տղաների համար նախատեսված ննջասենյակում կար 13 մահճակալ, տղաների մեկ այլ ննջասենյակում՝ ութ մահճակալ:

Իր ընտանիքի խոր աղքատության պատճառով գիշերօթիկ հաստատությունում արդեն վեց տարի ապրող 12-ամյա Արմինեն ասաց, որ կիսում է սենյակը վեց այլ աղջիկների հետ: Հաստատությունում նրա համար ամենադժվար խնդիրներից մեկն այն է, որ նա իր սենյակը կիսում է շատ տարբեր մարդկանց հետ: - Ես կցանկանայի իմ սեփական սենյակն ունենալ: Ոչ մի առանձնահատուկ բան՝ պարզապես մյուս բոլոր սենյակների նման մի սենյակ: Երբեմն մենք վիճում ենք միմյանց հետ և չենք ուզում քնել մեկ սենյակում: Գնալու, քնելու այլ տեղ չկա: Միայն մեր սենյակն է:[58]

---

[56] Marinus H. van IJzendoorn et al., “Children in Institutional Care: Delayed Development and Resilience,” pp. 8-30; and Rebecca Johnson et al., “Young children in Institutional Care at Risk of Harm,” *Trauma, Violence & Abuse*, vol. 7, No. 1 (2006), pp. 34-60.

[57] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդ, հատուկ հանձնակատարի զեկույցը խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի վերաբերյալ, Խուան Է. Մենդեզ, Ազատությունից զրկված երեխաների մասին, A/HRC/28/68, 5-ը մարտի, 2015թ.

[58] Human Rights Watch, հարցազրույցԱրմինեի հետ, Գեղարքունիքի մարզ (հանդիպման վայրը չի բացահայտվում), 30-ը մայիսի, 2016թ.

Խոշտանգումների գծով հատուկ զեկուցողը կարևորեց հաստատություններում երեխաների անձնական կյանքի գաղտնիության իրավունքի հարգման անհրաժեշտությունը:[59]

Մատչելիության պակաս

Չնայած նրան, որ իրենց երեխաներին մանկատներում կամ այլ տեսակի խնամքի հաստատություններում տեղակայելու համար ծնողների նշած պատճառներից մեկը եղել է իրենց համայնքներում մատչելիության բացակայությունը, 2016թ. ապրիլ և մայիս ամիսներին Human Rights Watch-ի այցելած դպրոցներում և մանկատներում մատչելիություն եղել է սահմանափակ կամ առհասարակ բացակայել է: Անգամ հաշմանդամություն ունեցող երեխաների համար մասնագիտացված մանկատների և դպրոցների, այդ թվում նաև ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված միակ մասնագիտացված դպրոցի ներսում մատչելիության պակաս կա հենց հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Մատչելիության բացակայությունը հնարավորություն չի տալիս հաշմանդամություն ունեցող շատ երեխաների լիարժեքորեն իրագործել իրենց այնպիսի իրավունքները, ինչպիսիք են կրթության իրավունքը, շփվելու հնարավորությունը, անկախ լինելու և ինքնուրույն ապրելու հմտություններ սովորելու իրավունքը:

Օրինակ, ըստ Մարի Իզմիրլյանի անվան մանկատան տնօրենի. «Մենք չունենք ոչ վերելակ և ոչ էլ թեքահարթակներ՝ մենք ստիպված ենք ինքներս տեղափոխել երեխաներին: Հաջորդ տարվա սկզբին կկառուցվի մի թեքահարթակ և վերելակ: Նոր կառուցվածքը կօգնի աշխատակիցներին: Մենք նաև կստեղծենք մի փոքրիկ «քաղաք» կույր երեխաների համար: Այն երեխաները, ովքեր կուրություն ունեն, կսովորեն ինքնուրույն տեղաշարժվել:[60]

Խարբերդի մանկատան տնօրենը, որտեղ 221 բնակիչների կեսը տեղաշարժվում են անվասայլակով, ասաց. «Վերելակը հաճախ չի աշխատում: Ստիպված ենք լինում հաճախակի վերանորոգել այն: Ես պետք է անընդհատ զանգահարեմ վարպետին, որպեսզի վերանորոգի այն»:[61] Նա նաև Human Rights Watch-ին ասել է, որ մանկատունը շատ քիչ մատչելի զուգարաններ և լոգասենյակներ ունի:[62] Երևանիթիվ 17 հատուկ դպրոցում, որը միակ պետական հաստատությունն է հենաշարժական համակարգի

---

[59] ՄԱԿ-ի հատուկ զեկույցը խոշտանգումների մասին, զեկույց՝ Ազատությունից զրկված երեխաների մասին, 5-ը մարտի, 2015թ.

[60] Human Rights Watch, հարցազրույցՀասմիկ Մկրտչյանի հետ, 25-ը մայիսի, 2016թ.

[61] Human Rights Watch, հարցազրույցՀարություն Բալասանյանի հետ, 25-ը մայիսի, 2016թ.

[62] Նույն աղբյուրից

հաշմանդամություն ունեցող երեխաների համար, չկար գործող վերելակ: Միայն մեկ թեքահարթակ կար, որը երեխաներին հնարավորություն էր տալիս առաջինից երկրորդ հարկ տեղափոխվել, թեև 2016թ. ապրիլին Human Rights Watch-ի կատարած այցի ժամանակ շենքը գտնվում էր ամբողջական վերանորոգման ընթացքում:

Human Rights Watch-ը հարցազրույց է անցկացրել 11-ամյա Թագուհու հետ, ով անվասայլակով է տեղաշարժվում և մանկատանը ապրում է սկսած 6 տարեկանից: Նա ասաց, որ մանկատանը նա հիմնականում սահմանափակված է մի փոքր տարածության մեջ, որտեղ նա ուտում, քնում, դպրոց այցելող ուսուցչի հետ դասեր է անում և շփվում է մյուսների հետ. «Ես միայն մի քիչ եմ կարողանում շարժվել իմ անվասայլակով: Իմ ունեցածը մի պարզ անվասայլակ է: Միշտ ինչ-որ մեկն ինձ օգնում է տեղաշարժվել: Ես հիմնականում երկու սենյակներում եմ լինում», ասել է նա Human Rights Watch-ին:[63]

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության ներքո Գյումրիում գործում է մի կենտրոն, որը համայնքում հետդպրոցական և սոցիալական աջակցություն է տրամադրում խոցելի իրավիճակներում հայտնված ընտանիքներին՝ նպատակ ունենալով. «կանխել երեխաների տեղակայումը մանկատներում և գիշերօթիկ դպրոցներում», - ինչպես նշում է կենտրոնի տնօրենը: Սակայն, այս ծառայությունները մատչելի չեն հաշմանդամություն ունեցող բոլոր երեխաների համար: - Մենք ունենք հաշմանդամություն ունեցող 8-ից 10 երեխա, բայց նրանք ի վիճակի են ինքնուրույն հոգալ իրենց կարիքները: Մեր շենքը մատչելի չէ, - նշել է տնօրենը:[64]

Անկախ կյանք վարելու անպատրաստություն և հաշմանդամություն ունեցող չափահասների ինֆանտիլացում

Խնամքի հաստատությունների աշխատակազմը բավարար ջանքեր չի գործադրում երեխաների մոտ կյանքի հմտությունների զարգացման կամ չափահաս դառնալուց հետո ինքնուրույն կյանք վարելու ուղղությամբ նրանց նախապատրաստելու համար: Սա ազդում է ինչպես հաշմանդամություն ունեցող, այնպես էլ չունեցող, բայց առավելապես հաշմանդամություն ունեցող երեխաների վրա: Արդյունքում, հաշմանդամություն ունեցող երիտասարդները զրկվում են այն հնարավորություններից, որոնք ինքնըստինքյան ենթադրվում են իրենց

[63] Human Rights Watch, հարցազրույցԹագուհու հետ, (հանդիպման վայրը չի բացահայտվում), մայիս 2016թ.

[64] Human Rights Watch, հարցազրույցՄարինե Ղալաչյանի հետ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության տակ գործող Երեխաների աջակցության կենտրոնի տնօրեն, Գյումրի, 27-ը մայիսի, 2016թ, և Human Rights Watch,հեռախոսային հարցազրույցՄարինե Ղալաչյանի հետ, 16-ը դեկտեմբերի, 2016թ.

հասակակիցների համար, ինչպես, օրինակ՝ աշխատանք ունենալը, իրենց ընտրությամբ ընկերների շրջանակ ձևավորելը, կյանքի ընկեր կամ ամուսին գտնելը կամ երեխաներ մեծացնելը: Հաստատությունների ղեկավարները հաստատել են, որ իրենք չեն համարում, որ հաշմանդամություն ունեցող երեխաներն ընդունակ են ինքնուրույն որոշումներ կայացնել:

Հաշմանդամություն չունեցող շատ երեխաներ հայտարարել են, որ հաստատություններից հեռանալու պահին իրենք բավարար չափով պատրաստ չեն եղել ինքնուրույն կյանք վարելու համար: Օրինակ Էլենը, ով այժմ 20 տարեկան է և սովորում է մանկավարժական համալսարանում, ընդհանուր տիպի մանկատանը ապրել է ինը տարի, քանի որ նրա այրիացած հայրը մտածել էր, որ չի կարող միայնակ մեծացնել նրան և մյուս երկու երեխաներին: Ինչ վերաբերում է մանկատնից դուրս կյանքի համար նրա պատրաստված լինելուն, նա ասել է. «Մանկատանը մենք սովորել էինք, որ ինչ-որ մեկն ամեն ինչ անում է քո համար: Երբ մենք հեռացանք, մենք հասկացանք, որ մենք ստիպված ենք ամեն ինչ ինքնուրույն անել»:[65]

Էլմիրան, ով արդեն չորս տարի ապրում է ընդհանուր մանկատանը և վերջերս է դարձել 18 տարեկան, բացատրեց, որ իրեն տեղեկություններ կամ ուղղություն չի ցույց տրվել ինքնուրույն ապրելու մասին. «Ոչ ոք ինձ հետ ուղիղ չի խոսել, թե ինչ է իրենից ենթադրում հեռանալը: Տնօրենը բոլորիս [18 տարեկաններին] միասին կանչեց և բացատրեց, որ արդեն հնարավոր է հեռանալ մանկատնից: ... Գուցե այս ամառ ես կհեռանամ, բայց ես դեռ չգիտեմ: Իմ 18-ը լրացել է2015թ. դեկտեմբերին: Երբեմն ես ուզում եմ հեռանալ, իսկ երբեմն չեմ ուզում: Ես մտածում եմ մայրիկիս հետ ապրելու մասին:Մտածում եմ միայնակ ապրելու մասին»:[66]

Էջմիածնում գործող «Մեր տունը» կազմակերպությունը մանկատներից տարիքի լրացման պատճառով դուրս գրվող հաշմանդամություն չունեցող երիտասարդ կանանց օգնում է ընդունվել բուհեր և մոտավորապես 12 երիտասարդ կանանց ապահովում անցումային խմբային բնակարանով: Կազմակերպության տնօրեն Տիգրանուհի Կարապետյանը նկարագրել է այս մարտահրավերները. «Երիտասարդ կանայք չգիտեն, թե ինչպես պետք է եփել կամ մաքրություն անել, պահպանել հիգիենա և նման բաներ, ինչպես նաև այլ, իրենց համար անհրաժեշտ հարցեր:

[65] Human Rights Watch, հարցազրույցԷլլենի հետ, Գյումրի, 27-ը մայիսի, 2016թ.

[66] Human Rights Watch, հարցազրույցԷլմիրայի հետ, 18 տարեկան, (հանդիպման վայրը չի բացահայտվում), մայիս 2016թ.

Մանկատներում ամեն ինչ արվում է նրանց համար: Այստեղ նրանք սովորում են, որ նրանք պետք է իմանան, թե ինչպես ամեն ինչ ինքնուրույն պատրաստեն»:[67]

Հաշմանդամություն ունեցող երիտասարդների անպատրաստությունն անկախ կյանքի համար, ինչպես նաև նրանց գործունակության մերժումը, ինչպես նկարագրված է ստորև, կարող է նշանակել, որ նրանք ամենայն հավանականությամբ հարկադրված կլինեն մնալ մանկատանը, որտեղ նրանք ապրում էին որպես երեխաներ, կամ տեղափոխվել հաշմանդամություն ունեցող մեծահասակների համար նախատեսված նորաստեղծ «Զորակ» հաստատություն:

Օրինակ, ողջ կյանքը մանկատանն անցկացրած 20-ամյա Արփին, ով ունի մեղմ մտավոր հաշմանդամություն, հայտնում է, որ նա շատ քիչ էր նախապատրաստված ինքնուրույն ապրելու համար: Նա սովորում է վարսահարդարի գործ և հստակորեն նշեց որոշ բաներ, որ նա իր համար կուզենար ինքնուրույն կյանքում: Արփին Human Rights Watch-ին պատմեց.

> Ես այստեղ եմ մեծացել: Հիմա ես հաճախում եմ արհեստագործական ուսումնարան: Ես արդեն որոշ բաներ եմ սովորել այնտեղ: Ես, իրոք ցանկանում եմ սովորել օգտվել ավտոբուսից և ինքնուրույն գնալ ուսումնարան: Ես մտածում եմ միայնակ ապրելու, շատ ընկերներ ունենալու և իմ սեփական բնակարանն ունենալու մասին: Ես կնախընտրեի ապրել մեկի հետ, մի ընկերոջ: Մենք կարող էինք համատեղ ապրել այնտեղ: Ես մտածում եմ այս հաստատությունից դուրս գալու մասին, թեկուզ մի քանի օրով: Ես երազում եմ այլ մարդկանց հետ խոսելու մասին:[68]

Էդմոնդը, արդեն 20 ու կես տարեկան, ով իր ողջ կյանքն ապրել է ինստիտուցիոնալացված խնամքի տակ, ուսանում է արհեստակցական ուսումնարանում և մասնագիտանում առևտրի մեջ, ասաց, որ հաստատությունում ապրելու հետ կապված ամենամեծ դժվարությունը կայանում է նրանում, որ չես կարողանում ավելի հաճախակի դուրս գալ և առնչվել համայնքի կյանքի տարբեր բնագավառների հետ, ինչն էապես կօգներ հաստատությունից դուրս կյանքին պատրաստվելու համար: - Այն ողջ ընթացքում, որ ես այստեղ եմ եղել [17 տարի], եղել եմ նույն աշխատակազմի հետ: Երբեմն, մենք դուրս ենք գալիս: Մենք հրավիրվում ենք

---

[67] Human Rights Watch, հարցազրույցՏիգրանուհի Կարապետյանի հետ, «Մեր տունը», տնօրեն, Էջմիածին, 25-ը մայիսի, 2016թ.
[68] Human Rights Watch, հարցազրույցԱրփիի հետ, (հանդիպման վայրը չի բացահայտվում), մայիս 2016թ.

տարբեր տեղեր, թատրոն, այլ միջոցառումների: Ես իսկապես սիրում եմ դուրս գալ: Մյուս երեխաները հոգնում են, բայց ես միշտ կարիք ունեմ և ցանկանում եմ դուրս գալ:[69]

Էդմոնդն պատմեց որոշ բաների մասին, որոնք նա կցանկանար ունենալ անկախ կյանքում, բայց բացատրեց, որ մանկատան շրջանակը սահմանափակում է իր՝ հարաբերություններ զարգացնելու կարողությունը, սեփական ընտանիք ունենալը, աշխատելը՝ իրեն և իր ընտանիքին պահելու համար, և որ նա չի ստանում իր ընտրած կյանքով ապրելու աջակցությունը: - Ես տուն չունեմ և աշխատանք չունեմ, և ես պետք է աշխատեի, որպեսզի հոգ տանեի իմ և իմ ընտանիքի մասին: Ընկերուհի կամ կին ունենալու համար ինձ անհրաժեշտ է այս ամենը: Ես չեմ կարող պատկերացնել, թե ինչպես կարելի է լուծել այս խնդիրը: Այնպես որ, ես մտածում եմ, որ չեմ կարող ընկերուհի ունենալ, - ասել է Էդմոնդը:[70]

Հաստատությունների ղեկավարները հաստատեցին, որ իրենք չեն համարում, որ հաշմանդամություն ունեցող երեխաներն ընդունակ են ինքնուրույն որոշումներ կայացնել, և երիտասարդ չափահասներին հետևողականորեն անվանում են «երեխաներ», նույնիսկ այն դեպքում, երբ նրանց խնամքի տակ գտնվող անհատներն ավելի քան 18, նույնիսկ 20 և 30 տարեկան են: Ի թիվս այլ հարցերի, նրանք ժխտում են, որ հաշմանդամություն ունեցող երիտասարդներն ի վիճակի են ունենալ հասուն, առողջ ռոմանտիկ հարաբերություններ այլոց հետ: Ղեկավարությունը նաև չի տրամադրում համապատասխան սեռական կրթություն:

Օրինակ, մի բժիշկ Human Rights Watch-ին հայտնել է. «Քանի որ երեխաները [մտավոր և զարգացման] հաշմանդամություն ունեն, նրանք նույնիսկ չեն հասկանում ... ռոմանտիկ կամ սեռական հարաբերությունների մասին: Նրանք նույնիսկ չգիտեն նման բաների մասին և չունեն նման զգացմունքներ: Մենք չենք կարող խոսել նման բաներից երեխաների հետ ... Նրանցից ոմանք գտնվում են շատ ծանր վիճակում: Նրանք չեն հասկանում: Ես չեմ կարծում, որ սա նրանց հետ քննարկելու հարց է»:[71] Մեկ այլ հաստատության բժիշկ նշել է. «Մենք երբեք հարաբերություններ չենք նկատել, քանի որ նրանք մի ընտանիքի պես են զգում, միմյանց մասին մտածում են որպես եղբայրներ և քույրեր: Նրանք պաշտպանում և օգնում են միմյանց: Երբեմն

[69] Human Rights Watch, հարցազրույցԷդմոնդի հետ, (հանդիպման վայրը չի բացահայտվում), մայիս 2016թ.
[70] Նույն աղբյուրից
[71] Human Rights Watch, հարցազրույցԼիանա Սարգսյանի հետ, Խարբերդի մանկատան փոխտնօրեն և մանկաբույժ, Խարբերդ, 26-ը մայիսի, 2016թ.

նրանք վիճում են: Մենք չունենք փորձ, երբ որևէ մեկի մոտ սեռական հարաբերություններ եղած լինեն»:[72]

Քիչ համայնքային ծառայություններ են առկա, որոնք հաշմանդամություն ունեցող անձանց աջակցում են մանկատներից դուրս գրվելուց հետո անցումային շրջանում կամ անկախ, չափահաս կյանք վարելու առումով: Այն ծառայությունները, որոնք մատչելի են, իրականացվում են հասարակական կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են Էջմիածնում գործող «Մեր տունը», որը ծ ծառայություններ է մատուցում հաշմանդամություն չունեցող երիտասարդ կանանց համար և «Ջերմիկ անկյունը», որն աջակցում է հաշմանդամություն ունեցող չափահասներին Երևանում: Դոնորները և կառավարության մարմինները պետք է աջակցեն նմանատիպ խմբերին, այնպես, որ նրանք կարողանան ընդլայնել իրենց ծառայությունները:

Գործունակության մերժումը

Գործունակությունը անձի՝ օրենքով ճանաչված լիազորությունը կամ հնարավորությունն է իր անունից հաստատապես գործելու՝ հնարավորություն տալով նրան ունենալ իրավունքներ և կրել պարտականություններ, կայացնել պարտադիր կատարման ենթակա որոշումներ և ստանալ հարգանք դրանց նկատմամբ: Այն նպաստում է անձնական ազատությանը՝ հնարավորություն տալով անհատին ապահովել զբաղվածություն, ամուսնանալ, ժառանգել սեփականություն, քվեարկել, վերահսկել իր ֆինանսական գործերը, ստորագրել պայմանագիր և այլն: Այն նաև պաշտպանում է անհատին անցանկալի միջամտություններից:[73] Համաձայն Հայաստանի օրենսդրության, երեխաները չունեն լիարժեք իրավազորություն:[74]Հայաստանի օրենսդրությունը երաշխավորում է18 տարին լրացած յուրաքանչյուր մարդու լիարժեք գործունակության իրավունքը:[75]

Հայաստանում, չափահաս դառնալուց հետո, մտավոր և հոգե-սոցիալական հաշմանդամություն ունեցող անձը կարող է զրկվել գործունակությունից դատարանի որոշմամբ, որից հետո դատարանը տվյալ մարդու համար նշանակում է խնամակալ,

---

[72] Human Rights Watch, հարցազրույցՄարի Իզմիրլյանի անվան մանկատան բժշկի հետ, Երևան, 26-ըմայիսի, 2016թ.

[73] Council of Europe Commissioner for Human Rights, “Who Gets to Decide? Right to Legal Capacity for Persons with Intellectual and Psychosocial Disabilities,” April 2012, https://www.coe.int/t/commissioner/source/prems/IP_LegalCapacity_GBR.pdf (accessed December 18, 2016).

[74]Քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է որոշակի իրավիճակներ, երբ երեխաները կարող են իրացնել սահմանափակ իրավունքներ՝ կախված իրենց տարիքից: Օրինակ, 14-ից 18 տարեկան երեխաները կարող են տնօրինել իրենց աշխատավարձը, կրթաթոշակը այլ եկամուտներ, իրականացնել գիտության, գրականության կամ արվեստի ստեղծագործության, գյուտի կամ մտավոր գործունեության՝ օրենքով պահպանվող այլ արդյունքի հեղինակի իրավունքներ: ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, հոդվածներ 29 և 30:

[75]Քաղաքացիական օրենսգիրք, հոդված 24(1).

ով որոշումներ է կայացնում նրա անունից:[76] Հայաստանում չկա որևէ մեխանիզմ մտավոր և հոգեբանական-սոցիալական հաշմանդամություն ունեցող անձանց գործունակությունից մասնակիորեն զրկելու համար: Գործունակությունից մասնակիորեն զրկելու պատճառները ներառում են կախվածությունը ալկոհոլից, թմրամիջոցներից կամ խաղամոլությունից:[77]

Human Rights Watch-ը պարզել է, որ մտավոր և հոգե-սոցիալական հաշմանդամություն ունեցող անձանց իշխանությունները պարբերաբար զրկում են գործունակությունից, երբ նրանք դառնում են չափահաս, այնպես որ անհատի խնամակալը, որը կարող է լինել մանկատունը կամ հաստատությունը, շարունակում է կայացնել բոլոր իրավական և այլ որոշումները նրանց փոխարեն:[78] Հաշմանդամություն ունեցող անհատները, ովքեր, որպես երեխաներ, ապրում են հաստատություններում, կարող են չունենալ իրենց ապրելու վայրի կամ իրենց կյանքին առնչվող այլ բնագավառների վերաբերյալ ընտրության հնարավորություն, նույնիսկ այն բանից հետո, երբ նրանք դառնում են 18 տարեկան:Հայկական իրավապաշտպան կազմակերպությունները նույնպես փաստագրել են լուրջ մտահոգություններ՝ մտավոր և հոգե-սոցիալական հաշմանդամություն ունեցող չափահասներին գործունակությունից զրկելու պրակտիկայի վերաբերյալ:[79]

Human Rights Watch-ի կողմից արձանագրված մի դեպքում, Էդմոնդը, ով 20 ու կես տարեկան է և ունի մեղմ մտավոր հաշմանդամություն, պատմել է Human Rights Watch-ին, որ իրեն հնարավորություն չի տրվում հեռանալու այն հաստատությունից, որտեղ նա ապրել է մանկուց ի վեր: - Ես չեմ կարող պատասխանել, թե ով է որոշում, որ ես այստեղ մնամ: Դուք կարող եք հարցնել տնօրենին: Ես այստեղ եմ եղել 8 տարեկանից ի վեր, և ես կմնամ այստեղ: ... Իմ երազանքներից մեկն է, որ ես կարողանամ ինքնուրույն ապրել և իմ սեփական կյանքն ապրեմ: Երկար ժամանակ ես մտածում էի ինքնուրույն ապրելու մասին, բայց ես կորցրել եմ հույսս:[80]

---

[76] Նույն աղբյուրից, հոդված 31(1).

[77] Նույն աղբյուրից, հոդված 32.

[78] Տես նաև, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա – Վանաձոր, «Չափահաս անձին անգործունակ ճանաչելու և խնամակալ նշանակելու վերաբերյալ օրենսդրականկարգավորումները ՀՀ օրենսդրության համաձայն»,http://hcav.am/wp-content/uploads/2014/05/%D4%BD%D5%B6%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A1%D5%AC%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%AB%D5%B6%D5%BD%D5%BF%D5%AB%D5%BF%D5%B8%D6%82%D5%BF%D5%A8..pdf (այցը՝ 18-ը դեկտեմբերի, 2016թ.).

[79] Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա – Վանաձոր, «Հաշմանդամություն ունեցող անձանցիրավունքների մասին կոնվենցիայի/ՀՈՒԱԻԿայլընտրանքային զեկույց», 2014թ., http://hcav.am/wp-content/uploads/2015/02/%D5%A1%D5%B5%D5%AC%D5%A8%D5%B6%D5%BF%D6%80%D5%A1%D5%B6%D6%84%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81.pdf (այցը՝ 18-ը դեկտեմբերի, 2016թ.).

[80] Human Rights Watch, հարցազրույցԷդմոնդի հետ, (հանդիպման վայրը չի բացահայտվում), մայիս 2016թ.

Ըստ Մարի Իզմիրլյանի անվան մանկատան տնօրենի, երբ երեխաները դառնում են 18 տարեկան, նրանք կարող են վերադարձվել իրենց ընտանիքներին, եթե նրանց ընտանիքներն ընդունեն իրենց: Ընտանիքները, եթե նրանք են հանդիսանում անհատի օրինական խնամակալ, կարող են նաև թույլատրել, որպեսզի իրենց չափահաս երեխաները տեղակայվեն մեծահասակների համար նախատեսված հաստատությունում: Այն երեխաները, ում ծնողները հրաժարվել են իրենց ծնողական իրավունքներից և ում չեն որդեգրել մինչև 18 տարեկան դառնալը, «ավտոմատ կերպով տեղափոխվում են 18 տարեկանից բարձր՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված «Ձորակ» հաստատություն»:[81] Մարի Իզմիրլյանի անվան մանկատան փոխտնօրենը նույնպես հաստատեց, որ իշխանությունները գերիշխող դեր ունեն հաստատություններում երեխայի ապագա տեղակայման մասին որոշումների կայացման մեջ: Նա Human Rights Watch-ին պատմել է. «Երբ երեխան դառնում է 18 տարեկան, մենք տեղեկատվություն ենք ուղարկում նախարարություն [աշխատանքի և սոցիալական հարցերի] այն մասին, որ մենք ունենք այսպիսի երեխա և հայցում ենք, որպեսզի երեխան տեղափոխվի համապատասխան հաստատություն: Մենք ներկայացնում ենք տվյալներ նրանց հաշմանդամության, առողջության պատմության և մասնավոր հարցերի վերաբերյալ: ... Շատերը գնում են «Ձորակ»: Եթե կան հոգեկան խնդիրներ, երեխաները կարող են ուղարկվել հոգեբուժական կենտրոններ»:[82]

Human Rights Watch-ի կողմից հարցված մանկատան աշխատակիցը խուսափեց պատասխանել կոնկրետ հարցերին, թե ինչպես կարող է ապահովվել մեծահասակների գործունակությունը, և թե արդյոք հաստատությունում առկա է որևէ կոնկրետ մեխանիզմ, որը ներդրված է շարունակական տեղակայման վերաբերյալ անհատի անձնական տեսակետները հաշվի առնելու համար:[83] Human Rights Watch-ին ուղղված մի նամակում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, հաղորդում է. «Նախքան սոցիալական պաշտպանության հաստատություններ ընդունվելը՝ դիմորդներն ունենում են համապատասխան իրավական կարգավիճակ», առանց լրացուցիչ մանրամասների, ի պատասխան այն հարցին, թե պետական հաստատություններում մեծահասակներից քանիսը ունեն գործունակություն:[84]

---

[81] Human Rights Watch, հարցազրույցներ Հասմիկ Մկրտչյանի հետ, 25-ըև 26-ը մայիսի, և 4-ը դեկտեմբերի, 2016թ.

[82] Human Rights Watch, հարցազրույցԱրմինե Պետրոսյանի հետ, Մարի Իզմիրլյանի անվան մանկատան փոխտնօրեն, Երևան, 26-ը մայիսի, 2016թ.

[83] Նույն աղբյուրից, նհարցազրույցՇարություն Բալասանյանի հետ, մայիսի 25, 2016թ.

[84] Գրութնուն Շ. Հարությունյանից,ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն, 23-ը դեկտեմբերի, 2016թ.

Խարբերդի մանկատան տնօրենը պարզաբանել է, որ շատ երեխաներ, ովքեր դառնում են 18 տարեկան, մնում են հաստատությունում և նշել է, որ որևէ քայլ չի ձեռնարկվում ապահովելու նրանց գործունակության կիրարկումը, ովքեր դառնում են 18 տարեկան: - Տասնութից հետո սոցիալ-տնտեսական խնդիրները չեն լուծվում: ... Անվասայլակով տեղաշարժվող բոլոր չափահասները մնում են այստեղ: Ինչպես նշվել է վերևում, Խարբերդի մասնագիտացված մանկատանն ապրում է 127 երիտասարդ չափահաս:[85] Տնօրենը նաև նշել է, որ շարունակական ինստիտուցիոնալացման այլընտրանքների պակասը հանգեցրել է նրան, որ պաշտոնյաները որոշումներ կայացնեն երեխաներին խնամքի հաստատություններում պահելու օգտին։- Մենք մի երիտասարդ ունենք, ով հոգեկան խնդիրներ ունի: Մենք պետք է նրան այստեղ պահենք: 18 տարեկանից հետո նա պետք է գնա հոգեբուժարան: Ես չեմ կարծում, որ դա լավ է։ Ես կարծում եմ, որ պետք է ինչ-որ այլ տարբերակ լինի, - ասել է նա:[86]

Ըստ հաշմանդամություն ունեցող 120 չափահասների խնամող «Զորակ» հոգեբուժական օգնության կենտրոնի տնօրենի. «Մարդիկ երբեք այլ տեղ չեն գնա: Նրանք կմնան այս հաստատությունում իրենց ողջ կյանքի ընթացքում»:[87]

Սոցիալական ծառայությունների բացակայությունը չպետք է արդարացում հանդիսանա 18 տարին լրացած ցանկացած անձին գործունակությունից զրկելու համար։ Կառավարությունը պետք է անհապաղ բարեփոխի մեծահասակների համար գործունակության և հոգաբարձության մասին օրենքը՝ ներդնելով որոշումների կայացման մեջ օգնող և աջակցող մի համակարգ, որը հարգում է հաշմանդամություն ունեցող անձի ինքնավարությունը, կամքը և նախասիրությունները: Կառավարությունը պետք է նաև ստեղծի իր աջակցությամբ բնակության և այլ առընչվող ծառայություններ, որոնք կերաշխավորեն, որ հաշմանդամություն ունեցող անձինք, ի թիվս այլ իրավունքների, կարողանան իրագործել իրենց ինքնավարության և համայնքում ապրելու իրավունքներից։

Ի հակադրումն դրա, ընդհանրացված մանկատան աշխատակազմը, որտեղ բնակվում են միայն հաշմանդամություն չունեցող երեխաներ, հստակ հայտարարել է, որ դառնալով 18 տարեկան՝ երեխաները ձեռք են բերում լիարժեք գործունակություն և որ մանկատունն այս առումով հարգում է օրենքը: Ըստ մի ընդհանրացված մանկատան փաստաբանի. «Օրենքի համաձայն, երբ նրանք դառնում են չափահաս, մանկատունը նրանց նկատմամբ այլևս իրավունքներ կամ պարտականություններ չունի։ Չի

[85] Human Rights Watch, հարցազրույցՀարություն Բալասանյանի հետ, մայիսի 25, 2016թ.
[86] Նույն աղբյուրից
[87] Human Rights Watch, հարցազրույցՍամվել Խաչատրյանի հետ, «Զորակ» հոգեբուժական օգնության կենտրոնի տնօրեն, Երևան, 4-ը դեկտեմբերի, 2016թ.

սահմանվում, թե որ դեպքերում մենք կարող ենք պահպանել խնամակալությունը: Նրանք համարվում են մեծահասակներ: Մեզ մոտ ապրում են 18 տարեկանից բարձր բնակիչներ, քանի որ դա իրենց ընտրությունն է: Մենք ամեն ինչ քննարկում ենք նրանց հետ և հաշվի ենք առնում նրանց որոշումները»:[88]

Կառավարության պարտավորությունները գործունակության վերաբերյալ

Հաշմանդամություն ունեցող անձանց համար համայնքում ապրելու իրավունքն անխզելիորեն կապված է օրենքի առջև հավասար ճանաչման իրավունքի և մյուսների հետ հավասար հիմունքներով գործունակության կիրարկման հետ, որը երաշխավորված է ՀԻԿ կոնվենցիայի 12-րդ հոդվածով: Հաշմանդամություն ունեցող անհատները հատկապես խոցելի են հաստատություններում տեղակայվելու իմաստով, քանի որ նրանք շատ հաճախ զրկված են իրենց կյանքին վերաբերվող էական որոշումներ կայացնելու, ներառյալ՝ հաստատությունից հեռանալու ընտրության իրավունքներից: Հետևաբար, երեխաների և երիտասարդների՝ համայնքում ապրելու իրավունքն ապահովելու համար, պետությունները պետք է նաև հարգեն նրանց՝ չափահաս դառնալուց հետո գործունակության լիարժեք իրացման իրավունքը:

Ըստ մարդու իրավունքների միջազգային օրենքի, յուրաքանչյուր ոք ունի օրենքով որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունք:[89] Այս ճանաչումը պարունակում է այն ենթադրությունը, որ անձը կարող է իր անունից կայացնել կենսական որոշումներ: ՀԻԿ-ը պետություններից պահանջում է ճանաչել, որ «հաշմանդամություն ունեցող անձինք, մյուսների հետ հավասար հիմունքներով, ունեն գործունակություն կյանքի բոլոր բնագավառներում», որ հաշմանդամություն ունեցող անձինք կարող են գործել ելնելով իրենց լավագույն սեփական շահերից և, որ անհրաժեշտության դեպքում նրանց պետք է աջակցություն ցուցաբերվի իրենց գործունակությունը իրացնելու համար:[90]

---

[88] Human Rights Watch, հարցազրույցՍեդա Թարկյանի հետ, իրավաբան, Վանաձորի մանկատուն, Վանաձոր, 30-ը մայիսի, 2016թ.

[89] Միջազգային դաշնագիր քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին (ՔՔԻՄԴ), ընդունվել է 16-ը դեկտեմբերի, 1966թ, G.A. Res. 2200A (XXI), 21 U.N. GAOR Supp. (No. 16) at 52, U.N. Doc. A/6316 (1966), 999 U.N.T.S. 171, ուժի մեջ է մտել 23-ը մարտի, 1976թ., Հոդվ. 16; Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (ՄԻՀՀ), ընդունվել է 10-ը դեկտեմբերի, 1948թ. G.A. Res. 217 A(III), U.N. Doc. A/810 at 71 (1948), Հոդված 6:

[90] ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա (ՀԻԿ), ընդունվել է 13-ը դեկտեմբերի, 2006թ, G.A. Res. 61/106, Հավելված I, U.N. GAOR, 61st Sess., Supp. (No. 49) at 65, U.N. Doc. A/61/49 (2006), ուժի մեջ է մտել 3-ը մայիսի, 2008թ., Հոդված՝ 12: Սա իրենից ներկայացնում է մի անցում նախորդ իրավական չափանիշների: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 1971թ.-ին և 1991թ.-ին ինքնըստինքյան ընդունվել է, որ որոշակի աստիճանի մտավոր հաշմանդամություն ունեցող անհատները ի վիճակի չէն լինի ինքնուրույն իրացնել որոշ իրավունքներ և պետք է պաշտպանված լինեն: Դատարանները կարող էր զրկել անհատներին գործունակությունից՝

Աջակցված որոշումների կայացման համակարգը պետք է լինի անհատի իրավունքների իրացմանն օժանդակող ռեժիմ, մի գործընթաց, որի միջոցով անձի կամքն ու նախապատվություններն ամբողջությամբ հարգվում են: Այս աջակցության համակարգի շրջանակներում պետությունը պետք է ապահովի երաշխիքներ՝ չարաշահումների կանխարգելման նպատակով: Այս երաշխիքները պետք է ապահովեն, որ տրամադրվող աջակցությունը համարժեք լինի անձի հանգամանքներին, սահմանափակ տևողություն ունենա, չառաջացնում շահերի բախում, և ենթակա լինի պարբերական և անաչառ վերանայման՝ անկախ մարմնի կողմից:[91]

Կառավարությունը պետք է վերանայի 18 տարեկանը լրացած երեխաներին և երիտասարդ չափահասներին հաստատություններում տեղակայելու իր ընթացակարգերը՝ ապահովելով, որ նման տեղակայումը չհանգեցնի ազատազրկման և պետք է հաստատի համապատասխան երաշխիքներ՝ նրանց ցանկացած կամայական ազատազրկումից պաշտպանելու համար:[92] Անձի ազատության և անվտանգության երաշխիքները և այդ ազատությունների ցանկացած սահմանափակում վիճարկելու իրավունքը սահմանված է ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածով և ՔՔԻՄԴ 9-րդ հոդվածով, որտեղ ասվում է. «Ոչ ոք չպետք է զրկվի ազատությունից այլ կերպ, քան այնպիսի հիմքերով և այնպիսի ընթացակարգի համապատասխան, որոնք սահմանված են օրենքով»:[93] ՀԻԿ-ը հաշմանդամություն ունեցող անձանց համար լրացուցիչ պաշտպանություն է ապահովում ընդդեմ ազատազրկման, մասնավորապես, հաշմանդամության առկայության հիմքով չձերբակալվելու իրավունքը: Հետևաբար, ցանկացած ազատազրկման հիմքում պետք է լինի որոշակի հանգամանք, որը խտրականություն չի դրսևորում հաշմանդամության հիման վրա:[94]

կանխելու կարևոր որոշումների կայացումը և իրենց իրավունքների իրացումը: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա:Հոգեկան հիվանդություն ունեցող անձանց պաշտպանությունև հոգեկան առողջության խնամքիբարելավում, A/RES/46/119, ընդունված է 75-րդ լիագումար նիստին, 17-ը դեկտեմբերի, 1991 թ.

[91] ՀԻԿ, Հոդված 12(4).

[92] Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) առանց իրենց համաձայնության հաստատություններում տեղակայված մարդկանց, եթե անձնակազմը «ամբողջական և արդյունավետ կերպով վերահսկում է [իրենց] խնամքըևտեղաշարժը», ճանաչում է որպես ազատությունից զրկված, Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի իմաստով (Տես ՄԻԵԴ HL v Միացյալ Թագավորություն (թիվ՝ 45508/99) վճիռ՝ 5-ը հոկտեմբերի, 2004թ., para.91, և Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Սթորքը ընդդեմ Գերմանիայի (թիվ 61603 .... / 00) վճիռ՝ 16-ը հուլիսի, 2005թ., կետեր 74, 89.). Բացի այդ, անձը զրկված է ազատությունից, երբ, հակառակ իր կամքին, տեղակայվում է հաստատությունում, նույնիսկ եթե այդ անձը ակտիվորեն չի դիմադրում ինստիտուցիոնալացումը, հաստատությունը կողպված չէ կամ փական չունի, կամ այն անձը, ում թույլատրվում է հաճախակի հեռանալ հաստատությունից առանց վերահսկման: Այսպիսով, Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի կամայական կալանքի արգելքը վերաբերում է նույնիսկ այն օբյեկտներին, որոնք պնդում են, որ չեն կալանավորումայդ անհատներին, քանի դեռ նրանք, ովքեր տեղակայվել են իրենց շրջանակներում, չեն կարող ազատ հեռանալ:

[93] ՔՔԻՄԴ, հոդված 9(1).

[94] ՀԻԿ, հոդված 14.

IV. Վերափոխված կյանքեր

Human Rights Watch-ը զրուցել է ընտանիքների հետ, ովքեր կարողացել են իրենց երեխաներին տուն վերադարձնել, հաճախ երկար ժամկետով հաստատություններում ապրելուց հետո: Այս դեպքերի թվում են ինչպես հաշմանդամություն ունեցող, այնպես էլ չունեցող երեխաները: Այլ դեպքերում, այն ծնողները, ովքեր պատրաստվում էին իրենց երեխաներին խնամքի հաստատություններ ուղարկել, անհրաժեշտ աջակցություն են ստացել հասարակական կազմակերպություններից: Այդ օժանդակությունը ներառել է բնակարան, սնունդ, հագուստ և դպրոցական պարագաներ՝ իրենց երեխաներին տանը մեծացնելու նպատակով:

Human Rights Watch-ը 2016թ. մայիսին հարցազրույց է անցկացրել Մարիանայի և Գևորգի հետ, ովքեր ապրում են Երևանում, ունեն սեփական փոքր բիզնես և պատմել են իրենց դստեր՝ Ինեսայի՝ 2009թ. օգոստոսին, ծնվելուց անմիջապես հետո հիվանդանոցում անցկացրած ժամանակի մասին: Սկսեց Գևորգը.

> Երբ Ինեսսան ծնվեց ... բժիշկն ասաց, որ նա Դաունի համախտանիշ ունի: Մեր ընտանեկան բժիշկը, ով շատ մտերիմ է մեզ, ասաց, որ երեխան երկար չի ապրի: Նա ասաց, որ դա կարող է նույնիսկ տեղի ունենալ մի քանի օրվա ընթացքում... Նա ներկայացրեց մեր երեխային հանձնելու հնարավորությունները: Մեր խոսակցությունն ավարտվեց նրանով, որ մենք մի թուղթ ստորագրեցինք երեխայից հրաժարվելու վերաբերյալ: ... Դա ծնվելուց հինգ կամ վեց օր հետո էր: Կինս առողջական բարդություններ ուներ և նա լավ չէր զգում: Հինգ տարի մենք Ինեսսայի մասին որևէ տեղեկություն չունեինք:

Մարիանան և Գևորգը շարունակեցին ներկայացնել Ինեսսային գտնելու համար 2015թ. սկզբից իրենց սկսած որոնումների մասին.

> «Մեկ ու կես տարի առաջ, մեր մեծ երեխան, մեր դուստրը, ով 25 տարեկան է,ենթարկվել էր մի վատ ելքով ավտովթարի: Ես Աստծուն աղոթեցի, որ օգնի իմ դստերը, ... և խոստացա, որ կորոնեմ Ինեսսային: ... Մենք գտանք մի բարեկամի, ում ծանոթն աշխատում էր մանկատանը: Մենք նրան խնդրեցինք օգնել մեզ: Մենք գտանք Ինեսսային այդ անձի շնորհիվ: Նա Նորքի մանկատանն էր արդեն հինգ տարի: Նրան այստեղ էին տեղափոխել, քանի իր տարիքը լրացել էր Մարի Իզմիրլյանի անվան մանկատանը: Ես գնացի Մարի Իզմիրլյանի

> անվան մանկատուն և բացատրեցի իրավիճակը. «Եթե մենք իմանայինք, որ նա կապրեր, մենք չէինք լքի նրան»: Նրանք հասկացան մեզ և օգնեցին տուն բերենք Ինեսային:»

Ինեսային գտնելուց հետո, զույգը նրան բերեց իրենց Երևանի տուն: Հիմա, երբ արդեն նրանք վերամիավորվել են, Գևորգը նկարագրեց փոփոխությունը Ինեսայի և իրենց համար.

> Նա բոլորովին չէր քայլում: Նա սկսեց քայլել, միայն տուն գալուց հետո: ... Նա ավելի շատ է հասկանում: Նա գիտի իր անունը: Նա կարողանում է պատասխանել: Մենք համոզված ենք, որ նա շատ բան կարող է հասկանալ: ... Ինեսան օրհնություն է: Եթե մենք չվստահեինք մեր ընտանեկան բժշկին, մենք երբեք չէինք թողնի նրան: Հիմա ես հույս ունեմ, որ ամեն ինչ լավ կլինի:[95]

Մեկ այլ դեպքում, ընտանիքներ վերադարձող երեխաների աջակցության և երեխաների տեղակայումը հաստատություններում կանխարգելող ծրագրեր իրականացնող «Առավոտ» ՀԿ-ն օգնել էր Գոհարին (36 տարեկան) և նրա մայրիկին, Գյումրիի բնակելի դպրոցից, որտեղ ապրում են 100-ից ավելի երեխաներ, իր երկու երեխաներին տուն բերելու հարցում:[96] Գոհարի երեխաներն ինը տարի ապրում էին այնտեղ: «Առավոտը», որպես օգնություն, այս ընտանիքին տրամադրել է սնունդ, դպրոցական պարագաներ, գրքեր, կոշիկներ և հագուստ: Ըստ Գոհարի դուստր Հռիփսիմեի, (16 տարեկան) .«Դպրոցում նորմալ էր: Մենք խաղում էինք: Ես ընկերներ ունեի այնտեղ: Բայց, իհարկե, տանը լինելն ավելի լավ է: Մենք մեր մայրիկի հետ ենք: Այստեղ ավելի ջերմ է»:

Գոհարն ապրում է իր մոր և եղբոր հետ, ովքեր երկուսն էլ հաշմանդամություն ունեն: Ի լրումն հաշմանդամության կենսաթոշակների, ընտանիքը ստանում է 28000 ՀՀ դրամ ($58) սոցիալական նպաստ, որը նրանք հիմնականում ծախսում են կոմունալ ծառայությունների վրա: - Երբ «Առավոտի» աջակցությունն ավարտվի, դժվար կլինի, և մենք պետք է ավելի շատ մտածենք այն մասին, թե ինչպես ենք վճարելու սնունդի

---

[95] Human Rights Watch, հարցազրույցՄարիանայի և Գևորգի հետ, Երևան, 28-ը մայիսի, 2016թ.

[96] «Առավոտը» համաձայնագիրունի Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ, այս աշխատանքը Լոռու և Շիրակի մարզերում իրականացնելու համար: Գրություն Human Rights Watch-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչությունից, 23-ը դեկտեմբերի, 2016 թ.

համար, - ասաց նա: - Սակայն, անկախ նրանից, թե ինչքան վատ կլինի, ես նրանց ետ չեմ ուղարկի բնակելի դպրոց:[97]

Աննան, այժմ 11 տարեկան, հինգ տարի անցկացրել է մանկատանը, քանի որ նրա մայրը՝ Նառան, ով տարիներ շարունակ ենթարկվել էր ընտանեկան բռնությունների և ի վերջո ամուսնալուծվել, ի վիճակի չի եղել հոգ տանել նրա մասին: Նառան բացատրեց. «Իմ ամուսնալուծությունից հետո ամուսինս ինձ դուրս արեց, և ես որևէ տեղ կամ միջոց չունէի ապրելու»: 2015թ.-ի վերջին Նառան կարողացավ Աննային տուն բերել ոչ հասարակական կազմակերպություններ աջակցությամբ, որոնք տրամադրեցին սնունդ, կահույք և մի կով, որպեսզի օգնեն պահպանել իր ընտանիքը: Նառան դեռ ապրում է աղքատության մեջ և իր եկամտի հիմնական մասը վաստակում է կովի կաթը վաճառելով, ուրիշների կովերը կթելով, ինչպես նաև որոշ սեզոնային գյուղատնտեսական աշխատանքներով: «Ամենակարևորն այն է, որ իմ երեխան հիմա ինձ հետ է»: Նառան ասաց, որ Սուրբ Ծննդյան տոների ժամանակ էր, երբ նա Աննային տուն բերեց, որպեսզի միասին ապրեն: «Դա ամենաերջանիկ Սուրբ Ծնունդն էր, որ մենք երբևէ ունեցել էինք»:[98] Ինչպես Աննան պատմեց Human Rights Watch-ին. «Ամենադժվար մասն ինձ համար [մանկատանը] այն էր, որ ես իմ մայրիկի հետ չէի: Անցյալ տարի, Սուրբ Ծնունդին ինձ հարցրեցին. «Ի՞նչ երազանք ես պահել այս Սուրբ Ծննդյան օրը»: Եվ ես ասացի. «Ես կցանկանայի, որ մայրս գա և վերցնի ինձ: Եվ ինձ ասացին. «Վաղը քո մայրը պիտի գա»:[99]

Մեկ այլ դեպքում, Գյումրիում ապրող՝ 2-ից 12 տարեկան հինգ երեխաների մայր 30-ամյա Հեղինեն Human Rights Watch-ին ասել է, որ 2015 թվականին ինքը մտածում էր իր երեխաներին գիշերօթիկ դպրոց ուղարկելու մասին: Ընտանիքը լուրջ ֆինանսական դժվարություններ ուներ և ապրում էր հանրակացարանի տիպի շինության ննջասենյակներում, առանց ջրամատակարարման: Հեղինեն նկարագրել է ընտանիքի աղքատությունը. «Մենք շատ վատ վիճակում էինք: Մենք գումար չունեինք դպրոցական պարագաների կամ հագուստի համար: Սնունդը մենք միայն կարողանում էինք ապառիկ վերցնել, առանց վճարելու»:[100] Երբ նրանց ամենափոքր երեխան էր ծնվել և ուներ լուրջ, անհասկանալի ցնցումներ, իրենց վիճակն ավելի վատթարացավ: - Երբ իմ աղջիկը ծնվեց, ամուսինս Ռուսաստանում էր՝ աշխատանք էր փնտրում, բայց նա վերադարձավ, որպեսզի օգնի նրա մասին հոգ տանել, - ասաց

---

[97] Human Rights Watch, հարցազրույցԳոհարի հետ, Գյումրի, 27-ը մայիսի, 2016թ.

[98] Human Rights Watch, հարցազրույցՆառայի հետ, Գեղարքունիքի մարզ (հանդիպման վայրը չի բացահայտվում), 30-ը մայիսի, 2016թ.

[99] Human Rights Watch, հարցազրույցԱննայի հետ, Գեղարքունիքի մարզ (հանդիպման վայրը չի բացահայտվում), 30-ը մայիսի, 2016թ.

[100] Human Rights Watch, հարցազրույցՀեղինեի հետ, Գյումրի, 27-ը մայիսի, 2016թ.

Հեղինեն։ Երբ նա դիմել էր մարզպետարան իր չորս ավագ երեխաներին հատուկ դպրոց ընդունելու խնդրանքով, նրանք Հեղինեին ուղղորդել էին դեպի «Առավոտ» ՀԿ: «Առավոտի» աջակցությամբ Հեղինեի երեխաներն ապրում են նրա հետ՝ իր ամուսնու մահից հետո տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տրամադրված բնակարանում և հաճախում են դպրոց:[101]

[101] Նույն աղբյուրից

V. Ազգային և միջազգային իրավական պարտավորություններ

Ազգային իրավական պարտավորություններ

ՀՀ սահմանադրությունը նախատեսում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող միջավայրում:[102] Երեխայի իրավունքների մասին օրենքը նախատեսում է, որ յուրաքանչյուր երեխա ունի ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների իրավունք: Երբ ծնողները կամ օրինական խնամակալները չեն կարողանում ապահովել համապատասխան կենսապայմաններ, կառավարությունը պետք է տրամադրի օգնություն:[103] Օրենքը նաև նշում է, որ այն դեպքերում, երբ երեխային այլընտրանքային ընտանեկան խնամք տրամադրելու հնարավորություն չկա, կառավարությունը պետք է երեխային տեղակայի մանկատանը կամ գիշերօթիկ դպրոցում: Օրենքը նաև պահանջում է, որ խնամքի հաստատությունները ստեղծեն «ընտանեկան մթնոլորտին մոտ» կենսապայմաններ:[104]

Հայաստանի օրենսդրությամբ սահմանվում է, որ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքն ու դաստիարակությունը կազմակերպելու առաջնահերթությունը պետք է տրվի ընտանիքին՝ այդ երեխաների կարիքները հոգալու և նրանց մեծացնելու համար ընտանիքներին տրվող աջակցությամբ: Օրենքը նաև նախատեսում է մի շարք հիմնական երաշխիքներ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար, մասնավորապես, ի թիվս այլ երաշխիքների՝ կրթություն, առողջապահություն, կացարան և անվճար իրավաբանական ծառայություններ:[105]

Սոցիալական ծառայությունների մատուցումն առաջնորդվում է մի քանի սկզբունքներով, այդ թվում՝ «մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, հարգանքը մարդկային արժանապատվության նկատմամբ»: Ազգային օրենսդրությունը հիմնվում է այնպիսի սկզբունքների վրա, ինչպիսիք են հակախտրականությունը և երեխաների գերակայումը սոցիալական ծառայություններում: Նպաստների համակարգը

---

[102] ՀՀ սահմանադրություն, 5-ը մայիսի, 2005թ., ներառյալ՝ 27-ը նոյեմբերի, 2005թ.և 12-ը դեկտեմբերի, 2015թ. փոփոխությունները), հոդված. 33.2.

[103] Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենսդրություն (1996թ., փոփոխություններով), հոդված 8

[104] Նույն աղբյուրից, հոդված 25.

[105] Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին ՀՀ օրենք, ՀՕ-411-Ն, 24-ը սեպտեմբերի, 2002թ., հոդված 2, գլուխ 2.

դրամական փոխանցումների և այլ օժանդակող ծառայությունների համակցված համակարգ է՝ հիմնված բալային մեթոդի վրա, որը յուրաքանչյուր ընտանիքի համար սահմանում է անապահովության բալ: Սոցիալական ծառայության հիմնական տեսակները ներառում են՝ խորհրդատվություն, վերականգնողական ծառայություններ, բնաիրային աջակցություն, կացարան, խնամք, իրավաբանական օգնության, կենսաթոշակներ և այլ դրամական աջակցություն, զբաղվածության ծառայություններ և այլ սոցիալական ծառայություններ:[106] Ծառայությունները նպատակաուղղված են մարդու կամ ընտանիքի սոցիալական կարիքների բավարարմանը և «կյանքի դժվարին իրավիճակները» կանխելուն կամ թեթևացնելուն:[107] Սոցիալական աջակցության 2014թ. օրենքը ներկայացնում է «Ինտեգրված սոցիալական ծառայությունների» մի համակարգ, որը պետք է մատուցի համապարփակ, համակարգված ծառայություններ՝ անձի կամ ընտանիքի սոցիալական կարիքների համապարփակ գնահատման հիման վրա: Օրենքը ներկայացնում է սոցիալական գործի վարչարարության գաղափարը նկարևորում է սոցիալական աշխատողների դերը:[108]

Հայաստանում աղքատության և երեխաների շրջանում զրկանքների վերաբերյալ ՅՈՒՆԻՍԵՖ-ի 2016թ. ուսումնասիրությունն առաջարկել է ամրապնդել սոցիալական աջակցությունն ինչպես հասցեականության, այնպես էլ քանակային առումով, որպեսզի արդյունավետ լուծումներ տրվեն երեխաների զրկանքներին:[109]

Հաշմանդամություն ունեցող երեխաներ

Հայաստանի օրենսդրությունը երաշխավորում է հաշմանդամություն ունեցող երեխաների հիմնական և մասնագիտական կրթությունը, զբաղվածությունը, սոցիալական վերականգնում ստանալու և հանրային կյանքում լիարժեք մասնակցելու հնարավորությունը:[110] Գրանցված հաշմանդամություն ունեցող երեխաներն իրավունք

---

[106] Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենք, ՀՕ-231-Ն, 17-ը դեկտեմբերի, 2014թ. հոդվածներ՝ 7, 8, 19 և 20.

[107] «Կյանքի դժվարին պայմանները» սահմանվում է որպես՝ հաշմանդամության, հիվանդության, տարիքի հետ կապված ինքնասպասարկման ունակությունների կորստի, առանց ծնողական խնամքի մնալու, աղքատության, գործազրկության, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկվելու, անօգնականության, միայնակության, սոցիալական մեկուսացման, վնասակար սովորույթների, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ազատազրկման վայրերում գտնվելու կամ այդ վայրերից վերադառնալու հանգամանքներից որևէ մեկով կամ դրանց համակցմամբ, մարդու կենսագործունեությանը խանգարող օբյեկտիվ իրավիճակ, որն անձն ինքնուրույն հաղթահարել չի կարող. Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենք, հոդված 2(1).

[108] Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենք, հոդված 33 և գլուխ 6:

[109] ՅՈՒՆԻՍԵՖ, «Մանկական աղքատությունը Հայաստանում՝ զրկանքների բազմաշերտ ազգային վերլուծություն», 2016թ.:

[110] Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենք,ՀՕ-59, 29-ը մայիսի, 1996թ, հոդված 26:

ունեն ստանալ սոցիալական կենսաթոշակային վճարումներ անկախ կարիքից[111], ինչպես նաև անվճար բժշկական օգնության և վերականգնողական ծառայություններ:[112] Փորձագետները թերություններ են հայտնաբերել այդ ծառայությունների փաստացի առկայության և մատուցման մեջ:[113]

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և նրանց սոցիալական ներառման մասին օրենքի նախագիծն այժմ առկախ է խորհրդարանում: Այն մի շարք կարևոր փոփոխություններ է նախատեսում հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրավունքների վրա հիմնված պաշտպանության իրավակարգավորման մեջ:[114] Նոր օրենքը մատչելիության պահանջ է դնում հասարակական կյանքի բոլոր բնագավառներում, ինչպես նաև սոցիալական ներառման, և կարևորում է հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքները: Օրենքը նաև նպատակ ունի ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունենան իրենց ընտրությունը կատարելու ազատությունը, այդ թվում՝ «բնակավայրի, կրթության, մասնագիտության, զբաղվածության, [և] սոցիալական ու բժշկական օգնությանը նտրության ազատություն»: Փորձագետներին շարունակում է մտահոգել, որ օրենքի նախագիծը չի նշում օրենքի կիրարկումը վերահսկող լիազոր մարմին, ինչպես նաև չի սահմանում պատժամիջոցներ օրենքի խախտման համար:[115] Կառավարությունը պետք է ապահովի օրենքի համապատասխանությունը ՀԻԿ-ին:[116]

Միջազգային իրավական պարտավորություններ

Որպես Երեխայի իրավունքների կոնվենցիայի մասնակից պետություն, Հայաստանը պարտավորված է ճանաչել յուրաքանչյուր երեխայի՝ իր ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացմանը համապատասխան կենսակապայմաններ ունենալու իրավունքը: Երեխայի ծնող(ներ)ը կամ նրա համար պատասխանատու այլ անձինք առաջնահերթ պատասխանատվություն ունեն

---

[111] Պետական կենսաթոշակների մասին ՀՀ օրենքը, ՀՕ-243-Ն, 22-ը դեկտեմբերի, 2010թ., հոդվածներ 26 և 28:

[112] ՀՀ կառավարության որոշում թիվ 318-Ն, 2014թ., և ՀՀ կառավարության որոշում թիվ 1535, 24-ը դեկտեմբերի, 2015թ., «Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական անհատական ծրագրերի կազմման և իրականացման կարգը հաստատելու մասին»

[113] Հայաստանումմարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմեն) 2015թ.Տարեկան հաշվետվություն, ինչպես մեջբերվում է՝ Հաշմանդամություն ունեցող երեխաներին աջակցություն տրամադրելու վերաբերյալ Փրկեք երեխաներին հայաստանյան գրասենյակի կողմից հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներով զբաղվող ՄԱԿ-ի հատուկ հանձնակատարին արված առաջարկության մեջ, 28-ը հոկտեմբերի, 2016թ. Human Rights Watch-ի շտեմարան:

[114] Օրենքը, որն այս պահին ուժի մեջ է, Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին ՀՀ օրենքն է, ՀՕ-57-ՀՆ-0800-1, 14-ը ապրիլի, 1993թ.

[115] Human Rights Watch, հարցազրույցԱնահիտ Չիլինգարյանի հետ, անկախ իրավապաշտպան, Երևան, 5-ը դեկտեմբերի, 2016թ.

[116] Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և Հայաստանի Հանրապետությունում նրանց սոցիալական ներառմանմասին ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 4 (1).Human Rights Watch-ի շտեմարան:

ապահովելու երեխայի զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ։ Մասնակից պետությունները, ազգային պայմաններին համապատասխան և իրենց միջոցների շրջանակներում, պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն ծնողներին ու մյուսներին աջակցելու համար և անհրաժեշտության դեպքում պետք է տրամադրեն նյութական աջակցություն և իրականացնեն աջակցության ծրագրեր, մասնավորապես՝ սննդի, հագուստի և կացության խնդիրներին ուղղված։[117]

Պետությունները պետք է նաև ապահովեն, որ երեխաները չառանձնացվեն իրենց ծնողներից, եթե այդ բաժանումը չի բխում երեխայի «լավագույն շահերից»:[118] ՄԱԿ-ի երեխաների այլընտրանքային խնամքի մասին ուղենիշները մեկ անգամ ևս փաստում են, որ ֆինանսական և նյութական աղքատությունը երբեք չպետք է լինի միակ հիմնավորումը երեխային ծնողական խնամքից զրկելու, երեխային այլընտրանքային խնամքի տակ առնելու, կամ նրա վերաինտեգրումը կանխելու համար, այլ պետք է դիտարկվի որպես ազդանշան՝ տվյալ ընտանիքին համապատասխան աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտության մասին:[119] Պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ օրենսդրական, հայեցակարգային և ֆինանսական միջոցները, որպեսզի ապահովեն համապատասխան այլընտրանքային խնամքի տարբերակներ, որոնք առաջնահերթությունը տալիս են «ընտանիքի և համայնքի վրա հիմնված լուծումներին»:[120]

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան (ԵԻԿ) և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան (ՀԻԿ) Հայաստանին պարտավորեցնում են ապահովել, որպեսզի հաշմանդամություն ունեցող երեխաներն օգտվեն իրենց իրավունքներից առանց խտրականության: Այս համաձայնագրերը պահանջում են Հայաստանից հաշմանդամություն ունեցող երեխաներին համարել մյուսների հետ հավասար հիմունքներով իրավունքներ ունեցող՝ հասարակության անդամներ և վերացնել խոչընդոտները, որոնք խանգարում են հասարակության մեջ երեխաների լիարժեք ներառմանը։[121]

ՀԻԿ-ը սահմանում է. «Ոչ մի դեպքում երեխան չպետք է բաժանվի ծնողներից երեխայի կամ ծնողներից մեկի կամ երկուսի հաշմանդամության պատճառով:» և պահանջում է,

---

[117] Երեխայի իրավունքների կոնվենցիա (ԵԻԿ), ընդունվել է 20-ը նոյեմբերի, 1989թ., G.A. Res. 44/25, հավելված, 44 U.N. GAOR Supp. (No.49) at 167, U.N. Doc. A/44/49 (1989), ուժի մեջ է մտել 2-ը սեպտեմբերի, 1990, հոդված 27:

[118] Նույն աղբյուրից, arts. 3(1) and 9(1).

[119] ՄԱԿ-ի երեխաների այլընտրանքային խնամքի մասին ուղենիշներ, ընդունվել է 24-ը փետրվարի, 2010թ., G.A. Res. A/RES/64/142, para. 15.

[120] Նույն աղբյուրից, պարբ. 53.

[121] ԵԻԿ, հոդված 2, և ՀԻԿ, հոդված 19.

որպեսզի այն դեպքում, երբ անմիջական ընտանիքն ի վիճակի չէ հոգ տանել հաշմանդամություն ունեցող երեխայի մասին, պետությունները «ներդնեն բոլոր ջանքերը ընդլայնված ընտանիքով, իսկ դրա անհնարինության դեպքում համայնքի ընտանեկան միջավայրում այլընտրանքային խնամք ապահովելու համար»:[122] Պետությունները պետք է նաև «կանխեն հաշմանդամություն ունեցող երեխաներին թաքցնումը, լքումը, արհամարհանքը և խտրականության ենթարկումը»: Այս քայլերի շրջանակներում պետությունները պետք է «պարտավորվեն ապահովել վաղ և համապարփակ տեղեկատվություն, ծառայություններ և աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների համար»:[123]

Երեխայի իրավունքների կոմիտեն՝ ՄԱԿ-ի փորձագիտական մարմինը, որը վերահսկում է պայմանագրի իրականացումը, հայտարարել է, որ հաշմանդամություն ունեցող երեխաները «լավագույն հոգածություն և խնամք են ստանում իրենց սեփական ընտանիքի միջավայրում»:[124] Կոմիտեն նաև կոչ է արել պետություններին ծրագրեր մշակել հաշմանդամություն ունեցող երեխաներին հաստատություններից դուրս բերելու, իրենց կենսաբանական կամ ընդլայնված ընտանիքներին վերադարձնելու կամ խնամատարության հանձնելու համար, և երեխաներին տանը մեծացնելու համար՝ընտանիքներինհամակարգված աջակցություն տրամադրելու նպատակով:[125] Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն հանդես է եկել երկրներին ուղղված գործողությունների առաջարկություններով՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին և երիտասարդ անձանց հասարակության մեջ լիարժեք ներառման, բեռնաթափման և հաշմանդամություն ունեցող երեխաների համար համայնքային կյանք ապահովելու համար:[126]

---

[122] ՀԻԿ, հոդված 23(5).

[123] ՀԻԿ, հոդված 23(3).

[124] ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 9, հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքներ,U.N. Doc. CRC/C/GC/9 (2006թ.),և ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 7, երեխաների իրավունքների իրացումը վաղ մանկությունից, U.N. Doc. CRC / C / GC / 7 / Rev.1 (2006):

[125] Երեխայի իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 9, պարբ. 49:

[126] Առաջարկություն CM/Rec (2010)2-Նախարարների կոմիտեի կողմից ուղղված անդամ պետություններին՝ բեռնաթափման և համայնքում հաշմանդամություն ունեցող երեխաների ապրելու վերաբերյալ, (Ընդունվել է Նախարարների կոմիտեի փետրվարի 3-ին, 2010թ. Նախարարների տեղակալների 1076-րդ հանդիպմանը); և CM / առաջարկ (2013) 2-Նախարարների կոմիտեի անդամ պետությունները պետք է ապահովեն հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների լիարժեք ներառմանը հասարակությանը (Ընդունվել է Նախարարների կոմիտեի 2013 թվականի, հոկտեմբերի 16-ի, Նախարարների տեղակալների 1181-րդ հանդիպմանը):

VI. Հաշմանդամություն ունեցող երեխաների համար որակյալ կրթություն երաշխավորելու ձախողումը

> Ներառական կրթության երաշխավորումը հաշմանդամություն ունեցող երեխայի համար լավագույն հնարավորությունն է հասարակության լիարժեք մասնակիցը դառնալու համար։[127]

Հանրակրթական և մասնագիտացված դպրոցներում առկա մի շարք լուրջ թերություններ հաշմանդամություն ունեցող շատ երեխաներին թույլ չեն տալիս մյուսների հետ հավասար հիմունքներով վայելել որակյալ կրթության հնարավորությունները, ինչպես պահանջում էՀաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան: Այս խնդիրները խտրական վերաբերմունքի դրսևորման արտահայտություն են հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ: Դպրոցները հազվադեպ են ապահովում համապատասխան ողջամիտ հարմարեցումներ հաշմանդամություն ունեցող յուրաքանչյուր երեխայի ուսուցումը խթանելու համար, ինչպես մանրամասնված է սույն գլխում:

Հայաստանի կառավարությունը պարտավորվել է մինչև 2022թ. բոլոր տարրական և միջնակարգ դպրոցները (պարտադիր կրթություն, 1-ից 9-րդ դասարաններ) ներառական դարձնել հաշմանդամություն ունեցող երեխաների համար։ Ներկայումս Հայաստանի 1384 դպրոցներից 284-ը համարվում են «ներառական»։[128] Առաջ շարժվելով՝ կառավարությունը մոտենում է ներառման հարցին մարզ առ մարզ սկզբունքով՝ պահանջելով տվյալ մարզի բոլոր դպրոցներից ընդունել և կրթել բոլոր երեխաներին։[129] Դպրոցները ստանում են լրացուցիչ ֆինանսավորում դպրոցում ընդգրկված հաշմանդամության ունեցող յուրաքանչյուր երեխայի համար։[130] Ըստ

---

[127] Human Rights Watch, հարցազրույցՆարինե Մանուկյանի հետ, Հայ մայրեր ՀԿ նախագահ, Երևան, 12-ը ապրիլի, 2016թ.

[128] Նամակ Նաիրի Հարությունյանից, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Human Rights Watch-ին, 14-ը դեկտեմբերի, 2016թ., Human Rights Watch, հարցազրույց Լիլիթ Նազարյանի հետ, Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան, Երևան, 12-ը ապրիլի, 2016թ., և Սուսաննա Թադեւոսյանի հետ, Հույսի կամուրջ ՀԿ նախագահ, Երևան, 12-ը ապրիլի 2016թ. և 6-ը դեկտեմբերի, 2016թ.

[129] Առաջին ներառական մարզը Սյունիքն է։Լոռին, Տավուշը և Արմավիրը նախատեսում են ներառական դառնալ 2017թ.-ին. Երևանում կա 54 ներառական դպրոց։ Human Rights Watch, հարցազրույցՍուսաննա Թադևոսյանի հետ, 6-ը դեկտեմբերի, 2016թ.

[130] Ըստ Հանրակրթության մասին օրենքի, հատուկ կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող այն երեխաները, որոնք ունեն ձայնի կամ խոսքի, լսողական կամ տեսողական հաշմանդամություն, մտավոր հետամնացություն կամ տառապում են միջին, ծանր և խոր շարժական խանգարումներով,օգտվում էն լրացուցիչ պետական աջակցությունից՝ բարձրացված չափաքանակով (երեքից չորս անգամ ավելի բարձր յուրաքանչյուր երեխայի համար), ՀՀ օրենքը հանրակրթության մասին ՀՕ-160-Ն, 29-ը մայիսի, 2015թ., հոդված 35:

Կրթության նախարարության, 2016-2017թթ. ուսումնական տարում «հատուկ կրթական կարիքներ» ունեցող 6700 երեխաներ ընդգրկված են ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցներում: Ընդհանուր առմամբ հատուկ դպրոցներում ընդգրկված է 2134 երեխա:[131]

«Ներառական» հանրակրթական և հատուկ դպրոցներ ընդունված հաշմանդամություն ունեցող որոշ երեխաներ կարող են դպրոց հաճախել ընդամենը օրական մի քանի ժամով կամ դպրոցական շաբաթվա ոչ բոլոր օրերին: Չնայած այսպես կոչված «ներառական դպրոցներ» հաճախելուն, հաշմանդամություն ունեցող երեխաները ներկա չեն լինում դասերին մյուս երեխաների հետ միասին, կամ ներկա են լինում դասերին, բայց չեն մասնակցում ուսումնական ծրագրին: Նրանց կրթությունը հաճախ կազմված է շաբաթական մեկ կամ մի քանի անգամ տեղի ունեցող՝ գլխավորապես կամ բացառապես մեկ ժամանոց կամ ավելի կարճատև հանդիպումներից դպրոցում ներգրավված մասնագետների հետ (որպես կանոն՝ լոգոպեդ, հոգեբան, սոցիալական աշխատող): Ոչ բավարար թվով անձնակազմի պարագայում, այդ թվում նաև այսպես կոչված ներառական համայնքային դպրոցներում և որոշ հատուկ դպրոցներում ծնողը՝ սովորաբար երեխայի մայրը, ստիպված է երեխայի հետ մնալ դասարանում՝ նրան աջակցելու համար:

Հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների հետ աշխատող մի շարք ՀԿ-ներ լուրջ մտահոգություններ են հայտնել առ այն, թե ինչպես է իրականացվում ներառական կրթությունն իրենց համայնքներում: Ըստ «Փյունիկ» հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ մատուցող կազմակերպության ներկայացուցիչ Հակոբ Աբրահամյանի, «Այսօրվա դրությամբ, ներառական կրթությունը միայն ինտեգրումն է, բայց ոչ հավասար հնարավորությունները: Սա մեր կենտրոն այցելող ծնողների կարծիքին է: ... Հիմնական մտահոգությունն այն է, որ իրենց երեխաները չեն ստանում այն աջակցությունը, որը նրանց անհրաժեշտ է ուսումնական առաջադիմության համար: Նրանք գնում են դպրոց և պարզապես շփվում երեխաների հետ: Նրանք դուրս են մնում դասարանային աշխատանքից»:[132] Մեկ այլ փորձագետ ասել է. «Դպրոցներն ասում են, որ իրենք ներառական են և պատրաստ են ընդունել հաշմանդամություն ունեցող երեխաների, սակայն նրանք պատրաստ չեն»:[133]

---

[131] Նամակ Ն. Հարությունյանից, 14-ը դեկտեմբերի, 2016թ.

[132] Human Rights Watch, հարցազրույցՀակոբ Աբրահամյանի հետ, հաշմանդամների «Փյունիկ» միության նախագահ, Երևան, 14-ը ապրիլի, 2016թ.

[133] Human Rights Watch, հարցազրույցՏիգրանուհի Հակոբյանի հետ, Հայկական Կարիտասի «Էմիլի Արեգակ» բազմակի հաշմանդամությամբ երեխաների խնամքի կենտրոնի տնօրեն, Գյումրի, 18-ը ապրիլի, 2016թ.

Ըստ «Ունիսոն» հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպության տնօրեն Արմեն Ալավերդյանի, «Իրականում դպրոցները մատչելի չեն ցանկացած հաշմանդամություն ունեցող երեխայի համար, այլ միայն թեթև հաշմանդամություն, որպես կանոն թույլ մտավոր կամ զարգացման հաշմանդամություն, ունեցող երեխաների համար: Դպրոցների ներառականությունը պարզապես դասերին հաճախելու հնարավորությունն է: Երեխաները հաճախում են ծնողների հետ և միայն շփվում իրենց ծնողների, այլ ոչ ուսուցիչների կամ երեխաների հետ: Մենք չենք տեսնում մատչելի հարմարեցումներ դպրոցների ներսում, օրինակ զուգարաններում կամ մարզասրահներում: Մոտեցումը մտահոգիչ է մեզ համար, երբ այն կենտրոնանում է «ողորմության և հանդուրժողականության», այլ ոչ հավասարության վրա: Մենք դրա արտացոլումը տեսնում ենք ՁԼՄ-ներում, երբ ներառական կրթությունը ներկայացվում է որպես «բարեգործական գործունեություն»: Կառավարությունն ավելի շատ կենտրոնացած է մասշտաբների և հնարավորինս կարճ ժամանակահատվածում մեծ թվով այսպես կոչված ներառական դպրոցների հասնելու վրա»:[134]

Human Rights Watch-ը նաև պարզել է, որ հաշմանդամություն ունեցող երեխաները Հայաստանում կարող են ընտրել տնային ուսուցումը՝ դպրոցներում, տներում, համայնքում մատչելիության խնդիրների, ինչպես նաև դպրոցների կողմից ողջամիտ հարմարեցումներ չտրամադրելու պատճառով: Տնային ուսուցման պարագայում տեղական դպրոցների ուսուցիչները այցելում են երեխաներին տանը և շաբաթվա ընթացքում մի քանի ժամ դասավանդում տարրական գրագիտություն և թվաբանություն՝ մաթեմատիկա, հայոց լեզու և ռուսաց լեզու, ինչը չի կարող համարվել լիարժեք, որակյալ կրթություն: Որպես կանոն, այս երեխաները շատ քիչ են շփվում կամ ընդհանրապես չեն շփվում դասընկերների կամ այլ հասակակիցների հետ: Հաշմանդամություն ունեցող որոշ երեխաներ լիովին դուրս են մնում կրթական համակարգից՝ դպրոցներում և իրենց համայնքներում մատչելիության բացակայության, տնային ուսուցման համար դպրոցների կողմից ուսուցիչներ ապահովելու ձախողման, ինչպես նաև իրենց երեխաների ու ընտանիքի դեմ խարանի և խտրականության մասին ծնողների մտավախությունների պատճառով:

Ողջամիտ հարմարեցումների բացակայություն

Ծնողները, երեխաները և փորձագետները հետևողականորեն նշել են ներառական դպրոցներում, ինչպես նաև որոշ հատուկ դպրոցներում սովորող երեխաների համար մատչելիության և ողջամիտ հարմարեցումների բացակայության մասին:

[134] Human Rights Watch, հարցազրույցԱրմեն Ալավերդյանի հետ, Ունիսոնի տնօրեն, Երևան, 13-ը ապրիլի, 2016թ.

Կառավարության կողմից ողջամիտ հարմարեցումների տրամադրման ձախողումը խտրականություն է:

Ֆիզիկական մատչելիության բացակայությունը

Human Rights Watch-ի կողմից հարցված շատ անձիք բացատրել են, որ տարրական ֆիզիկական մատչելիությունը գրեթե բոլոր դպրոցներում խոչընդոտում է որակյալ կրթություն ստանալու երեխաների կարողությանը: Երեխաները հաճախ ապավինում են այլ աշակերտների, ծնողների և ուսուցիչների աջակցությանը՝ շենքեր մուտք գործելու և տեղաշարժվելու համար: Որոշ դեպքերում, ֆիզիկական արգելքները երեխաներին ընդհանրապես թույլ չեն տալիս հաճախել դպրոց կամ լուրջ մարտահրավերներ են ստեղծում դպրոց հաճախող երեխաների համար: Կառավարությունը դպրոցներում ֆիզիկական մատչելիություն ապահովելու վերաբերյալ համապարփակ մոտեցում չունի: Ներառական կրթությունը խթանող և հաշմանդամություն ունեցող և չունեցող երեխաների ընտանիքներին աջակցող «Հույսի կամուրջ» ՀԿ-ի տնօրեն Սուսաննա Թադևոսյանը ասաց. «Դպրոցներում ֆիզիկական մատչելիությունը լավագույն դեպքում սկսվում և ավարտվում է [մուտքի] թեքահարթակներով»:[135]

Հինգերորդ դասարանի աշակերտ Մարին ունի ֆիզիկական հաշմանդամություն, որն ազդել է նրա ֆիզիկական աճի վրա և խանգարում է նրան քայլել ու ամբողջությամբ օգտագործել իր ձեռքերը: Չնայած նրան, որ նա հաճախում է ներառական դպրոց և արձանագրում է ակադեմիական առաջընթաց, դպրոցն ունի բավականին ցածր ֆիզիկական մատչելիություն: - Դպրոցում ամենալավը իմ գիտելիքների աճն է, - ասել է նա Human Rights Watch-ին: Մարին իր դպրոցում հաղթել է լեզվի և մաթեմատիկայի մրցույթներում: Այնուամենայնիվ, Մարին անգամ պարզապես իր դպրոցական օրն անցկացնելու համար է ստիպված զգալի խոչընդոտներ հաղթահարել: Դպրոցում որևէ տեղ չկան թեքահարթակներ, վերելակներ կամ շարժասանդուղքներ: - Դժվար է վեր ու վար շարժվել աստիճաններով: Ինձ վեր ձգելու համար ես օգտվում եմ բազրիքներից: Ինձ համար չափազանց դժվար է դա անել միայնակ, ուստի իմ դասընկերներն են օգնում ինձ: Նրանք տանում են իմ պայուսակը և բռնում իմ ձեռքը:[136] Մարին նաև խուսափում է առավոտյան որևէ բան ուտելուց կամ խմելուց, քանի որ դպրոցում իր համար փոքրիշատե մատչելի միակ սանհանգույցը տղաների սանհանգույցն է, որի երկու հարկ ներքև է գտնվում այն հարկից, որտեղ տեղի են ունենում իր դասերը:

---

[135] Human Rights Watch, հարցազրույցՍուսաննա Թադևոսյանի հետ, 6-ը դեկտեմբերի, 2016թ.

[136] Human Rights Watch, հարցազրույցԱլլայի հետ, (հանդիպման վայրը և ամսաթիվը չեն բացահայտվում), ապրիլ 2016թ.

Լուիզան, 18 տարեկան, տեղաշարժվում է անվասայլակով և սովորում է Գյումրիի մի ներառական դպրոցում: Երկար տարիներ Արեգակի (հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին ծառայություններ մատուցող տեղական կենտրոն, որը գործարկվում է Հայկական Կարիտասի կողմից) կողմից իրականացված ծրագրերին մասնակցելուց հետո, չորս տարի առաջ Լուիզան կենտրոնի օգնությամբ սկսեց դպրոց հաճախել: Լուիզան ուրախ է, որ դպրոցում է և նրան հատկապես դուր է գալիս, որ սովորում է հայերեն և ունի ընկերներ: - Ես շատ ընկերներ ունեմ դպրոցում և չորս տարիների ընթացքում կարողացել եմ սիրել նրանց, և նրանք էլ ինձ են սիրում, - ասել է նա: Նա երազում է դառնալ անգլերենի ուսուցիչ կամ համակարգչի մասնագետ:

Սակայն, Լուիզան զգալի խոչընդոտներ պետք է հաղթահարի իր երազանքներին հասնելու համար, քանի որ դպրոցը, ուր նա հաճախում է, մեծ առումով անմատչելի է նրա համար: Ինչպես նա բացատրեց,

> Ես կարող եմ տեղաշարժվել միայն իմ անվասայլակով: Բոլորն ինձ օգնում են՝ ուսուցիչները, աշակերտները, բայց հիմնականում աշակերտները: Դժվար է, երբ չկա մեկը, որ ինձ օգնի: Մի թեքահարթակ կա կառուցված ինձ համար դպրոցում, որն օգնում է հասնել դպրոցի այն հատվածը, որտեղ ես անում եմ իմ ներառական [անհատական] դասերը, բայց դա շատ նեղ է, և ինձ համար դժվար է դրա վրա բարձրանալը: Երբ մյուս աշակերտները դուրս են գնում խաղալու, ես սպասում եմ դասարանում...[137]

Աիդան, 23 տարեկան, քայլելու հետ կապված դժվարություններ սկսեց ունենալ 17 տարեկանում ստացած լուրջ վիրուսային վարակից հետո, երբ նա նոր էր դարձել բուժքույրական գործի ուսանող Գյումրիի պետական բժշկական քոլեջում: Նա շենք մտնելու համար ամեն օր ապավինում էր իր ընկերների օգնությանը, քանի որ չէր կարողանում բարձրանալ շենքի դրսի 10 աստիճաններով, որտեղ բազրիք չկար: Նա ասում էր, որ ներսում տեղաշարժվելն ավելի հեշտ էր, քանի որ նա կարողանում էր օգտվել բազրիքներից՝ ինքն իրեն աստիճաններով վեր ձգելու համար: Քոլեջի ներսում որևէ վերելակներ կամ թեքահարթակներ չկային: Չնայած նրան, որ նա կարողացել է ավարտել իր ուսումը, դժվարությունները բավականին շատ էին: - Քոլեջի ֆիզիկական պայմանները, հատկապես աստիճանները, մի մեծ, ամենօրյա խնդիր էր ինձ համար, - ասել է Աիդան:[138]

---

[137] Human Rights Watch, հարցազրույցԼուիզայի հետ, Գյումրի, 18-ը ապրիլի, 2016թ.
[138] Human Rights Watch, հարցազրույցԱիդայի հետ, Գյումրի, 18-ը ապրիլի, 2016թ.

Նարինե Մանուկյանը՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին աջակցող կազմակերպության տնօրենը, բացատրեց, որ ծնողները երեխաների ուսումը հեշտացնելու համար ժամանակ առ ժամանակ երբեմն լուծում են մատչելիության որոշ խնդիրներ: Սակայն, ծնողների կողմից նմանատիպ քայլի դիմելու անհրաժեշտությունը նրանց վրա է դնում մատչելիության խնդիրներ լուծելու բեռը և կարող է արտացոլել հաշմանդամություն ունեցող երեխաներին մյուսների հետ հավասար հիմունքներով կրթելու դպրոցների պատրաստակամության բացակայությունը: Նա բացատրեց. «Մենք ի վիճակի ենք լուծում տալ խնդիրներին: Օրինակ, ծնողները խնդրում են տնօրեններին առաջին հարկ տեղափոխել դասարանները: Բայց դա չպետք է այդպես լինի: Դա ամեն օր դառնում է հիշեցման նման մի բան, որ դպրոցը մեր երեխային այլ կերպ է տեսնում»:[139]

Պատշաճ սանիտարական հանգույցների բացակայություն

Հաշմանդամություն ունեցող երեխաները և նրանց ծնողները բազմիցս նշել են այսպես կոչված ներառական դպրոցներում պատշաճ սանիտարական հանգույցների, մասնավորապես մատչելի զուգարանների բացակայությունը որպես երեխաների կրթության խոչընդոտ: Օրինակ Լուիզան, 18 տարեկան, ով տեղաշարժվում է անվասայլակով և հաճախում է ներառական դպրոց, ասել է. «Ես դպրոցում զուգարանից չեմ օգտվում: Ինձ համար դա անհնար էր: Ես տանից դուրս գալու պահից սկսած ամբողջ օրվա ընթացքում տակդիրներ եմ կրում: Տանը և Արեգակ կենտրոնում [հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների համար] ես կարող եմ օգտվել զուգարանից»:[140]

Գոհարը Human Rights Watch-ին պատմել է, որ իր երկու երեխաները, Արթուրը՝ 13 տարեկան և Հեղինեն՝ 9-ը տարեկան, հաճախում են տեղական հատուկ դպրոց շաբաթական երկու օր, ընդամենը երկու-երեք ժամով, որտեղ տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող երեխաներ անհատական դասեր են անցնում հատուկ կրթության ուսուցչի, լոգոպեդի և հոգեբանի հետ: Արթուրի և Հեղինեի համար դպրոց հաճախելուն խոչընդոտող խնդիրներից մեկը մատչելի սանհանգույցների կամ երեխաներին սանհանգույցից օգտվելու համար օգնող որևէ մեկի պակասն է: Գոհարը բացատրեց. «Հեղինեն դպրոցում ամբողջ օրը մշտապես տակդիր է կրում: Ես Արթուրին տանն օգնում եմ օգտվել զուգարանից մինչև դպրոց գնալը և երբ նա տուն է

[139] Human Rights Watch, հարցազրույցՆարինե Մանուկյանի հետ, 12-ը ապրիլի, 2016թ.
[140] Human Rights Watch, հարցազրույցԼուիզայի հետ, Գյումրի, 18-ը ապրիլի, 2016թ.

վերադառնում: Եթե նա դպրոցում ասում է, որ ուզում է օգտվել զուգարանից, նրան ասում են, որ զուգարան չկա, որպեսզի նրան տանեն»:[141]

Հարմարեցումների բացակայություն զգայական հաշմանդամություն ունեցող երեխաների համար

Տիգրանը, 8 տարեկան, ով լսողական հաշմանդամություն ունի, սովորում է ներառական դպրոցում Գորիսում: Սակայն, Տիգրանը առաջին դասարանի դասասենյակում իր հասակակիցների հետ միասին չի սովորում: Իր հաշմանդամության համար հարմարեցումների բացակայության պատճառով Տիգրանը շաբաթվա ընթացքում ստանում է միայն մի քանի ժամ անհատական ուսուցում: Տիգրանի մայրը Human Rights Watch-ին պատմեց.

> Առաջին ամսվա ընթացքում նա դասասենյակում անց էր կացնում օրական երկու ժամ, բայց շատ քիչ բան էր կարողանում լսել ասվածից: Նա ցանկանում էր սովորել և մասնակցել, սակայն չէր լսում: Դա նրան տխրեցնում էր և նա լաց էր լինում: Այժմ նա միայն հաճախում է անհատական դասերի, օրական 45 րոպե՝ լոգոպեդի և հոգեբանի մոտ: Նա միայն այդ 45 րոպեների ընթացքում է դպրոցում լինում:[142]

Նույն դպրոցում մեկ այլ երեխա, Անահիտը, 12 տարեկան, ով նույնպես ունի լսողության խնդիրներ, ինքն իրեն սովորեցրել է կարդալ ըստ շուրթերի և, մոր հավաստմամբ, կարողանում է կարդալ և գրել առանց դժվարության: Սակայն, կրթական ոչ ճկուն ակնկալիքների պատճառով Անահիտը ետ է մնացել հումանիտար առարկաներից և պատմությունից, քանի որ նա չի կարողանում բանավոր հաղորդակցվել, որպեսզի դասարանում պատասխանի հարցերին: Դպրոցը չի ապահովում այլընտրանքային մեթոդ, ինչպես օրինակ գրավոր պատասխաններն են, որպեսզի նա կարողանա պատասխանել հարցերին:[143]

Ըստ Երևանի ներառական դպրոցի մի աշխատակցի, դպրոցում չկան երեխաներ, ովքեր խուլ են, և ժեստերի լեզուն տարբերակ չէ. «Մենք չենք օգտագործում ժեստերի լեզուն՝ այն դպրոցական ծրագրերում չկա: Այն կարող է միայն որպես առանձին առարկա դասավանդվել:»[144]

---

[141] Human Rights Watch, հարցազրույցԳոհարի հետ, (հանդիպման վայրը չի բացահայտվում), ապրիլ 2016 (ամսաթիվը չի բացահայտվում).

[142] Human Rights Watch, հարցազրույցՏիգրանի մայրիկի հետ, Գորիս, 16-ը ապրիլի, 2016թ.

[143] Human Rights Watch, հարցազրույցԱնահիտի մայրիկի հետ, Գորիս, 16-ը ապրիլի, 2016թ.

[144] Human Rights Watch, հարցազրույցՍոֆիա Հարսոփյանի հետ, հոգեբան, թիվ 20 ներառական դպրոց, Երևան, 24-ը մայիսի, 2016թ.

Ըստ Գյումրիում գործող՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող «Ագաթ» կազմակերպության տնօրենի, Շիրակի մարզում ևս ժեստերի լեզվի ուսուցման պակաս կա: Դասարանների հիմնական մասը կենտրոնացած է բանավոր ուսուցման վրա, ինչը հավելյալ դժվարություն է խուլ կամ լսողության սահմանափակումներ ունեցող երեխաների համար: - Դուք Շիրակի մարզում չեք կարող ժեստերի լեզվի ուսուցում գտնել դպրոցներում: Դրա համար մարդիկ պետք է գնան Երևանի միակ դպրոցը, որն ուսուցանում է ժեստերի լեզու: Մեր մարզում ծնողները չեն ցանկանում իրենց երեխաներին ուղարկել Երևան: Արդյունքում, այստեղ խուլ մարդկանց շրջանում գրագիտության մակարդակը ցածր է կամ բացակայում է: Մեր շահառուներից ոմանք անգամ դպրոց չեն գնացել, - ասաց նա Human Rights Watch-ին:[145]

Որոշ դեպքերում ներառական դպրոցները կիրառում են հարմարեցումներ լսողության հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Նարինեն, ով 12 տարեկան է և ունի լսողության դժվարություններ, Human Rights Watch-ին պատմել է Վանաձորի ներառական դպրոցում իր ստացած հարմարեցումների մասին: - Ես հաճախում եմ ներառական դպրոց՝ այն մոտ է մեր տանը: Ուսուցիչը միշտ ինձ շարքի առջևում է նստեցնում: Երբեմն, երբ ես չեմ հասկանում, թե ինչ է հանձնարարված գրել, ուսուցիչն ինձ հետ խոսում է դանդաղ կամ հանձնարարություններն ինձ տալիս է գրավոր: Ես խնդրում եմ ուսուցչիս ստուգել իմ աշխատանքը: Ինձ միշտ աջակցում են, լավ է, - ասել է Նարինեն:[146]

Ըստ §Ունիսոնի¦ տնօրեն Արմեն Ալավերդյանի, ներառական դպրոցները չնչին առաջընթաց են ապահովել կույր երեխաներին կրթելու գործում, օրինակ, մատչելի ուսումնական նյութի մատուցման առումով: Նա բացատրեց. «Կույր երեխաների համար միակ իրական տարբերակը հատուկ դպրոց հաճախելն է: Նրանք կարող են հաջողության հասնել համալսարան հաճախելու առումով: Համալսարաններում սովորող բոլոր կույր ուսանողները հատուկ դպրոցներից են:»[147]

Այլ ողջամիտ հարմարեցումների բացակայություն

Էլմիրան ապրում է Երևանի կենտրոնում իր 11 տարեկան որդու՝ Գորյանի հետ, ով ունի մանկական ուղեղային կաթված: Էլմիրան ունի ուսուցչի որակավորում, բայց Գորյանի մանուկ հասակից սկսած նա չի աշխատել, քանի որ տանը խնամում էր

[145] Human Rights Watch, հարցազրույցԳայանե Գրիգորյանի հետ, Ագաթ, Գյումրի, 18-ը ապրիլի, 2016թ.
[146] Human Rights Watch, հարցազրույցՆարինեի և նրա տատիկի հետ, Վանաձոր, 19-ը ապրիլի, 2016թ.
[147] Human Rights Watch, հարցազրույցԱրմեն Ալավերդյանի հետ, 13-ը ապրիլի, 2016թ.

որդուն ամբողջ օրը: Նա նկարագրեց դպրոցում ողջամիտ հարմարեցումների բացակայությունը.

> Ես նրան 6 տարեկանում ընդունել եմ տեղական դպրոց և խնդրել եմ տնային ուսուցում տրամադրել: Նա չի կարողանում հանգիստ նստել [իր հաշմանդամության պատճառով]: Նա անընդհատ շարժվում է: Նույնիսկ եթե ես նրա հետ եմ, պարզապես անհնար է պատկերացնել դպրոց գնալը: ... Մենք չունենք անվասայլակ, որը հարմար կլիներ նրա համար: Ես պետք է անընդհատ պահեմ նրան: Ես ստիպված եմ նրան աստիճաններով վեր ու վար տանել: Դա շատ դժվար է: Ամեն տարի դպրոցի ղեկավարությունը հրավիրում է նրան դպրոցում սովորելու: Դպրոցում կան այլ հաշմանդամություն ունեցող երեխաներ, բայց առկա են զուտ նվազագույն պայմաններ: Ո՞վ է նստելու նրա հետ: Այնքան բան կա, որ նա չի կարողանում անել: Դժվար է, և որքան նա մեծանում է, այնքան ավելի է դժվարանում: Ես ուզում եմ օգնել իմ երեխային, որպեսզի նա կարողանա թեկուզ մի փոքր ավելի անկախ լինել:[148]

Ինչպես նշված է վերևում, Գոհարի երեխաները, Արթուրը՝ 13 տարեկան, և Հեղինեն՝ 9 տարեկան, հաճախում են տեղական հատուկ դպրոց ընդամենը երկու-երեք ժամով, շաբաթական երկու օր: Նրանք դասարանում չեն մասնակցում, քանի որ դպրոցը չի կարողացել ապահովել համապատասխան հարմարություններ նրա երեխաների համար ովքեր հանգիստ նստելու դժվարություններ ունեն: - Իմ երեխաներն ի վիճակի չեն երկար ժամանակ հանգիստ նստել, այնպես որ նրանք որևէ առարկա չեն սովորում, - ասաց նա:[149]

Յուլիանան 13 տարեկան է և սովորում է Երևանում՝ հանրակրթական դպրոցի յոթերորդ դասարանում: Նա ունի հաշմանդամություն, որն ազդում է իր մկանային համակարգի, այդ թվում երկար ժամանակ մատիտ կամ գրիչ բռնելու նրա կարողության վրա: Սակայն, Յուլիանան կարող է հեշտությամբ օգտվել համակարգչից: - Դպրոցում համակարգիչ կա, դա հարմար է: Մկնիկը կառավարելը դժվար է, բայց տպելն ինձ համար հեշտ է, - ասել է նա:[150] Սակայն Մարիամը՝ Յուլիանայի մայրը, հայտնել է, որ դպրոցը թույլ չի տալիս Յուլիանային օգտագործել համակարգիչն իր տնային աշխատանքների կամ քննությունների համար: Այս պարզ հարմարեցումն ապահովելու անկարողության, ինչպես նաև Յուլիանայի կրթության

---

[148] Human Rights Watch, հարցազրույցԷլմիրայի հետ, Երևան, 24-ը մայիսի, 2016թ.
[149] Human Rights Watch, հարցազրույցԳոհարի հետ, (հանդիպման վայրը չի բացահայտվում), ապրիլ 2016թ.
[150] Human Rights Watch, հարցազրույցԵլենայի հետ, Երևան, 20-ըապրիլի, 2016թ.

նկատմամբ անհատական մոտեցման պակասի հետևանքով տուժում է Յուլիանայի առաջադիմությունը։[151] Մարիամի խոսքերով.

> Յուլիանան գրում է այնքան, որքան կարողանում է, բայց դա շատ քիչ է: Արդյունքում, նա ետ է մնացել իր դասընկերներից: Դպրոցը երբեք այլ տարբերակներ չի առաջարկել: Նա իրականում գնում է դպրոց պարզապես այնտեղ ժամանակ անցկացնելու համար։ Նրանք իրեն ձեռքի աշխատանքներ են հանձնարարում, օրինակ՝ գործել, իր գրասեղանի մոտ անելու համար, կամ երբեմն ինչ-որ կարդալու բան, որպեսզի նա չձանձրանա կամ չհոգնի դասերին ոչինչ չանելով։ Ուսուցիչները միայն ասում են. «Թույլ տվեք նրան անել այն, ինչ նա կարողանում է անել:» Դասարանում 37 երեխա կա։ Նրանք բնավ չեն կարող կենտրոնանալ իմ դստեր վրա։[152]

Անհատական ուսուցման մոտեցման բացակայություն դասարանում

Human Rights Watch-ը պարզել է, որ Հայաստանում շատ դպրոցներ չեն ցուցաբերում անհատական մոտեցում երեխաների կրթությանը, այդ թվում հաշմանդամություն ունեցող երեխաների համար՝ հիմնված նրանց կարիքների և ուսուցման անհատական ոճերի և հետաքրքրությունների վրա: Սահմանափակ ջանքեր են գործադրվում երեխաների ուսուցումը հեշտացնելու նպատակով ողջամիտ հարմարեցումներ տրամադրելու ուղղությամբ, օրինակ՝ մատչելի ուսումնական նյութերի, ուսուցման հարմարեցված մեթոդների և հարմարեցված ուսումնական ծրագրերի միջոցով:

Սա վատթարացվում է դպրոցներում մինչև 36 կամ 37 երեխայի հասնող դասարանների չափերի պատճառով, որտեղ միայն մեկ ուսուցիչ է ներկա լինում, ինչպես նկարագրում են երեխաները, ծնողներն ու դպրոցի աշխատակիցները: Շատ քիչ դպրոցներում կան օգնականներ, ուսուցչի ասիստենտներ, կամ այլ հարակից մասնագետներ, ովքեր պատասխանատու են կրթական գործընթացում երեխաների մասնակցությունը խթանելու, վարքային խնդիրներին կառուցողական լուծումներ ապահովելու, անհատական խնամք տրամադրելու և այլ օժանդակ գործառույթներ կատարելու համար, բայց արտոնագրված ուսուցիչներ չեն: Ինչպես նկարագրված է վերը, հաշմանդամություն ունեցող երեխաները կարող են ժամանակ անցկացնել դասասենյակում, բայց պարբերաբար դուրս են բերում դասարաններից անհատական դասերի համար։

---

[151] Human Rights Watch, հարցազրույցՄարիամի հետ, Երևան, 20-ըապրիլի, 2016թ.

[152] Նույն աղբյուրից

Սովորելու դժվարություններ ունեցող 12 տարեկան Ռուզաննան, ով հաճախում է ներառական դպրոց Գորիսում, դասարանի չափի և սահմանափակ անհատական ուսուցման վերաբերյալ պարզաբանել է, որ աշակերտների մեծ թիվը և այլ աշխատակազմի բացակայությունը դասարանում խոչընդոտում է ներառական միջավայրում իր ուսմանը: Նա կրթական աջակցություն ստանում է միայն դասարանից դուրս. «Ես վեցերորդ դասարանում եմ սովորում: Իմ դասարանում 36 երեխա կա՝ բոլորը մեկ դասասենյակում: Յուրաքանչյուր առարկայից կա միայն մեկ ուսուցիչ: Դասերը շատ դժվար են ինձ համար: Մասնագետ ուսուցիչները դասերի համար ինձ տանում են մի առանձին սենյակ, և մենք աշխատում ենք միասին»:[153] Նույն դպրոցի կենսաբանության ուսուցիչը Human Rights Watch-ին ասել է. «Ամեն ինչից ավելին ես կցանկանայի, որ լիներ ինչ-որ մեկը, ով կկարողանար անմիջապես դասարանում աջակցել որոշակի կարիքներ ունեցող երեխայի: Հատուկ կրթության ուսուցիչները միաժամանակ այդքան շատ դասարաններում չեն կարող լինել: Անկախ նրանից, թե որքան եմ ես դա ուզում, ես միայն սահմանափակ աջակցություն կարող եմ տրամադրել յուրաքանչյուր երեխայի: Ես 32 երեխա ունեմ իմ դասարանում»:[154]

Դպրոցում երեխաների հետ մնացող ծնողներ

Human Rights Watch-ը զրուցել է համայնքային ներառական դպրոցներում ընդգրկված երեխաների բազմաթիվ ծնողների հետ, ովքեր ողջամիտ հարմարեցումների բացակայության պատճառով մնում էին դպրոցում իրենց երեխաների հետ՝ նրանց կրթական կարիքներին աջակցելու և դասարանում լիարժեք ներգրավման նպատակով: Զրուցել ենք նաև որոշ ծնողների հետ, ում երեխաները հաճախում են հատուկ դպրոցներ և ովքեր նույնպես իրենց երեխաների հետ են մնում օրվա ընթացքում: Սակայն, մի շարք ծնողներ հայտնել են, որ իրենք իրենց երեխաներին հատուկ դպրոցներ են տարել, որոնք որպես կանոն ունեն ավելի փոքր դասարաններ և ավելի մասնագիտացված աշխատակազմ, որպեսզի իրենց երեխաների համար ապահովեն կրթական միջավայր, որտեղ չի պահանջվում ծնողի մշտական ներկայությունը:

Մարինեի 15-ամյա որդին՝ Էդմոնդը, ով ունի աուտիզմ, սովորում է ներառական դպրոցի յոթերորդ դասարանում, Երևանում, որտեղ նա սկսել է հաճախել երկրորդ դասարանից: Բավարար անձնակազմի բացակայության պատճառով Մարինեն ստիպված է Էդմոնդի հետ մնալ ողջ ընթացքում: Նա նկարագրել է իր դերը.

---

[153] Human Rights Watch, հարցազրույցՌուզաննայի հետ, Գորիս, 16-ը ապրիլի, 2016թ.

[154] Human Rights Watch, հարցազրույցԱնուշ Մկրտչյանի հետ, Գորիսի թիվ 6 ներառական դպրոց, Գորիս, 2-ը դեկտեմբերի, 2016թ.

> Անգամ հիմա ես նրա հետ եմ մնում դպրոցում: Ես միշտ նրա հետ եմ: Նա անհատական դասեր ունի մասնագետների հետ, բայց մնացած ժամանակի ընթացքում ես միշտ նրա հետ եմ: Ես վստահ չեմ, որ նա կսովորի, եթե ես այնտեղ չլինեմ: Նա կարող է կանգնել ու շրջել սենյակում, դուրս գալ դասարանից: Ես այնտեղ եմ վերահսկողության համար... Մենք գալիս ենք շաբաթական երկու օր՝ երեք դասաժամ: Իմ կարծիքով, մեզ լրացուցիչ մասնագետ կամ ուսուցիչ է պետք: Իհարկե, ես նրան կթողնեի դպրոցում, եթե լիներ մեկը, ով նրա կողքին կլիներ՝ նրան հանձնարարություններ տալու և օգնելու համար: Դա գերազանց կլիներ:[155]

Ելենան, ում որդին՝ 15-ամյա Հայկը, մտավոր հաշմանդամություն ունի, Human Rights Watch-ին բացատրեց, որ տեղի ներառական դպրոցում մեկ տարի սովորելու ընթացքում ամբողջ օրն իր որդու հետ մնալը հանգեցրել է նրան, որ փոխարենը նա որդուն հատուկ դպրոց է ուղարկել: Ելենան ասաց.

> Ես ամբողջ օրը դպրոցում եմ եղել՝ մինչև դասերի ավարտը: Ուսուցչուհին ասել էր, որ չի կարող անհատապես աշխատել իմ որդու հետ, քանի որ դասարանում ևս 30 երեխա կար: Ես ստիպված էի օգնել նրան ամեն ինչում՝ զուգարան գնալիս, ուտելիս, բաճկոնը հանելիս: Հատուկ դպրոցում ես չեմ բախվում նման խնդիրների հետ:[156]

Անուշի որդին՝ 12-ամյա Հակոբը, մանկական ուղեղային կաթված ունի և հիմա ստանում է տնային ուսուցում, քանի որ Գյումրիում իրենց հարևանությամբ գտնվող դպրոցը նրա համար ողջամիտ հարմարեցումներ չունի: Նա բացատրեց. «Ես շատ կցանկանայի նրան դպրոց տանել և փորձել եմ դա անել, բայց չկարողացա: Եթե ես նրան տանեի այնտեղ, ես պետք է նրա հետ լինեի ամբողջ ընթացքում, ինչն անհնար էր: Ես անում եմ տան բոլոր գործերը, ճաշ եմ եփում, մաքրում եմ, հոգ եմ տանում իմ մյուս երեխայի և ամուսնուս մասին»:[157]

Անգամ այն ժամանակ, երբ նա Հակոբի հետ մնում էր դպրոցում, մատչելիության բացակայության պատճառով Անուշը չէր կարողանում նրան հասցնել դպրոցի շենքի բոլոր հատվածները, և Հակոբը դուրս էր մնում դպրոցական միջոցառումներից

---

[155] Human Rights Watch, հարցազրույցՄարինեի հետ, Երևան, 24-ը մայիսի, 2016թ.

[156] Human Rights Watch, խմբային հարցազրույցհաշմանդամություն ունեցող երեխաների մայրերի հետ, ապրիլ 2016թ. (ամսաթիվը չի բացահայտվում)

[157] Human Rights Watch, հարցազրույցԱնուշի և Հակոբի հետ, Գյումրի, 18-ը ապրիլի, 2016թ.

շատերից, որոնցում ներգրավված էին նրա դասընկերները: Անուշը նկարագրեց դժվարությունները.

> Ես ստիպված էի ... ուղեկցել նրան [դպրոցում], այդ թվում նաև դեպի զուգարան. Զուգարան տանող աստիճաններ կային, որոնք ես չէի կարող բարձրանալ նրա հետ: Շախմատի դասարանը երկրորդ հարկում էր, և ես նրան չէի կարող վեր բարձրացնել, քանի որ միայն աստիճաններ կային այնտեղ... Բուֆետը մեկ այլ հարկում էր, և Հակոբը չէր կարողանում հասնել այնտեղ:
>
> Անուշի ներկայությունը նաը խանգարում էր, որպեսզի ուսուցիչը Հակոբի հետ համապատասխան հարաբերություններ կառուցեր՝ որպես ուսումնական գործընթացի մաս: - Ուսուցիչը պատրաստ չէր [սովորեցնել Հակոբին]: Նա չգիտեր, թե ինչպես պետք է շփվի Հակոբի հետ, և միշտ կանչում էր ինձ, որպեսզի օգնեմ իրեն:[158]

Անուշը կարծում էր, որ նրա երկու որդիները պետք է հավասար վերաբերմունք և հնարավորություններ ստանան՝ առանց իր մշտական աջակցության դպրոց հաճախելու համար:

- Դպրոցում պետք է վերելակ լինի... զուգարանները նույնպես պետք է հարմարեցվեն: Ներառական դպրոցը պետք է նշանակի այնպիսի դպրոց, ինչպիսին այն մեր մյուս որդու համար է: Նա հաճախում է դպրոց, և ես կարող եմ ուտելիք պատրաստել և կերակրել նրան, երբ նա տուն կգա:[159]

Human Rights Watch-ի կողմից այցելված ներառական դպրոցներից մեկի հոգեբանն ասել է. «Ինչպես տեսնում եք, դպրոցը մատչելի չէ: Մենք ունենք մեկ երեխա՝ առաջին դասարանցի աշակերտ, ով անվասայլակով է: Մենք [աշխատակազմը] ... օգնում ենք նրան տեղաշարժվել շրջակայքում, և ծնողներից մեկը՝ սովորաբար մայրը, մնում է որպեսզի օգնի և աջակցի նրան, եթե նա դրա կարիքն ունենա»:[160]

Օգնականներ որոշ դպրոցներում

Որոշ դպրոցներում կան օգնականներ, ովքեր աշխատում են երեխաների հետ՝ հոգալու համար նրանց հիմնական կարիքները, բայց ոչ կրթական գործընթացներում:

---

[158] Նույն աղբյուրից
[159] Նույն աղբյուրից
[160] Human Rights Watch, հարցազրույցՍոֆիա Հարսոփյանի հետ, 24-ը մայիս, 2016թ.

Օրինակ, Երևանի թիվ 20 ներառական դպրոցի հոգեբանն ասաց. «Մենք ունենք մեկ օգնական, ասիստենտ: Նա օգնում է երեխաներին զուգարան գնալ: Երեխաներն, ըստ էության, կարող են ինքնուրույն գնալ, բայց նա կարող է աջակցել նրանց և ապահովել նրանց անվտանգությունը: Նա նաև օգնում է որոշ երեխաների ավտոբուս [հասարակական] նստել: Նա մոտ 10 երեխաների է օգնում»:[161] Արմավիրի թիվ 5 ներառական դպրոցի տնօրենը նշել է, որ իրենք ունեն 13 աշխատակիցներ, ովքեր կցված են «ներառական ծրագրի» 63 երեխաների հետ աշխատելու համար: Նրանց թվում են երեք խնամակալներ, ովքեր, ի թիվս այլ խնդիրների, աջակցում են տարբեր դասարաններ հասնելու և սնվելու համար օգնության կարիք ունեցող երեխաներին: Սակայն, այս աջակցող անձնակազմը դասարանում չի մնում երեխաների հետ:[162]

Ներառական կրթության փորձնական ծրագրի և ֆինանսավորման նոր ընթացակարգերի ներքո, Հայաստանի հյուսիս-արևելյան Տավուշի մարզի 84 դպրոցներ ստացել են լրացուցիչ ֆինանսական միջոցներ՝ ուսուցիչների օգնականների, ինչպես նաև հատուկ կրթության ուսուցիչների ներգրավման համար: Ըստ «Հույսի կամուրջ» կազմակերպության ներկայացուցիչ Սուսաննա Թադևոսյանի, սա առանցքային քայլ է եղել ներառական կրթության ուղղությամբ մարզի առաջընթացի առումով:[163]

Ավագ դպրոցի և բարձրագույն կրթության հնարավորությունների բացակայություն

Human Rights Watch-ի կողմից հարցված բազմաթիվ ծնողներ մտահոգություն են հայտնել իններորդ դասարանով եզրափակվող պարտադիր կրթությանը հաջորդող՝ բարձր տարիքի երեխաների համար ուսման հնարավորությունների բացակայության առումով: Անահիտը տասներկուամյա աղջիկ է, ով սովորում է Գորիսում գործող ներառական դպրոցում: Չնայած նրան, որ Անահիտի մայրն իր դստերը նկարագրում է որպես «շատ պայծառ և խելացի» երեխա, նա իններորդ դասարանից հետո սահմանափակ հնարավորություններ է տեսնում իր դստեր համար: Նա բացատրեց. «Դպրոցը շարունակվում է մինչև իններորդ դասարանը, ապա անցում է կատարվում ավագ դպրոցի համակարգին: Ես վստահ չեմ, որ [Անահիտը] կկարողանա ավագ դպրոց գնալ: Նա չի կարողանա արտահայտվել և հասկանալ բարդ թեմաները: Գուցե դրա փոխարեն նա կարող է կար անել, նկարել, կամ նման մի բան»:[164] Միլենան, ում

[161] Նույն աղբյուրից

[162] Human Rights Watch, հարցազրույցՄարգարիտա Բաղասյանի հետ, Արմավիրի թիվ 5 հատուկ դպրոցի տնօրեն, 28-ը մայիսի, 2016թ.

[163] Human Rights Watch, հարցազրույցՍուսաննա Թադևոսյանի հետ, 20-ը ապրիլի, 2016թ.

[164] Human Rights Watch,հարցազրույց Անահիտի մայրիկի հետ, Գորիս, 16-ը ապրիլի, 2016թ.

16-ամյա աղջիկը սովորում է հատուկ դպրոցում, ասել է. «Ես չգիտեմ, թե ինչ է լինելու իններորդ դասարանից հետո: Մտավոր հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար մեր քաղաքում հնարավորություններ չկան: Նրան անհրաժեշտ են անկախ ապրելու հմտություններ, աշխատանքի ուսուցում: Նման վերապատրաստումներ իրականացնող մասնագետներ այստեղ չկան»:[165]

Գեղանուշը նկարագրեց, թե ինչպիսի երկընտրանքի առջև է նա կանգնած է իր մտավոր հաշմանդամություն ունեցող որդու հարցում, ով առաջինից մինչև իններորդ դասարանները սովորել է Կապանի հատուկ դպրոցում: - Իմ որդին գրեթե ավարտում է իններորդ դասարանը: Հիմնական խնդիրն ինձ համար այն է, թե ինչ է նա անելու ավարտելուց հետո: Ես չգիտեմ ուր տանել նրան: Մեր տարածաշրջանում հաշմանդամություն ունեցող երեխաների համար ծառայություններ մատուցող կրթական ուսումնարաններ չկան: Որևէ քոլեջ կամ ԲՈՒՀ նրան չի ընդունի: Ես զգում եմ, որ իմ միակ ընտրությունը Երևան տեղափոխվելն է և նրան մի հաստատություն [որը կընդունի նրան] տանելն է, - պարզաբանել է Ելենան:[166]

Վարսիկի որդին՝ Հոսեփը, ունի Ասպերգերի համախտանիշ և սովորում է ներառական դպրոցում՝ Երևանում: Չնայած նրան, որ Հոսեփն իր դասարանի մակարդակին համապատասխան, իսկ որոշ առարկաներից, օրինակ՝ անգլերենից, նաև գերազանց առաջադիմություն է ցուցաբերում, Վարսիկը Human Rights Watch-ին պատմել է, որ նա Հոսեփի համար ապագայում քիչ տարբերակներ է տեսնում: - Իններորդ դասարանից հետո, ես չգիտեմ: Նա ուժեղ է մաթեմատիկայից, գուցե կարող է ինչ-որ բան անել համակարգչով: Ես ավելի հակված եմ մտածել [միջին մասնագիտական] դպրոցի մասին, որոշ վերապատրաստման դասընթացների, այլ ոչ թե ավագ դպրոցի մասին: Ես լսել եմ, որ ավագ դպրոցն արդյունավետ չէ [հաշմանդամություն ունեցող երեխաների համար], - ասաց Վարսիկը:[167]

Հակոբ Աբրահամյանը «Փյունիկից» ասաց. «Երեխաների մեծանալու հետ մեկտեղ, ծնողները անհանգստանում են նրանց համար առկա հնարավորությունների առումով: Նրանք չգիտեն երեխաների հետ ինչ անել իններորդ դասարանից հետո: Թերևս մոտ 10-15 տոկոսն է շարունակում մինչև տասներկուերորդ դասարանը: Ամենից հաճախ հենց հաշմանդամություն ունեցող երեխաներն են, որ դուրս են մնում հիմնական կրթությունից»:[168]

---

[165]Human Rights Watch, հարցազրույց Միլենայի հետ, հանդիպման վայրը չի բացահայտվում, ապրիլ 2016թ.
[166]Human Rights Watch, խմբային հարցազրույց Գեղանուշի հետ, Կապան, 15-ը ապրիլի, 2016թ.
[167]Human Rights Watch, հարցազրույց Վարսիկի հետ, Երևան, 24-ը մայիսի, 2016թ.
[168]Human Rights Watch, հարցազրույց Հակոբ Աբրահամյանի հետ, «Փյունիկ» Հայաստանի հաշմանդամների միություն ՀԿ նախագահ, Երևան, 14-ը ապրիլի, 2016թ.

Երևանի ներառական դպրոցի հոգեբան Սոֆիա Հարսոփյանը հաստատեց. «Կրթական համակարգի բացերից մեկն այն է, որ մենք չգիտենք, թե հաշմանդամություն ունեցող երեխան ինչ է ստանալու իններորդ դասարանի վերջում: Մի քանի տարի առաջ, կար մի գործընթաց, ըստ որի երեխաները կարող էին վկայական ստանալ առանց քննություններ հանձնելու: Վկայականը կարող էր օգտագործվել միայն միջին մասնագիտական քոլեջների համար: Այն բարձրագույն կրթության հնարավորություն չէր տալիս: Դպրոցն ավարտող երեխաները միջին մասնագիտական քոլեջներում ինտեգրման խնդիրներ են ունենում: Այդ մակարդակում ներառական կրթություն չկա»:[169]

Քրիստինեի 18-ամյա որդին՝ Սահակը, մտավոր հաշմանդամություն և խոսքի դժվարություններ ունի: Հատուկ դպրոցում մինչև իններորդ դասարան սովորելուց հետո, արդեն երրորդ տարին է ինչ Սահակը սովորում է Երևանի համար 2 հատուկ միջին մասնագիտական հաստատությունում, որտեղ նա ապրում և այգեգործություն է ուսումնասիրում: - Ես կցանկանայի, որ նա նորմալ կյանք ունենար... Մեր պլաններ ունենք, որ եթե նա մի լավ մասնագիտություն ստանա, կկարողանա ինքն իրեն պահել և միգուցե օգնել հոգ տանել մեր մասին՝մեր ծերության ժամանակ, - ասաց Քրիստինան: Մասնագիտական հաստատությունն անվճար է և առաջարկում է նաև այլ առարկաներ, այդ թվում՝ ատաղձագործություն, գորգագործություն, վարսահարդարում և ավտոմեխանիկա:[170]

Կրթություն և ապագա

Հաշմանդամություն ունեցող երեխաները նկարագրեցին բովանդակալից մասնագիտական կյանքի և հասարակության մեջ ներդրում ունենալու իրենց հույսերն ու երազանքները: Ռիտան (16 տարեկան), ով ունի թույլ մտավոր հաշմանդամություն և սովորում է հատուկ դպրոցի ութերորդ դասարանում, ուր նա մշտապես հաճախել է, Human Rights Watch-ին ասաց. «Ես ցանկանում եմ գնալ համալսարան: Ես կցանկանայի դառնալ բժիշկ, որպեսզի կարողանայի հոգ տանել մարդկանց մասին: Իմ հարևանը բժիշկ է»:[171]

Նինան, ով 16 տարեկան է, ունի մանկական ուղեղային կաթված և պարտադիր կրթությունն ավարտել է տնային ուսուցման միջոցով, բացատրեց. «Ես ուզում եմ սովորել ժեստերի լեզուն և աշխատել ու օգնել նրանց, ովքեր աջակցության կարիք

[169] Human Rights Watch, հարցազրույց Սոֆյա Հարսոփյանի հետ, հոգեբան, Երևանի թիվ 20 դպրոց, Երևան, 24-ը մայիսի, 2016թ.
[170] Human Rights Watch, հարցազրույց Քրիստինայի հետ, Երևան, 20-ը ապրիլի, 2016թ.
[171] Human Rights Watch, հարցազրույց Ռիտայի հետ, Գորիսի թիվ 1 հատուկ դպրոց, Գորիս, 16-ը ապրիլի, 2016թ.

ունեն։ Ես կաջակցեի մարդկանց, ովքեր չեն խոսում, անգամ լրատվական ընկերություններում»։[172] Նրա մայրը ցանկություն հայտնեց, որ Նինան զբաղվի նաև այլ գործունեությամբ, սակայն տեղեկացված չէր առկա հնարավորությունների մասին։ Նա պատմեց Human Rights Watch-ին. «Նա ոչինչ չունի անելու։ Դա խնդիր է դառնում, քանի որ նա ցանկանում է զբաղված լինել։ Ես չեմ մտածել նրա ուսումը շարունակելու մասին։ Բայց, ես տեսնում եմ, որ նա ուզում է լրագրող դառնալ, հանդիպել և շփվել շատ մարդկանց հետ։ Ես պատրաստ եմ աջակցել նրան ինչ էլ որ նա կցանկանա և կկարողանա անել»։[173]

Խարան և խտրականություն

Հաշմանդամություն ունեցող բազմաթիվ երեխաներ և նրանց ծնողները նշել են խարանը որպես որակյալ ներառական կրթություն ստանալու խոչընդոտ։ Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողները նկարագրել են ոտնձգությունների և ահաբեկման դեպքեր իրենց երեխաների նկատմամբ, ովքեր հաճախում են հանրակրթական դպրոցներ։ Այլ ծնողներ հրաժարվել են իրենց երեխաներին ուղարկել հանրակրթական դպրոցներ, կամ դպրոց ընդհանրապես, կամ իրենց երեխաներին ուղարկել են հատուկ հաստատություններ՝ խարանից վախի պատճառով։ Հաշմանդամություն ունեցող երեխաների որոշ ծնողներ հայտնել են հաշմանդամության այլ տեսակներ, հատկապես մտավոր կամ սոցիալ-հոգեբանական հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ խտրական վերաբերմունքի մասին։

Միևնույն ժամանակ, որոշ դպրոցների ուսուցիչներ հաստատել են, որ ներառական կրթությունը օգնել է կոտրել կարծրատիպերը երեխաների, ծնողների և ուսուցիչների մոտ։ Ըստ մի ուսուցչի. «Մեզ կարող էին զարմացնել հաշմանդամություն ունեցող երեխաները։ Դա մի բան էր, որը մենք չէինք հասկանում։ Բայց հիմա կարծրատիպերը կոտրվում են։ Երեխաները նույնիսկ ուշադրություն չեն դարձնում մեկ այլ երեխայի հաշմանդամությանը։ Ոչ ոք չի վախենում»։[174]

Ըստ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի (CRPD), կառավարությունները պարտավոր են «պայքարել կարծրատիպերի, նախապաշարմունքների և հաշմանդամություն ունեցող անձանց առնչվող վնասակար ավանդույթների դեմ ... կյանքի բոլոր բնագավառներում և բարձրացնել

---

[172] Human Rights Watch, հարցազրույց Նինայի և նրա մայրիկի հետ, Վանաձոր, 19-ը ապրիլի, 2016թ.
[173] Նույն աղբյուրից
[174] Human Rights Watch, հարցազրույց Արմինե Կոլյանի հետ, ուսուցիչ, Գորիսի թիվ 6 ներառական դպրոց, 2-ը դեկտեմբերի, 2016թ.

հաշմանդամություն ունեցող անձանց ունակությունների և ներդրումների վերաբերյալ իրազեկվածությունը», ինչպես նաև «հարգալից վերաբերմունք սերմանել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների նկատմամբ կրթական համակարգի բոլոր մակարդակներում, այդ թվում երեխաների մեջ, դեռ վաղ հասակից»:[175]

Մարգարիտան, ում երկու երեխաներն ունեն լսողական և խոսակցական դժվարություններ, նկարագրել է խարանի և ահաբեկման դեպքեր, որոնց իր դուստրը՝ Նելլին, ենթարկվել է մի հեռավոր մարզի մանկապարտեզ հաճախելու ընթացքում: - Ուսուցիչները բարի և ուշադիր էին նրա նկատմամբ, բայց մթնոլորտը բարդ էր: Մյուս երեխաները ծիծաղում էին նրա վրա և ծաղրում էին նրան, երբ նա փորձում էր խոսել: Իսկ այն, թե ինչպես էին որոշ ծնողներ նայում նրան, կարելի էր կարծել, որ նա ինչ-որ տարօրինակ բան է…, - ասել է Մարգարիտան:[176]

Ըստ Տիգրանուհու, ում՝ Դաունի սինդրոմ ունեցող ոդին (այժմ 23 տարեկան) սովորել է հանրակրթական դպրոցում, նա և նրա որդին ուսման առաջին տարիներին դպրոցական համայնքում շատերի կողմից են արժանացել թշնամական վերաբերմունքի: Ի վերջո, որդուն դպրոցում պահելու իր հետևողականության և նրան ներառելու դպրոցի ջանքերի շնորհիվ, մթնոլորտը բարելավվեց: Տիգրանուհին բացատրեց. «Խնդիրներ կային ծնողների և երեխաների հետ: Սկզբում շփումը դժվար էր: Որոշ ծնողներ ինձ նույնիսկ ասում էին. «Ինչո՞ւ եք բերել նրան այստեղ»: Մի քանի տարի անց, սակայն, նույն ծնողն ինձ ասաց. «Դուք շատ լավ որոշում եք կայացրել նրան այս դպրոց բերելով»»:[177]

Որոշ ծնողներ իրենց երեխաներին հատուկ դպրոց ուղարկելու որոշումը բացատրում էին խտրականության վախով և այն հանգամանքով, որ իրենց երեխան տարբերվում էր իր հասակակիցներից: Օրինակ, մի մայր Human Rights Watch-ի հետ հարցազրույցում բացատրեց, որ աուտիզմ ունեցող իր 9-ամյա որդու հետ հեռավոր գյուղից տեղափոխվել է Գյումրի, որպեսզի նա այնտեղ հաճախի մասնագիտացված դպրոց, տեղական ներառական դպրոց ուղարկելու փոխարեն: Նա ասաց. «Քանի որ նա հաշմանդամություն ունեցող երեխա է, լավ չի խոսում և լավ չի լսում, չեմ կարծում, թե խելամիտ կլիներ նրան գյուղի դպրոց ուղարկելը: Այստեղ իմ որդին գալիս է և շփվում իր նման երեխաների հետ: Այնտեղ նա տարբեր կլինի»:[178]

---

[175] Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա (CRPD), հոդված 8

[176] Human Rights Watch, խմբային հարցազրույց հաշմանդամություն ունեցող երեխաների մայրերի հետ, հանդիպման վայրը չի բացահայտվում, ապրիլ 2016թ.

[177] Human Rights Watch, հարցազրույց Տիգրանուհու հետ, Երևան, 21-ը ապրիլի, 2016թ.

[178] Human Rights Watch, հարցազրույց Արմինե Ռազարյանի հետ, Գյումրի, 18-ը ապրիլի, 2016թ.

Մի մայր, ով Դաունի համախտանիշ ունեցող իր 16-ամյա որդուն՝ Նարեկին, Գյումրիում հատուկ դպրոց տանելու համար տաքսիով յուրաքանչյուր ուղղությամբ անցնում է 20 կիլոմետր, բացատրեց, որ նա վախենում է, որ իր կրտսեր որդին ոտնձգությունների կենթարկվեր, եթե Նարեկը նույն դպրոցը հաճախեր: - Իմ կրտսեր որդին 14 տարեկան է և սովորում է գյուղի դպրոցում: Ես մտածում եմ, թե ինչպես կզգային այլոց, եթե Նարեկն այդ դպրոցում լիներ: Վախենում եմ, որ կրտսեր որդուցս կարող էին զգուշանալ: Ես պարզապես փորձում եմ անել լավագույնը իմ երկու երեխաների համար:[179]

Human Rights Watch-ը հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների շրջանում արձանագրել է խարանի դեպքեր այլ տեսակի հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ: Օրինակ, Վոլոդյան, ով ապրում է Ճամբարակում, Հայաստանի արևելյան մասում, Human Rights Watch-ին ասել է, որ հարազատները հատուկ դպրոց էին խորհուրդ տվել Երևանում, որպես պոտենցիալ դպրոց իր որդու համար, ով ունի չախտորոշված հաշմանդամություն, որն ազդում է նրա ուսման և վարքագծի վրա: Վոլոդյան ասաց. «Ես այցելել եմ այդ հատուկ դպրոցն ամռանը: Ես չգիտեի, որ այնտեղ կարող էին լինել հաշմանդամություն ունեցող երեխաներ: Կային երեխաներ անվասայլակներով: Ես չէի ուզում, որ իմ որդին այդ երեխաների շրջապատում լիներ: Այնուամենայնիվ, մենք որոշեցինք փորձել: Կինս չորս ամիս որդուս հետ ապրեց Երևանում, երբ նա հաճախում էր այս դպրոցը: Բազմաթիվ երեխաներ կային այնտեղ խնդիրներով»: Վոլոդյային դուր չէր եկել, որ իր որդին ընդօրինակում էր այլ տեսակի հաշմանդամություն ունեցող երեխաների որոշակի վարքագծեր:[180]

Այլ ծնողներ թաքցրել են իրենց երեխաներին տանը և փորձել են այնպես անել, որ այլոք չիմանան, որ իրենք հաշմանդամություն ունեցող երեխաներ ունեն, ինչը որոշ ծնողների դրդել է իրենց երեխաներին մանկատներ ուղարկել, հրաժարվել իրենց երեխաներին դպրոց ուղարկելուց կամ տնային ուսուցում ընտրել: Հաշմանդամություն ունեցող երեխաների հետ աշխատող մի ՀԿ-ի տնօրեն Human Rights Watch-ին տեղեկացրել է, որ նա Արմավիրի մարզի գյուղերից մեկում ապրող ընտանիք է ճանաչում, որը թույլ չի տվել ֆիզիկական հաշմանդամություն ունեցող իր 14-ամյա դստերը որեւէ կրթություն ստանալ: -Մայրն իր դստեր համար անգամ տնային ուսուցման չի դիմել: Ընտանիքը չի ցանկացել դա: Նրանք ամաչում էին աղջկա հաշմանդամությունից:[181]

---

[179] Human Rights Watch, հարցազրույց Նարեկի մայրիկի հետ, Գյումրի, 18-ը ապրիլի, 2016թ.

[180] Human Rights Watch, հարցազրույց Վոլոդյայի հետ, Քեղարքունիքի մարզ, հանդիպման ճշգրիտ վայրը չի բացահայտվում, 30-ը մայիսի, 2016թ.

[181] Human Rights Watch, հարցազրույց Գայանե Ազոյանի հետ, Հացիկի դպրոցի փոխտնօրեն, Հացիկ, 28-ը մայիսի, 2016թ.

Նելլին, ով 20-25 տարեկան է և ամուսնալուծված է, Human Rights Watch-ին պատմել է, որ ուղեղային կաթված ունեցող իր 4-ամյա որդուն մանկատուն տանելու որոշումը մասնակիորեն կապված էր այն խարանի հետ, որը կարող էր վնասել իր ընտանիքին, մասնավորապես իր եղբորը, ով դեռ պետք է ամուսնանար։ - Հարցը մեզ համար միայն ֆինանսների հետ չէր կապված։ Մենք պետք է մտածեինք ողջ ընտանիքի մասին։ Եղբայրս դեռ երիտասարդ է։ Մենք նրա հնարավոր հարսնացուի մասին ենք մտածում։ Ոչ ոք չի ցանկանա տեսնել անառողջ երեխա [մեր ընտանիքում]։[182]

Ստեփանը (46 տարեկան) այրիացել է 2008 թվականին և դրանից անմիջապես հետո իր դստերը՝ Մարիին, ով այժմ 16 տարեկան է և ունի մանկական ուղեղային կաթված, տեղափոխել Խարբերդի մանկատուն։ Ստեփանը բացատրեց, որ իր դստերը տուն բերելու համար, որպեսզի դուստրն ապրի իր և իր երկրորդ կնոջ ու նրանց երիտասարդ դստեր հետ, նրան անհրաժեշտ է ոչ միայն ավելի կայուն եկամուտ, «այլև նրա ապրելու համար առանձին տարածք»։ Նա այս հիմնավորումը բացատրեց բժիշկներից ստացված սխալ տեղեկատվության հիման վրա առ այն, որ հաշմանդամություն ունեցող երեխան կարող է բացասական ազդեցություն ունենալ այլ երեխաների վրա։ - Բժիշկներն ինձ ասացին, որ երեխան այս իրավիճակում [ուղեղային կաթվածով] կարող է բացասաբար ազդել այլ երեխաների նյարդերի վրա։ Նյարդաբանն ասաց, որ մենք պետք է նրան հեռու ուղարկենք և մեկ այլ երեխա ունենանք։[183]

Մի հատուկ դպրոցի տնօրեն նշել է, որ ներառական կրթության զարգացման հետ կապված իր առարկություններից մեկը ներառական դպրոցներում անհրաժեշտ թվով կադրերի բացակայությունն է, ովքեր ի վիճակի կլինեն բավարարել բազմազան աշակերտական համայնքի կարիքները։ Նա ասել է. «Ինչպե՞ս կարող են [այս] երեխաները հանրակրթական դպրոց հաճախել։ Կարծում եմ, որ այդ երեխաները պետք է լինեն մասնագիտացված դպրոցում։ Շատ երեխաների մոտ բացակայում է տարրական ինքնակառավարումը։ Երեխաները հաճախ զուգարան են գնում, նաև կան երեխաներ, ովքեր չեն կարող հանգիստ նստել դասարանում, կարող են ինչ-որ բան նետել կամ հարվածել մեկին։ Այստեղ մենք մի դայակ ունենք և այլ օգնողներ, ովքեր կերակրում են երեխաներին, օգնում նրանց զուգարան գնալ։ Սա մեծ խնդիր է։ Մեզ հանրակրթական դպրոցների դասարաններում լրացուցիչ ուսուցիչներ են հարկավոր»։

[182] Human Rights Watch, հարցազրույց Նելլիի հետ, Շիրակի մարզ (հանդիպման ճշգրիտ վայրը չի բացահայտվում), մայիս 2016թ.
[183] Human Rights Watch, հարցազրույց Ստեփանի հետ, Վանաձոր, 29-ը մայիսի, 2016թ.

Բոլոր դպրոցները ներառական դարձնելու Կրթության և գիտության նախարարության ծրագիրը ենթադրում է ուսուցիչի օգնականների ավելացում դպրոցներում, բայց ոչ բավարար թվով: Ըստ նախարարության պաշտոնյաների. «Յուրաքանչյուր դպրոց կունենա ուսուցչի օգնական՝ ըստ երեխաների թվի: Առնվազն 10 երեխա ունեցող յուրաքանչյուր դպրոցի համար կլինի մեկ օգնական: Երկրորդ օգնականն ավելացվում է, երբ կա 100 երեխա»:

Կրթության իսպառ բացակայություն

Human Rights Watch-ը հարցազրույցներ է անցկացրել որոշ ընտանիքների հետ, որոնց հաշմանդամություն ունեցող երեխաները չեն հաճախել որևէ դպրոց կամ դպրոց են ընդունվել շատ ուշ՝ մատչելի դպրոցների, բնակատեղիի և տրանսպորտի բացակայության, խարանի կամ այլ պատճառներով: Ըստ միջազգային կազմակերպությունների գնահատման, հաշմանդամություն ունեցող երեխաների 20-ից 30 տոկոսը ո՛չ դպրոց է հաճախում, ո՛չ էլ ստանում է տնային ուսուցում:[184] Այս ցուցանիշներն ավելի բարձր էին գյուղական վայրերում: Համոզիչ տվյալների բացակայությունը բարդեցնում է խնդրի իրական մասշտաբների ընկալումը և լուրջ խոչընդոտ է արդյունավետ քաղաքականության մշակման համար, որը կապահովեր, որ ոչ մի երեխա չմնար առանց կրթություն:

Ալլան մանկական ուղեղային կաթված ունեցող 14-ամյա աղջիկ է, ով կրթություն չէր ստացել մինչև 13 տարեկանը: Ալլան իր ընտանիքի հետ ապրում է Երևանին մոտ գտնվող մի գյուղում: Չնայած նրա ուսումն ապահովելու ուղղությամբ իր մոր կատարած երկար տարիների հետևողական ջանքերի՝ Ալլան դեռ նոր էր ավարտում իր տնային ուսուցման առաջին տարին շաբաթը մեկ անգամ երկու ժամով իրեն այցելող երկու ուսուցիչների հետ, երբ Human Rights Watch-ը հանդիպեց նրա ընտանիքին 2016թ. մայիսին: Նելլին՝ նրա մայրը, բացատրեց.

> Իմ աղջիկը միակն է մեր գյուղում, ով հաշմանդամություն ունի: Մեր գյուղում ներառական կրթություն չկա: Ալլան չի կարողանում քայլել, և կա նաև [տեղական] դպրոցի շենքային պայմանների խնդիրը: Չկան թեքահարթակներ: Դասարանը գտնվում է երկրորդ հարկում: Տեղական դպրոցում չկան մասնագետներ: ... Ես լսել էի, որ հատուկ դպրոցը լավ մասնագետներ ուներ: [...]Այդ իսկ պատճառով գրանցեցի նրան այնտեղ:

[184] UNICEF, «Երեխաները Հայաստանում» և Human Rights Watch, հարցազրույց Արսեն Ստեփանյանի հետ, ՍեյվդրչիլդրենՀայաստանի տնօրեն, Երևան, 13-ը ապրիլի, 2016թ.

> Բայց այն հեռու է, և ես պետք է տաքսի վերցնեի այնտեղ հասնելու համար։ Մեր ֆինանսական վիճակը ինձ թույլ չի տալիս անել դա։ ... Նրան այնտեղ տանելն ու բերելն օրական 3000 դրամ ($ 6.20) է արժենում։ ... Ես 700,000 դրամ ($ 1,470) պարտք ունեմ։ ... Ես արդեն մեկ տարի է չեմ վճարել իմ տան վարձավճարը։ [Հաշմանդամության] թոշակն անգամ չի բավարարում Ալլային անհրաժեշտ տակդիրների ծախսը հոգալու համար։ Ես կցանկանայի, որ նա կրթված լիներ, կցանկանայի, որ նա ավելի ակտիվ լիներ, շփվեր, չնստեր մենակ, ավելի շատ խոսեր։ Եթե փոխադրման համար ֆինանսավորում լիներ, ես իհարկե շատ ուրախ կլինեի, որ նա դպրոց գնար։»[185]

Գայանե Ազոյանը Արմավիրի մարզի Հացիկի գյուղի դպրոցի փոխտնօրենն է և ղեկավարում է մի ՀԿ, որը ծառայություններ է մատուցում հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների համար։ Նա Human Rights Watch-ին պատմել է, որ ճանաչում է Արմավիրի մարզում ապրող՝ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մի քանի երեխաների, ովքեր կտրված են դպրոցից՝ համայնքում մատչելի տրանսպորտի բացակայության պատճառով։ Ոմանք ընդհանրապես կրթություն չեն ստանում, այդ թվում 15 տարեկան մի աղջիկ, ով ֆիզիկական հաշմանդամություն ունի։ «Մենք օգնեցինք ընտանիքին՝ տրամադրելով անվասայլակ և համակարգիչ։ Անվասայլակն օգտակար է տանը։ Գյուղի պայմանները, ճանապարհներն ու շինությունների հարմարությունները անմատչելի են անվասայլակով տեղաշարժման համար։ Նա չի հաճախում դպրոց։ Նրա քույրերը ուսանողներ են և փորձում են նրան ինչ-որ բան սովորեցնել։ Մեր դպրոցը հույս ունի վերելակով մեքենա ստանալ, որը կօգնի այս երեխաներին դպրոց հասնել։ Դա մեր առաքելությունն է՝ օգնել նրանց հասնել դպրոց»։[186]

Արմավիրի մարզից մի կին ևս, ով մանկական ուղեղային կաթված ունեցող երկու դուստր ունի, Human Rights Watch-ին պատմել է, որ իր երկու դուստրերը, այժմ 26 և 18 տարեկան, երբեք դպրոց չեն հաճախել։ Սյուզին (50 տարեկան) բացատրեց, որ դրա պատճառն այն էր, որ նրանց ձեռքերը չեն աշխատում «Մեծը հարմարավետ է զգում միայն երկար ժամանակ որովայնի վրա պառկած մնալով, մյուսը պետք է նստած լինի աջակցող աթոռի վրա, այդ պատճառով նրանք չեն կարող դպրոց հաճախել։ Ես տնային ուսուցման համար չեմ դիմել, քանի որ հաշմանդամությունը ազդել է նաև նրանց ուղեղների վրա»։[187] Այնուամենայնիվ, մի տեղական ՀԿ-ի շնորհիվ աղջիկներն

[185] Human Rights Watch, հարցազրույց Նելլիի հետ, հանդիպման վայրը չի բացահայտվում, May 24, 2016թ.

[186] Human Rights Watch, հարցազրույց Գայանե Ազոյանի հետ, Հացիկի դպրոցի փոխտնօրեն, Հացիկ, 28-ը մայիսի, 2016թ.

[187] Human Rights Watch, հարցազրույց Սյուզիի հետ, Արմավիրի մարզ, 28-ը մայիսի, 2016թ.

այժմ էլեկտրոնային պլանշետ ունեն, որի օգնությամբ նրանք խաղեր են խաղում: Human Rights Watch-ի կողմից ընտանիք կատարած այցի ընթացքում հետազոտողներից մեկը նկատել է, թե ինչպես է տասնութամյա դուստրն օգտագործում պլանշետը, որը կարող էր հեշտությամբ ընդգրկված լինել ուսումնական ծրագրում և նպաստել ուսուցման գործընթացին: Երկու երիտասարդ կանայք էլ ներգրավված էին խոսակցության մեջ, զգոն էին և ժպտում էին հետազոտողի կատարած այցի ընթացքում: Ըստ Գայանե Ազոյանի, մայրն ընդդիմանում էր տնային ուսուցմանը, քանի որ ձգտում էր թաքցնել իր դուստրերին մյուսներից՝ վախենալով, որ իրենց համայնքում ոմանք կխարանեն ընտանիքը:[188]

Կրթության այլ ձևեր հաշմանդամություն ունեցող երեխաների համար

Հատուկ դպրոցներ

Հատուկ դպրոցը Խորհրդային Միության ժառանգությունն է, որը ենթադրում էր հաշմանդամություն ունեցող երեխաների ընդունումը դպրոց ըստ իրենց հաշմանդամության տեսակի: Ինչպես նշված է վերևում, 2016թ. դեկտեմբերի դրությամբ Հայաստանում կար 21 հատուկ դպրոց, և դրանցից շատերում կան ինչպես հաշմանդամություն ունեցող, այնպես էլ չունեցող երեխաներ: Որոշ երեխաներ ապրում են դպրոցում, ոմանք՝ ոչ: Այս երեխաներից ոմանք առանց ծնողական խնամքի են: Օրինակ, Կապանի թիվ 3 հատուկ դպրոցի տնօրենը 2016թ. ապրիլին Human Rights Watch-ին պատմել է, որ դպրոցում ընդգրկված են հաշմանդամություն ունեցող 20 երեխաներ, ում ծնողները հրաժարվել են իրենց ծնողական իրավունքներից՝ դպրոցը դարձնելով երեխաների խնամակալ:

Կառավարությունը մտադիր է որոշ հատուկ դպրոցներ վերափոխել երեխաների, նրանց ընտանիքների և դպրոցների աջակցության կենտրոնների՝ համայնքում երեխաներին կրթելու համար: Ըստ Հայաստանի փորձագետների, կառավարությունը չի ցանկանում վերափոխել բոլոր հատուկ դպրոցները, իսկ Կրթության մասին օրենքը ծնողներին թույլ է տալիս հաշմանդամություն ունեցող երեխայի համար ընտրել հատուկ դպրոց: Թեև ծնողները պետք է կարողանան ընտրել թե ինչպիսի դպրոց պետք է հաճախի իրենց երեխան, կառավարությունը պետք է սեգրեգացիան հնարավորինս նվազեցնելուն ուղղված ակտիվ քայլեր ձեռնարկի՝ հանրակրթական դպրոցներում հաշմանդամություն ունեցող երեխաների համար ողջամիտ հարմարեցումներ ապահովելով: - Կա վտանգ, որ մնացած հատուկ դպրոցները դեպի իրենց կգրավեն

[188] Human Rights Watch, հարցազրույց Գայանե Ազայոնի հետ, Հացիկի դպրոցի փոխտնօրեն, Հացիկ, 28-ը մայիսի, 2016թ.

մարդկանց, - ասաց Սուսաննա Թադևոսյանը «Հույսի կամուրջ» կազմակերպությունից: «Հույսի կամուրջն» աջակցում է ներառական կրթության մի շարք ծրագրերի և ներառական կրթության մասով համագործակցում է ՅՈՒՆԻՍԵՖ-ի ու ՀՀ կառավարության հետ Հայաստանում հաստատությունների բեռնաթափման ծրագրում, որը մանրամասնորեն նկարագրված է ստորև:[189]

Human Rights Watch-ի կողմից հարցված որոշ ծնողներ փորձել են իրենց երեխաներին տանել իրենց համայնքների ներառական դպրոցներ, սակայն ի վերջո ընտրել են հատուկ դպրոցները: Ինչպես նկարագրված է վերը, այս որոշման պատճառներից են եղել որակյալ կրթություն ապահովելու ներառական դպրոցների թերությունները, այդ թվում երեխայի հաշմանդամությանը համապատասխան ողջամիտ հարմարեցումների բացակայությունը, գերբեռնված դասարաններն ու անհատական մոտեցման բացակայությունը և երեխայի հետ դպրոցում ծնողի մնալու անհրաժեշտությունը: Այդուհանդերձ, հատուկ դպրոցներում կրթության որակը միանշանակորեն ավելի բարձր չէ: Շատ դեպքերում երեխային հատուկ դպրոց ուղարկելը ենթադրում է երկար ճանապարհ անցնելու անհրաժեշտություն, կամ պահանջում է, որ երեխան մշտապես կամ դպրոցական շաբաթվա ընթացքում ապրի դպրոցում: Բացի այդ, երեխաներն առանձնացվում են իրենց ընտանիքներից և անմիջական համայնքներից:

Human Rights Watch-ի 2016թ. ապրիլ և մայիս ամիսներին այցելած հատուկ դպրոցներում դասարանների չափերը, որպես կանոն, ավելի փոքր էին: Օրինակ, Երևանի թիվ 17 հատուկ դպրոցում մեկ դասարանում մոտ 10 երեխաներ էին սովորում: Գյումրիի թիվ 3 հատուկ դպրոցում մեկ դասարանում եղել է հինգից մինչև 10 երեխա, իսկ Գորիսի թիվ 1 հատուկ դպրոցում՝ 13 երեխա:[190] Սա առնվազն մասնակիորեն պայմանավորված է մասնագիտացված դպրոցներում, մանկատներում և այլ տեսակի խնամքի հաստատություններում երեխաների քանակը նվազեցնելու կառավարության ջանքերով: Դասարանի փոքր չափը կարող է գրավիչ լինել ծնողների համար: Օրինակ, Հեղինեն բացատրեց, որ իր համայնքի ներառական դպրոցում դասարանների մեծ չափերը և անհատական մոտեցման բացակայությունը պատճառ դարձան իր որդուն՝ 10-ամյա Արսենին, ով լսողական և խոսակցական դժվարություններ ունի, հատուկ դպրոց տեղափոխելու որոշման համար, որը գտնվում է Երևանի մեկ այլ թաղամասում, իրենց տանից հեռու: Նա Human Rights Watch-ին պատմեց.

---

[189] Human Rights Watch, հարցազրույցՍուսաննա Թադևոսյանի հետ, 12-ը ապրիլի, 2016թ.

[190] Human Rights Watch, հարցազրույցs հետԱմալյա Հարությունյանի հետ, Երևանիթիվ 17 հատուկ դպրոցի տնօրեն, Երևան, 13-ը ապրիլի, 2016թ.; Հերմինե Շահունցի հետ, Գորիսի թիվ 1 հատուկ դպրոցի տնօրեն, Գորիս, 16-ը ապրիլի, 2016թ., եՏիգրան Ղուլյանի հետ, Գյումրիի թիվ 3 հատուկ դպրոցի տնօրեն, Գյումրի, 18-ը ապրիլի, 2016թ.

> Պատկերացրեք 37 երեխա մեկ սենյակում, և իմ որդին՝ խոսքի դժվարություններով: Մյուս երեխաներն աղմկոտ են և ուշադրության կարիք ունեն: Ուսուցիչը չէր կարողանում անհատապես ժամանակ անցկացնել իմ որդու հետ: Նույնիսկ «ներառականի» ուսուցիչները նրա հետ շաբաթական միայն մեկ կամ երկու անգամ են ժամանակ անցկացնում՝ հաշմանդամություն ունեցող այլ երեխաների հետ մեկ խմբում:[191]

Հեղինեն կիսվեց իր ակնկալիքներով կապված իր որդուն ներառական դպրոց ուղարկելու հարցը կրկին դիտարկելու հետ. «Որպեսզի նրան ներառական դպրոց ուղարկեմ, ես կուզենայի տեսնել ավելի քիչ թվով երեխաներ մեկ դասարանում և լավ, կոմպետենտ մասնագետներ»:[192]

Նույն կերպ, Աննան կարծել էր, որ իրենց տան մոտ գտնվող ներառական դպրոցը չէր տրամադրում որակյալ կրթություն անձնակազմի բացակայության և իր՝ աուտիզմ ունեցող 13-ամյա որդու ուսուցմանը անհատական մոտեցում չցուցաբերելու պատճառով:

- Նրանք ուշադրություն չէին դարձնում նրան և չէին ներգրավում նրան աշխատանքների մեջ: ... Նա չի կարողանում հեշտությամբ հանգիստ նստել, չի կարողանում լսել: Նա անհատական մոտեցման կարիք ունի: [Հատուկ դպրոցում] երեխաներին սովորեցնում են կարդալ և գրել՝ օգտագործելով նույն գրքերը: Ինձ դուր է գալիս անհատական ուսուցման մոտեցումն իմ տղայի պես աուտիզմ ունեցող երեխաների համար, - ասել է նա:[193] Այժմ Աննան երկու ավտոբուս է փոխում, և յուրաքանչյուր ուղղությամբ երթևեկում ավելի քան մեկ ժամ, որպեսզի իր որդին կարողանա հաճախել հատուկ դպրոց Երևանում: Նա շաբաթվա ընթացքում ընդամենը մի քանի օր է կարողանում նրան դպրոց տանել, քանի որ իր որդին հոգնում է երկար ուղևորությունից:[194]

Այն հանգամանքը, որ հատուկ դպրոցների որոշ աշխատակիցներ ունեն որոշակի փորձ և մասնագիտական փորձառություն, ինչպիսիք դեռևս առկա չեն ներառական դպրոցների աշխատակիցների շրջանում, նույնպես կարող է ծնողներին գրավել դեպի հատուկ դպրոցներ: Օրինակ, 34-ամյա Օվսաննան իր երկու զարմիկների խնամակալն է, ովքեր երկուսն էլ թույլ տեսողություն ունեն, ունի երկու դպրոցահասակ դուստրեր և

---

[191] Human Rights Watch, հարցազրույցհետ Gegine, Երևան, ապրիլի, 20, 2016թ.
[192] Նույն աղբյուրից
[193] Human Rights Watch, հարցազրույցԱննայի հետ, Երևան, 20-ը ապրիլի, 2016թ.
[194] Նույն աղբյուրից

աշխատում է լրիվ դրույքով: Նա հատուկ դպրոցի կողմից՝ դասերից հետո տնային աշխատանքները կատարելու համար տրամադրվող օգնությունը որակեց որպես կարևորագույն գործոն՝ տղաներին այնտեղ ուղարկելու որոշման համար: - Ուսուցիչները լավն են և աշխատում են նրանց [իմ զարմիկների] հետ, - բացատրեց Օվսաննան: - Ես աշխատում եմ, ուստի միայն ուսուցիչներն են աշխատում նրանց հետ [տնային աշխատանքների մասով]: Ես շնորհակալ եմ այս դպրոցից: Մեկ տարի ես նրանց ուղարկեցի մեր հարևանությամբ գտնվող դպրոցը, բայց մենք այստեղ ավելի հարմարավետ ենք զգում, քանի որ ես չէի կարողանում աշխատել նրանց հետ տանը: Ես չէի կարողանա նրանց այլ դպրոց ուղարկել, - ասել է Օվսաննան Human Rights Watch-ին:[195]

Նմանապես, Արտակն ունի խոսքի դժվարություններ և սովորում է հատուկ դպրոցի վեցերորդ դասարանում, Վանաձորում: Նրա մայրը՝ Լարիսան, 49 տարեկան, ով այրի է, բացատրել է, որ տնային աշխատանքների համար հատուկ դպրոցի կողմից տրամադրվող օգնությունը, ինչը բացակայում է տեղական համայնքի դպրոցում, կարևոր էր նրան հատուկ դպրոց ընդունելու իր որոշման համար, որտեղ [հատուկ դպրոցում] նա հիմնականում ապրում է: - Ես նախընտրել եմ այս դպրոցը: Նրանք օգնում են նրան անել իր տնային աշխատանքները: Նա շաբաթվա ընթացքում մնում է դպրոցում և գալիս է տուն հանգստյան օրերին: Ես ունեմ առողջական ... հարցեր, այնպես որ ինձ համար դժվար է նստել և անել տնայինները նրա հետ, - ասել է Լարիսան Human Rights Watch-ին:[196]

Չնայած այս մարտահրավերներին, որոշ ծնողներ գիտակցում են իրենց երեխաների համար նույն համայնքում՝ներառական դպրոցներում կրթություն ստանալու կարևորությունը: Օրինակ, Լուսինե Աղաջանյանը, որը երկու երեխաների մայր է, ներկայացրեց իր ծրագրերը կապված իր 6-ամյա՝ մանկական ուղեղային կաթված ունեցող որդու հետ, ում պատրաստվում է տանել իրենց տան մոտ գտնվող ներառական դպրոց, Գյումրիում. «Ես չեմ մտածում նրան հատուկ դպրոց տանելու մասին: Ես չեմ համարում, որ իմ երեխան «հատուկ կարիքներ» ունի: Իմ երկու երեխաներին էլ հավասար են ինձ համար: Ես ուզում եմ, որ նա դուրս գա և ինտեգրվի հասարակությանը դպրոցի միջոցով, ես ուզում եմ, որ նա ինտեգրվի երիտասարդ տարիքից: Ես կարծում եմ, որ դա էական կլինի իր ապագայի համար»:[197]

---

[195] Human Rights Watch, հարցազրույցՕվսաննայի հետ, Գորիս, ապրիլի 16, 2016թ.
[196] Human Rights Watch, հարցազրույցԼարիսայի հետ, Վանաձոր, ապրիլի 19, 2016թ.
[197] Human Rights Watch, հարցազրույցԼուսինե Աղաջանյանի հետ, Գյումրի, 18-ըապրիլի, 2016թ.

Տնային ուսուցում

Human Rights Watch-ը հարցազրույցներ է անցկացրել այն ծնողների հետ, ում հաշմանդամություն ունեցող երեխաները ստանում են տնային ուսուցում, որի պարագայում մեկ կամ մի քանի ուսուցիչ այցելում է երեխային տանը և տարրական գրագիտության ուսուցում իրականացնում սահմանափակ թվով առարկաների ուղղությամբ, որպես կանոն՝ հայոց լեզու, ռուսաց լեզու և մաթեմատիկա։ Տնային ուսուցման պետական ծրագիրը ներառում է մեկից երեք դաս տանը շաբաթական ինը ժամ տևողությամբ և շարունակվում է մինչև իններորդ դասարանը։ Բարձր դասարաններում դասաժամերի քանակը կարող է ավելանալ՝ կախված ուսումնական ծրագրից։[198] Human Rights Watch-ի կողմից հարցված ծնողները հետևողականորեն հայտնել են, որ իրենց երեխաները շաբաթական ինը ժամից պակաս պարապմունքներ են ունեցել։ Կրթության և գիտության նախարարությունը տեղեկացրել է, որ իրենք տնային ուսուցում ստացող երեխաների թվի վերաբերյալ տվյալներ չեն գրանցում։[199]

Human Rights Watch-ի կողմից արձանագրված բազմաթիվ դեպքերում ծնողներն իրենց՝ հաշմանդամություն ունեցող երեխաների համար տնային ուսուցում են ընտրել ոչ թե երեխայի առողջական խնդիրների, այլ համայնքի դպրոցների մատչելիություն խոչընդոտող արգելքների, ներառյալ դպրոցներում ողջամիտ հարմարությունների բացակայության, այդ թվում ինչպես հենց դպրոցների, այնպես էլ բազմաբնակարան շենքերի և հանրային տրանսպորտի ֆիզիկական անմատչելիության պատճառով։

Տնային ուսուցում ստացող երեխաները պաշտոնապես ներգրավված են համայնքի դպրոցում կամ հատուկ դպրոցում և հաշվառված են տվյալ դպրոց հաճախող երեխաների ցանկում, չնայած նրան, որ նրանք ըստ էության դպրոցում կրթություն չեն ստանում և դպրոց հաճախում են հազվադեպ կամ երբեք։ Օրինակ, Վանաձորի թիվ 1 մասնագիտացված դպրոցում 2016թ. ապրիլին Human Rights Watch-ի այցի ժամանակ, սովորում էին 70 երեխաներ, որոնցից 24-ը ստանում էին տնային ուսուցում։[200] Երևանի թիվ 17 հատուկ դպրոցում հաշվառված 76 երեխաներից 10-ը ստանում են տնային ուսուցում։[201]

---

[198] Human Rights Watch, հարցազրույց Ամալյա Հարությունյանի հետ, Երևանի թիվ 17 հատուկ դպրոցի տնօրեն, Երևան, 13-ը ապրիլի, 2016թ.

[199] Գրություն Նաիրի Հարությունյանից, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Human Rights Watch-ին, 14-ը դեկտեմբերի, 2016թ.

[200] Human Rights Watch, հարցազրույց Սասուն Արթուրյանի հետ, Վանաձորի թիվ 1 հատուկ դպրոցի տնօրեն, Վանաձոր, 19-ը ապրիլի, 2016թ.

[201] Human Rights Watch, հարցազրույց Ամալյա Հարությունյանի հետ, Երևանի թիվ 17 հատուկ դպրոցի տնօրեն, Երևան, 13-ը ապրիլի, 2016թ.

Որոշ դպրոցներ ջանքեր են գործադրում տնային ուսուցում ստացող երեխաներին դպրոցական հատուկ միջոցառումներում ներգրավելու համար։ Թեև սա կարող է օգնել մեղմել երեխայի մեկուսացվածության զգացումները և երեխային հանրային փորձառություններ ունենալու որոշ հնարավորություններ ընձեռել, այդուհանդերձ, սա չի կարող փոխարինել երեխայի լիարժեք ներառումը դպրոցում, որակյալ կրթության ձեռքբերումը և այլոց հետ պարբերաբար շփվելու հնարավորությունը, ինչը սոցիալական և էմոցիոնալ զարգացման առանցքային տարր է։

Տնային ուսուցում ստացող երեխաները առանձնահատուկ սրությամբ են զգում հասակակիցների հետ փոխհարաբերությունների և համայնքային մասնակցության պակասը։ Օրինակ, Հակոբը մի քանի տարի ուսանել է ներառական դպրոցում, մինչև նրա մայրը որոշեց տնային ուսուցմանն անցնել, քանի որ դպրոցը չէր ապահովում նրա հաշմանդամությանը համապատասխանող հարմարեցումներ։ Նա ասում է. «Ես սիրում եմ դուրս գալ, հանդիպել ընկերներիս և խոսել տարբեր բաների մասին», որոնք բոլորն էլ հիմա շատ ավելի սահմանափակ են նրա համար։[202]

Ըստ հանրակրթության մասին օրենքի, նրանք, ովքեր առողջական վիճակի պատճառով ի վիճակի չեն հաճախել ուսումնական հաստատություններ, տնային ուսուցում են ստանում, իսկ եթե երեխան հոսպիտալացվել է ավելի քան 21 օր, կրթությունը տրամադրվում է հիվանդանոցում։[203] Երևանի գնահատման կենտրոնի, որը երկրում այն երկու կենտրոններից մեկն է, որն իրականացնում է հաշմանդամություն ունեցող երեխաների գնահատումը և ապագայում կաջակցի և կհամակարգի տարածքային մանկավարժական-հոգեբանական աջակցության կենտրոնների աշխատանքը, փորձագետները հայտարարել են, որ տնային ուսուցումը չպետք է կիրառվի կանոնավոր կերպով, այլ հիմնականում նախատեսված պետք է լինի ժամանակավոր օգտագործման համար։ Այնուամենայնիվ, նրանք նաև ընդունել են, որ երեխաներից շատերը, ովքեր սովորում են ռեսուրսներով հագեցած և հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության մեջ մասնագիտացած գնահատման կենտրոնի դպրոցում, ստանում են տնային ուսուցում։[204] Human Rights Watch-ն արձանագրել է երկարաժամկետ կտրվածքով տնային ուսուցում ստացող երեխաների բազմաթիվ դեպքեր։

---

[202] Human Rights Watch, հարցազրույց Անուշի և Հակոբի հետ, Գյումրի, 18-ը ապրիլի, 2016թ.

[203] Հանրակրթության մասին ՀՀ օրենք, ընդունվել է 2009թ. հուլիսի 10-ին, վերջին փոփոխությունները կատարվել են 2015 թ. ապրիլի 8-ին, հոդվածներ՝ 17 (5) և 5(1).

[204] Human Rights Watch, հարցազրույց Երևանի գնահատման կենտրոնի տնօրեն Լիլիթ Արսանյանի և նախկին տնօրեն Վարդուհի Վարդերյանի հետ, Երևան, 1-ը հունիսի, 2016թ.

Տնային ուսուցման և ներառական կրթության փորձառություն ունեցող ուսուցիչները Human Rights Watch-ին պատմել են, որ ներառական կրթությունը ապահովում է ավելի լավ կրթական միջավայր: Օրինակ, Գորիսի մեկ ուսուցիչ, ով պատասխանատու էր տնային ուսուցման կազմակերպման համար նախքան դպրոցի ներառական դառնալը, Human Rights Watch-ին ասել է. «Ներառական կրթությունն ավելի լավ է: Երեխան մեկուսացած չէ իր հասակակիցներից: Երեխաները շփվում են միմյանց հետ և ձևավորում ընկերություն»:[205]

Համայնքում ֆիզիկական մատչելիության բացակայությունը որպես որակյալ կրթության խոչընդոտ

Նինան (16 տարեկան) մանկական ուղեղային կաթված ունի և ապրում է իր ծնողների ու կրտսեր եղբոր հետ Վանաձորում: Նա Human Rights Watch-ին պատմել է, թե որքան շատ է ցանկանում ավելի շատ փորձառություններ ունենալ իր տան պատերից դուրս, որը հնարավոր դարձավ միայն տեղական մեկ ՀԿ-ի կողմից 2016 թվականին տրամադրված՝ բարձր հարմարավետության անվասայլակով: «Մինչ անվասայլակ ունենալը ես կարող էի միայն նայել դեպի փողոցը, իսկ հիմա ես կարող եմ դուրս գալ: Ես ինձ շատ վատ էի զգում: Ես տանը փակված մարդ էի: Ես ուզում էի դուրս գալ, քայլել, և տեսնել քաղաքը: Ես սիրում եմ թարմ օդ շնչել», - ասել է նա:[206]

Այդուհանդերձ, նրա մայրը բացատրեց, որ Նինան սկսած 6 տարեկանից տնային ուսուցում է ստացել՝ տեղական դպրոցներում և իրենց բազմաբնակարանային շենքում մատչելիության բացակայության պատճառով: Անվասայլակն առաջընթաց է, բայց չի հաղթահարում բոլոր խոչընդոտները: Նրա մայրը բացատրեց. «Մենք ապրում ենք բազմաբնակարան շենքի հինգերորդ հարկում: Վերելակ չկա: Հարմար չէ նրան դուրս տանելը: ... Երբ նա փոքր էր, ես կարողանում էի նրան գրկած դուրս տանել, բայց տարեցտարի նա մեծանում է, ուստի դուրս տանելը դժվար է մեզ համար: Դժվար է նրան բարձրացնել մինչև հինգերորդ հարկը: Դպրոցում նույնպես թեքահարթակներ չկան, միայն աստիճաններ են»:[207]

Անուշ Ասլանյանը (24 տարեկան) Վանաձորում գործող հաշմանդամության ունեցող անձանց կազմակերպության նախագահն է, ով նույնպես ունի հաշմանդամություն, ինչն ազդում է նրա քայլելու և որոշ այլ շարժողական գործառույթների վրա: Նա նկարագրել է ժամանակավոր տնային ուսուցման իր

[205] Human Rights Watch, հարցազրույց Արմինե Կոլյան, ուսուցչուհի, Գորիսի թիվ 6 ներառական դպրոց, 2-ը դեկտեմբերի, 2016թ.
[206] Human Rights Watch, հարցազրույց Նինայի և նրա մայրիկի հետ, Վանաձոր, 19-ը ապրիլի, 2016թ.
[207] Նույն աղբյուրից

փորձը, ինչը նրա միակ տարբերակն էր՝ ձմռանը մատչելի տրանսպորտի բացակայության պատճառով.

> Ես ձմռան երեք ամիսների ընթացքում տնային ուսուցում էի ստանում։ Ես ապրում էի մի գյուղում, որտեղ առատ ձյուն էր տեղացել և սառցակալած էր։ ... Ես չէի շփվում կամ ժամանակ անցկացնում իմ հասակակիցների հետ։ Ինձ համար դա վատ էր, քանի որ ես շատ շփվող մարդ եմ։ Կային մի շարք առարկաներ, որոնք ընդգրկված չէին տնային ուսուցման մեջ։ Ես տարրական դասարաններում տնային ուսուցում եմ ստացել և դրանից հետո ինձնից մեծ ջանքեր էին պահանջվում դպրոց հասնելու համար 1.5 կմ քայլելու համար։ Երբեմն ես հայրիկիս հետ ձիով էի գնում։ Երբ ես ավելի մեծ էի, մայրս էր քայլում ինձ հետ՝ իմ ձեռքից բռնած։[208]

Թիվ 17 հատուկ դպրոցի տնօրենը պատմում էր մի երեխայի մասին, ում հատուկ դպրոցից տեղափոխել էին հանրակրթական դպրոց, որն ակնհայտորեն դրական քայլ է երեխայի համայնքում առավել ներառման ուղղությամբ։ Սակայն, համայնքային դպրոցի աշխատակիցները և երեխայի ծնողները որոշեցին, որ նա պետք է տնային ուսուցում ստանար։ «Երեխան այստեղ է եղել [հատուկ դպրոցում] 7-ից մինչև 13 տարեկանը։ Նա անվասայլակով էր տեղաշարժվում։ Նա գնալով ավելի ծանր էր դառնում և արդեն 82կգ քաշ ուներ, ինչը ծնողների համար ֆիզիկական դժվարություններ էր առաջացնում նրան տանից դուրս բերելու համար» շենքում վերելակի բացակայության պարագայում։[209]

Human Rights Watch-ի կողմից այցելված հատուկ դպրոցներից մեկում ուսուցիչը հայտնել է, որ նմանատիպ դժվարություններ ունեն դպրոցում ընդգրկված երեխաներից շատերի ծնողները, ում երեխաներն ունեն ֆիզիկական հաշմանդամություն և տնային ուսուցում են ստանում։ Ուսուցիչը բացատրեց. «Այստեղ չկան վերելակներ և ոչ էլ թեքահարթակներ։ Այս տարի նախատեսվում էր տեղադրել անվասայլակի վերելակ-սանդուղք, սակայն դա տեղի չունեցավ։ Չգիտեմ, թե ինչու»։[210] Մանկական ուղեղային կաթված ունեցող մեկ երեխայի վերաբերյալ ուսուցիչն ասաց. «Նրա ծնողները որոշել են, որ նա չի գալու այստեղ [դպրոց]։ Շատ

---

[208] Human Rights Watch, հարցազրույց Անուշ Ասլանյանի հետ, «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ նախագահ, Վանաձոր, 19-ը ապրիլի, 2016թ.

[209] Human Rights Watch, հարցազրույց Ամալյա Հարությունյանի հետ, Երևանի թիվ 17 հատուկ դպրոցի տնօրեն, Երևան, 13-ը ապրիլի, 2016թ.

[210] Human Rights Watch, հարցազրույց հատուկ կրթության ուսուցչի հետ, հատուկ դպրոց, հանդիպման վայրը չի բացահայտվում, ապրիլ 2016թ.

դժվար է ծնողների համար նրան տանից տեղափոխելը: Նրանք ֆիզիկապես ի վիճակի չեն բերել նրան այստեղ»:[211]

Նարինե Մանուկյանը, ով հաշմանդամություն ունեցող երեխաներին ծառայություններ մատուցող երևանյան մի ՀԿ-ի տնօրենն է, պատմեց ուղեղային կաթված ունեցող 11 տարեկան մի տղայի մասին, ով ստանում է տնային ուսուցում: Նրա ծնողները դժվարանում են ամեն օր նրան դպրոց տանել, քանի որ նրանք ապրում են բազմաբնակարան շենքի հինգերորդ հարկում գտնվող բնակարանում, որտեղ վերելակներ կամ թեքահարթակներ չկան :[212]

Ոչ համապատասխան կրթություն և լրացուցիչ ծառայությունների պակաս

2008 թվականին Արմինեն փորձել էր իր դստերը, Կարինեին, ով աուտիզմ ունի, ընդունել տեղական հատուկ դպրոց: Կարճատև գնահատումից հետո ուսուցիչները Կարինեին առաջարկեցին տնային ուսուցում, ինչը Կարինեի համար նշանակում էր վերջին ութ տարիների ընթացքում սահմանափակ կրթություն ստանալ՝ նաև զրկվելով դպրոցում տրամադրվող լոգոպեդի անվճար ծառայություններից: Բացի այդ, Կարինեն զրկվել է իր հասակակիցների հետ շփման հնարավորությունից: Human Rights Watch-ին պատմել է նրա մայրը.

> Ես Կարինեին հատուկ դպրոց տարա, երբ նա 10 տարեկան էր: Նա մոտ 40 րոպե անցկացրեց այնտեղ: Ես նրա հետ եմ եղել այդ ողջ ընթացքում: Նա շատ էր շարժվում, և չէր կարողանում հանգիստ նստել: Այս այցից հետո ուսուցիչը կանչեց և ասաց, որ դպրոցը Կարինեի համար առաջարկել է տնային ուսուցում: Ես չգիտեմ, թե ով էր կայացրել այդ որոշումը:
>
> Հիմա, տարբեր առարկաների երկու ուսուցիչներ գալիս են շաբաթը երկու անգամ և ամեն անգամ 30 րոպե են անցկացնում այստեղ: Կարինեն սովորում է ութերորդ դասարանի ծրագրով: Ես կցանկանայի, որ նա ավելի շատ դասաժամեր ունենար: Կարինեն չի խոսում, բայց նա լոգոպեդին այցելել է միայն մեր դպրոց կատարած կարճատև այցի ընթացքում: Անկեղծ ասած, ես գոհ չեմ տնային ուսուցումից: Ես ցանկանում էի, որ նա դպրոց հաճախեր և խոսքի թերապիա ստանար :[213]

---

[211] Նույն աղբյուրից

[212] Human Rights Watch, հարցազրույց Նարինե Մանուկյանի հետ, Հայ մայրեր ՀԿ տնօրեն, Երևան, 12-ը ապրիլի, 2016թ.

[213] Human Rights Watch, հարցազրույց Արմինեի հետ, հանդիպման վայրը չի բացահայտվում, ապրիլ 2016թ.

Արմինեն չի կարող իրեն թույլ տալ օգտվել խոսքի թերապիայի մասնավոր ծառայություններից: Նա բացատրեց. «Ես Կարինեի համար ստանում եմ հաշմանդամության [ամսական] թոշակ մոտ 21,000 դրամի ($ 44) չափով, բայց այդ ողջ ես գումարը ես ծախսում եմ տակդիրների վրա, որոնք նա հագնում է գիշերը»:[214]

Հակոբն ունի մանկական ուղեղային կաթված: Նրա մայրը, Անուշը, տարիներ շարունակ Գյումրիում նրան ամեն օր ուղեկցում էր տեղի ներառական դպրոց: Երբ նա որոշեց տնային ուսուցման անցնել դպրոցում մատչելիության բացակայության և երեխային տեղափոխելու դժվարությունների պատճառով, դպրոցը հրաժարվեց ուսուցիչներ ուղարկել իրենց տուն: Արդյունքում՝ Հակոբը կորցրեց երկու տարվա կրթություն: Անուշն ի վերջո Հակոբին տարավ մեկ այլ դպրոց, և այդ դպրոցից մեկ ուսուցիչ գալիս է իրենց տուն շաբաթական երեք օր, միայն հայոց լեզվի և մաթեմատիկայի մեկ կամ մեկուկես ժամ տևողությամբ դասերի համար:[215]

Հասմիկը (30 տարեկան), ով ապրում է Գյումրիում իր երեք երեխաների հետ, իր 8-ամյա դստեր՝ Դիանայի համար ընտրել է տնային ուսուցում: Վերջինս մանկական ուղեղային կաթված ունի և տեղաշարժվում է անվասայլակով: Շաբաթական երկու անգամ, երկու ուսուցիչներ գալիս են յուրաքանչյուրը մեկժամյա դասերի համար և դասավանդում են ընդամենը երեք առարկա՝ հայոց լեզու, մաթեմատիկա և ռուսաց լեզու: Նույնիսկ այս սահմանափակ ուսումնական ծրագիրը միշտ չէ, որ իրականացվում է:

- Ռուսերենի ուսուցիչը շատ հաճախ չի գալիս, ոչ կանոնավոր կերպով: Նա չգիտես ինչու չի կարողանում պլանավորել այդ դասաժամը, - ասաց Հասմիկը:[216] Հասմիկը Դիանային շաբաթը մեկ անգամ տանում է դպրոց խոսքի թերապիա ստանալու համար և մատչելի տրանսպորտի բացակայության պարագայում ստիպված է տաքսի վերցնել նրան տանից դեպի դպրոց և նորից տուն տեղափոխելու համար:[217]

Տնային ուսուցման մեկուսացումը մեղմելու փորձեր

Դպրոցների տնօրենները հայտնել են, որ փորձում են ջանքեր գործադրել տնային ուսուցում ստացող աշակերտներին հատուկ միջոցառումներում կամ դպրոցական գործունեության մեջ ներառելու համար: Մարգարիտա Բաղասյանը, Արմավիրի թիվ 5 ներառական դպրոցի տնօրենը, Human Rights Watch-ին ասել է, որ դպրոցում

[214] Նույն աղբյուրից
[215] Human Rights Watch, հարցազրույց Անուշի և Հակոբի հետ, Գյումրի, 18-ը ապրիլի, 2016թ.
[216] Human Rights Watch, հարցազրույց Հասմիկի հետ, Գյումրի, 18-ը ապրիլի, 2016թ.
[217] Նույն աղբյուրից

ներառված՝ աուտիզմ ունեցող երկու երեխա ստանում են տնային ուսուցում։ - Մենք փորձում ենք նրանց դուրս բերել տանից և ներառել դպրոցում։ Մի մայր բերում է երեխային դպրոցում որոշակի ժամանակ անցկացնելու համար, երբ քննություններ չկան, որպեսզի երեխայի աղմուկը չխանգարի մյուսներին։ Մասնագետներն անհատապես աշխատում են երեխայի հետ, որից հետո նա տուն է վերադառնում։ Մենք կարծում ենք, որ կարևոր է, որպեսզի երեխան իրեն մոտ զգա հասարակությանը։[218]

Ըստ Երևանի թիվ 17 հատուկ դպրոցի տնօրենի՝ տնային ուսուցում ստացող երեխաներից ոմանք մասնակցում են դպրոցական որոշ միջոցառումների։ Մասնավորապես այս դպրոցում, որտեղ ներսում թեքահարթակ կա և որը ֆիզիկապես ավելի մատչելի է քան մյուս դպրոցները, տնօրենը նշել է. «Հաստատությունը մատչելի է, բայց ծնողները միշտ չէ, որ կարողանում են դպրոց բերել իրենց երեխային»։[219]

Երևանի «Հայ մայրեր» կազմակերպության տնօրեն Նարինե Մանուկյանը ասել է, որ իր կազմակերպության շահառուներից մեկը ստանում է տնային ուսուցում, բայց դպրոցը և տղայի ծնողները ջանքեր են գործադրում, որպեսզի նա ներառվի դպրոցական համայնքում։

- Ամսական մեկ կամ երկու անգամ տղան գնում է հարևանությամբ գտնվող դպրոցի միջոցառումներին, երբեմն դպրոցական երեխաներն այցելում են նրան տանը, - ասել է նա։[220]

Գոհարը, ում երկու երեխաները շաբաթական մի քանի ժամ հաճախում են Գյումրիում գործող մի ներառական դպրոց, ասել է, որ ընտանիքն ի սկզբանե ընտրել էր տնային ուսուցումը, բայց դպրոցը քաջալերեց նրան երեխաներին դպրոց ուղարկել։
- Հատուկ դպրոցը ... [դպրոց ընդունվելու] սկզբնական ամիսներին տրամադրում էր տնային ուսուցում, բայց ուսուցիչն առաջարկեց, որ ավելի լավ կլինի, որ երեխաները գան դպրոց։ Նա ասում էր, որ մթնոլորտն այլ է, և ավելի լայն հնարավորություններ կլինեն, - բացատրեց Գոհարը։[221]

---

[218]Human Rights Watch, հարցազրույց Մարգարիտա Բաղասյանի հետ, Արմավիրի թիվ 5 դպրոցի տնօրեն, Արմավիր, 28-ը մայիսի, 2016թ.
[219]Human Rights Watch, հարցազրույց Ամալյա Հարությունյանի հետ, Երևանի թիվ 17 հատուկ դպրոցի տնօրեն, Երևան, 13-ը ապրիլի, 2016թ.
[220]Human Rights Watch, հարցազրույց Նարինե Մանուկյանի հետ, Հայ մայրեր ՀԿ տնօրեն, Երևան, 12-ը ապրիլի, 2016թ.
[221]Human Rights Watch, հարցազրույց Գոհարի հետ, հանդիպման վայրը չի բացահայտվում, ապրիլ 2016թ.

Կրթությունը մանկատներում ապրող երեխաների համար

Պետական մանկատներում ապրող հաշմանդամություն ունեցող երեխաները հաճախ կրթություն չեն ստանում, հաճախում են հատուկ դպրոց կամ սահմանափակ կրթություն են ստանում մանկատան ներսում: Շատ քչերն են հաճախում հանրակրթական ներառական դպրոցներ: Նրանք, ովքեր դպրոց են հաճախում մանկատնից դուրս, հաճախ դա անում են կարճ օրով: Ի հակադրություն դրա, մանկատներում ապրող՝ հաշմանդամություն չունեցող երեխաները հաճախում են հանրակրթական դպրոցներ:

Ըստ Խարբերդի մանկատան տնօրենի, մանկատան նապրող 97 երեխայից 10-ը հաճախում են Խարբերդում գործող ներառական դպրոց, իսկ 30-ը՝ հատուկ դպրոց Երևանում: Հաստատությունում ապրող պատանիներից երկուսը հաճախում են միջին մասնագիտական քոլեջ Երևանում, որտեղ նրանք սովորում են կոշկակարություն, իսկ 19-ը հաճախում են մասնագիտացված քոլեջ մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար, որը տրամադրում է վարսավիրական, կանաչապատման նախագծման և գորգագործության դասընթացներ: Մանկատունն ապահովում է տրանսպորտային փոխադրումը:[222]

Ըստ Երևանի Մարի Իզմիրլյանի անվան մանկատան ավագ աշխատակազմի, 2016թ. մայիսին մանկատան 110 երեխաներից 52-ը հաճախում էին դպրոցներ: Միայն չորս երեխաներ էին հաճախում ներառական, իսկ 48-ը՝ հատուկ դպրոցներ: Դպրոց գնացող երեխաներից բոլորը դպրոց էին հաճախում կարճ օրով: Մանկատանը հարցված աղջիկներից մեկը, ով սովորում էր հատուկ դպրոցի հինգերորդ դասարանում, հաստատեց, որ նա դպրոց գնում է ամեն օր, բայց ընդամենը մի քանի ժամով:[223]Մանկատանը տասնհինգ-քսան երեխաներ տնային ուսուցում էին ստանում՝ դասավանդման համար հատուկ դպրոցներից մանկատուն այցելող ուսուցիչների կողմից:[224]

Գյումրու և Նորքի մինչև 6 տարեկան երեխաների համար նախատեսված մանկատների երեխաներից ոչ մեկը նախադպրոցական հանրակրթական հաստատություն չի հաճախում, սակայն նրանք որոշակի նախադպրոցական կրթություն են ստանում մանկատանը: Ըստ Գյումրու «Երեխաների տան» տնօրենի, «Մենք նախադպրոցական ծառայությունները այստեղ ենք տրամադրում: Մենք մանկատանն ունենք մասնագետներ: Երեխաները նախադպրոցական

[222]Human Rights Watch, հարցազրույց Հարություն Բալասանյան, Խարբերդի մանկատան տնօրեն, 25-ը մայիսի, 2016թ.
[223]Human Rights Watch, հարցազրույց Կարինեի հետ, Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն, Երևան, մայիս 2016թ.
[224]Human Rights Watch, հարցազրույցներ Հասմիկ Մկրտչյանի հետ, Մարի Իզմիրլյանի անվան մանկատան տնօրեն, մայիսի 25 և 26, 2016թ.

հաստատություններ հաճախելու համար դուրս չեն գալիս։ Մեր երեխաները հատուկ կարիքներ ունեն։ Սովորական նախադպրոցական հաստատությունում հնարավոր չէր լինի ընդունել այդպիսի երեխաների»։[225]

Հայկը (16 տարեկան), ով աուտիզմ ունի, երեք տարի ապրել է մանկատանը։ Չնայած նրան, որ երբ Հայկն ապրում էր տանը, նա վեց տարի հաճախել է հատուկ դպրոց, մանկատուն տեղափոխվելուց ի վեր նա դպրոց չի հաճախել։ Ըստ Հայկի մոր, «Նա հիմա չի գնում դպրոց։ Նա չի խոսում, և նրանք [մանկատան աշխատակիցները] ասել են, որ դպրոց գնալու որևէ իմաստ չկա նրա համար։ Նա որոշ արհեստներ է սովորում այստեղ»։[226]

Թագուհին, ով գրեթե 11 տարեկան է և սովորում է հինգերորդ դասարանում, Human Rights Watch-ին ասել է, որ անցյալում հաճախել է մանկատան մոտ գտնվող ներառական դպրոցը, սակայն, այժմ նա օրական երեք ժամ կրթություն է ստանում հաստատության ներսում։ Ո՛չ նա, ո՛չ էլ հաստատությունում սերտորեն նրա հետ աշխատող խնամակալը չգիտեին, թե ինչու նա այլևս չի հաճախում ներառական դպրոց։[227]

---

[225]Human Rights Watch, հարցազրույց Աննա Բեզջանյանի հետ, Գյումրու «Երեխաների տան» տնօրեն, Գյումրի, 27-ը մայիսի, 2016թ.
[226]Human Rights Watch, հարցազրույց Միրայի հետ, հանդիպման վայրը չի բացահայտվում, 26-ը մայիսի, 2016թ.
[227]Human Rights Watch, հարցազրույց Թագուհու հետ, հանդիպման վայրը չի բացահայտվում, մայիս 2016թ.

VII. Ազգային և միջազգային իրավական պարտավորությունները և կրթության մատչելիությունը

ՀՀ սահմանադրությունը երաշխավորում է բոլոր անձանց կրթության իրավունքը և արգելում խտրականությունը:[228]Հանրակրթության մասին օրենքը դիտարկում է ներառական կրթությունը որպես բոլոր երեխաների կրթության իրավունքը երաշխավորելու մեխանիզմ: Ներառական կրթությունը հիմնված է «յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում նրանց, ովքեր կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեն,անհրաժեշտ պայմաններև հարմարեցված միջավայր ապահովելու միջոցով՝ուսուցման գործընթացումառավելագույն մասնակցությանհասնելու»վրա:[229] Օրենքը նախատեսում է անհատական ուսուցմանպլաններ և ուսուցչի օգնականներ:[230] Օրենքը նախատեսում է նաև մասնագիտացված դպրոցներ:[231]

Օրենքը նաև սահմանում է հարմարեցումներ հաշմանդամություն ունեցող երեխաների համար կրթությունը ապահովելու նպատակով՝ «կրթության առանձնահատուկ պայմաններ՝ անձի հանրակրթական հիմնական ծրագրի յուրացմանը նպատակաուղղված առարկայական ծրագրերի և ուսուցման մեթոդների, ուսուցման անհատական տեխնիկական միջոցների, հարմարեցված միջավայրի, ինչպես նաև մանկավարժական, սոցիալական և այլ ծառայությունների ամբողջություն»:[232] Բացի այդ, ըստ օրենքի, կառավարությունը պետք է տրամադրի ֆինանսական աջակցություն այն երեխաների կրթության համար, որոնք ունեն ձայնի և խոսքի, լսողական, տեսողական, ինտելեկտուալ (մտավոր) միջին կամ խոր խանգարումներ և/կամ այլ հաշմանդամություն:[233]Երեխայի իրավունքների մասին օրենքը հաշմանդամություն ունեցող երեխաների համար երաշխավորում է անվճար բժշկական և հոգեբանական ծառայություններ, ինչպես նաև հիմնական և մասնագիտական կրթություն, զբաղվածություն, սոցիալական վերականգնման ծառայություններ ստանալու և «լիարժեք» կյանքունենալու հնարավորությունները՝ ամրապնդելով նրանց ինքնագնահատականը և օժանդակելով նրանց մասնակցությանը համայնքում:[234]

---

[228]ՀՀ սահմանադրություն, հոդված՝ 39.
[229]Հանրակրթության մասին օրենք, հոդվածներ՝ 4(2.1), և 3(10.3).
[230]Նույնաղբյուրից, հոդված՝ 3(10.8) և (10.9).
[231]Նույնաղբյուրից, հոդված՝ 8(1.3).
[232]Նույնաղբյուրից, հոդված՝ 3(10.1).
[233]Բարդությամբ պայմանավորված, նույն աղբյուրից. Հոդված՝ 35(3.1).
[234]Երեխայի իրավունքների մասին օրենք, հոդված՝ 26.

Միջազգային ստանդարտներ

Խտրականության բացառում և մատչելիության հավասարություն

Միջազգային իրավունքը, ինչպես սահմանված է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոնվենցիայում (ՀԻԿ), արգելում է խտրականությունը հաշմանդամության հիման վրա:[235] Հաշմանդամություն ունեցող անձանց համար կրթության ոլորտում խտրականության բացառման իրավունքը ներառում է առանձնացված չլինելու և ողջամիտ հարմարեցումներով ապահովված լինելու իրավունքը (ողջամիտ հարմարեցումների մասին մանրամասները տես ստորև), որպեսզի ապահովվի կրթության մատչելիությունը մյուսների հետ հավասար հիմունքներով այն համայնքներում, որտեղ նրանք ապրում են:[236] Խտրականությանը վերջ դնելու և հավասարություն ապահովելու համար, պետությունները պետք է ուսումնական հաստատություններում և համայնքներում վերացնեն իրավական, ֆիզիկական, հաղորդակցական, լեզվական, սոցիալական, ֆինանսական և վերաբերմունքային արգելքները:[237] Հակախտրականության պարտավորությունը վերաբերում է ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր դերակատարներին և կրթական համակարգի բոլոր մակարդակներին, այդ թվում՝ բարձրագույն կրթության և մասնագիտական ուսուցման:[238] Այս հակախտրական մոտեցումը պետք է բավարարվի ողջամիտ հարմարեցումների շնորհիվ:[239]

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կոմիտեն նաև հայտարարել է, որ կրթության իրավունքի իրացումը պահանջում է, որ մատչելի լինի ողջ կրթական համակարգը, ներառյալ՝ շենքերը, տեղեկատվությունը և հաղորդակցությունը, ուսումնական ծրագիրը, ուսումնական նյութերը, դասավանդման մեթոդները, գնահատման, լեզվական և աջակցության ծառայությունները, տրանսպորտը, ջուրը, հիգիենան և զուգարանները, դպրոցական ճաշարանները և հանգստի գոտիները: Կոմիտեն կոչ է անում պետություններին սահմանել հստակ ժամկետներ գոյություն ունեցող բոլոր կրթական միջավայրերը մատչելի դարձնելու համար և «արգելել ու պատժամիջոցներ սահմանել որևէ ապագա կրթական ենթակառուցվածքի կառուցման նկատմամբ, եթե այն չի ունենալու մատչելիություն»:[240]

---

[235] ՀԻԿ, հոդված՝ 2, and CRC, art. 2(1).

[236] ՀԻԿ, հոդված՝ 24(2a).

[237] ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ՝ 4, UN Doc. CRPD/C/GC/4 (2016), paras. 13, 37.

[238] ՀԻԿ, հոդվածներ՝ 4 և 24.

[239] ՀԻԿ. Հոդվածներ՝ 2, 5, և 24.

[240] Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ՝ 4, պար. 21.

Կրթության որակ

Մատչելիության պարտավորություններից բացի, կառավարությունները պետք է երաշխավորեն, որ կրթության ձևը և բովանդակությունը, ներառյալ՝ առարկայական ծրագրերի և դասավանդման մեթոդների, «որակյալ» են և համապատասխանում են նվազագույն չափորոշիչներին: Նպատակն է ապահովել, որ «ոչ մի երեխա չավարտի դպրոցն առանց պատրաստ լինելու դիմակայել մարտահրավերներին, որոնք նա կարող է հանդիպել կյանքում»:[241] Ըստ ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի, որակյալ կրթությունը «պահանջում է ուշադրություն կրթական միջավայրի, դասավանդման և ուսումնառության գործընթացների և նյութերի և ուսման արդյունքների որակի վրա»:[242] Համակարգը պետք է բարձր սպասումներ ձևավորի բոլոր սովորողների համար, առանց խտրականության:[243]

Պետությունների կողմից կրթության իրավունքի առումով իրենց պարտավորությունների կատարումը կախված է ոչ միայն այն հանգամանքից, թե քանի տարի են երեխաները դպրոց հաճախել, այլ նաև նրանից, թե արդյոք այն, ինչ նրանք սովորում են, կարող է հզորացնել նրանց իրենց կյանքում և օգնել իրենց բացառիկ անհատականության, տաղանդների ու ունակությունների ձևավորմանը:[244]

Համաձայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կրթության բնագավառում խտրականության դեմ կոնվենցիայի, երկրները պետք է «միևնույն մակարդակի բոլոր պետական ուսումնական հաստատություններում ապահովեն կրթական ստանդարտների, ինչպես նաև տրամադրվող կրթության որակի հետկապված պայմանների համարժեքությունը»:[245]

---

[241] ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալականն մշակութայինիրավունքներիմասին, Ընդհանուրմեկնաբանությունթիվ՝ 13, կրթությանիրավունք, UN Doc. E/C.12/1999/10 (1999), para. 6 c); ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ՝ 1, Կրթության նպատակները, UN Doc. CRC/GC/2001/1 (2001), պար. 9.

[242] Երեխայի ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ՝ 1, ՊԱՐ. 5.

[243] Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ՝ 4, պար. 12.

[244] ՄԱԿ-ի Գլխավորասամբլեա, Կրթությանիրավունքիհատուկզեկուցող, ՔիշորՍինքխ, Աշակերտների կրթական հասանելիության գնահատումնկրթությանիրավունքիիրականացումը, A/HRC/26/27, May 2, 2014, պար. 79 և 81; Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ՝ 1, պար. 9.

[245] ՄԱԿ-իկրթության, գիտությանև մշակույթիկազմակերպության (UNESCO) Կրթությանբնագավառում խտրականությանդեմկոնվենցիա, ընդունվելէ 14-ը դեկտեմբերի, 1960թ., Ուժիմեջ է մտելմայիսի 22, 1962, հոդված՝ 4 (բ), ծանուցումՀայաստանիկողմիցվավերացման մասին՝ 5-ը սեպտեմբերի, 1993թ.

Ներառական կրթություն

ՀԻԿ-ը ներառական կրթությունը համարում է «մարդու հիմնարար իրավունք բոլոր սովորողների համար»:[246] ՀԻԿ-ը կոչ է անում պետություններին ներառական կրթության միջոցով երաշխավորել հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքը բոլոր մակարդակներում, այդ թվում՝նախադպրոցական, տարրական, միջնակարգ և բարձրագույն կրթության, մասնագիտական ուսուցման և ցկյանս կրթության, արտադասարանային և սոցիալական գործունեության մեջ, առանց խտրականության և այլոց հետ հավասար պայմաններով: Ներառական կրթության համակարգը պետք է կենտրոնանա «բոլոր աշակերտներիլիարժեք և արդյունավետ մասնակցության, մատչելիության, հաճախելիության և առաջադիմության վրա», հատկապես նրանց, ովքեր դուրս են մնում կամ մեկուսացման վտանգի տակ են:[247]

Հաշմանդամությունունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն կրթության իրավունքի մասին իր թիվ 4 Ընդհանուր մեկնաբանությամբ սահմանում է, որ այն ինտեգրումը, որով հաշմանդամություն ունեցող երեխաները տեղակայվում են հանրակրթական դպրոցներում՝ առանց ուսումնական ծրագրում, դասավանդման և ուսուցման ռազմավարություններում փոփոխություններ կատարելու, չի կարող համարվել ներառում: Կոմիտեն մանրամասնել է ներառական կրթության հիմնական հատկանիշները, այդ թվում, ի շարս այլ կետերի, կրթական միջավայրերում տարանջատման բացառում՝ապահովելով ներառական լսարանային ուսուցում մատչելի ուսումնական միջավայրում՝ համապատասխան աջակցության առկայությամբ:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն նաև նշում է, որ հաշմանդամություն ունեցող երեխաներին տրամադրվող ցանկացած աջակցության միջոցներ պետք է «համապատասխանի ներառման նպատակին: Նրանք պետք է այնպես նախագծված լինեն, որպեսզի ամրապնդեն հաշմանդամություն ունեցող աշակերտների դասարանում մասնակցելու հնարավորությունները... այլ ոչ թե տարանջատեն նրանց»:[248]Կոմիտեն հայտարարել է, որ դպրոցները պետք է ապահովեն «համարժեք շարունակական անհատականացված աջակցություն» ուղղակիորեն հաշմանդամություն ունեցող աշակերտներին: Սրա տարրերից մեկը կարող է լինել որակավորված ուսուցման մեջ աջակցություն ցուցաբերող օգնականը,

---

[246] Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ՝ 4 (2016), պար. 9.

[247] ՀԻԿ, հոդված՝ 24(1), և ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԿՈՄԻՏԵ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ՝ **4,** ՊԱՐ**. 8.**

[248] Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ՝ 4, պար. 16, 33.

կամ համատեղ կամ մեկ առ մեկ հիմունքներով՝ կախված աշակերտի պահանջներից:[249]

Կրթության համակարգը պետք է անհատականացված կերպով արձագանքի կրթական կարիքներին, այլ ոչ թե ակնկալի, որ աշակերտը հարմարվի համակարգի հետ, և ապահովի «ճկուն ուսումնական ծրագրեր, դասավանդման և ուսուցման մեթոդներ, ինչը պահանջում է աջակցություն և ողջամիտ հարմարեցումներ այնպես, որ սովորողները կարողանան իրացնել իրենց ներուժը: Սովորողները պետք է նաև ստանան աջակցություն, որն անհրաժեշտ է նրանց արդյունավետ անցումը մասնագիտական և բարձրագույն կրթության և, ի վերջո, աշխատանքի, ապահովելու համար:[250] Ներառական կրթությունը վերաբերվում է ոչ միայն հաշմանդամություն ունեցող երեխաների կրթությանը, այլ այն պետք է օգտակար լինի բոլոր երեխաների համար և «հիմնական դեր պետք է ունենա բոլոր սովորողների համար բարձրորակ կրթություն ապահովելու և ավելի ներառական հասարակություններ զարգացնելու համար»:[251]

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն նաև հայտարարել է, որ «ներառական կրթությունն անհամատեղելի է ինստիտուցիոնալիզացման հետ» և որ «ինստիտուցիոնալ խնամքի ներքո գտնվող անձանց, բեռնաթափման գործընթացին սպասելու ընթացքում, պետք է, առանց հապաղման, հնարավորություն տրվի անցնել ներառական կրթության»:[252]

Ներառական կրթության իրավունքի ամրագրումը տեղի է ունեցել հաշմանդամությունը միջազգայնորեն «բժշկական մոդելի» տեսանկյունից դիտարկելու մոտեցումից «սոցիալական մոդելի» անցման շրջանակներում: Մինչև վերջերս, հաշմանդամությունը համարվում էր արատ, որն անհրաժեշտ է վերացնել: Հաշմանդամությունն այսօր դիտվում է որպես փոխազդեցություն անհատների և նրանց միջավայրի միջև, և շեշտը դրվում է միջավայրի խոչընդոտները և խտրական վերաբերմունքի դրսևորումները հայտնաբերելու և վերացնելու վրա:[253]

---

[249] Նույն աղբյուրից, պար. 32.

[250] Նույն աղբյուրից, պար.12. ՅՈՒՆԻՍԵՖ-ը գտել է, որ ներառումը «պահանջում է բոլոր սովորողների շրջանում արձագանքել բազմաբնույթ կարիքների, ... և նվազեցնել բացառումը կրթական համակարգի ներսում և դրանից դուրս», ՅՈՒՆԻՍԵՖ, «Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթական իրավունքը: Ներառական կրթության իրավունքների վրա հիմնված մոտեցում» 2012թ., http://www.inclusive-education.org/system/files/publicationsdocuments/UNICEF_Right%20Children%20Disabilities_En_WebACCESS.pdf (accessed July 2, 2015).

[251] ՅՈՒՆԻՍԵՖ, «Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության իրավունքը»

[252] Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ՝ 4, պար. 64.

[253] ՅՈՒՆԻՍԵՖ, «Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության իրավունքը»

Չնայած նրան, որ ՀԻԿ-ը ջատագովում է «լիարժեք ներառման նպատակի» իրականացման օգտին, այն նաև նշում է, որ առաջին հերթին պետք է հաշվի առնվեն «երեխայի լավագույն շահերը»:[254] Որոշ հանգամանքներում, օրինակ, երբ ներառական կրթության համակարգը դեռևս լիարժեք չի գործում կամ անհրաժեշտ հարմարեցումներ չեն ապահովվում ողջամիտ կերպով՝ հատուկ կրթության միջավայրում ամբողջական կամ կես դրույքով ուսուցումը կարող է բխել երեխայի լավագույն շահերից: ՀԻԿ-ը կարևորում է հաշմանդամություն ունեցող երեխաների ձայնի և ընտրության իրավունքը:[255] Կարևոր է, որ կառավարությունը ջանքեր գործադրի, որպեսզի ապահովի հանրակրթության ներառականությունը և մատչելիությունը հաշմանդամություն ունեցող երեխաների համար, և հասանելի դարձնի հատուկ կրթությունն այնպես, որ հաշմանդամություն ունեցող երեխաներն ունենան իմաստավորված ընտրության հնարավորություն:

Ողջամիտ հարմարեցումներ

Ներառական կրթության իրավունքի իրացման համար՝ ՀԻԿ-ը պետություններից պահանջում է ապահովել «ողջամիտ հարմարեցումներ», ինչը սահմանվում է որպես «անհրաժեշտ և համապատասխան փոփոխություններ և կարգավորումներ», որոնք հաշմանդամություն ունեցող անձանց թույլ կտան օգտվել մարդու բոլոր իրավունքներից և ազատություններից մյուսների հետ հավասար հիմունքներով:[256]Ողջամիտ հարմարեցումների մերժումը մարդկանց հաշմանդամության հիման վրա՝ համարվում է խտրականություն:[257]

Ողջամիտ հարմարեցումներ ապահովելո ւկառավարության պարտավորությունը ենթակա է կատարման այն պահից սկսած, երբ անհատին դա անհրաժեշտ է տվյալ իրավիճակում:[258] Տրամադրված ցանկացած աջակցության միջոցներ պետք է համապատասխանեն այդ ներառման նպատակին և պետք է «ամրապնդեն հաշմանդամություն ունեցող աշակերտների հնարավորությունները դասարանում և դպրոցական գործունեության անցուդարձին իրենց հասակակիցների հետ միասին մասնակցելու համար, այլ ոչ թե տարանջատեն նրանց»:[259] Անհատական մոտեցումների նպատակը պետք է լինի «յուրաքանչյուր աշակերտի ապրելու,

---

[254] ՀԻԿ, հոդված՝ 7(2).

[255]Նույնաղբյուրից, հոդված՝ 7(3).

[256]Նույնաղբյուրից, հոդված՝ 2(4).

[257]Նույնաղբյուրից, հոդված՝ 2(3).

[258]ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ՝ 2, Հասանելիություն, UN Doc. CRPD/C/GC/2 (2014), պար. 26.

[259]Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ՝ 4, պար. 33.

սովորելու և ինքնուրույն գործելու հնարավորություն տալը համապատասխան աջակցությամբ՝ հաշվի առնելով անհատական կարողությունները»:[260]

«Ողջամտությունը» ենթադրում է հարմարեցման համապատասխանության և արդյունավետության և խտրականության դեմ պայքարից ակնկալվող նպատակի վերլուծություն: Չնայած նրան, որ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն գիտակցում է, որ ռեսուրսների և ֆինանսական հնարավորությունները պետք է հաշվի առնել այն ժամանակ, երբ գնահատվում է, թե արդյոք որոշակի հարմարեցումների տրամադրումը անհամաչափ բեռ կարող է հանդիսանալ, ռեսուրսների բացակայությունը և ֆինանսական ճգնաժամերի օգտագործումը որպես ներառական կրթության ուղղությամբ առաջընթաց չարձանագրելու արդարացում, խախտում է կրթության իրավունքը: Հարմարեցումների առկայությունը պետք է հաշվի առնվի կրթական համակարգում առկա կրթական ռեսուրսների ավելի լայն շրջանակի տեսանկյունից, և չսահմանափակվի տվյալ ուսումնական հաստատությունում առկա ռեսուրսներով; ռեսուրսների փոխանցումը համակարգի շրջանակներում պետք է հնարավոր լինի:[261]

ՀԻԿ-ը պահանջում է, որ պետությունները կրթությունն ապահովեն «անհատի համար առավել համապատասխան լեզուներով և եղանակներով, ինչպես նաև հաղորդակցման միջոցներով»[262]և խթանեն օժանդակ սարքերի առկայությանը և օգտագործումը:[263]Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն նշեց, որ ողջամիտ հարմարեցումների համար չի գործում«մեկ չափս բոլորի համար» բանաձևը, և նույն հաշմանդամությունն ունեցող տարբեր աշակերտներ կարող են բոլորովին այլ հարմարեցումների կարիք ունենալ:

Հարմարեցումները կարող են ներառել դասարանի գտնվելու վայրի փոփոխությունը, հաղորդակցման և ուսումնական նյութերի այլընտրանքային/մատչելի տարբերակների ապահովումը, աշակերտներին նոթագրեր, կամ լեզուների թարգմանիչ սարքերի տրամադրումը կամ ուսուցման և գնահատման մեջ օժանդակող տեխնոլոգիաների օգտագործման թույլտվությունը: Ոչ նյութական հարմարեցումների տրամադրումը, ինչպիսիք են աշակերտներին ավելի շատ ժամանակի տրամադրումը, ֆոնային աղմուկի մակարդակի նվազեցումը, զգայական ծանրաբեռնվածության

---

[260]ՄԱԿ Մարդու իրավունքների խորհուրդ, ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնակատարի գրասենյակի զեկույց, Թեմատիկ ուսումնասիրություն Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքը, A/HRC/25/29, 18-ը դեկտեմբերի, 2013թ.

[261]Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ՝ 27 և 29.

[262] ՀԻԿ, հոդված՝ 24(3c).

[263]Նույնաղբյուրից, հոդված՝ 26(3).

զգացողությունը, գնահատման այլընտրանքային մեթոդները կամ ուսումնական ծրագրի մի տարրի փոխարինումը այլընտրանքային տարրով, նույնպես պետք է հաշվի առնվեն: Աջակցությունը կարող է նաև ներառել որակավորված ուսուցման աջակցության օգնական, կամ համատեղ կամ մեկ առ մեկ հիմունքներով՝ կախված ուսանողիպահանջներից:[264]

Ողջամիտ հարմարեցումների ապահովման կարևոր մասերից է նաև ուսուցիչների, դպրոցների վարչական աշխատողների և կրթության ոլորտի պաշտոնյաների վերապատրաստումըանխտրականության և հաշմանդամություն ունեցող անձանց օգնելու մեթոդների գծով:[265]

---

[264] ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԿՈՄԻՏԵ, ԹԻՎ **4** ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՊԱՐ. **29 AND 32.**

[265] ՀԻԿ, հոդված՝ 24(4).

VIII. Կառավարության և դոնորների արձագանքը

Բեռնաթափում

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսական օժանդակությամբ, ՅՈՒՆԻՍԵՖ-ն աջակցում է կառավարությանը մի ծրագրի շրջանակներում, որի նպատակն է հաստատություններում գտնվող երեխաների թիվը 50 տոկոսով նվազեցնել ողջ երկրում: Կառավարության հետ կնքված փոխըմբռնման հուշագիրը կոչ է անում տարբեր նախարարությունների վերահսկողության տակ գտնվող 22 հաստատություններ, այդ թվում մանկատներ, հատուկ և գիշերօթիկ դպրոցներ, վերափոխել համայնքահեն ծառայություններ մատուցելու նպատակով:

Ծրագիրը ներառում է `1) խնամատարության և որդեգրման, սոցիալական աշխատողների և դեպք վարողների համակարգերի վերանայմանն ուղղված իրավական բարեփոխումներ, 2) հաստատություններում երեխաների տեղակայման կանխարգելում, 3) հաստատությունների վերափոխում սոցիալական աջակցություն, հետդպրոցական ծառայություններ և ցերեկային խնամք տրամադրող կենտրոնների, 4) խնամատար ընտանիքների թվի ավելացում, 5) աջակցություն կենսաբանական ընտանիքներին՝ օգնելու համար իրենց երեխաների մասին հոգ տանել, 6) ներառական կրթություն, 7) հատուկ դպրոցների փոխակերպում տարածաշրջանային մանկավարժական-հոգեբանական աջակցության կենտրոնների, որոնք կաջակցեն երեխաներին և ընտանիքներին ու կուղղորդեն և կաջակցեն առանձին դպրոցներին՝ ներառական կրթություն իրականացնելու գործում:[266] ՅՈՒՆԻՍԵՖ-ի նախագիծը ենթադրում է նմանատիպ 10 կենտրոններ, ինչպես նաև հինգից-ութ սոցիալական աջակցության համայնքային կենտրոններ, որոնք կապահովեն հետդպրոցական խնամք և այլ համայնքային ծառայություններ:[267] Ըստ Կրթության և գիտության նախարարության, տասնհինգ հատուկ դպրոցներ պետք է փոխակերպվեն մինչև 2022 թվականը, թեև դրանցից հինգը չեն փոխակերպվելու, այլ գործելու են որպես հատուկ դպրոցներ:[268] Այդ դպրոցների շարքում են՝ տեսողական հաշմանդամություն ունեցող երեխաների հատուկ դպրոցը և ևս մեկ դպրոց՝ լսողական հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Ինչպես նշվել է վերը, կփոխակերպվեն երեք ընդհանրացված մանկատները, իսկ մասնագիտացված մանկատները՝ ոչ: Այդ համակարգում

---

[266] Human Rights Watch, հարցազրույց Տանյա Ռադոչայի, Արտակ Շաքարյանին Ջորջ Աբաջյանի հետ, ՅՈՒՆԻՍԵՖ, 12-ը ապրիլի, 2016թ.Մանկավարժական-հոգեբանական աջակցության կենտրոնների դերը մասնավորեցվում է Կրթության մասին օրենքում, հոդված 17(1):

[267] Նույնաղբյուրից

[268] Գրություն Ն. Հարությունյանից, 14-ը դեկտեմբերի, 2016թ.

ներգրավված կլինեն նաև տեղական համայնքներում գործող մասնագիտացված սոցիալական աշխատողներ, ովքեր կգնահատեն յուրաքանչյուր ընտանիքի ակտիվները, խնդիրները և կարիքները և որոշումներ կկայացնեն անհրաժեշտ աջակցության, այդ թվում՝ դրամական և բնաիրային ծառայությունների վերաբերյալ. աջակցությունը պետք է լինի հնարավորինս անհատականացված:

Ծրագիրը ներառում է նաև Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների՝ տեղական մակարդակում երեխաներին հաստատություններում տեղակայելու կամ այլընտրանքային խնամքի հանձնելու վերաբերյալ առաջարկություններ տալու համար պատասխանատու մարմինների, մանդատի վերանայման հարցը: Ներկայումս, այդ հանձնաժողովներն ամբողջությամբ համալրված են համայնքի անդամներով, ովքեր աշխատում են հասարակական հիմունքներով՝ առանց որևէ մասնագիտական պատրաստվածության: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների համար նախատեսվող ուղղորդման կարգի ներքո, Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներից կպահանջվի երեխաների տեղակայման բոլոր տարբերակները դիտարկել առաջնահերթության կարգով՝ կենսաբանական ընտանիք, որպես խնամակալ հանդես եկող ազգական, որդեգրում, խնամատար ընտանիք, խնամքի փոքր խմբեր, խնամքի հաստատություններ:[269] Ներկայումս, խնամքի և որդեգրման մեխանիզմները թերզարգացած են՝ խնամքի հաստատությունները որպես ուղղորդման միակ տարբերակ դեպքերի ճնշող մեծամասնության դեպքում, որոնց պարագայում կենսաբանական ընտանիքում մնալը կամ այնտեղ վերադառնալը հնարավոր չէ կամ չի բխում երեխայի լավագույն շահերից:

Կառավարությունը 2016 թվականին սկսեց Սյունիքի մարզում՝ Գորիսում և Սիսիանում գտնվող երկու հատուկ դպրոցները մանկավարժական-հոգեբանական աջակցության կենտրոնների փոխակերպելու գործընթացը՝ 2016 թվականի կեսերին ընտանիքներ տեղափոխելով ընդհանուր թվով 77 երեխաների:[270] Որպես հաջորդ քայլ, կառավարությունը 2017 թվականին պլանավորում է փոխակերպել երկու հատուկ դպրոցներ, մեկ գիշերօթիկ դպրոց, ինչպես նաև Լոռու մարզի՝ հաշմանդամություն ունեցող երեխաների գնահատման կենտրոնը, իսկ այնտեղ գտնվող մանկատունը՝ 2018 թվականին: Կառավարությունը 2016 թվականի ավարտին նաև հայտարարել է, որ 2017 թվականին պատրաստվում է փոխակերպել երկրում մնացած 6 գիշերօթիկ հաստատությունները, չնայած նրան, որ չի մասնավորեցրել, թե ինչ մեխանիզմներով է ապահովվելու ընտանիքների հետ բարեհաջող վերամիավորումը կամ

---

[269] Նույնաղբյուրից

[270] Human Rights Watch, հարցազրույց Արտակ Շաքարյանի հետ, 5-ը դեկտեմբերի, 2016թ., և գրություն Ն. Հարությունյանից, 14-ը դեկտեմբերի, 2016թ.

ինստիտուցիոնալ խնամքի այլընտրանքները կարճ ժամկետներում՝ առանց լիարժեքորեն մշակված այլընտրանքային խնամքի համակարգերի։[271]

Բացի այդ, վերջին տարիներին Հայաստանի տարբեր հատվածներում եղել են մի շարք ծրագրեր՝ ուղղված խնամքի հաստատություններից երեխաներին ընտանիքներ վերադարձնելուն:[272] Ըստ Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպության ներկայացուցիչ Աիդա Մուրադյանի, 2008-ից 2013 թվականների ընթացքում խնամքի հաստատություններից դուրս է գրվել մոտ 200 երեխա, թեև ոմանք վերադարձել կամ տեղակայվել են այլ հաստատություններում, ինչպես նշվել է վերը։ «Փրկեք երեխաներին» կազմակերպությունը 2015 թվականին աջակցել է 7-ից 15 տարեկան երեխաների՝ իրենց ընտանիքների հետ վերամիավորման 47 դեպքի, վեց տարբեր մարզերում:[273] Գյումրիում և Վանաձորում «Առավոտ» կազմակերպությունն ուղղակի աջակցություն է տրամադրում ընտանիքներին՝ օգնելու համար երեխաներին վերադառնալ իրենց ընտանիքները կամ կանխելու համար երեխաների տեղակայումը հաստատություններում։ «Առավոտն» օգնում է երեխաներին վերադառնալ իրենց ընտանիքներ, այդ թվում 52 ընտանիքներ 2016 թվականին, և անցումային շրջանում աջակցելու նպատակով ընտանիքներին մեկ տարի ժամկետով տրամադրում է նյութական օգնություն:[274]

ՀՀ կառավարության երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագիրը որպես գերակայություններ է ներառում սոցիալական պաշտպանությունը և կրթությունը, և նպատակ ունի անդրադառնալ այս զեկույցում բարձրացված որոշ մտահոգությունների և առաջարկությունների, ներառյալ այն, որ կառավարությունը պետք է՝ ապահովի յուրաքանչյուր երեխայի խնամքի ու դաստիարակության կազմակերպումը ընտանիքում, ընդլայնի և զարգացնի այլընտրանքային ծառայությունները կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների համար, և ապահովի երեխաների՝ այդ թվում հաշմանդամություն ունեցող երեխաների ներառումը հասարակության մեջ՝ որակյալ ներառական կրթության միջոցով: Ակնկալվող արդյունքներից մեկն այն է, որ «հաստատություններում գտնվող երեխաների [ա]ռնվազն 70 տոկոսը կտեղափոխվի ընտանիքներ»: Ըստ ռազմավարության ժամանակացույցի, «[մ]իջոցառումների

---

[271] Human Rights Watch, հարցազրույց Արտակ Շաքարյանի հետ, 5-ը դեկտեմբերի, 2016թ.

[272] ՅՈՒՆԻՍԵՖ, «Երեխաների այլընտրանքային խնամքի ծառայություններ Հայաստանում՝ծախսատար խնամքի հաստատություններն համայնքահենծառայություններ», հուլիս 2010թ., http://www.unicef.org/armenia/Costing_Residential_Care_Institutions_in_Armenia_report_eng.pdf (այցը՝8-ը նոյեմբերի, 2016թ.)

[273] Human Rights Watch, հարցազրույց Աիդա Մուրադյանի հետ, 14-ը ապրիլի, 2016թ.

[274] Human Rights Watch, հարցազրույց «Առավոտ» ՀԿ նախագահ Մարգարիտա Շահվերդյանի հետ, Վանաձոր, 29-ը մայիսի, 2016թ., եԱրտակ Շաքարյանի հետ, 5-ը դեկտեմբերի, 2016թ.

իրականացման ծրագիրը/ժամանակացույցը, որի նպատակն է աջակցել հաստատություններից ընտանիքներ վերադարձած երեխաներին» կընդունվի 2017 թվականին:[275] Սա շատ կարևոր քայլ է, բայց մի միջոցառում է, որը կառավարությունը կարող էր կարևորել 2016թ. և 2017թ. Սյունիքի և Լոռու մարզերում արդեն իսկ ընթացող բեռնաթափման հետ համատեղ: Հայաստանում երեխաների իրավունքներով զբաղվող փորձագետները տեղեկացրել են, որ ՀՀ կառավարությունը հնարավորություն չի տվել ռազմավարության թափանցիկ, բաց հրապարակային քննարկման և մեկնաբանման համար, փոխարենը, սեղմ ժամկետներում ներկայացրել է մի քանի փոքր խմբերի և փորձագետների դիտարկմանը:[276]

Ֆինանսական համահավասարեցում

Ինչպես արձանագրված է Human Rights Watch-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի և այլոց կողմից, հիմնական մարտահրավերները, որոնց հետ բախվում են ընտանիքները Հայաստանում և որոնք դրդում են երեխաներին հաստատություններում տեղակայելու որոշումների կայացմանը, ներառում են՝ եկամուտը, կացարանի խնդիրը և զործազրկությունը, ինչպես նաև հաշմանդամությունը: ՅՈՒՆԻՍԵՖ-ը պնդում է, որ Հայաստանում երեխաներին հաստատություններում պահելու համար հատկացվող ֆինանսական աջակցությունը, որը ներկայումս մեկ տարվա համար, մեկ երեխայի հաշվարկով կազմում է $3000-ից մինչև $5000 ԱՄՆ դոլար, կարող է վերաբաշխվել և ուղղորդվել համայնքային ծառայություններին և ուղղակի աջակցության տեսքով տրամադրվել ընտանիքներին, և որ նմանատիպ աջակցությունը երկարաժամկետ հեռանկարում պահանջում է ավելի քիչ բյուջետային ծախսեր:[277]

ՅՈՒՆԻՍԵՖ-ի ուսումնասիրությունը, որը վերլուծում է հաստատությունների ծախսերը ի հակադրություն Հայաստանում համայնքահեն ծառայությունների, պարզել է, որ «խնամքի հաստատությունների ծառայությունները շատ թանկ են»: Զեկույցը նաև հայտնաբերել է, որ «երեխաների տեղափոխումը ընտանեկան խնամքի անպայմանորեն լրացուցիչ բեռի չի հանգեցնում պետական բյուջեի համար» և որ «ընդհակառակը, կախված ընտրված քաղաքականությունից, խնայողությունները կարող են բավականին շոշափելի լինել, անգամ այն դեպքում, եթե բարեփոխման ծախսերը ներառեն փակված խնամքի հաստատությունների հավելյալ

---

[275] «Երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագիր»,հաստատված ՀՀ կառավարության N.131 որոշմամբ, 14-ը հունվարի, 2016թ.«Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին», Human Rights Watch-ի շտեմարանում:

[276] Human Rights Watch, հարցազրույց Արսեն Ստեփանյանիհետ, 6-ը դեկտեմբերի, 2016թ.

[277] Human Rights Watch, հարցազրույց Տանյա Ռադոչայի, Արտակ Շաքարյանիև Ջորջ Աբաջյանի հետ, ՅՈՒՆԻՍԵՖ, 12-ը ապրիլի, 2016թ.

աշխատակիցներին աշխատատեղերով ապահովումը և հաստատություններից դուրս գրված երեխաների ու նրանց ընտանիքների համար լրացուցիչ սոցիալական աջակցության և խնամքի ծառայությունների տրամադրումը»:[278]

Ինչպես նկարագրված է վերը, կախված իրենց սոցիալական կարիքների մակարդակից, անհատները և ընտանիքները կարող են ստանալ դրամական և այլ նպաստներ: Համաձայն պետական նպաստների մասին օրենքի, պաշտոնապես հաշմանդամության խումբ ունեցող երեխաները ստանում են ամսական 18,000 դրամ ($ 37) նպաստ՝ անկախ կարիքից: Հաշմանդամների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող երեք ՀԿ-ների կողմից 2016թ. հոկտեմբերին անցկացված՝ հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների հետ ֆոկուս խմբային հարցազրույցների ընթացքում ծնողները հայտնել են, որ նրանք, ընտրություն ունենալու դեպքում, նպաստի փոխարեն կնախընտրեին ստանալ համապատասխան ծառայություններ, քանի որ այդ փոքր գումարով հնարավոր չէ հոգալ երեխայի հիմնական պահանջները կամ կարիքները:[279]

Համայնքահեն ծառայություններ

Save The Children կազմակերպությունը նույնպես հաղորդում է, որ Հայաստանում երեխաների պաշտպանության առավել սուր հարցերը ներառում են «համայնքների մեծ մասում անապահով երեխաների համար որևէ տեսակի սոցիալական ծառայությունների բացակայությունը», և «բացահայտված կարիքների հիման վրա ընտանիքի աջակցության տարբերակված տեսակների» բացակայությունը:[280] Մի շարք ՀԿ-ներ աշխատում են ողջ երկրում աջակցել շահառուների փոքր խմբերի, իսկ կառավարությունը մի շարք քայլեր է ձեռնարկել համայնքահեն ծառայություններ իրականացնելու ուղղությամբ, սակայն այդ նախաձեռնությունները բավարար չեն կարիքավոր բոլոր ընտանիքներին հասնելու համար, մասնավորապես բեռնաթափման համատեքստում, երբ երեխաները դուրս են գրվում հաստատություններից և վերադարձվում ընտանիքներ, որոնք կարող են դեռևս ծառացած լինել այն նույն մարտահրավերների առաջ, որոնք հիմք են հանդիսացել իրենց երեխային հաստատություն ուղարկելու նախնական որոշման համար:

---

[278] ՅՈՒՆԻՍԵՖ, «Երեխաների այլընտրանքային խնամքի ծառայություններ Հայաստանում՝ ծախսատար խնամքի հաստատություններև համայնքահենծառայություններ»

[279] Ֆոկուս խմբային քննարկում 17-ը հոկտեմբերի, 2016թ., ինչպես մեջբերվում է՝ Փրկեք երեխաներին հայաստանյան գրասենյակի կողմից հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներով զբաղվող ՄԱԿ-ի հատուկ հանձնակատարին արված առաջարկության մեջ, 28-ը հոկտեմբերի, 2016թ. Human Rights Watch-ի շտեմարան:

[280] Փրկեք երեխաներին հայաստանյան գրասենյակի կողմից հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներով զբաղվող ՄԱԿ-ի հատուկ հանձնակատարին արված առաջարկության մեջ, 28-ը հոկտեմբերի, 2016թ.

Հայաստանի ողջ տարածքում գործում են տասնյակ հասարակական կազմակերպություններ, որոնք աջակցում են հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին, ինչպես նաև կազմակերպություններ, որոնք ընտանիքներին տրամադրում են այլ ծառայություններ և շատ դեպքերում էական դեր են խաղում ընտանիքներին աջակցելու հարցում՝ կանխելու համար երեխաների տեղակայումը հաստատություններում: Save the Children կազմակերպությունն ընդգծել է, որ այս կազմակերպությունները հիմնականում կախված են միջազգային ֆինանսավորումից և որ նրանք կարող են հանդիպել ֆինանսավորման ընդհատման և դրանով պայմանավորված՝ իրենց շահառուներին շարունակաբար և արդյունավետորեն ծառայություններ մատուցելու հնարավորության ընդհատումների: Հասարակական կազմակերպությունների մասին օրենքում վերջերս կատարված օրենսդրական փոփոխությունը, որը ծառայություն մատուցող կազմակերպություններին հնարավորություն է տալիս մատուցել վճարովի ծառայություններ, կարող է բարելավել ՀԿ-ների կողմից մատուցվող ծառայությունների արդյունավետությունը և շարունակականությունը:[281]

Վերջին տարիներին կառավարության մարմինների շրջանում եղել են որոշ դրական քայլեր համայնքներում աջակցության ծառայությունների զարգացման և ընդլայնման ուղղությամբ, թեև դրանք դեռևս բավարար չեն հոգալու համար այն ընտանիքների կարիքները, ովքեր կկարողանային օգուտ քաղել դրանցից, մասնավորապես հաշմանդամություն ունեցող երեխաների ընտանիքները: Օրինակ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը երեխաների համար կենտրոն է հիմնել Գյումրիում: Ըստ կենտրոնի տնօրեն Մարինե Ղալաչյանի. «Մեր հիմնական նպատակն է կանխել երեխաներին մանկատներ և բնակելի դպրոցներ ուղարկելը»: Կենտրոնի սոցիալական աշխատողներից յուրաքանչյուրը մինչև երկու-երեք տարի ժամկետով աշխատում է կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաներ ունեցող 15 ընտանիքների հետ, այդ թվում աղքատության մեջ գտնվող, առողջապահական խնդիրներ և հոգեբանական աջակցության կարիք ունեցող ընտանիքների հետ: Կենտրոնը բացահայտում է ընտանիքներին և համագործակցում պետական և հասարակական կազմակերպությունների հետ, որպեսզի ապահովի աշխատանքի տեղավորման, սննդի, հագուստի, մասնագիտական վերապատրաստման և աշխատանքային հմտությունների ծառայություններ: Կենտրոնը տրամադրում է նաև հետդպրոցական խնամք 100 երեխաների համար և ապահովում փոխադրամիջոց նրանցից 50-ի համար:[282]

---

[281] Նույնաղբյուրից, ՀՀ օրենքը հասարակական կազմակերպությունների մասին, ՀՕ-268, 4-ը դեկտեմբերի, 2001թ.

[282] Human Rights Watch, հարցազրույց Մարինե Ղալաչյանի հետ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության Երեխաների աջակցության կենտրոնի տնօրեն, Գյումրի, 27-ը մայիսի, 2016թ., և Human Rights Watch, հեռախոսային հարցազրույց Ղալաչյանի հետ, 16-ը դեկտեմբերի, 2016թ.

Այլընտրանքային խնամք, ներառյալ տեղավորումը ազգականի մոտ, խնամատարությունը և որդեգրումը

Երեխայի խնամքի այլընտրանքային ծառայությունները Հայաստանում դեռևս թերզարգացած են, նույնիսկ այն դեպքում, երբ կառավարությունը պատրաստվում է խնամքի հաստատությունները համայնքահեն ծառայություններ մատուցող կենտրոնների փոխակերպել, որոշ դեպքերում շատ արագ և, ենթադրաբար, առաջնահերթությունը տալով ընտանիքի վրա հիմնված խնամքին: Երեխաներին վնասելու ռիսկ կա, եթե կառավարությունը երեխաներին խնամքի հաստատություններից դուրս գրի, առանց բավարար քանակով և որակյալ այլընտրանքային խնամքի լուծումներ ապահովելու: Ներկայումս ամբողջ Հայաստանում ընդհանուր առմամբ 25 խնամատար ընտանիքներ կան: Ըստ Save the Children կազմակերպության, որն ակտիվորեն ներգրավված է եղել Հայաստանում այլընտրանքային խնամքի ծառայությունների ավելի կուռ համակարգի զարգացման մեջ, երեխաներին այլընտրանքային խնամքի հանձնելու համար կան մի շարք խոչընդոտներ: Ներկայումս, պետական բյուջեն ֆինանսական աջակցություն է տրամադրում տարեկան ընդամենը 25 ընտանիքների համար: Քանի որ սա ներառում է այն ընտանիքներին, որոնք արդեն ծառայում են որպես խնամատար ծնողներ, ներկայումս ավելի մեծ թվով խնամատար ընտանիքների աջակցելու համար բյուջետային միջոցներ չկան:

Բացի այդ, համաձայն ՀՀ օրենքի, որպեսզի երեխան հանձնվի խնամատարության, երեխայի ծնողները պետք է հրաժարվեն իրենց ծնողական իրավունքներից, ինչը խոչընդոտում է շատ երեխաների հաստատություններից այլընտրանքային խնամքի տեղափոխվելը կամ երեխաներին, որպես ժամանակավոր լուծում, խնամատար ընտանիքի հանձնելու հնարավորությունները, հաստատություն ուղարկելու փոխարեն:[283] Մանկատան մի տնօրեն հաստատել է այս հանգամանքը Human Rights Watch-ի համար. «Մեր մանկատներում խնամատար ընտանիքներին հանձնելու ենթակա շատ երեխաներ չկան, քանի որ նրանց ծնողները չեն հրաժարվել իրենց ծնողական իրավունքներից»:[284] Ընտանեկան օրենսգրքում նախատեսվող փոփոխությունները, որոնք այժմ քննարկվում են մի շարք նախարարությունների կողմից, կվերացնեն երեխաներին խնամատար ընտանիքներում տեղաբաշխելու

[283] Human Rights Watch, հեռախոսային հարցազրույց Արսեն Ստեփանյանի հետ, 2-ը նոյեմբերի, 2016թ.Կառավարությունը Հայաստանում նախաձեռնել էր 10-ամյա խնամատարության պիլոտային ծրագիր, 13 խնամատար ընտանիքների հետ, սակայն ծրագիրը չի շարունակվել ֆինանսավորման բացակայության պատճառով:
[284] Human Rights Watch, հարցազրույց Լիանա Կարապետյանի հետ, 31-ը մայիսի, 2016թ.

համար ծնողների կողմից իրենց ծնողական իրավունքներից հրաժարվելու պահանջը:[285]

Որդեգրման հնարավորությունները նույնպես սահմանափակ են, կրկին մասամբ պայմանավորված այն հանգամանքով, որ մանկատներում գտնվող երեխաների մեծ մասն ունեն առնվազն մեկ ծնող, և այդ ծնողները չեն հրաժարվել իրենց ծնողական իրավունքներից: Ըստ World Vision-ի. «Մենք ունենք 260 ընտանիքների ցանկ, ովքեր ցանկանում են երեխա որդեգրել»:[286] Մարի Իզմիրլյանի անվան մանկատան տնօրենն ասել է, որ 2016 թվականին Հայաստանում մանկատնից երեխա է որդեգրել մեկ ընտանիք: Երեխան տեղաշարժվում է անվասայլակով է և այլ հաշմանդամություն չունի:[287] 2015 թվականին մանկատնից որդեգրվել է 2 երեխա:

Փորձագետներն ու պաշտոնյաները բազմիցս ընդունել են, որ շատ քիչ ուշադրություն է դարձվում հաշմանդամություն ունեցող երեխաների համար հաստատությունների այլընտրանքներ բացահայտելու ուղղությամբ: Երեխաների պաշտպանության կառույցի մի պաշտոնյա Human Rights Watch-ին ասել է. «Հաշմանդամություն ունեցող երեխաների համար ավելի դժվար է խնամատար ընտանիքներ գտնել: Խնամատարություն իրականացնող ծնողներն իրենք են սահմանում այն չափանիշները, որոնցով նրանք ցանկանում են ընդունել երեխային, ինչպես, օրինակ՝ տարիքը և սեռը: Նրանք հազվադեպ են հաշմանդամություն ունեցող երեխաներ խնդրում»:[288] Մինչև 6 տարեկան երեխաների համար նախատեսված՝ Նորքի մանկատան տնօրենը բացատրեց. «Որդեգրված երեխաների թիվը կախված է մանկատանը մեր ունեցած երեխաների տեսակից: Որքան ավելի շատ են առողջ [հաշմանդամություն չունեցող]երեխաները, այնքան ավելի շատ կլինեն որդեգրումները: Մենք ընդամենը երկու դեպք ունենք, երբ որդեգրվել են անառողջ երեխաներ»: Երկու որդեգրումներն էլ միջազգային են եղել:[289] «Մենք չենք ունեցել որևէ խնամատար ընտանիք, քանի որ երեխաները շատ առանձնահատուկ կարիքներ ունեն:[290]» Ըստ Խարբերդի մանկատան բժշկի. «Ես չեմ կարծում, որ մենք կարող ենք գտնել ընտանիքներ, ովքեր հոգ կտանեն հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Հաշվի առնելով երեխաների առողջական վիճակը՝ ես վստահ չեմ, որ ինչ-որ մեկը կարող է հոգ տանել այդպիսի երեխաների համար»:[291]

---

[285] Human Rights Watch, հեռախոսային հարցազրույց Արսեն Ստեփանյանի հետ, 2-ը նոյեմբերի, 2016թ.
[286] Human Rights Watch, հարցազրույց Աիդա Մուրադյանի հետ, 14-ը ապրիլի, 2016թ.
[287] Human Rights Watch, հարցազրույց Հասմիկ Մկրտչյանի հետ, 4-ը դեկտեմբերի, 2016թ.
[288] Human Rights Watch, հարցազրույց Աննա Ոսկանյանի հետ, Երեխաների իրավունքների պաշտպանության բաժին, Կապան, 15-ը ապրիլի, 2016թ.
[289] Human Rights Watch, հարցազրույց Լիանա Կարապետյանի հետ, 31-ը մայիսի, 2016թ.
[290] Human Rights Watch, հարցազրույցներՀասմիկ Մկրտչյանի հետ, մայիսի 25 և 26, 2016թ.
[291] Human Rights Watch, հարցազրույց Լիանա Սարգսյանի հետ, 25-ը մայիսի, 2016թ.

Միևնույն ժամանակ, պաշտոնյաները, այդ թվում մանկատների տնօրենները, ընդունում են, որ այլընտրանքային խնամքը պետք է առաջնահերթություն ունենա հաստատությունների նկատմամբ, հատկապես այն պահերին, երբ երեխան այլընտրանքային խնամքի կարիք ունի: Նորքի մանկատան տնօրեն, Լիանա Կարապետյանն ասել է. «Ես կցանկանայի, որ երեխաներն անմիջապես հանձնվեին խնամատար ընտանիք, այլ ոչ թե նախ տեղափոխվեին հաստատություններ և ապա՝ խնամատար ընտանիք: Սա ցավ է պատճառում ընտանիքին»:[292]

Ներառական կրթություն

Կառավարությունը պաշտոնապես պարտավորվել է ստեղծել լիարժեք ներառական կրթության համակարգ, որով երկրի բոլոր հանրակրթական դպրոցները մինչև 2022թ. կդառնան ներառական: Կրթական համակարգի իրավական կարգավորման դաշտի 2014թ. բարեփոխումները հաշմանդամություն ունեցող բոլոր երեխաների համար ներառական կրթություն ստանալու հիմք են ստեղծել:[293] Կառավարությունը նաև մշակել է կրթության զարգացման 2016-2025թթ. պետական ծրագիրը, որն այս զեկույցի գրման պահին դրված էր հանրային քննարկման և դեռևս չէր ուղարկվել խորհրդարան:[294]

Հայաստանի 1384 դպրոցներից 284-ը, 2016թ. դեկտեմբերի դրությամբ, համարվում են «ներառական»:[295] Տասնհինգ հատուկ դպրոցներ կփոխակերպվեն համայնքահեն ծառայությունների, իսկ հինգը կշարունակեն գործել, այդ թվում այն դպրոցները, որոնք գրանցված են որպես զգայական հաշմանդամության ուղղությամբ մասնագիտացած դպրոցներ: Ըստ Երևանի գնահատման կենտրոնի տնօրեն Լիլիթ Ասրյանի. «Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ներառական կրթության, բայց երեխաներն ու ծնողները կունենան նաև հատուկ դպրոցներ ընտրելու տարբերակը»:[296]

Ներառական դպրոցները սովորաբար աշխատանքի են ընդունում մասնագետների թիմ, այդ թվում՝ հատուկ կրթության ուսուցիչ, հոգեբան և լոգոպեդ կամ սոցիալական աշխատող: Հաստիքացուցակի չափը և թիմի կազմը կախված կլինի դպրոցում երեխաների թվից: Օրինակ 15 երեխայի համար պետք է լինի հոգեբան, սոցիալական աշխատող և լոգոպեդ: Չնայած նրան, որ մասնագիտական աջակցությունը կարևոր է, ինչպես փաստում են այս զեկույցը և մյուս փորձագետների արձանագրած

---

[292] Human Rights Watch, հարցազրույց Լիանա Կարապետյանի հետ, 31-ը մայիսի, 2016թ.
[293] Կրթության մասին օրենք
[294] Human Rights Watch, հարցազրույց Սրսեն Ստեփանյանի հետ, 6-ը դեկտեմբերի, 2016թ.
[295] Գրություն Հարությունյանից, 14-ը դեկտեմբերի, 2016թ.
[296] Human Rights Watch, հարցազրույց Լիլիթ Ասրյանի և Վարդուհի Վարդերյանի հետ, 1-ը հունիսի, 2016թ.

բացահայտումները, մասնագետների ներգրավումը կարող է խորացնել մեկուսացումը այն պարագայում, երբ երեխաները դասարաններից դուրս են բերվում մասնագետների հետ աշխատելու նպատակով, որը որոշ դեպքերում հիմնված է այն համոզմունքի վրա, որ միայն «մասնագետը» կարող է աշխատել հաշմանդամություն ունեցող երեխաների հետ, այլ ոչ սովորական ուսուցիչը:[297]

Յուրաքանչյուր ներառական դպրոցում ներդրվում են ուսուցիչների օգնականներ, մեկը՝ 100 երեխային հարաբերակցությամբ:[298] Ուսուցչի օգնականի դերը ուսուցիչներին աջակցելն է կրթական աջակցության կարիքներ ունեցող յուրաքանչյուր երեխայի ուսուցումը կազմակերպելու գործում, այդ թվում՝ երեխայի անհատական ուսումնական պլանի իրականացումը, շփումների պահպանումը ընտանիքների հետ և դասերից հետո լրացուցիչ դասընթացների ապահովումը երեխաների համար:[299] Կառավարությունը պետք է ապահովի ասիստենտների և ուսուցչի օգնականների տրամադրումը ըստ երեխաների ուսուցման կարիքներին դասարանում օժանդակելու անհրաժեշտության, այլ ոչ թե ֆիքսված հարաբերակցությամբ։

Ուսուցիչների վերապատրաստումը ներառական կրթության բարեփոխումների մի բաղադրիչն է: «Հույսի կամուրջը» և Կրթության ազգային ինստիտուտը համագործակցել են ներառական կրթության ուսուցիչներին Սյունիքում և Հայաստանի այլ շրջաններում վերապատրաստելու համար:[300] Ինչպես նշվեց վերը, Սյունիքը ՅՈՒՆԻՍԵՖ-ի ծրագրի ներքո իրականացվող բեռնաթափման առաջին փորձնական մարզն է: Պետական մանկավարժական համալսարանը հիմնել է ներառական կրթության համար պահանջվող դասընթացներ, թեև կուրսն անցնող առաջին ուսուցիչները դեռևս չեն ավարտել ուսումը:[301]

Փակված հատուկ դպրոցների վերափոխման արդյունքում (ինչպես նկարագրված է վերը) ստեղծված մանկավարժական-հոգեբանական աջակցության կենտրոնները կգնահատեն երեխաների կրթական կարիքները և ակնկալվում է, որ սերտորեն կաշխատեն ծնողների, ուսուցիչների և երեխայի հետ՝ նրանց աջակցելու նպատակով:

---

[297] «Հույսի կամուրջ», «Ներկայացվել է ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներիկոնվենցիայիկոմիտեին,Ընդհանուր քննարկման օր, հոդվածի 24, Կրթություն», ամսաթիվ չկա, Human Rights Watch-ի շտեմարան։

[298] Human Rights Watch, հարցազրույց Լիլիթ Ասրյանի և Վարդուհի Վարդերյանի հետ, 1-ը հունիսի, 2016թ.

[299] Human Rights Watch, հարցազրույց Սուսաննա Թադևոսյանի հետ, 6-ը դեկտեմբերի, 2016թ.

[300] Human Rights Watch, հարցազրույց հետ Susanna Tadevosyan, April 20, 2016թ.

[301] Human Rights Watch, հարցազրույց Լիլիթ Ասրյանի և Վարդուհի Վարդերյանի հետ, 1-ը հունիսի, 2016թ.; «Հույսի կամուրջ», «Ներկայացվել է ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներիկոնվենցիայիկոմիտեին,Ընդհանուր քննարկման օր, հոդվածի 24, Կրթություն»

Կենտրոնի աշխատակիցները կայցելեն դպրոցներ, կգնահատեն աշակերտներին և կպատրաստեն զարգացման անհատական ծրագրեր յուրաքանչյուր երեխայի համար և հետագայում կհետևեն այդ պլանների իրականացման ընթացքին:[302] Նպատակը բացառապես բժշկական ախտորոշման վրա հիմնվելուց հեռանալն է՝ կիրառելով առավել համապարփակ գնահատում, որը հիմնված է Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ Ֆունկցիաների, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգման (ՖՄԴ) վրա։[303] Ըստ «Հույսի կամուրջ» կազմակերպության ներկայացուցիչ Ս. Թադևոսյանի. «Կրթական կարիքների գնահատումը կիրականացվի Մանկավարժական-հոգեբանական կենտրոններում: Կրթական աջակցության ցուցաբերման համար հաշմանդամությունը չի լինի որոշիչ հանգամանք»:[304] Ծնողները նույնպես կարող են այցելել կենտրոն ծառայություններից օգտվելու նպատակով, եթե նրանց կարծիքով իրենց երեխան ունի հոգեբանական աջակցության, խոսքի թերապիայի և այլ աջակցության կարիք։[305]

---

[302] Human Rights Watch, հեռախոսային հարցազրույց Հերմինե Շահունցի հետ, Գորիսի թիվ 1 հատուկ դպրոցի տնօրեն, 26-ը հոկտեմբերի, 2016թ.

[303] ՖՄԴ-ն ապահովում է ստանդարտ լեզու նեհնք առողջության և առողջության հետ կապված իրավիճակների նկարագրման համար։ Այն օգտագործվում է նկարագրելու օրգանիզմի ֆունկցիաների և կառուցվածքի փոփոխությունները, այն,ինչ մարդը առողջական վիճակում կարող է անել ստանդարտ միջավայրում (նրանց կարողությունների մակարդակը), ինչպես նաև, թե ինչ են իրականում անում իրենց սովորական միջավայրում (նրանց կատարողականը): ՖՄԴ-ի կոնտեքստում, ֆունկցիա տերմինը վերաբերում է օրգանիզմի բոլոր ֆունկցիաներին, ակտիվությանը և մասնակցությանը, մինչդեռ հաշմանդամությունըհովանի տերմին է խանգարումների, ակտիվությանխանգարման և մասնակցության սահմանափակումների վերաբերյալ: ՖՄԴ-ն նաև թվարկում է միջավայրային գործոնները, որոնք փոխգործակցում են այս բոլոր բաղադրիչների հետ։ http://www.who.int/classifications/icf/icfbeginnersguide.pdf?ua=1; and http://www.who.int/classifications/icf/en/.

[304] Human Rights Watch, հարցազրույց Սուսաննա Թադևոսյանի հետ, 20-ը ապրիլի, 2016թ.

[305] Human Rights Watch, հեռախոսային հարցազրույց Հերմինե Շահունցի հետ, 26-ը հոկտեմբերի, 2016թ.

Առաջարկություններ

ՀՀ կառավարությանը, մասնավորապես՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը

Բեռնաթափման և ընտանիքի վրա հիմնված խնամքի անցման ընթացքում ապահովել իրավունքների պաշտպանությունը

- Կանխել երեխաների նոր տեղակայումները խնամքի հաստատություններում:
- Ապահովել, որ երեխաները չառանձնացվեն կենսաբանական ընտանիքներից աղքատության, այլ նյութական զրկանքների և հաշմանդամության հիմքով:
- Մշակել հստակ ժամկետներով սահմանված պլան ուղղված բոլոր երեխաների համար խնամքի հաստատությունների կիրառմանը վերջ դնելուն: Երեխաները պետք է տեղակայվեն խնամքի հաստատություններում միայն արտակարգ իրավիճակներում կամ եղբայրներից ու քույրերից տարանջատումը կանխելու նպատակով, սահմանափակ տևողությամբ, և որպես երեխայի համար վերջնական լուծում ընտանիքի հետ վերամիավորման կամ այլ համապատասխան երկարաժամկետ այլընտրանքային խնամքի անցնելու պլանավորմամբ:
- Վերացնել խտրականությունը բեռնաթափման գործընթացում, այդ թվում երաշխավորելով, որ բեռնաթափման պետական քաղաքականությունը ներառում է հաշմանդամություն ունեցող երեխաներին և երեխաների միջև խտրականություն չի դնում հաշմանդամության, հաշմանդամության տեսակի կամ աջակցության խիստ կարիքների հիման վրա:
- Ապահովել, որ հաստատություններին հատկացվող ֆինանսական և այլ ռեսուրսներն ապակենտրոնացվեն և վերաուղղորդվեն համայնքահեն ծառայությունների հիմնադրման նպատակով:
- Աջակցել և հզորացնել ներկայումս հաստատություններում երեխաներ ունեցող կենսաբանական բոլոր ընտանիքներին՝ նպատակ ունենալով վերամիավորել երեխային նրա ծննդյան ընտանիքի հետ: Ընտանիքներին ընտրելու և նրանց հետ աշխատելու գործընթացներում հավասար հիմունքներով ներառել հաշմանդամություն ունեցող երեխաների ընտանիքներին:
- Մշակել խնամքի հաստատություններից յուրաքանչյուր երեխայի դուրս գրվելու անհատական ծրագրեր, այդ թվում նաև համայնքահեն աջակցության և ծառայությունների ծրագրեր: Անհատական ծրագրերը պետք ունենան հստակ սահմանված ժամանակացույց և իրագործվեն ողջամիտ ժամկետներում, որպեսզի դրանք չդառնան ժամանակավրեպ, քանի որ ընտանեկան

հանգամանքները կարող են փոխվել: Ապահովել, դեպք վարողների երկարաժամկետ ներգրավվածությունը և անհատական ծրագրերի իրականացման պարբերական մշտադիտարկումը:

- Համոզվել, որ խնամատարության և որդեգրման համակարգերը գտնվում են լիարժեքորեն գործող վիճակում նախքան երեխաների հաստատություններից դուրս գրվելը, այլ ոչ հաստատությունների փոխակերպումից հետո:
- Պոտենցիալ խնամատարները պետք է մանրակրկտորեն ուսումնասիրվեն, վերապատրաստվեն և վերահսկվեն, որպեսզի հնարավոր լինի ապահովել, որ տեղակայումը բխում է յուրաքանչյուր երեխայի լավագույն շահերից:
- Ապահովել կենտրոնացված նյութական, ֆինանսական, հոգեբանական և այլ աջակցություն բոլոր ընտանիքների համար (կենսաբանական, խնամատար, որդեգրող) երեխային ընտանիքում տեղակայելուց հետո, որպեսզի անցումն արդյունավետ լինի և սահմանափակվի երեխաների՝ հաստատություններ վերադառնալու ռիսկը:
- Ստեղծել և պահպանել մի շարք նպատակային, մատչելի, դիվերսիֆիկացված համայնքահեն ծառայություններ կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված ընտանիքների համար, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անհատների, այդ թվում հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների համար, ինստիտուցիոնալացումը կանխելու և իրենց երեխաներին ընտանիքում մեծացնելու նպատակով ընտանիքներին աջակցություն տրամադրելու համար:
- Ավելացնել սոցիալական աշխատողների համակարգի ֆինանսական և տեխնիկական աջակցությունը՝ ապահովելով բավարար թվով սոցիալական աշխատողներ:
- Մշակել և զգալիորեն աջակցել ընտանիքների իրազեկման ծրագրերին՝ նպատակ ունենալով կանխել երեխայի տարանջատումը նրա ծննդյան ընտանիքից:
- Մինչև նպատակային, ներառական, համայնքային ծառայությունների զարգացումը, կարճաժամկետ հատվածում, բացահայտել և ստեղծել հնարավորություններ, որպեսզի այն ռեսուրսները, որոնք կենտրոնացված են հաստատություններում, ինչպիսիք են վերականգնողական ծառայությունները, բժշկական ծառայությունները, բուժումները, բժիշկները և այլ մասնագետները, և այլ ծառայությունները, հասանելի լինեն մոտակա համայնքներում բնակվող երեխաների և նրանց ընտանիքների համար, այնպես, որ նրանք նույնպես կարողանան օգտվել նմանատիպ ծառայություններից՝ իրենց երեխաներին տանը մեծացնելով հանդերձ:

- Մշակել աջակցության համակարգեր այն ժամանակահատվածի համար, երբ երեխաների տարիքը մոտենում է 18-ին,լրանում է հաստատություններից դուրս գրվելու տարիքը և նրանք հեռանում են հաստատություններից: Աջակցությունները պետք սահմանվեն հաշմանդամություն ունեցող և չունեցող երեխաների համար՝ նպատակ ունենալով տրամադրել տարբերակված աջակցություն հիմնված անհատի պահանջմունքների վրա:
- Բեռնաթափման ծրագրի մշակման ու իրականացման և համայնքահեն ծառայությունների զարգացման բոլոր ասպեկտներում ապահովել կանոնավոր խորհրդակցություններ երեխաների, հաշմանդամություն ունեցող մեծահասակների, հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքների, հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների, ՀԿ-ների և մարդու իրավունքների պաշտպանի հետ:
- Բեռնաթափման գործընթացում հաստատել արդյունավետ համակարգում համապատասխան պետական մարմինների՝ այդ թվում Աշխատանքի և սոցիալական հարցերի, Կրթության և գիտության, Տարածքային կառավարման և զարգացման և Ֆինանսների նախարարությունների, Երևանի քաղաքապետարանի և մարզպետարանների միջև, ներառյալ հաստատությունների ռեսուրսները ի նպաստ համայնքային աջակցությունների վերաբաշխուման գործընթացներում:
- Հայեցակարգերի, ծրագրերի և նախագծերի մշակման համար հավաքագրել համապատասխան դասակարգված տվյալներ, ներառյալ՝ տվյալներ հաշմանդամություն ունեցող երեխաների թվի վերաբերյալ, ըստ հաշմանդամության տեսակի և այլ ժողովրդագրական ցուցիչներ: Ապահովել տվյալների հասբաշխման և և փոխանակման մեխանիզմներ տարբեր գերատեսչությունների միջև:
- Ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և նրանց սոցիալական ներառման մասին օրենքի նախագծի լիակատար համապատասխանելիությունը ՀԻԿ-ին: Համապատասխանելու դեպքում, շարունակել աջակցել օրենքի նախագծի ընդունմանը խորհրդարանում:

Պաշտպանել հաստատություններում գտնվող երեխաների իրավունքները՝ մինչև ամբողջական բեռնաթափումը

- Խնամքի հաստատություններում նվազեցնել խմբերում երեխաների թիվը և ապահովել խնամակալների թվի փոքր հարաբերակցությունը երեխաներին,

երաշխավորելու համար, որ երեխաները ստանան անհատական ուշադրություն և խնամք։

- Ուսումնասիրել երեխաների անձնական կյանքի գաղտիությունն ապահովելու միջոցներ, հատկապես ավելի մեծահասակ երեխաների համար։
- Ապահովել հաստատությունների գտնվող բոլոր երեխաների մասնակցությունը հիմնական համայնքային դպրոցներում իրականացվող ներառական կրթության մեջ ՝ համաձայն Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի թիվ 4 (2016թ.) ընդհանուր մեկնաբանության։
- Մշակել և իրականացնել ծրագրեր, որոնք կնախապատրաստեն երեխաներին, այդ թվում հաշմանդամություն ունեցող երեխաներին, հաստատություններից հեռանալուն։
- Ապահովել, որ յուրաքանչյուր երեխա, մոտենալով չափահասության տարիքին,ստանա մատչելի տեղեկատվություն իր իրավունքների մասին։
- Վերջ տալ հաշմանդամություն ունեցող երեխաներին չափահաս դառնալուց հետո հաստատություններում գործունակության մերժման ֆորմալ կամ ոչ ֆորմալ հայեցակարգերին կամ գործելակերպին։
- Մտավոր և/կամ հոգեկան հաշմանդամություն ունեցող անձանց գործունակությունը ամբողջությամբ մերժել և նրանց ամբողջական խնամակալության (հոգաբարձության) ներքո տեղակայել թույլատրող իրավական կարգավորումները փոխարինել աջակցված որոշումների կայացման համակարգով։

Կրթության և գիտության, Տարածքային կառավարման և զարգացման նախարարություններին և Երևանի քաղաքապետարանին

Վերջ դնել խտրականությանը և առավելագույնի հասցնել կրթության որակը և ներառականությունը

- Ապահովել որակյալ կրթության մատչելիությունը հաշմանդամություն ունեցող երեխաների համար՝ մյուսների հետ հավասար հիմունքներով։
- Իրականացնել ներառական կրթություն բոլոր մակարդակներում՝ հասնելու համար հաշմանդամություն ունեցող երեխաների, այդ թվում աջակցության բարձր կարիքներ ունեցող երեխաների, առավելագույն ներառմանը հանրակրթական դպրոցներում։

Երաշխավորել անհատական մոտեցում բոլոր երեխաների կրթությանը

- Ապահովել ողջամիտ հարմարեցումներ՝ տարբերակված ըստ յուրաքանչյուր անձի անհատական պահանջների: Կրթության մեջ օժանդակող սարքերի և տեխնոլոգիաների մատչելիությունը բարելավելու ուղիներ փնտրել. հաճախ կարելի է գտնել մատչելի [ոչ թանկ]տարբերակներ: Դպրոցների համար ապահովել համապատասխան բյուջետային հատկացումներ և ֆինանսավորում՝ ողջամիտ հարմարեցումներ երաշխավորելու համար:
- Նվազեցնել հաշմանդամություն ունեցող երեխաներին դասարաններից դուրս առանձին դասընթացների տանելու դեպքերը: Թեև որոշ երեխաներ իրենց գիտելիքները խորացնելու համար կարող են որոշակի անհատական կամ փոքր խմբերով դասաժամերի կարիք ունենալ, այդ դասընթացները չպետք է փոխարինեներեխաների լիարժեք մասնակցությունը դասարանում:
- Ապահովել համարժեք թվով ուսուցիչներ և այլ մասնագետներ, այդ թվում նաև աշակերտների օգնականներ: Վերանայել ներկայիս հաստատված հարաբերակցությունը՝ 100 աշակերտին մեկ օգնական, ըստ անհրաժեշտության ներառական կրթության օգնականների առավել ճկուն զբաղվածության հնարավորություն տալով, ներառյալ որպես ողջամիտ հարմարեցման բաղադրիչ:
- Մշակել ուսումնական ծրագրեր և գնահատման գործիքներ, որոնք կլինեն ճկուն և երեխաների կարիքներին հարմարեցվելու հնարավորություն կունենան, կօգնեն ուսուցիչներին և վարչական աշխատողներին ուսման նկատմամբ «մեկ չափս բոլորի համար» մոտեցումից անցում կատարել դեպի ուսման տարբեր ընդունակություններին և ոճերին հարմարվելը:
- Մշակել ուսումնական ծրագրեր, որոնք կերաշխավորեն, որ բոլոր երեխաները, առանց խտրականության, ավարտում են դպրոցը՝պատրաստ լինելով դիմակայել այն մարտահրավերներին, որոնց կարելի է ակնկալել, որ նրանք կբախվեն կյանքում:
- Ապահովել մասնագիտական վերապատրաստումների, համալսարանական և ցկյանս ուսումնառության հնարավորությունների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար:
- Ապահովել և ներդնել օրենսդրական կարգավորումներ, որպեսզի երաշխավորվեն դպրոց և հակառակ ուղղությամբ երթևեկելու համար մատչելի և ֆինանսապես մատչելի տրանսպորտային միջոցներ հաշմանդամություն ունեցող երեխաների համար:

- Համոզվել, որ տնային ուսուցումն օգտագործվում է միայն կարճ ժամկետով, և միայն այն դեպքում, երբ այն բացարձակապես անհրաժեշտ է ելնելով առողջական պատճառներից:
- Աշխատել քաղաքային իշխանությունների և այլոց հետ՝ երաշխավորելու, որ երեխաները սահմանափակված չեն տնային ուսուցմամբ կացարանի հետ կապված խոչընդոտների, դպրոցից-տուն տրանսպորտի բացակայության կամ այլ խոչընդոտների պատճառով:
- Հաշմանդամություն ունեցող երեխաները և նրանց ծնողները պետք է իրական ընտրություն ունենան իրենց կրթական ուղու վերաբերյալ: Երեխաները և ծնողները չպետք է ստիպված լինեն ընտրել մասնագիտացված դպրոցներ՝ հանրակրթական դպրոցների կողմից երեխաների համար ողջամիտ հարմարեցումներ չապահովելու պատճառով:

Ապահովել որակյալ վերապատրաստում ուսուցիչների և աշխատակիցների համար

- Բոլոր գործող ուսուցիչների և մանկավարժական կուրսերի ուսանողների վերապատրաստման հիմքում ներդնել ներառական կրթության դասընթացներ հիմնված հաշմանդամության մարդու իրավունքների մոդելի վրա, ներառյալ հաղորդակցման միջոցների և ձևաչափերի և հաշմանդամություն ունեցող անձանց աջակցելու նպատակով կիրառվող կրթական մեթոդների և նյութերի վերաբերյալ: ներառել գործնական դասընթացներ, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությամբ և նրանց կողմից իրականացվող:
- Ապահովել այս ուսուցումը նաև դպրոցների վարչական աշխատողների, տնօրենների, փոխտնօրենների, կրթության ոլորտի պաշտոնյաների և մանկատների ու հաստատությունների տնօրենների և աշխատակիցների համար:

Ապահովել արդյունավետ քաղաքականության մշակում և կրթության կառավարում

- Մշալել հստակ ժամանակացույց համընդհանուր դիզայնի կիրառման միջոցով հանրակրթական դպրոցներում մատչելի միջավայր ապահովելու համար, հաշվի առնել հաշմանդամություն ունեցող անձանց կարծիքները այս գործընթացներում
- Հավաքագրել և կիրառել հաշմանդամություն ունեցող աշակերտների վերաբերյալ տվյալներ, ներառյալ մանրամասն տվյալներ և այլ փաստեր այն

խոչընդոտների մասին, որոնք խոչընդոտում են որակյալ ներառական կրթության մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար;

- Վերասահմանել ներառական կրթության բյուջետային հատկացումները և ռեսուրսները, այդ թվում խնամքի հաստատությունների բյուջեները և այլ առկա ռեսուրսները հանրակրթական դպրոցներ ուղորդելու միջոցով:
- Աշխատել դոնորների, ՀԿ-ների և կրթության ոլորտում աշխատող այլ խմբերի հետ՝ դոնորների հետ արդյունավետ համագործակցության և ռեսուրսների օգտագործում և համընկնումներից խուսափելու համար:

Միջազգային դոնորներին, այդ թվում նաև սփյուռքի կազմակերպությունների

- Աջակցել կառավարությանը այս առաջարկություններն իրագործելու հարցում:

Երախտիքի խոսք

Այս զեկույցի հիմքում ընկած հետազոտությունն իրականացրել և այն գրել է Human Rights Watch-ի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի բաժնի փոխտնօրեն Ջեյն Բյուքանանը: Human Rights Watch-ի Հարավային Կովկասի հարցերով տնօրեն Գիորգի Գոգիան և Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի բաժնի հետազոտող Միհրա Ռիթմանը անցկացրել և մասնակցել են բազմաթիվ հետազոտական հարցազրույցների: Զեկույցը խմբագրել է Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի բաժնի փոխտնօրեն Ռեյչել Դենբերը: Գիորգի Գոգիան, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների բաժնի հետազոտող Էմինա Չերիմովիչը և Human Rights Watch-ի Երեխաների իրավունքների բաժնի հետազոտող Էլին Մարտինեսը տրամադրել են մասնագիտական ակնարկներ: Հետազոտական աջակցություն է տրամադրվել Human Rights Watch-ի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի բաժնի պրակտիկանտ Լյուբով Լակամովայի և Human Rights Watch-ի խորհրդատու Անահիտ Չիլինգարյանի կողմից: Անի Ասատրյանը, Անահիտ Չիլինգարյանը և Վարդուհի Դադունցը տրամադրել են թարգմանչական, կազմակերպչական և այլ կարևոր աջակցություն այս հետազոտության իրականացումը հնարավոր դարձնելու համար:

Իրականացմանն օժանդակել է Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի բաժնի ավագ աշխատակից Քեթրին Զեհրը, լուսանկարների և հրապարակումների պատասխանատու Օլիվիա Հանթերը, գրաֆիկ դիզայներ Ռաֆայել Հիմինեսը, վարչական պատասխանատու Ֆիցրոյ Հեփքինսը և ավագ համակարգող Խոսե Մարտինեսը:

Human Rights Watch-ը երախտագիտություն է հայտնում այն բազմաթիվ ընտանիքներին, երեխաների և այլ անձանց, ովքեր իրենց փորձը և տեսակետները կիսեցին մեզ հետ: Human Rights Watch-ը նաև շնորհակալություն է հայտնում բազմաթիվ անհատների և կազմակերպությունների ողջ Հայաստանում, ովքեր ցուցաբերել են անգնահատելի խորհրդատվություն, աջակցություն և փորձագիտական կարծիքներ և առանց ում այս հետազոտությունը հնարավոր չէր լինի: Մենք խորապես երախտապարտ ենք:

350 Fifth Avenue, 34th Floor
New York, NY 10118-3299
Tel: +1-212-290-4700
Fax: +1-212-736-1300; 917-591-3452

HUMAN RIGHTS WATCH

HRW.org

Europe and Central Asia Division
Hugh Williamson, *Director*
Rachel Denber, *Deputy Director*
Benjamin Ward, *Deputy Director*
Philippe Dam, *Advocacy Director*
Jane Buchanan, *Associate Director*
Tanya Lokshina, *Russia Program Director*
Inna Khodzhaeva, *Moscow Office Director*
Giorgi Gogia, *South Caucasus Director*
Emma Sinclair-Webb, *Senior Researcher*
Judith Sunderland, *Associate Director*
Tanya Cooper, *Researcher*
Lydia Gall, *Researcher*
Yulia Gorbunova, *Researcher*
Mihra Rittmann, *Researcher*
Steve Swerdlow, *Researcher*
Eva Cosse, ***Senior*** *Research Assistant*
Viktoriya Kim, *Coordinator*
Kathryn Zehr, *Associate*
Anže Močilnik, *Associate*

Advisory Committee
Catherine Zennström, *Chair*
Jean Paul Marthoz, *Vice-chair*
Henri Barkey
Gerhart Baum
Rudolf Bindig
Alexander Cooley
Tana de Zulueta
Stephen Del Rosso
Felice Gaer
Michael Gellert
Alice H. Henkin
Jeri Laber
Walter Link
Masha Lipman
Helena Luczywo
Kimberly Marteau Emerson
Jane Olson
László Jakab Orsós
Arjan Overwater
Can Paker
Signe Rossbach
Colette Shulman
Leon Sigal
Malcolm Smith
Mark von Hagen
Joanna Weschler

Human Rights Watch
Kenneth Roth, *Executive Director*
Michele Alexander, *Deputy Executive Director, Development and Global Initiatives*
Carroll Bogert, *Deputy Executive Director, External Relations*
Iain Levine, *Deputy Executive Director, Program*
Chuck Lustig, *Deputy Executive Director, Operations*

Walid Ayoub, *Information Technology Director*
Emma Daly, *Communications Director*
Barbara Guglielmo, *Finance and Administration Director*
Peggy Hicks, *Global Advocacy Director*
Babatunde Olugboji, *Deputy Program Director*
Dinah PoKempner, *General Counsel*
Tom Porteous, *Deputy Program Director*
James Ross, *Legal & Policy Director*
Joe Saunders, *Deputy Program Director*
Frances Sinha, *Human Resources Director*

Նոյեմբեր 22, 2016թ.

Արտեմ Ասատրյան
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Կառավարական տուն 3, Հանրապետության հրապարակ, 0010, Երևան
Հայաստանի Հանրապետություն
Էլ. փոստով՝ XXXXXXXXXX

Հարգելի պարոն Ասատրյան,

Մենք շնորհակալ ենք այս տարվա մայիսին Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ Գեղանուշ Գյունաշյանի հետ հանդիպելու հնարավորության համար և գնահատում ենք նախարարության հետ մեր ունեցած շարունակական կառուցողական երկխոսությունը: Այս նույն ոգով դիմում ենք Ձեզ՝ խնդրելով տրամադրել որոշ տեղեկություններ մանկական հիմնարկներում բնակվող երեխաների վերաբերյալ Human Rights Watch-ի կողմից իրականացվող հետազոտության համար, ընտանիքի վրա հիմնված երեխայի խնամքի աջակցության ուղղությամբ կառավարության նախաձեռնությունների, ինչպես նաև ներառական կրթության հասանելիության մասին: Մենք երախտապարտ կլինենք, եթե կարողանաք տրամադրել հետևյալ տեղեկությունները՝

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության բոլոր հատուկ դպրոցների ցանկը և նրանց գտնվելու վայրերը: Նրանցից քանի՞սն են բնակելի դպրոցներ:
- Բոլոր հատուկ դպրոցների ցանկը, որոնք փակվել են 2012 թվականից ի վեր, և այդ դպրոցների գտնվելու վայրերը:
- Բոլոր հատուկ դպրոցների ցանկը, որոնք փոխակերպվել են 2012 թվականից ի վեր, ներառյալ նրանց սկզբնական անունները և գտնվելու վայրերը: Ի՞նչ գործառույթ են իրականացնում այս փոխակերպված հաստատությունները հիմա:
- Երեխաների (18 տարեկանից ցածր) ընդհանուր թիվը նախարարության ենթակայության հատուկ դպրոցներում:

Նրանցից քանի՞սն են տղաներ, և քանիսը՝ աղջիկներ: Նրանցից քանի՞սն ունեն հաշմանդամություն:

- Երեխաների ընդհանուր թիվը նախարարության ենթակայության հատուկ դպրոցներում 2012, 2013, 2014 և 2015 թվականներին՝ ներառյալ հաշմանդամություն ունեցող երեխաների քանակը:
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության այն հիմնարկների անվանումներն ու դրանց գտնվելու վայրերը, որտեղ պահվում են հաշմանդամություն ունեցող մեծահասակներ (18 տարեկանից բարձր): Քանի՞ մեծահասակ է բնակվում այդ հիմնարկներից յուրաքանչյուրում և ինչպիսի՞ն է նրանց տարիքային բաշխվածքը:
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության հիմնարկներում բնակվող 18 տարեկանից բարձր հաշմանդամություն ունեցող մեծահասակներից քանիսի՞ն է շնորհվել իրավական կարգավիճակ:
- Քանի՞ խնամակալ ընտանիք կա ներկայումս Հայաստանում: Նրանցից քանի՞սն են հանդիսանում խնամակալ ընտանիք հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Ի՞նչ կոնկրետ քայլեր է իրականացնում կառավարությունը խնամակալության և որդեգրման ծառայությունների ընդլայնման ուղղությամբ:
- Ի՞նչ հատուկ ծառայություններ, նպաստներ կամ այլ աջակցություն է տրամադրում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը քաղաքային իշխանությունների հետ միասին այն ընտանիքներին ուր վերադարձել են երեխաները՝ թողնելով խնամքի հաստատությունները:

Շնորհակալություն ենք հայտնում այս հարցերին Ձեր անհապաղ ուշադրության համար և երախտապարտ կլինենք մինչև ս.թ. դեկտեմբերի 23-ը պատասխան ստանալու համար, որպեսզի մեր հաշվետվություններում կարողանանք անդրադարձ կատարել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրված համապատասխան տեղեկատվությանը: Եթե կլինեն հարցեր սույն գրության վերաբերյալ, խնդրում եմ առանց վարանելու դիմել. էլ-փոստ՝ ~~XXXXXXXXX հեռ~~ախոս՝ XXXXXXXXX , կամ ֆաքս՝ XXXXXXXXXX

Հարգանքով,



Ջեյն Բուչանան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

«23» 12 2016 թ. N ՇՀ/99-2-5/12670-16

Ձեր՝ 22.11.2016թ. գրության

«HUMAN RIGHTS WATCH» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՋԵՅՆ ԲՈՒՉԱՆԱՆԻՆ

Հարգելի տիկին Բուչանան

Ի պատասխան Ձեր հարցադրումների Ձեզ եմ ներկայացնում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ոլորտի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը:

Առդիր՝ 5 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ **Շ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Կատարող՝ Ընտանիքի, կանանց և երեխաների
հիմնահարցերի վաչություն
Հեռախոս՝ 56 53 21

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30

350 Fifth Avenue, 34th Floor
New York, NY 10118-3299
Tel: +1-212-290-4700
Fax: +1-212-736-1300; 917-591-3452

HUMAN RIGHTS WATCH

HRW.org

Europe and Central Asia Division
Hugh Williamson, *Director*
Rachel Denber, *Deputy Director*
Benjamin Ward, *Deputy Director*
Philippe Dam, *Advocacy Director*
Jane Buchanan, *Associate Director*
Tanya Lokshina, *Russia Program Director*
Inna Khodzhaeva, *Moscow Office Director*
Giorgi Gogia, *South Caucasus Director*
Emma Sinclair-Webb, *Senior Researcher*
Judith Sunderland, *Associate Director*
Tanya Cooper, *Researcher*
Lydia Gall, *Researcher*
Yulia Gorbunova, *Researcher*
Mihra Rittmann, *Researcher*
Steve Swerdlow, *Researcher*
Eva Cosse, ***Senior*** *Research Assistant*
Viktoriya Kim, *Coordinator*
Kathryn Zehr, *Associate*
Anže Močilnik, *Associate*

Advisory Committee
Catherine Zennström, *Chair*
Jean Paul Marthoz, *Vice-chair*
Henri Barkey
Gerhart Baum
Rudolf Bindig
Alexander Cooley
Tana de Zulueta
Stephen Del Rosso
Felice Gaer
Michael Gellert
Alice H. Henkin
Jeri Laber
Walter Link
Masha Lipman
Helena Luczywo
Kimberly Marteau Emerson
Jane Olson
László Jakab Orsós
Arjan Overwater
Can Paker
Signe Rossbach
Colette Shulman
Leon Sigal
Malcolm Smith
Mark von Hagen
Joanna Weschler

Human Rights Watch
Kenneth Roth, *Executive Director*
Michele Alexander, *Deputy Executive Director, Development and Global Initiatives*
Carroll Bogert, *Deputy Executive Director, External Relations*
Iain Levine, *Deputy Executive Director, Program*
Chuck Lustig, *Deputy Executive Director, Operations*

Walid Ayoub, *Information Technology Director*
Emma Daly, *Communications Director*
Barbara Guglielmo, *Finance and Administration Director*
Peggy Hicks, *Global Advocacy Director*
Babatunde Olugboji, *Deputy Program Director*
Dinah PoKempner, *General Counsel*
Tom Porteous, *Deputy Program Director*
James Ross, *Legal & Policy Director*
Joe Saunders, *Deputy Program Director*
Frances Sinha, *Human Resources Director*

Նոյեմբեր 22, 2016թ.

Դավիթ Լոքյան
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Փոստով և էլեկտրոնային տարբերակով՝ XXXXXXXXXXX

Հարգելի պարոն Լոքյան,
Մենք շնորհակալ ենք այս տարվա մայիսին Ձեզ հետ հանդիպելու հնարավորության համար և գնահատում ենք նախարարության հետ մեր ունեցած շարունակական կառուցողական երկխոսությունը: Այս նույն ոգով դիմում ենք Ձեզ՝ խնդրելով տրամադրել որոշ տեղեկություններ մանկական հիմնարկներում բնակվող երեխաների վերաբերյալ Human Rights Watch-ի կողմից իրականացվող հետազոտության համար, ընտանիքի վրա հիմնված երեխայի խնամքի աջակցության ուղղությամբ կառավարության նախաձեռնությունների, ինչպես նաև ներառական կրթության հասանելիության մասին: Մենք երախտապարտ կլինենք, եթե կարողանաք տրամադրել հետևյալ տեղեկությունները՝

- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության ենթակայության բոլոր հատուկ դպրոցների ցանկը և նրանց գտնվելու վայրերը: Նրանցից քանի՞սն են բնակելի դպրոցներ:
- Բոլոր հատուկ դպրոցների ցանկը, որոնք փակվել են 2012 թվականից ի վեր, և այդ դպրոցների գտնվելու վայրերը:
- Բոլոր հատուկ դպրոցների ցանկը, որոնք փոխակերպվել են 2012 թվականից ի վեր, ներառյալ նրանց սկզբնական անունները և գտնվելու վայրերը: Ի՞նչ գործառույթ են իրականացնում այս փոխակերպված հաստատությունները հիմա:
- Երեխաների ընդհանուր թիվը նախարարության ենթակայության հատուկ դպրոցներում: Նրանցից քանի՞սն են տղաներ, և քանիսը՝ աղջիկներ: Նրանցից քանի՞սն ունեն հաշմանդամություն:
- Երեխաների ընդհանուր թիվը նախարարության ենթակայության հատուկ դպրոցներում 2012, 2013, 2014 և 2015

թվականներին՝ ներառյալ հաշմանդամություն ունեցող երեխաների քանակը:

- Հատուկ դպրոցներից քանի՞սն է պլանավորում փակել կամ փոխակերպել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը մոտ ապագայում և ո՞ր թվականներին: Հատուկ դպրոցներից քանի՞սը և որո՞նք պետք է բաց մնան:
- Ի՞նչ հատուկ ծառայություններ, նպաստներ կամ այլ աջակցություն են ստանում այն ընտանիքները ուր երեխաները վերադարձել են՝ թողնելով հատուկ դպրոցները, կամ հատուկ դպրոցների փակման դեպքում:
- Ի՞նչն է նախարարությունը տեսնում որպես մեծագույն մարտահրավեր Կրթության նախարարության հետ համատեղ ընդհանուր ներառական կրթություն հաստատելու իր նպատակին հասնելու ճանապարհին:

Շնորհակալություն ենք հայտնում այս հարցերին Ձեր անհապաղ ուշադրության համար և երախտապարտ կլինենք մինչև ս.թ. դեկտեմբերի 23-ը պատասխան ստանալու համար, որպեսզի մեր հաշվետվություններում կարողանանք անդրադարձ կատարել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից տրամադրված համապատասխան տեղեկատվությանը: Եթե կլինեն հարցեր սույն գրության վերաբերյալ, խնդրում եմ առանց վարանելու դիմել. էլ-փոստ՝ XXXXXXXXXXXX եռախոս՝ կամ ֆաքս՝ XXXXXXXXXXX

Հարգանքով,

Ջեյն Բուչանան

Գիորգի Գոգիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"26" .....12..... 2016թ. N.01/17.2/5929-16

<<Հյումըն Ռայթս Վոթչ>> միջազգային ՀԿ
Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի
բաժնի ղեկավար
Ջեյն Բուչանանին

Հարգելի տիկին Բուչանան

Ի պատասխան Ձեր ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն 2016 թվականի նոյեմբերի 22-ին ներկայացված գրության, Ձեզ ենք ներկայացնում ՀՀ մարզպետարանների ենթակայությամբ գործող հատուկ դպրոցների վերաբերյալ տեղեկատվությունը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N 969-Ն որոշմամբ «Սիսիանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ-ը վերանվանվել է «Սիսիանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի, իսկ ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 29-ի N 986-Ն որոշմամբ «Գորիսի N 1 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ը վերանվանվել է «Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի, որոնք երկրորդ՝ տարածքային մակարդակում երեխայի կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող կազմակերպություններ են:

Առդիր՝ 14 ֆայլ:

Հարգանքով՝

Դ. ԼՈՔՅԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ

Կատարող՝ Ն.Գևորգյան
Վարչական վերահսկողության և համայնքային ծառայության հարցերի վարչություն
Հեռ. 010 51-13-66

350 Fifth Avenue, 34th Floor
New York, NY 10118-3299
Tel: +1-212-290-4700
Fax: +1-212-736-1300; 917-591-3452

HUMAN RIGHTS WATCH

HRW.org

Europe and Central Asia Division
Hugh Williamson, *Director*
Rachel Denber, *Deputy Director*
Benjamin Ward, *Deputy Director*
Philippe Dam, *Advocacy Director*
Jane Buchanan, *Associate Director*
Tanya Lokshina, *Russia Program Director*
Inna Khodzhaeva, *Moscow Office Director*
Giorgi Gogia, *South Caucasus Director*
Emma Sinclair-Webb, *Senior Researcher*
Judith Sunderland, *Associate Director*
Tanya Cooper, *Researcher*
Lydia Gall, *Researcher*
Yulia Gorbunova, *Researcher*
Mihra Rittmann, *Researcher*
Steve Swerdlow, *Researcher*
Eva Cosse, ***Senior*** *Research Assistant*
Viktoriya Kim, *Coordinator*
Kathryn Zehr, *Associate*
Anže Močilnik, *Associate*

Advisory Committee
Catherine Zennström, *Chair*
Jean Paul Marthoz, *Vice-chair*
Henri Barkey
Gerhart Baum
Rudolf Bindig
Alexander Cooley
Tana de Zulueta
Stephen Del Rosso
Felice Gaer
Michael Gellert
Alice H. Henkin
Jeri Laber
Walter Link
Masha Lipman
Helena Luczywo
Kimberly Marteau Emerson
Jane Olson
László Jakab Orsós
Arjan Overwater
Can Paker
Signe Rossbach
Colette Shulman
Leon Sigal
Malcolm Smith
Mark von Hagen
Joanna Weschler

Human Rights Watch
Kenneth Roth, *Executive Director*
Michele Alexander, *Deputy Executive Director, Development and Global Initiatives*
Carroll Bogert, *Deputy Executive Director, External Relations*
Iain Levine, *Deputy Executive Director, Program*
Chuck Lustig, *Deputy Executive Director, Operations*

Walid Ayoub, *Information Technology Director*
Emma Daly, *Communications Director*
Barbara Guglielmo, *Finance and Administration Director*
Peggy Hicks, *Global Advocacy Director*
Babatunde Olugboji, *Deputy Program Director*
Dinah PoKempner, *General Counsel*
Tom Porteous, *Deputy Program Director*
James Ross, *Legal & Policy Director*
Joe Saunders, *Deputy Program Director*
Frances Sinha, *Human Resources Director*

Նոյեմբեր 22, 2016թ.

Լևոն Մկրտչյան
ՀՀ կրթության և գիտության նախարար
ՀՀ կրթության և գիտության նախարարություն
0010 ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/8
Հայաստանի Հանրապետություն
Փոստով և էլեկտրոնային տարբերակով՝ XXXXXXXXXXX

Հարգելի պարոն Մկրտչյան,

Մենք շնորհակալ ենք այս տարվա ապրիլին փոխնախարար Մանուկ Մկրտչյանի և ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի այլ ներկայացուցիչների հետ մեր բովանդակալից հանդիպման համար և գնահատում ենք նախարարության հետ մեր ունեցած շարունակական կառուցողական երկխոսությունը: Այս նույն ոգով դիմում ենք Ձեզ՝ խնդրելով տրամադրել որոշ տեղեկություններ մանկական հիմնարկներում բնակվող երեխաների վերաբերյալ Human Rights Watch-ի կողմից իրականացվող հետազոտության համար, ընտանիքի վրա հիմնված երեխայի խնամքի աջակցության ուղղությամբ կառավարության նախաձեռնությունների, ինչպես նաև ներառական կրթության հասանելիության մասին: Մենք երախտապարտ կլինենք, եթե կարողանաք տրամադրել հետևյալ տեղեկությունները՝

- ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության բոլոր հատուկ դպրոցների ցանկը և նրանց գտնվելու վայրերը: Նրանցից քանի՞սն են բնակելի դպրոցներ:
- Բոլոր հատուկ դպրոցների ցանկը, որոնք փակվել են 2012 թվականից ի վեր, և այդ դպրոցների գտնվելու վայրերը:
- Բոլոր հատուկ դպրոցների ցանկը, որոնք փոխակերպվել են 2012 թվականից ի վեր, ներառյալ նրանց սկզբնական անունները և գտնվելու վայրերը: Ի՞նչ գործառույթ են իրականացնում այս փոխակերպված հաստատությունները հիմա:
- Երեխաների ընդհանուր թիվը նախարարության ենթակայության հատուկ դպրոցներում: Նրանցից քանի՞սն են տղաներ, և քանիսը՝ աղջիկներ: Նրանցից քանի՞սն ունեն հաշմանդամություն:
- Երեխաների ընդհանուր թիվը նախարարության ենթակայության հատուկ դպրոցներում 2012, 2013, 2014 և 2015

թվականներին՝ ներառյալ հաշմանդամություն ունեցող երեխաների քանակը:

- Ի՞նչ հատուկ ծառայություններ, նպաստներ կամ այլ աջակցություն են ստանում այն ընտանիքները ուր երեխաները վերադարձել են՝ թողնելով հատուկ դպրոցները, կամ հատուկ դպրոցների փակման դեպքում:
- Տնային ուսուցում ստացող երեխաների ընդհանուր թիվը: Նրանցից քանի՞սն են բնակվում իրենց ընտանիքների հետ և քանի՞սը՝ մանկատներում:
- Հանրակրթական դպրոցների ընդհանուր թիվը յուրաքանչյուր մարզում և ներառական դպրոցների ընդհանուր թիվը յուրաքանչյուր մարզում:
- Ներառական դպրոցներում ուսանող հաշմանդամություն ունեցող երեխաներ ընդհանուր թիվը:
- Ի՞նչ պայմանների պետք է բավարարի հանրակրթական դպրոցը ներառական դպրոց դառնալու համար:
- Հատուկ դպրոցներից քանի՞սն է պլանավորում փակել կամ փոխակերպել ՀՀ կրթության և գիտության նախարարությունը մոտ ապագայում և ո՞ր թվականներին: Հատուկ դպրոցներից քանի՞սը և որո՞նք պետք է բաց մնան:
- Ի՞նչն է նախարարությունը տեսնում որպես մեծագույն մարտահրավեր ընդհանուր ներառական կրթություն հաստատելու իր նպատակին հասնելու ճանապարհին:

Շնորհակալություն ենք հայտնում այս հարցերին Ձեր անհապաղ ուշադրության համար և երախտապարտ կլինենք մինչև ս.թ. դեկտեմբերի 23-ը պատասխան ստանալու համար, որպեսզի մեր հաշվետվություններում կարողանանք անդրադարձ կատարել ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից տրամադրված համապատասխան տեղեկատվությանը: Եթե կլինեն հարցեր սույն գրության վերաբերյալ, խնդրում եմ առանց վարանելու դիմել. էլ-փոստ՝ , XXXXXXXXXXX
կամ ֆաքս՝ XXXXXXXXXXX

Հարգանքով,



Ջեյն Բուչանան

Գիորգի Գոգիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ
РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND OF SCIENCE

HEAD OF STAFF

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: 52 53 17, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, E-mail: headofstaff@edu.am, ww.edu.am

N 04/07-1/16045-16 14 «——» 12 2016թ.

HUMAN RIGHTS WATCH
միջազգային կազմակերպություն
Ջեյն Բուչանանին
Գիորգի Գոգիային

(էլ. հասցե buchanj@hrw.org)

Հարգելի գործընկերներ

Ի պատասխան Ձեր 22.11.2016թ. գրության՝ ներկայացնում եմ տեղեկատվություն Ձեր ներկայացված հարցադրումների վերաբերյալ:

Առդիր 4 թերթ:

Հարգանքով՝

ՆԱԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

կատ. Ա. Մուրադյան
56-23-51

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

HUMAN RIGHTS WATCH միջազգային կազմակերպության ներկայացրած հարցադրումների վերաբերյալ

• *ՀՀ ԿԳՆ ենթակայության հատուկ դպրոցների ցանկը և նրանց գտնվելու վայրերը:* Նրանցից քանիսն են բնակելի դպրոցներ:

ՀՀ ԿԳՆ ենթակայությամբ գործում են ներքոհիշյալ դպրոցները, որոնք բոլորն էլ ունեն գիշերօթիկային ռեժիմ:

	Ուսումնական հաստատության անվանումը	հասցե, հեռախոս
1.	Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N11 հատուկ (օժանդակ) դպրոց	Երևան,Նուբարաշեն 6փ. Շ.1
2.	Երևանի N12 հատուկ դպրոց	Երևան, Սիմոն Վրացյան 75
3.	Երևանի տեսողության խանգարումներ ունեցող երեխաների N14 հատուկ դպրոց	Երևան Մամիկոնյանց 31
4.	Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր	Երևան, Նորքի այգիներ 193
5.	Երևանի N16 հատուկ դպրոց	Երևան Ավան, Աճառյան 16
6.	Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների N17 հատուկ դպրոց	Երևան Մոլդովական 41
7.	Հանրապետական N1 հատուկ կրթահամալիր	Երևան,Վարդաշեն 6/68
8.	Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիր	Երևան,Ռաֆֆու 113
9.	Կապանի N3 հատուկ կրթահամալիր	ՀՀ Սյունիքի մարզ, Կապան, Սպանդարյան 4
	Սպիտակի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N1 հատուկ (օժանդակ) դպրոցի	ՀՀ Լոռու մարզ, Սպիտակ Իտալական թաղամաս

- Բոլոր հատուկ դպրոցների ցանկը, որոնք փակվել են 2012թ. ի վեր, այդ դպրոցների գտնվելու վայրերը: Բոլոր հատուկ դպրոցների ցանկը որոնք փոխակերպվել են 2012թվականից ի վեր, ներառյալ նրանց սկզբնական անունները և գտնվելու վայրերը: Ինչ գործառույթ են իրականացնում այս փոխակերպված հաստատությունները հիմա:

ՀՀ կառավարության 2016թ. թվականի N 969 - Ն և N 986 - Ն որոշումներով «Սիսիանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ-ը «Սիսիանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն և «Գորիսի N 1 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանել է «Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի:

«Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության առարկան կրթության կազմակերպման ոլորտում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցումն է.

«Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության նպատակն իր սպասարկման տարածքի ուսումնական հաստատություններում սովորողների կրթության կազմակերպմանը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառմանն աջակցելն է:

- Երեխաների ընդհանուր թիվը նախարարության ենթակայության հատուկ դպրոցներում, նրանցից քանիսն են տղաներ, քանիսը՝ աղջիկներ: Նրանցից քանիսն ունեն հաշմանդամություն:

ՀՀ ԿԳՆ ենթակայության 10 հատուկ դպրոցներում 2016-2017 ուստարում, սեպտեմբերի 1-դրությամբ սովորում են 1210 աշակերտ (754 տղա և 456 աղջիկ):
Նրանցից 1136-ը ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք:

- Երեխաների ընդհանուր թիվը նախարարության ենթակայության հատուկ դպրոցներում 2012,2013,2014 և 2015 թվականներին՝ ներառյալ հաշմանդամություն ունեցող երեխաների քանակը:

ՈՒսումնական տարի	Երեխաների թիվը հանրապետության հատուկ դպրոցներում	Այդ թվում՝ ԿԳՆ ենթակայության հատուկ դպրոցներում
2012-2013	**2378**	**1345**
2013-2014	**2286**	**1295**
2014-2015	**2273**	**1282**
2015-2016	**2135**	**1215**

- Ինչ հատուկ ծառայություններ, նպաստներ կամ այլ աջակցություն են ստանում այն ընտանիքները, ուր երեխաները վերադարձել են թողնելով հատուկ դպրոցները, կամ հատուկ դպրոցների փակման հետևանքով:

ՀՀ ԿԳՆ-ն նման տեղեկատվություն չունի: Գործառույթը աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն է:

- Տնային ուսուցում ստացող երեխաների ընդհանուր թիվը: Նրանցից քանիսն են բնակվում իրենց ընտանիքների հետ, և քանիսը մանկատներում:

Նման հաշվառում չի իրականացվում:

- Հանրակրթական դպրոցների ընդհանուր թիվը յուրաքանչյուր մարզում և ներառական դպրոցների ընդհանուր թիվը յուրաքանչյուր մարզում:

ՄԱՐԶԵՐ	Հանրակրթական դպրոցների թիվը	Այդ թվում՝ ներառական կրթություն իրականացնող դպրոցների թիվը
Երևան քաղաք	**203**	**67**
Արագածոտն	**121**	**2**
Արարատ	**112**	**23**
Արմավիր	**118**	**47**
Գեղարքունիք	**125**	**6**
Լոռի	**162**	**20**
Կոտայք	**102**	**7**
Շիրակ	**163**	**27**
Սյունիք	**117**	Մարզը անցնում է համընդհանուր ներառման (26)
Վայոց Ձոր	**50**	8
Տավուշ	**81**	Իրականացվում է համընդհանուր ներառման ծրագիր (15)
ԸՆԴԱՄԵՆԸ	**1354**	**248**

- Ներառական դպրոցներում սովորող հաշմանդամություն ունեցող երեխաների ընդհանուր թիվը:

Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում 2016-2017 ուսումնական տարում սովորում է 6700 կրթության առնձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա:

- Ինչ պայմանների պետք է բավարարի հանրակրթական դպրոցը ներառական դպրոց դառնալու համար:

Համաձայն <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի ներառական կրթություն կազմակերպելու համար դպրոցը նախապայմաններ չունի:

- Հատուկ դպրոցներից քանիսն է պլանավորում փակել կամ փոխակերպել ՀՀ կրթության և գիտության նախարարությունը մոտ ապագայում և որ թվականներին: Հատուկ դպրոցներից քանիսը և որոնք պետք է բաց մնան:

Համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված ժամանակցույցի՝ մինչև 2022 թվականը 15 հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն վերակազմակերպվելու է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի: Նախնական տվյալներով ՀՀ ԿԳՆ ենթակայությամբ գործող դպրոցներից որպես հատուկ դպրոցներ շարունակելու են գործել՝

1. Երևանի տեսողության խանգարումներ ունեցող երեխաների N14 հատուկ դպրոցը,

2. Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրը,

3. Հանրապետական N1 հատուկ կրթահամալիրը,

4. Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիրը,

5. Կապանի N3 հատուկ կրթահամալիրը:

- Ինչն է նախարարությունը տեսնում որպես մեծագույն մարտահրավեր ընդհանուր ներառական կրթություն հաստատելու իր նպատակներին հասնելու ճանապարհին:

Մարտահրավերների մասին հնարավոր կլինի խոսել մեկ կամ 2 մարզում համընդհանուր ներառական կրթության անցնելուց որոշ ժամանակ անց, արդյունքների վերլուծությունից հետո:

350 Fifth Avenue, 34th Floor
New York, NY 10118-3299
Tel: +1-212-290-4700
Fax: +1-212-736-1300; 917-591-3452

HUMAN RIGHTS WATCH

HRW.org

Europe and Central Asia Division
Hugh Williamson, *Director*
Rachel Denber, *Deputy Director*
Benjamin Ward, *Deputy Director*
Philippe Dam, *Advocacy Director*
Jane Buchanan, *Associate Director*
Tanya Lokshina, *Russia Program Director*
Inna Khodzhaeva, *Moscow Office Director*
Giorgi Gogia, *South Caucasus Director*
Emma Sinclair-Webb, *Senior Researcher*
Judith Sunderland, *Associate Director*
Tanya Cooper, *Researcher*
Lydia Gall, *Researcher*
Yulia Gorbunova, *Researcher*
Mihra Rittmann, *Researcher*
Steve Swerdlow, *Researcher*
Eva Cosse, ***Senior*** *Research Assistant*
Viktoriya Kim, *Coordinator*
Kathryn Zehr, *Associate*
Anže Močilnik, *Associate*

Advisory Committee
Catherine Zennström, *Chair*
Jean Paul Marthoz, *Vice-chair*
Henri Barkey
Gerhart Baum
Rudolf Bindig
Alexander Cooley
Tana de Zulueta
Stephen Del Rosso
Felice Gaer
Michael Gellert
Alice H. Henkin
Jeri Laber
Walter Link
Masha Lipman
Helena Luczywo
Kimberly Marteau Emerson
Jane Olson
László Jakab Orsós
Arjan Overwater
Can Paker
Signe Rossbach
Colette Shulman
Leon Sigal
Malcolm Smith
Mark von Hagen
Joanna Weschler

Human Rights Watch
Kenneth Roth, *Executive Director*
Michele Alexander, *Deputy Executive Director, Development and Global Initiatives*
Carroll Bogert, *Deputy Executive Director, External Relations*
Iain Levine, *Deputy Executive Director, Program*
Chuck Lustig, *Deputy Executive Director, Operations*

Walid Ayoub, *Information Technology Director*
Emma Daly, *Communications Director*
Barbara Guglielmo, *Finance and Administration Director*
Peggy Hicks, *Global Advocacy Director*
Babatunde Olugboji, *Deputy Program Director*
Dinah PoKempner, *General Counsel*
Tom Porteous, *Deputy Program Director*
James Ross, *Legal & Policy Director*
Joe Saunders, *Deputy Program Director*
Frances Sinha, *Human Resources Director*

Նոյեմբեր 22, 2016թ.

Տարոն Մարգարյան
Երևանի քաղաքապետ
Երևան, 0015, Արգիշտիի փողոց 1
Հայաստանի Հանրապետություն
Փոստով և էլեկտրոնային տարբերակով՝ XXXXXXXXXXX

Հարգելի պարոն Մարգարյան,

Մենք շնորհակալ ենք այս տարվա մայիսին քաղաքապետարանում հանդիպումներ ունենալու հնարավորության համար և գնահատում ենք Երևանի քաղաքապետարանի հետ մեր ունեցած շարունակական կառուցողական երկխոսությունը: Այս նույն ոգով դիմում ենք Ձեզ՝ խնդրելով տրամադրել որոշ տեղեկություններ մանկական հիմնարկներում բնակվող երեխաների վերաբերյալ Human Rights Watch-ի կողմից իրականացվող հետազոտության համար, ընտանիքի վրա հիմնված երեխայի խնամքի աջակցության ուղղությամբ կառավարության նախաձեռնությունների, ինչպես նաև ներառական կրթության հասանելիության մասին: Մենք երախտապարտ կլինենք, եթե կարողանաք տրամադրել հետևյալ տեղեկությունները՝

- Երևանի քաղաքապետարանի ենթակայության բոլոր հատուկ դպրոցների ցանկը: Նրանցից քանի՞սն են բնակելի դպրոցներ:
- Բոլոր հատուկ դպրոցների ցանկը, որոնք փակվել են 2012 թվականից ի վեր, և այդ դպրոցների գտնվելու վայրերը:
- Բոլոր հատուկ դպրոցների ցանկը, որոնք փոխակերպվել են 2012 թվականից ի վեր, ներառյալ նրանց սկզբնական անունները և գտնվելու վայրերը: Ի՞նչ գործառույթ են իրականացնում այս փոխակերպված հաստատությունները հիմա:
- Երեխաների ընդհանուր թիվը Երևանի քաղաքապետարանի ենթակայության հատուկ դպրոցներում: Նրանցից քանի՞սն են տղաներ, և քանիսը՝ աղջիկներ: Նրանցից քանի՞սն ունեն հաշմանդամություն:
- Երեխաների ընդհանուր թիվը Երևանի քաղաքապետարանի ենթակայության հատուկ դպրոցներում 2012, 2013, 2014 և 2015 թվականներին՝ ներառյալ հաշմանդամություն ունեցող երեխաների քանակը:
- Հատուկ դպրոցներից քանի՞սն է պլանավորում փակել կամ փոխակերպել Երևանի քաղաքապետարանը մոտ ապագայում և

ո՞ր թվականներին։ Հատուկ դպրոցներից քանի՞սը և որո՞նք պետք է բաց մնան։

- Ի՞նչ հատուկ ծառայություններ, նպաստներ կամ այլ աջակցություն են ստանում այն ընտանիքները ուր երեխաները վերադարձել են՝ թողնելով հատուկ դպրոցները, կամ հատուկ դպրոցների փակման դեպքում։
- Ի՞նչն է Երևանի քաղաքապետարանը տեսնում որպես մեծագույն մարտահրավեր Կրթության նախարարության հետ համատեղ ընդհանուր ներառական կրթություն հաստատելու իր նպատակին հասնելու ճանապարհին։

Շնորհակալություն ենք հայտնում այս հարցերին Ձեր անհապաղ ուշադրության համար և երախտապարտ կլինենք մինչև ս.թ. դեկտեմբերի 23-ը պատասխան ստանալու համար, որպեսզի մեր հաշվետվություններում կարողանանք անդրադարձ կատարել Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված համապատասխան տեղեկատվությանը։ Եթե կլինեն հարցեր սույն գրության վերաբերյալ, խնդրում եմ առանց վարանելու դիմել. էլ-փոստ՝ XXXXXXXXXXX հեռախոս՝ XXXXXXXXXXX, կամ ֆաքս՝ XXXXXXXXXXX

Հարգանքով,

Ջեյն Բուչանան

Գիորգի Գոգիա

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 12/80865-հ

«07» 12 2016թ.

<<HUMAN RIGHTS WATCH>>ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՋԵՅՆ ԲՈՒՉԱՆԱՆԻՆ ԵՎ ԳԻՈՐԳԻ ԳՈԳԻԱՅԻՆ

Հարգելի պարոնայք

Ի պատասխան Երևանի քաղաքապետին հասցեագրած Ձեր գրության, տեղեկացնում ենք, որ Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են երկու հատուկ դպրոցներ՝ հ.2, հ.6 մտավոր թերզարգացում ունեցող երեխաների համար, և «Խոսքի ծանր խանգարումներ ունեցող հ. 8 հատուկ» կրթահամալիրը:

Ինչ վերաբերում է ձեզ տրամադրվող տեղեկատվությանը, ապա այն դուք կարող եք ձեռքբերել «https://www.yerevan.am/» կայքից:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Գ.ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Հայաստանում հազարավոր երեխաներ հաշմանդամության կամ աղքատության պատճառով առանց անհրաժեշտության առանձնացվում են իրենց ծնողներից և ուղարկվում ապրելու մանկատներում և այլ հատուկ հաստատություններում: Անգամ ռեսուրսներով առավել հագեցած հաստատությունները չեն կարող փոխարինել ընտանիքին: Երկարաժամկետ կտրվածքով հաստատություններում գտնվելը կարող է լուրջ հետևանքներ ունենալ երեխաների ֆիզիկական, մտավոր և հուզական զարգացման համար: Հայաստանի հաստատություններում ապրող երեխաների 90%-ից ավելին առնվազն մեկ ծնող ունի, ով կարող է նրանց մեծացնել տանը՝ համապատասխան և մատչելի համայնքահեն աջակցության, այդ թվում որակյալ ներառական կրթության առկայության պարագայում:

«Ե՞րբ ես կկարողանամ տուն գնալ» հաշվետվությունը հիմնված է երեխաների, երիտասարդների և նրանց ընտանիքների հետ անցկացված հարցազրույցների և Հայաստանի ութ քաղաքներում մանկատներ և դպրոցներ կատարված այցելությունների վրա: Հաստատությունում ապրող երեխաները հաճախ չեն ստանում իրենց զարգացման համար կենսական նշանակություն ունեցող՝ բավարար անհատական ուշադրություն և հաճախ անպատրաստ են անկախ կյանք վարել որպես մեծահասակներ: Հաշմանդամություն ունեցող շատ երեխաներ, ովքեր մեծանում են հաստատություններում, տեղափոխվում են չափահասների համար նախատեսված հաստատություններ, որտեղ նրանք մնում են անորոշ ժամկետով: Որոշ դեպքերում սրա պատճառն այն է, որ կառավարությունը բավարար ջանքեր չի գործադրում ապահովելու համար, որ չափահասության տարիքի հասնող հաշմանդամություն ունեցող երեխաները կարողանան իրացնել իրենց գործունակությունը՝ իրենց համար որոշումներ կայացնելու նպատակով:

Հայաստանի կառավարությունը հայտնել է, որ մտադիր է նվազեցնել պետական հատուկ հաստատություններում ապրող երեխաների թիվը և տեղափոխել այս երեխաներին ընտանիքներ՝ անհրաժեշտ համայնքահեն ծառայությունների տրամադրման միջոցով, մի գործընթաց, որը հայտնի է որպես բեռնաթափում: Կառավարությունը նաև հանձն է առել երկրի ողջ տարածքով ներառական կրթություն իրականացնել՝ ապահովելու համար, որ հաշմանդամություն ունեցող և չունեցող երեխաները միասին սովորեն համայնքային դպրոցներում:

Human Rights Watch-ը կառավարությանը կոչ է անում առավել էական ներդրումներ կատարել հաստատությունների՝ համայնքահեն կայուն այլընտրանքների ապահովման ուղղությամբ՝ ռեսուրսները և ֆինանսական միջոցները հաստատություններից ընտանիքներին և տեղական համայնքներին վերաբաշխելու միջոցով: Որակյալ ներառական կրթության հասնելու համար կառավարությունը պետք է ապահովի կրթական համակարգի վերափոխումը՝ յուրաքանչյուր երեխայի առավելագույն ուսումնական և սոցիալական առաջընթացին նպաստող անհատական մոտեցումներ և ողջամիտ հարմարեցումներ ապահովելու համար:

Որմնանկար հայաստանյան մի մանկատան պատին, որտեղ երեխաները կարող են իրենց հույսերի և ցանկությունների վերաբերյալ նշումներ կատարել:

© 2016թ. Ջեյն Բյուքանան/Human Rights Watch

Մի տղա նստած է ճոճանակին հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված մանկատան բակում, Երևան, Հայաստան:

© 2016թ. Ալեքսեյ Գոլուբևը Human Rights Watch-ի համար:

hrw.org